Երկրն էք, և ինչ է ձեր համբողջութեան վախճանը : » Փռքացաւ Մենսոր, պատասխան տուաւ ու ըսաւ . « Մեծին Եսայէրիոյ ասիւմնէն կուգամք, և մեր հայրենիքն անկէց շատ հեռու շէ : » Եւ այսպէս Յոյն ըլլալնիս շիմացուց : Բայց Ակեասէս շուգելով աւելի լսել, և ըզմէզ խարդախ օտարականաց Տեղ դնելով՝ հրամայեց որ զմէզ մօտակայ անտառ մը տանին և հոն իւր հովուացը ձեռքին տակ գերիի պէս աւխասխմք :

« Այս վիճակն ինձ մահուրնէ աւելի դառն էրեւցաւ : Եւ գոռեցի . Ո՛վ քաղաւոր, աւելի լաւ է որ զմէզ մեռցընես՝ քան թէ այսպէս անարժան կերպով հետեւնիս վարուիս : Պիտցիր որ Տելեմաք եմ ևս, իրականացոց քաղաւորին իմաստնոյն Ողիսեայ որդին . ծովէ ծով կը պսքսիմ որ հայրս զտեսնեմ : Թէ որ պիտի շկարեմամ զինքը զտեսնել, ոչ հայրենիքս դառնալ և ոչ գերութենէ ազատիլ, վերցնուր յինն և այս կեանքս՝ զոր սլ շեմ կրնար տալ :

« Պէտ խօսքս բերանս էր՝ և անա բոլոր ժողովուրդը կատարած միաբերան կպոռար թէ պէտք է անգուր Ողիսեային որդին մեռցընել, որ խորամանկութեամբն զՏրոյա կործանեց : Եւ Ակեասէս դարձաւ ըսաւ ինձ . « Որդիդ Ողիսեայ, շեմ կրնար արիւնդ զլանալ այնչափ տոյացոց հոգւոցը՝ զորս հայրդ սէ Կոկիւտոնին եզերքն իջեցուց . դուն ևս քու առաջնորդդ՝ պիտի մեռնիք : » Այն ժամանակ ամբոյսին մեջէն ձեր մարդ մը ելաւ առաջարկեց քաղաւորին որ զմէզ Անիսեսին գերեզմանին վրայ զոնէ : Ասոնց արիւնք, կրտք, ախորժելի պիտի ըլլայ այն դիւցազին ստուերին . Էնիսա ինքնին երբոր լսէ՝ պիտի շատ ուրախանայ, տեսնելով՝ թէ դու ևս նոյնչափ կսիրես Եղեր զայն՝ քան զոր աւելի սիրելի մը շունէր աւխարհիս վրայ :

« Ծերոյն այս առաջարկութեանը բոլոր ժողովուրդը

ծափ զարկաւ, ալ ամենուն խելքն ու միտքը զմեզ գոնելու վրայ էր: Մեկէն զմեզ Անխտեայ գերեզմանին վրայ տարին. երկու բազին կանգներ էին հոն, ուր սրբազան կրակը կվառէր. սուրն որ զմեզ պիտի զարներ մեռցրնէր՝ աջէրնուս առջեւ կտողտողար. զլուխնիս ծաղկօք պսակէր էին. եւ զքուրքեան ու ապրելու յոյս մը չկար: Ալ վերջերնիս հասեր էր՝ երբ Մենսոր անխտով ւրսով մը խնդրեց որ բազաւորին հետ խօսի, եւ ըսաւ .

« Ո՛վ Ակեւսեա, քե որ այս դէռ անասակ պատանույնի բախսը՝ որ ոչ երբեք տրոյացուց դեմ գեղն առած է, զմեզ իզուր շարժեր՝ զքե քու անձնական շահդ զմեզ շարժէ: Հմայից եւ աստուածոց կամաց գիտութիւնը ինձ կազդէ՝ որ երեք օր շանցած՝ բարբարոս ժողովուրդներ վրայ պիտի յարձակին, որ լերանց ծայրէն հեղեղի պէս պիտի քափին քաղաքդ ողողելու ու երկիրդ կողոպտելու: Փութա անոնց առաջն աւնուլ, զինե ժողովուրդդ, եւ առանց վայրկեան մը կորսնցունելու՝ դուրս ունեցած գունդագունդ հօտերդ ժողովէ բեր քաղաքդ մեջ ամփոփէ: Երբ գուշակութիւնս սուս էլլէ, երեք օրէն ազատ եւ զմեզ զոնելու. իսկ քե որ նեմարիս՝ յիշէ որ կեանք տուողին կեանքն պէ՛տք չէ վերցրնել:

« Զարմացաւ Ակեւսեա Մենսորին այս խօսքերուն վրայ, զոր անանկ համարձակութեամբ մը կրսեր՝ որուն նմանը մարդու մը վրայ երբեք չէր տեսեր. եւ ըսաւ. « Կեանքեմ, ո՛վ օտարական, որ քեպէտէ դիմ բախտին պարգեւները զլացեր են մեզ, բայց իմաստութիւն մը տուեր են՝ որ քան զամենայն բարեմասնութիւնս աւելի յարգ ունի: » Այս ըսաւ ու զոնն ուրիշ օրուան ձգեց, եւ Մենսորին սպառնացած աւազակացն առջեւն առնելու համար պէ՛տք էղած հրամանները տուաւ: Ալ տեսնելու էր այն անուղողի մեջ ընկած կանայքը, յերկիր

կորացեալ ծերերն ու արժասուազոռոշ տղայք ինչպէս դէպ իբազմաբ կվազեին : Կովեր ու ոշխարհներ իրենց պարարտաբոյս արօտները բողլով՝ բառաշելով ու մայելով գունդագունդ կվազեին կուզային, եւ անկարելի կըլլար իրենց գոմ բաւեցընել : Ամեն կողմէն ամբոխին խառնածայն աղաղակը կբարձրանայր, մեկգմեկ կհրեին, իրարու խօսքը շէին հասկընար, ու շփոթութիւններէն՝ շնանշցած մարդը՝ բարեկամուն սեղ կառնուին, ու հոս հոն կվազվազեին առանց գիտնալու քէ ո՞ր կերթան : Բայց իշխաններն իրենց զիրենց ուրիշներէն աւելի իմաստուն հասարելով՝ խաբէբայի մը սեղ կդնէին զՄենսոր, որ սուտ գուճակութեամբ մը, կրօտին, կեանքը կուզէ ազատել :

Երրորդ օրը դէռ շեր լմնցած՝ ու անոնք այսպիսի մտածմունքներով լեցուած էին, եւ անա մօտակայ լեռանց ստորոտներուն վրայ մտնելով փոշի մը տեսնուեցաւ, եւ անոր ետեւէն անհամար բազմութեամբ սպառազեն գունդ մը բարբարոսաց : Հիմերացիք էին ասոնք, կասաղի ժողովուրդք, եւ իրենց հետ առած այն ազգերն՝ որ կբնակին Նեբրոդեան լեռանց եւ Ակրազանդեայ ծայրը, ուր այնպիսի ձմեռ մը կսիրէ, զոր ոչ երբէք քաղցրացուցած են զեփիւռք : Մենսորին գուճակութիւնն արհամարհողները բոլոր իրենց զերիներն ու կենդանիքը կորսնցուցին : Թագաւորն ըսաւ Մենսորին. Չեր Յոյն ըլլալը կմոռնամ. մեր քցնամիք մեզի հաւասարիմ բարեկամ կդառնան : Աստուածք զմեզ ազատելու համար զձեզ դրկեցին. ձեր տուած խրատուցն իմաստութենէն ոչ ինչ ընդհատ ձեր քաջութեանը վրայ մեծ յոյս ունիմ. հնապա փութացէք մեզ օգնելու :

Մենսոր աշուրներուն վրայ այնպիսի արիւրքիւն մը ցուցուց՝ որ ամենէն գոռ պատերազմողներն անզամ

կասասփեցրներ : Վահան մը կառնու , սապաւարս , սուր եւ նիզակ . Ակեւսին զօրքը կարգի կդնէ , գլուխնին կանցնի , եւ նակաս յօրինեալ բճնամուոյն դիմացը կելլէ : Ակեւս՝ քէ եւ լի էր եւ ինքն արիութեամբ , բայց ծերութեանը պասնառաւ հեռուանց իրեն տեսէն կուզար : Իսկ էս՝ բովէն կերբայի , բայց քաջութեանը բնաւ չէի կրնար հաւասարիլ : Պատերազմին մեջ իւր զրահը եգիսեայ անմահական վահանին կնմաներ : Մահն իրեն հարուածոցը սակ ուզմէ ուզմ կվագեր : Նումիդացի սաւվալուկ առիւծի մը պէս՝ որ խեղն ոչխարներու հօտին մեջ կմտնէ , կպասուէ զանոնք , բզիկ բզիկ կսպաննէ , արեան մեջ կլողայ . եւ հովիւք օգնութեան հասնելու տեղ՝ դողալով կփախչին որ անոր կասաղութենէն ազատին :

Այն բարբարոսներն որ քաղաքը յանկարծակիի բերել կկարծէին , իրենք յանկարծակիի եկան եւ շփոթեցան : Ակեւսեսին հպատակներն Մենսորին օրինակովն ու խօսքերովը քաջալերուած՝ իրենց կարծածէն աւելի արիացան : Իմ նիզակովս զարկի գետին փռեցի բճնամեաց քաղաւորին որդին : Տարեկից էր ինձ , բայց հասակովը բարձր քան զիս , վասնզի այն ժողովուրդը Կիկոպայց համազգի հակայից ցեղէ մը իջած էր : Ինձ պէս սկար բճնամին կարհամարհէր նա . բայց էս առանց անոր անագին ուժին վրայ զարմանալու , եւ ոչ անոր վայրենի ու զազանային կերպարանքէն սարսփելու , նիզակս կուրծքին խոթեցի , եւ վերջին շնչոյն հետ սեւ արեան հեղեղներ քափել տուի : Գետին փռուած ժամանակը մազ մնաց զիս սակը կնզմէր . գէններուն շառաշիւնը մինջէւ լեռները հնջեցուցին : Կողոպուտն առի եւ Ակեւսեսին բերի : Իսկ Մենսոր բոլորովին զարկաւ կոսորէց բճնամին , եւ փախսականներն մինջէւ անստաներուն մեջ հալածեց :

« Այսպիսի անյուսալի յաջողութեամբ մեծարեցաւ Մենճոր իբրեւ աստուածազղեցիկ եւ աստուածոց սիրելի մարդ : Իսկ Ակեասէս Երախսագիտութեամբն իմացուց մեզ որ մեծ վճանցի մեջ կիյնա՞մք քե՞ որ Էնիասայ նաւերն նորէն դառնան զան իՍիկիլիա : Նաւ մը տուաւ մեզի որ շուշանա՞մք Երկիրնիս դառնա՞մք. առաս պարգեւներ շնորհեց մեզ եւ փութացուց որ ժամ մը յառաջ նամբայ ելլեմք, ու ազատիմք այն վճանգէն որ ինք կնախասեսէր. բայց շուղեց մեզ իւր ազգէն ոչ ղեկավար մը սալ եւ ոչ քիավար, որպէսզի Յունաստանի Եզերքը զանոնք վճանցի շղնէ. հապա փիւնիկեցի վանառականներ տուաւ մեզ, որ աշխարհիս բոլոր ազգացք հէտ առուտուր բնելովնին՝ ամենեւին մեկէ մը վախ շունեին, եւ զմեզ Իրակէ բողկէն յետոյ՝ նաւը նորէն Ակեասին պիտի բերէին : Բայց աստուածներն որ մարդկանց խորհրդօքք հէտ կխաղան, ուրիշ նոր վճանգներու պահած էին զմեզ :







միտքը դրե՛ր եւ ծովու վրայ վաճառականութիւննին խափանել . իւր նաւերը շորս դին փիւնիկեցոց էտէւէ կիլնային : Հագիւ քէ Սիկիլիոյ լեռներն աջերնէս աներէտոյք կրլլային, եգիպտական նաւատորմի մը պատահեցաւ մեզ : Կարծես քէ նաւահանգիստն ու ցամաքը մեր էտէւն կիտախշէին եւ ամպերու մեջ կկորսուէին, եւ կսեսնէինք որ ծովածուփ փաղափ մը պէս եգիպտացոց նաւերը մեզ կփոսէնային : Ճանշցան զանոնք փիւնիկեցիք եւ կուզէին ձգել հեռանալ, բայց բանը բանէն անցեր էր : Առագաստնին մերիններէն քէքէտաթոխէ էին, փամին իրենց յաջող եւ քիավարնին մեզմէ բազմաքիւ . եկան հաստան մտան բռնեցին ու Եգիպտոս գերի տարին :

« Ընդունայն տեղ իրենց կրսէի քէ մեք փիւնիկեցիք շեմք . եւ ոչ իսկ արժանի կսեպէին լսել : Համարեցան քէ մեք արժարագին գերիներ էմք, որով փիւնիկեցիք վաճառականութիւն կրնէին . ուրիշ բան չէին մտածեր բայց էք իրենց աւարէն հանելու օգուտք : Եւ ահա տեսանք որ ծովուն ալիքը Նիղոսին ջրերուն հետ խառնուելով կներմկնային եւ երէւցան մեզի Եգիպտոսի եզերքը գրէք ծովուն պէս ցած : Յետոյ Նով փաղափն քովի Փարոս կղզին հաստանք . եւ անի Նիղոսէն վեր ելլելով մտանք իՄենփիս :

« Թէ որ մեր գերութեան ցաւէն ամենայն զքօսանաց անզգայ դարձած շրլլայինք, մեր աշուրները պիտի շատ զուարճանային Եգիպտոսի պէս բարեբեր երկիր մը դիտելով, որ անքիւ անհամար ջրանցքներով ոռոգուած զբարճալի պատրիզի կնմաներ : Գետեզերքին ճր կողմն որ ալ աշուրնիս դարձունէինք, հարուստ փաղափներ կսեսնէինք, գեղեցկազիր ամարանոցներ, արտեր որ ամէն տարի առանց հանգիստ առնելու ոսկեփայլ հնձով կծածկուէին, խաւճաւէտ արօտներ, երկրին իւր ծոցէն բլլստ-

ցուցած պսղոց սակ ծանրաբեռ նեալ մեակներ, եւ հովիւներ կսեսնէինք որ իրենց փողերուն եւ արնգաց անոյժ ձայները՝ շորս կողմի արձագանգներու կրկնել կուտային:

« Երանի ժողովրդեան, կրսեք Մենսոր, որուն կառաջնորդէ քազաւոր իմաստուն : Առասուրբեան մեջ է, երջանիկ կեանք կանցունէ, եւ կսիրէ զայն յորմէ այն երջանկութիւնը կրնդունի : Եւ վրայ կբերէր. Այսպէս պէտք է որ դուն եւս քազաւորես, նՏելեմաբ, եւ ժողովուրդդ երջանկացունես՝ քեռ երբէք աստուածները հօդ քազաւորութիւնը քեզ սան : Ժողովուրդդ՝ բու զաւակացդ պէս սիրէ, ախորժէ իրեն սիրելի ըլլալ, եւ ջանա որ խաղաղութիւն եւ հանգստութիւն վայելած ժամանակին՝ յիշեն որ բարեգութ քազաւորի մը առասածիր պարգեւն են անոնք : Քազաւորք որ ահարկու ըլլալ միայն կմտածեն եւ իրենց հպատակներն ընկնել՝ որպէսզի աւելի հնազանդ ընեն զանոնք, մարդկութեան հարուածներն են : Ուզածներնուն կհասնին, կըլլան ահարկու, բայց միանգամայն ասելի եւ գարշելի. եւ աւելի իրենք իրենց հպատակներէն պէտք է վախնան՝ քան քե հպատակներն իրենցմէ :

« Մենսորին պատասխան կուտայի ու կըսէր. Ափսոսնս, ալ ինչ պէտք ունիմք լաւ քազաւորելու համար հարկաւոր եղած խրատուց վրայ մտածել. նալ մեզի համար Իրակէ շկայ. երբէք պիտի շտեսնեմք ոչ մեր հայրենիքն եւ ոչ Պենելոպէն. եւ քե որ Ողիսէս կարենայ փառօք իւր քազաւորութիւնը դառնալ, պիտի շկարենայ հոն զիս տեսնելով ուրախանալ, եւ ոչ ես հրամայել սովբելու համար իրեն հնազանդելու ուրախութիւնը պիտի ունենամ : Մեռնիմք, սիրեցեալդ իմ Մենսոր, նալ ուրիշ բանի մտածելիք շունիմք. մեռնիմք որովհետեւ աստուածները նալ մեր վրայ գութ շունին :

« Աս քսէլու ասէնս խորին հառաջանքներ խօսեալ կկրէին: Բայց Մէնսո՛ր՝ որ շարիք բանի որ շէր հասած անոնցմէ կվախնար, իսկ հասնելուն էտը անոնցմէ վախնալ ինչ քսել է շէր զիտէր, կհամբերով զիս կքսէր. « Անարժան որդի իմաստունն Ողիսեայ. ինչ. պիտի յաղբուիս ուրեմն բռնաւորքենէդ : Գիտցիր որ օր մը քէ Իբակէ կղզին պիտի տեսնես եւ քէ Պէնէրուպէն : Իւր առաջին փառացը մէջ պիտի տեսնես նաեւ զնա՛ զոր ոչ երբէք նանջար՝ զանպարտելին Ողիսեայ, զանընկնելին իբաղդին, որ իւր աղէտիցը մէջն ալ՝ որ տուկիւններէդ շատ աւելի մեծ են, կխրատէ զէդ ոչ երբէք վնասելու : Ո՛հ, քէ որ այն հեռաւոր երկիրներուն մէջ ուր որ փոքորիկը տարաւ զինքը ձգէց՝ իմանալու ըլլայ քէ որդին ոչ իւր երկայնատեանն է ելեր եւ ոչ իւր արիւրեանը, այս գուծը զինքն ամօքով պիտի լեցունէ, եւ այսշափ ժամանակէ իվեր տաւած տառապանքն շատ աւելի դժնդակ պիտի զայ իրեն :

« Յետոյ կցուցրներ ինչ Մէնսոր բոլոր Եգիպտոսի դաշին վրայ սփռուած ուրախութիւնն ու առատութիւնը, յորում տան եւ երկու հազարի շափ տալաւ կային : Կարմանար անոնց բարեկարգութեանը վրայ, հարուստին դեմ աղֆատին տրուած իրաւանցը, տղայոց լաւ դաստիարակութեանը՝ զորս հնազանդութեան, աշխատանքի, զգաստութեան եւ իսկ արուեստից եւ դպրութեանց կվարժեցրնէին. կրօնի պատշաճանց նշուրեանը, եւ իւրաքանչիւր հօր իւր որդուցը արտին մէջ անճանախորութեան, պատուախորութեան, մարդկանց հետ հաւատարմութեամբ եւ աստուածոց հետ երկխոսութեամբ վարուելու սպաւորած սկզբանցը վրայ : Այս գեղեցիկ կարգաց վրայ զարմանալէն շէր կհեռանար Մէնսոր, եւ անդադար կքսէր. Երանի՛ այն ժողովրդեան

որուն իմաստուն քազաւոր մը այսպէս կառաջնորդէ. բայց աւելի երանի՛ քազաւորի՛, որ այսչափ ժողովրդոց եղջանկուրթին կուտայ եւ իրենն ալ՝ իր առաքինութեանը մէջ կզտէ : Վախու կապանէն հարիւրապատիկ աւելի աւուր կապանեով մը, ինչպէս է սիրոյ կապանք, կ'աւել կ'ընէ նա զմարդիկ, որք ոչ միայն կ'հնազանդին իրեն՝ այլ նաեւ կ'սիրեն հնազանդիլ : Ամենուն արժին մէջ կ'քազաւորէ, եւ ոչ միայն շիւղ մէկը որ իրմէ ազատի ուզէ, այլ եւ ամենք կ'վախնան որ ջրլլայ քէ զինքը կորսնցընեն. եւ անոր համար կ'եաններնին սալու պատրաստ են :

« Մենտրին քսածները մտիս մէջ տեղիք կ'ընէին, եւ քանի որ այս իմաստուն բարեկամս կ'խօսէր՝ կ'իմանայի որ արժիս մէջ քաջութիւնս նորէն կ'վառէր : Բազմազանն է մեծաւն Մեմփիս քաղաքն հասնելունս պէս, քաղաքացիքն հրամայեց որ Թեքէ երբամբ Սետուսը քազաւորին ներկայանալու համար՝ որ անձամբ զմեզ կուզէր քննել, եւ որ իւրացուց դեմաստիկ բարեացած էր : Նորէն Նիդոսէն վեր նաւելով հասանք այն հռչակաւոր հարիւրադուռն Թեքէ քաղաքը՝ ուր կ'բնակէր մեծ քազաւորը : Քաղաքին ընդարձակութիւնը մեզի անբաւ կ'երեւար, եւ Յունաստանի ամենէն ծաղկած քաղաքներէն ալ աւելի բազմամարդէր : Փողոցներուն եւ ջրանցից մաքրութեան, բաղանեաց դիւրութեան, արուեստից զարգացման եւ հասարակաց ապահովութեան համար անքերի բարեկարգութիւն մը կ'փայլէր : Հրապարակները աղբերօք եւ կոթողներով զարդարուած են. մենեանները մարմարիոն քարէն շինած եւ հարսարապետութիւննին պարզ, բայց հոյակապ : Թազաւորին պալատը միայն՝ մէկ մեծ քաղաքի մը կ'ընմանէր, հոն ուրիշ բան չէիր տեսներ բայց էրէ կ'ընէայ սիւներ,

բուրգեր, կոթողներ, հսկայաձեւ արձաններ, ոսկեձոյլ  
 եւ արծաթաձոյլ կահ կարասիք :

Զմեզ գերի բռնողները զրուցեցին քաղաւորին՝ քեզ  
 զմեզ փիւնիկեցի նաւի մը մեջ գտան : Ամեն օր՝ սահմանեալ  
 ժամերուն՝ իւր հպատակաց զանգասները մտիկ  
 կրներ Սետուսը, եւ կամ անոնց տուած խորհուրդը . ոչ  
 զոք կարհամարհէր եւ ոչ զոք կմերժէր . եւ ինքզինքը  
 ուրիշ բանի համար քաղաւորած չէր համարէր՝ բայց էրէ  
 իւր հպատակացը բարիք ընելու, զորս եւ իւր որդոցը  
 պէս կսիրէր : Օտարականներն եւս մարդասիրաբար  
 կրնողուներ եւ գիրենք կուգէր Տեսնել, վասնզի գիտէր  
 որ մարդս հեռաւոր ժողովրդոց բարուցը եւ սովորու-  
 րեանցը վրայ տեղեկութիւն առնելով շատ բան կսովորի :  
 Քաղաւորին այս հետաքննութեանը համար զմեզ առ-  
 ջէւր հանեցին : Փղոսկրեայ արձուի մը վրայ նստած  
 էր, եւ ձեռքը ոսկի գաւազան մը կար . ծեր էր հասակաւ,  
 բայց կերպարանքը ախորժելի, քաղցրահամբոյր եւ մե-  
 ծավայելու : Ամեն օր ժողովուրդը կդատէր այնպիսի  
 երկայնատեամբ եւ իմաստութեամբ, որուն վրայ  
 առանց շողոփորթութեան ամենքը կզարմանային : Բոլոր  
 օրը տեսնեան զործերը կարգաւորելու եւ արդարու-  
 րեամբ իրաւունք կտրելու անցրնելէն յետոյ, երիկունք  
 իմաստուն մարդկանց խօսակցութիւնը մտիկ ընելով եւ  
 անոնց հետ զրուցասրելով կհանգօքէր, զորս եւ լաւ գիտէր  
 ընտրել եւ իրեն մեծմացունել : Բոլոր կենացը մեջ այս  
 միայն կրնայ իրեն մեղադրուիլ՝ որ յաղքած քաղաւորացը  
 հետ շատ խորխտանօք կվարուէր, եւ հպատակացը մեջէն  
 մեկու մը վրայալ շափազանց վստահացէր էր, զոր եւ քիչ  
 ասէնէն պիտի ստորագրէմ : Երբոր զիս տեսաւ, երիտա-  
 սարդութեանս ու քաւած ցաւերուս վրայ զքացաւ, եւ  
 լսնունցս ու հայրենիքս հարցուց : Բերնէն էլած խօսե-

րուն իմաստութեանը վրայ կնիանայինք : — « Պատասխան տուի իրեն եւ ըսի . Արքայ քաջ, գիտես անուշակ Տրոյոյ տասնամեայ պաշարումը , որուն համար այնչափ արիւնք քափեց Յունաստան : Այն քաղաքը կործանող քաղաւորաց մէկն եր նաեւ իմ հայրս Ողիսէս, որ ծովէ ծով կրփափառի եւ շիրմար իւր քաղաւորութիւնը՝ Իրակէ կղզին զսնել : Զինքը փնտռելու էլած եմ ես , եւ նոյնպիսի բռնաւորութիւն մը՝ զիս ալ գերի բրաւ : Գարձուր զիս առ հայրն իմ եւ առ հայրենիս , եւ որդւոցդ պահեն զքեզ դիք , եւ քեզի պէս բարեգուր հօր մը խնամոցը սակ ապրին անոնք ուրախութեամբ :

« Վրաս կարեկից աշուղ մը նայելէն շեր դարեր Սեւոստր. բայց ուզելով ըսածներս ստուգել, զմեզ իւր պաշտօնեաներէն մեկուն ղրկեց որպէս զի մեր նաւը բռնողներէն տեղեկանայ թէ իրաւքնէ մեք Յոյն էինք թէ փրանիկեցիք : Եւ թէ որ փրանիկեցի են, ըսաւ, պէտք է զիրենք կրկին պատժել, մեկ մը՝ որ մեր բռնամիտն են, եւ երկրորդ՝ որ վաս ստութեամբ մը զմեզ խաբել ուզեցին . իսկ թէ որ ընդհակառակն Յոյն են, կուգեմ որ մարդասիրութեամբ հետերնին վարուին եւ նաւերս մեկովն իրենց երկիրը յուղարկուին . վասնզի կսիրեմ զՅունաստան . եզիպացւոց շատերն անոր օրէնսդիր եղան : Գիտեմ Հեռակլի քաջութիւնը, Ափլլեսի փառքը մինչեւ առ մեզ հասաւ, եւ բռնառ Ողիսէայ ինձ պատմուած իմաստութեանը վրայ կգարմանամ : Տարաբախտ առաքիւնութեան օգնելու պէս ինձի մեծ զուարեութիւն շկայ :

« Որչափ որ Սեւոստր բարեսիրտ եր եւ վեհանձն , այնչափ եւ մեր գործոց քննութիւնն յանձնած իշխանը շարասիրտ եր եւ խորամանկ : Այս իշխանին անունն եր Մեսոփիս . հարցափորձեց զմեզ ջանալով մեր բերնէն բան մը առնուլ . եւ տեսնելով որ Մեսոստր ինձմէ

աւելի իմաստութեամբ պատասխան կուսար, ասելութեամբ ու ծուռ աշուղ վրան կնայէր. վասնզի շարաց սովորութիւնն է բարիներուն վրայ բարկանալ : Չմեզ իրարմէ բաժնեց հեռացուց, եւ այնուհետեւ Մենսոր ինչ եղաւ շիմացայ :

« Այս բաժանմունքը կայծակի պէս զիս զարկաւ : Կյուսար Մեսոփիս զմեզ առանձին հարցափննելով իրարու հակառակ բան զսնել. եւ աղուոր աղուոր խոսմունքներով կշանար հրապուրել զիս, եւ Մենսորին պահածները բերնես առնուլ : Միով բանիւ, ուղիղ մտօք նշմարութիւնը շէր խնդրէր, այլ զմեզ իրեն գերի բնելու համար պատճառանք կփնտռէ՝ որ մեզի համար քաղաւորին ըսէ թէ փիւնիկեցի են : Եւ իրաւցրնէ, մեր անմեղութեամբն ու քաղաւորին իմաստութեամբն հանդերձ՝ զանիկա խաբելու հնարքը զսաւ :

« Աւսող, նշմարի վտանգներ կան քաղաւորաց առջեւ, եւ շատ անգամ իրենց իմաստագոյնն անգամ անոնց մեջ կիյնայ : Չորս կողմերնին առած են խորամանկ եւ շահասէր մարդիկ. իսկ լաւերը կհեռանան, վասնզի ոչ յառաջ նետուիլ գիտեն եւ ոչ շողոփորբել : Լաւ մարդիկ կսպասեն որ ուրիշները զիրենք փնտռեն, եւ ինչ քաղաւոր կայ որ զիրենք փնտռէ. իսկ շարք յանդուգն են եւ խաբէբայ, սպրդելու՝ աշ մտնելու ետեւ կըլլան, նարսարք իկեղծել, եւ քաղաւորին ախտերը հանելու համար պատրաստ են պատուոյ եւ խղմանանքի դեմ ամեն բան ընել. վնայ այն քաղաւորին որ անոնց շարարուեստ հնարիցը ձեռքն է մասնուած : Կորսուած է թէ որ անոնց շողոփորբութիւնը մերժելով իրեն համարձակ նշմարութիւն փարձողները շարքէ : Ահա այսպիսի խորհրդածութիւններ կընէի քուստութեանս մեջ, եւ բոլոր Մենսորեն յաճներս միտքս կըրէի :



« Այն ժամանակ Մեսոփիս իւր գերիներուն հետ Ովասիսի անապատին լեռնակողմը զիս իրկեց, որպէսզի անոնց հետ իւր բազմագունդ խաւիսին արածեմ :

Հոս Կալիպսոյ Տելեմափն խօսքը կտէց ու ըսաւ .  
 « Ուրեմն ինչ ըրիր այն ժամանակ դուն որ Սիկիլիոյ մէջ աւելի կուզէիր մեռնիլ քան քե գերի ըլլալ : »

Պասասխանեց Տելեմափ . « Թշուառութիւնս օրէ օր կաւելնար, մահուան ու գերուքեան մէջ ընելու ընտրութեան ողորմելի միտքարութիւնն ալ շունեի. հարկ եղաւ գերի ըլլալ եւ բաղդին ամեն դառնութիւնները նաւակել. սլ ինծի տեղէ մ'ալ յոյս շմնաց, եւ ինզգինս ազատելու համար եւ ոչ իսկ կրնայի բերանս բանալ :

« Յետոյ Մենսոր պատմեց ինձ որ զինքն երովպացոց վաճառեւ եւ անոնց հետ երովպիս գնացեր է : Իսկ ես սոսկալի անապատներու մէջ հասայ, ուր բոցակեզ աւազով ծածկուած են դաշտերը, եւ լեռանց գագաթը պատած մեծասառոյց ձիւնը յաւերժական ձմեռ մը կ'ձեւացրնէ, եւ խաւիսքը կերակրելու համար ծայրերու մէջ այն սեպացեալ լեռանց սարաւանդին վրայ միայն արօտ կ'գտնուի : Իսկ հովիտներն այնպէս խորանիս են, որ հազիւ արեւուն հառազայրները կհասնին :

« Հոն հովուէ զատ մարդ շէր գտներ, անոնք եւս երկրին պէս վայրենի էին : Գիշերն իբուն բշուառութիւնս ողբալով կանցրնէի, եւ առտուրնէ մինչեւ երիկուն կհովուէի՝ որպէսզի գերիներուն զլխաւորին գազանամիտ կասաղութենէն ազատիմ, որ իւր ազատութիւնը գտնելու եւ տիրաւեր նախանձն ու տիրոջը օգտին վրայ ունեցած փոյքը ցուցրնելու համար՝ ուրիշներուն վրայ ամբասանութիւններ կըրնէր. այս գերւոյն անունն էր Բուսիս : Այսպիսի դժնդակ կենաց շկարեւալով դիմանալ, պէտք էր որ ես մեռնէի. ուսի եւ օր մը ծանրա-

քախիծ ցաւես հօսս մտոցայ, քարայրի մը հով խոսիկն վրայ երկրնցայ, եւ ալ վճացս համբերելու կարողութիւնս հասնելով՝ հոն կեցեր մահուանս կապաւէի :

« Մեյմ'ալ դիտեցի տեսնեմ որ բոլոր լեռք կասասներ, կարծես քէ կաղնիք եւ շոնք լեռան ծայրէն վար կիջնային. եւ երբոր հողմք դադարեցան, քարայրէն անեղագոջ ձայն մը էլաւ ու ինծի այս խօսքերս ըսաւ .  
« Որդիդ իմաստնոյն Ողիսեայ, պէտք է որ դուն եւս անոր պէս վճաց համբերելով մեծ ըլլաս. միշտ երջանիկ եղած քագաւորք քագաւոր ըլլալու արժանի շէն, վասն զի մեղկութիւնք զիրենք կապակեանք, եւ հպարտութիւնն զիրենք կգինովցընէ: Ո՛րշափ երանելի պիտի ըլլաս քէ որ քուստուրքանցդ յաղքես եւ զանոնք երբեք մտեղ շհանես : Իրակէն նորէն պիտի տեսնես եւ փառեղ մինջեւ յաստեղս պիտի բարձրանան : Երբոր դուն եւս մարդկանց տեր ըլլաս, յիշէ որ ասէնօք դուն ալ տկար՝ աղիւս եւ վճակիր եղար. զիրենք սիտփելը քեզի զուարեութիւն դառնայ . սիրէ ծողովուրդդ, ասէ շողմոքութիւնք, եւ զիտցիր զի մինջեւ որ ինքզինեդ շշափաւորես եւ արիաբար կիրքերուդ շյաղքես՝ շես կրնար մեծ ըլլալ :

« Այս աստուածային խօսքերք արիս խորունկը քափանցեցին, եւ անոր ուրախութիւնն ու քաջութիւնք նորէն արժարձեցին : Չզգացի ընտ այն սոսկումը՝ որ երբ դիմ մահկանացուաց հետ տեսնուին՝ մարդուս գրիտոյն մագերը կհամնեցընեն եւ արիւնք երակացը մեջ կստեցընեն: Անխառով ոտք էլայ, եւ ծնկի վրայ գալով ձեռուրներս երկինք տարածեցի ու երկրպագութիւն ըրի Աքենասայ, ուսկից կկարծէի քէ այս պատգամն ինձ ազդեցաւ : Միանգամայն ինքզինես փոխուած՝ ուրիշ մարդ դարձած կզտնէի. իմաստութիւնք միտես կլուսաւորէր. կիրքերս սանձելու եւ երիտասարդութեանս

բափը կեցունելու գօրութիւն մը վրաս կզգայի : Բոլոր անապատին հովուացը սիրելի եղայ. վերջապէս հեզունքեամբս, համբերութեամբս եւ ժուրեամբս՝ նոյն իսկ այն անգութ Բուսիսին սիրել կակողցուցի, որ միւս ստիպաց վերակացուն եր, եւ իսկզբան ուզեր եր զիս շարժարել :

« Եւ գերութենեւ ու միայնութենեւ շատ շնանձրանալու համար կարդալու զիրք կփնտռէի. վասնզի միտքս սնուցանելու եւ զօրացունելու կրքութիւն մը ջգրտելով՝ մեծ տեսութեան մեջ կիյնայի : Եւ ինքնիրենս կրտէի. Երանի անոնց որ անկարգ զուարեութիւններէ կխորթին, եւ անմեղ կենաց անուշութեամբք գիտեն գոհ ըլլալ : Երանի անոնց որ իրենք զիրենք կրթելով կզուարեանան, եւ որ կախորթին ուսմամբ իրենց միտքը մշակել : Ոխտելով բախտն ուր որ զիրենք նետէ, անոնք միտք հետերնին կսանին իրենց գրօսանքը. եւ ձանձրութիւնն որ ուրիշ մարդիկը նաեւ իվայելս գրգանաց կհայէ կըմառէ, անձանօր է անոնց համար որ կարդալով կըգրադին : Երանի անոնց որ ընթերցասէր են, եւ ինձ պէս ընթերցմունքէ զրկուած շեն :

« Այսպիսի խորհուրդներ մտիս մեջ ընելուս ասէն՝ մէյմ՝ ալ միքին անտառի մը մեջ մտայ, ուր յանկարծ ձերունի մը տեսայ որ ձեռքը զիրք մը բռնած եր : ձակասը լայն եր, հաղատ ու քիչ մը խորտոմած. ներմակ մօրտքը միջեւ մեջքը կիջնար. հասակը բարձր եւ մեծավայելու. երեսները դեռ առոյգ էին եւ կարմիր. առուրները վառվռուն եւ քափանցող. ձայնը անոյշ, խօսակցութիւնը պարզ եւ սիրելի : Ոչ երբէք այնպիսի պատկառելի ձերունի մը տեսած էի : Տերմոսիրիս եր անունը եւ Ապոլոն աստուածոյն փութն եր, զոր Եգիպտոսի քաղաքացաց այս անտառին մեջ շինել տուած մեհենին մեջ կը-

պատեր: Իսկ ձեռքը բռնած գիրքը՝ դից օրհներգութեանց հաւաքածոյ մի էր: — Բարեկամի մը պէս քովս մօտեցաւ եւ իրարու հետ խօսիլ սկսանք: Անցած գնացած բաներն այնպէս լաւ կ'պատկեր՝ զորս կարծես քեզ շփու առջեւը կ'սեսնէի. բայց համառօտ կերպով մը կանցներ, որով ոչ երբեք պատմածէն ձանձրացայ: Խորագնից իմաստութեամբը զապագայն կ'գուշակէր, եւ ասով քեզ մարդիկ եւ քեզ անոնց մտքէն անցունել կ'ըցած խորհուրդները կ'իմանար: Այնչափ խոհականութեամբն ալ հանդէս՝ զուարթ էր եւ բարետէր. եւ այս մարդուն այն ալեւորեալ հասակին մէջ ունեցած շնորհը՝ եւ ոչ իսկ գեղածիծաղ մանկութիւնն ունի. ուստի եւ այն երիտասարդները կ'սիրէր՝ որ հլու էին եւ առաջինատէր: Քիչ ժամանակէն վրաս մեծ սէր կ'ապեց եւ զիս միսիրարէլու համար զրբեր տուաւ ինձ: Զիս իւր տղան կ'ընչէր եւ ես իրեն շատ անգամ՝ Հնչը իմ, կրսէի, ասուածներն որ ձեռքէս զՄենտր առին, վրաս զբացին ու զքեզ ինձ նորէն ապաւեն տուին: Այս ձերուցին որ անուտօս Որփեսոսի եւ կամ Կինոսի պէս ասուածագրեցիկ էր, իւր շինած ճերմուածներն ինձ կ'կարդար եւ ուրիշ շատ մը Մուսայից սիրելի եղած սխալելի ճերմուց բանաստեղծութիւններն ինձ կ'ուտար: Երբոր իւր ձիւնափայլ պնդնաւորը կ'հագներ, եւ փոքսրեայ ճնարը ձեռքը կ'առնուր, վագրեք, առիւծք եւ առջեւ կուգային քովը կ'ծնէին եւ ոտուրները կ'ըզէին. մարդապայք անտունէրէն կ'ելլէին կուգային շորս կողմը կ'զարեին. ծառերն անգամ կ'գորովէին, եւ կ'կարծէիք քեզ ծայռերն իսկ քաղցրալուրնուագացը հրապուրանքէն շարժած լեռանց ծայրէրէն կուզէին վար իջնալ: Իսկ ինքն ասուածոց մեծութիւնը կ'երգէր, դիւցազանց առաջինութիւնն եւ այն մարդկանց իմաստութիւնը՝ որ հեռութիւններէ աւելի

վեր կդասեն զփառս : — Սեպ կհաջալերէր զիս որ արիանամ, վասն զի կրսէր աստուածներն ոչ երբէք պիտի ձեռքէ բողուն ոչ զՌիսելս եւ ոչ անոր որդին : Եւ վրայ կբերէր քե օր մը դու եւս Ապողոնին պէս՝ Մուսայից պատօտնը պիտի հովուաց սուրեցունես :

Ապողոն, կրսէր, բարկանալով Արամազդայ վրայ որ իւր շանբերովը նաեւ ամենագեղեցիկ օրերուն երկինքը կխոռովէր, ուզէց անոր վրէժն իկիկրոպայից հանել որ անոր շանբերը կձուլէին, զարկաւ զանոնք նեճահար սպաննէց : Մեկէն ետնայ լեռան պոռփացած բոցոյ մերիկները դարբեցան. ու այն սոսկալի ուռերու հարուածներն՝ որ սալերու վրայ զարնուելով երկրիս սանդարամբներուն ու ծովուն անցնողոցը հեծել կուտային՝ ալ մշտնաւ շլուռեցան. եւ այսպէս երկարն ու պղինձը կիկրոպներէն շծեծուելով՝ սկսան ժանգոսիլ : Այս բանիս վրայ Հեփեսոս կասդած՝ իւր դարբնոցէն դուրս կելլէ, ու կաղուքեանն ալ շնայելով՝ Ռիսմարս կվազէ, ու հրեճած, վրան զլուխը սեւ փոշով ծածկած՝ աստուածոց ժողովը կհասնի, եւ դառն զանգասներ կրքափէ : Արամազդ Ապողոնին վրայ կբարկանայ, երկինքէն կվռնէ ու երկրիս վրայ կնետէ. բայց Ապողոնի կառքը քե եւ պարսպ մնացած՝ իւր սովորական քնքազքը դարձեալ յառաջ կսանէր՝ օրն եւ գիշեր եւ եղանակաց կանոնաւոր փոփոխութիւնը մարդկանց շարու :

« Ապողոն բոլոր իւր նառագայքներէն զրկուելով՝ ստիպուեցաւ հովուութիւն քնել, եւ Ասմեղ քաղաւորին ոչխարներն արածել : Մրինգ մը առած կնուագէր, եւ միւս հովիւները ախանակիս աղբիւրի մը եզերքը նեղարեւնեաց հովանոյն ճակ կժողովէին որպէսզի անոր երգերը լսեն : Ասոնք մինչեւ այն ժամանակ վայրենի եւ անասնաբարոյ կեանք մը անցուցեր էին. իրենց

բոլոր բոլոր գիտցածն էր ուշադրեցին արածել, բուր-  
դերնին կտրել, կաթերնին կթել, և պանիր շինել. դառ-  
սավայրը անապատ մըն էր :

« Բիշ ժամանակի մեջ Ապողոն այս հովուաց սով-  
րեցուց այն ամենայն արուեստներն՝ որ ախորժեյի կը-  
նեն զկեանս : Ծաղկըները կերգէր որոցմով կպսակի  
գարուն, անոր բուրած անուշահոտութիւնը, և գար-  
շապարին սակ բուսանող դալարին: Յետոյ ամառուան  
նեշալի գիշերները կնուագէր, յորս զեփիւռոյ կզովա-  
ցընեն զմարդիկ, ու ցօղն ալ երկրիս ծարաւը կան-  
ցընէ : Երգոցը մեջ կլիբէր նաեւ այն ոսկեփայլ պտուղ-  
ները՝ որովք առունն մշակաց աշխատանքը կվարձատրէ,  
և ձմերուան հանգիստը, յորում տղայք ուրախ զուարթ  
կրակի տով պար կընեն : Կերգէր դարձեալ լեռները  
ծածկող նսեմասուէր անտառները, և խորածոր հո-  
վիտներն՝ ուր առուակի հազարումեկ պտոյտներով կար-  
ծես թէ գեղածիծաղ մարգերու մեջ կվազվռտեն : Սո-  
վրեցուց հովուաց նաեւ թէ որսն էն զիւղական կենաց  
բերկրութիւններն՝ երբոր գիտէ մեկն անպանոյն բնու-  
թեան ունեցած շնորհալի բաներուն համն առնուլ :

Այսպէս հովիւք իրենց արեգովը քազաւորեն աւելի  
երջանիկ եղան. և սուրբ զուարեութիւնք որ ոսկեձե-  
ղուն պալատներէ կփախաին՝ կվագէին իրենց խրհիք-  
ները կրտսիէին : Խաղ, ծիծաղ և շնորհիք՝ ամեն տեղ  
հովուաց էտէն կերբային : Ամեն օր իրենց համար  
տուն էր. սլ ուրիշ բան չէր լսուէր հոն՝ բայց երբ թռչնոց  
դայլայլիկը, կամ զեփիւռներու անոյշ շունչերը՝ որ  
ծառոց նիւղերուն մեջ կխաղային, կամ ժայռերէն քա-  
փած վնիտ ջրերուն հանած խոխոջը, և կամ Ապո-  
ղոնին նեշտող հովուաց Մուսայից ազգած երգերը :  
Այս ապտածը կսովրեցընէր անոնց արշաւահանդեսի

մեջ մրցանակ առնուլ, եւ նետով այծեամներ ու եղջերուներ զարնել : Այնպէս որ աստուածներն անգամ սկսան հովուաց վրայ նախանձիլ. վասն զի այս կեանք բոլոր իրենց փառքեն անելի փաղցր երեսեցաւ աշուրնուն, ուստի եւ զԱպողոն նորեն յՈղիմպոս կանգեցին :

« Որդեակ իմ, այս պատմութենէս պէտք է որ դու խրատ փաղէս. որովհետեւ որ դու ալ հիմա Ապողոնի վիճակին մեջն ես : Մշակէ այս ջբանած կոճ երկիրը. իրեն պէս անապասք ծաղկեցուր, սովրեցուր այս հովուաց ներդաւնակութեան ինչպիսի զմայլելի բան ըլլալը. անոնց կասաղի սրտերը կակղացն. ցուցուր անոնց զսիրելին առաքինութիւն. հասկըցուր քե սրշափ փաղցր է վայելել միայնութեան անմեղ զուարնութիւններն, զորս ոչ ոք կրնայ հովուաց ձեռքէն յափճակել : Օր պիտի գայ, որդեակ իմ, օր պիտի գայ որ վիճք եւ հոգք որ քազաւորաց շորս կողմը կպատեն, քեզի փրկեսուել պիտի Տան հովուական կեանք : — Այս ըսելով Տերմոսիրիս ինձ սրինգ մը տուաւ որուն ձայնը այնպէս անուշ էր՝ որ շորս կողմը տարածուելով՝ այն լեռներուն արձագանգներէն շուտ մը մտաբնակ հովիւները վազեցին մեր բոլորսիքը ժողովեցան : Իմ ձայնս՝ աստուածային դաւնակութիւն մը առաւ. իսկ ես զմայլած եւ ինձմէ դուրս ելած՝ բնութեան դաւճերն զարգարած գեղեցկութիւնը կերգէի : Բոլոր օրն ու գիշերուան մեծ մասը մեկտեղ կանցընէինք. եւ հովիւք իրենց խրնիքներն ու հօտերը մոռնալով՝ դաս տուած ժամանակս շորս դիս զմայլած ու անշարժ կկենային : Ոչ եւս ամայի կերեւային այն անապատները. ամեն բան հոն ախորժելի դարձած էր ու գեղածիժաղ. կարծես քե բնակչաց կրքուելովը երկիրն եւս կփաղցրանար :  
Ստեպ զոհ մասուցանելու համար Ապողոնի մեհեանը

կժողովէին՝ որուն հուրմն էր Տերմոսիրիս : Հովիւի  
խպատիւ սասուածոյն՝ գլուխնին դաբնիով պսակեալ  
հոն կուգային . հովուումիք եւս ծաղկէ պսակներով  
կուգային պարելով, եւ գլուխներնուն վրայ կողով-  
ներով կրէրէին իրենց սրբազան նուէրք : Զոհէն ետք  
գեղջկային կոշունք կրնէինք . ամենէն քաղցրահամ կե-  
րակուրնիս մեր այծերուն ու ոշխարներուն կարն էր,  
գոր անձամբ կկրէինք, եւ մեր ձեռօք ժողոված պտուղ-  
ներ՝ ինչպէս սրմաւ, բուզ եւ խաղող : Նստաբաննիս  
խոսն էր, եւ սաղարբախիս ծառերը՝ քաղաւորաց  
պալատներուն ոսկեգօծ ձեղուններէն աւելի՝ ախորժելի  
շուք մը կուտար մեզի :

« Բայց դիպուած մը գիս մեր հովուացք մեջ բոլոր-  
ովին հոշակաւոր քրատ : Օր մը սովալլուկ առիւծ մը  
վազէց խառանցս վրայ յարձակեցաւ : Մէկէն սոսկայի  
ջարդ մըն է սկսաւ : Ես հովուական գաւազանէս զաս  
ձեռքս բան մը շունէի . աներկիւղ քաջութամբ վրան  
դիմեցի : Առիւծը բաւերք տնկէց, ժանիքն ու նիրան-  
ներն ինձ կցուցրներ, շոր ու բոցաշունչ կոկորդը բա-  
ցաւ . արիւնուոճ աշուրները կրակ կցասեցներ, եւ  
Երկայն պոռովը կողերը կծեծէր : Պէտին զարկի զինքը,  
եւ Եգիպտացի հովուաց պէս հագած էրկաթէ հիւսուած  
բանկոնակս արահապանէց զիս գազանին ժանիքէն որ  
զիս պիտի բզկի բզկի բներ : Երեք անգամ գետին զարկի  
զինքը, եւ երեք անգամ Էլաւ կանգնեցաւ, եւ այնպէս  
սոսկայի կերպով կմռնէր՝ որ շրջակայ անտառները  
կրնգային : Վերջապէս քեւերուս մեջ առի խղբեցի  
զինքը . եւ հովիւի որ ականատես էին յաղթութեանս՝  
ուզեցին որ այն անագին առիւծուն մորքը վրաս առ-  
նում :

« Այս քաջութեանս եւ հովուաց գեղեցիկ փոփո-



խուրեան համբար բոլոր Եգիպտոսի մեջ հռչակուեցաւ, եւ մինջեւ Սետուսրին ականջն հասաւ : Իմացաւ որ իբրէւ փիւնկեցի բռնուած այն երկու գերինեւեկն մեկն՝ այս գրեթէ անմարդաբնակ անապատներուն մեջ ոսկեղինիկ դարը նորոգեր է : Ուզեց զիս տեսնել, վասն զի Մուսայք սիրելի էին իրեն. եւ մարդկային կրթութեանը համար եղած ամեն բան՝ ախորժելի էր իւր վեհ արժին : Տեսաւ զիս, յօժարութեամբ խօսեցաւ լսեց եւ հասկըցաւ որ Մեսոփիս ազահութեան համար զինքը խաբէր էր. մեհնջեմաւոր բանի դասապարտեց զինքը, եւ անիրաւութեամբ ժողոված բոլոր հարսուքիւնը ձեռնէն առաւ : Ո՛հ, կրտեր, նրշափ թռուաւ է նա որ միւս մարդոցմէ վեր կնստի. շատ անգամ շերմար նեմարսուքիւնը իւր աջօր տեսնել. վասն զի շորս կողմն այնպիսի անձինք առած են՝ որ շէն քողուր որ նեմարսուքիւնը մինջեւ իրեն հասնի. իւրաքանչիւր ոք իրենց շահուն համար կուզեն զինքը խաբել. ամենքը տիրասիրութեան սակ իրենց փառասիրութիւնը կժածկեն : Թագաւորին վրայ սեր կձեւացրնեն, բայց՝ անորսուած հարսուքիւնը միայն է որ կսիրեն. իսկ իրեն վրայ ունեցած սերերնին այնշափ քիչ է՝ որ աշքը մեհալու համար կեռողոքորթեն զինքը եւ կմասնեն : — Այնուհետեւ Սետուսր շատ սիրով հետս վարուեցաւ, եւ միտքը դրաւ որ զիս նաւերով ու զօրով Իրակէ յուղարկէ՝ որ երբամ Պենէլոպէն իւր տարփաւորացը ձեռնէն խալլութեմ : Նաւասորմիղը պատրաստուած կեցեր էր, եւ մենք ժամ մը յառաջ նաւարկել կնայեինք : Բախտին հարուածոցը վրայ զարմացած կմտածէի որ ինչպէս կործանած խոնարհեցուցածը յանկարծ վեր կհանէ կկանգնէ. եւ զյխոյս եկած այս փորձէն յոյս կառնէի թէ ուրեմն օր մը շէ նէ օր մը եւ Ողիսէս երկարատեւ վճակրութենէ ետեւ՝ վերջապէս

կրնայ իւր քաղաւորութիւնը դառնալ : Կրսէի մտքէս  
քէ կարելի է որ Մենսորն ալ օր մը տեսնեմ, քեպէտեւ  
Եթովպիոյ անձանօք գաւառները տարուած նետուած ըլ-  
լայ : — Եւ երբ ես Մենսորի վրայ լուր մը առնելու  
փաստաբով՝ երթալս կուտացրնէի, Սեփոսը որ արդէն  
ծերացած էր, յանկարծակի մեռաւ, եւ իւր մահուամբը  
նորանոր աղէտից մեջ ընկայ :

« Այս կորստեանս վրայ բոլոր Եգիպտոս անմխտաբար  
սուգ մտաւ, ամեն տուն իւր ամենէն ազնիւ բարեկամը,  
իւր պաշտպանն ու հայրը կորուսած կկարծէր : Ծերեր  
ձեռուրնին երկինք վերցրնելով կկանգէին. երբէք Եգիպ-  
տոս այսպիսի լաւ քաղաւոր մը ջեր ունեցած, եւ երբէք  
ասոր նմանը պիտի ջունենայ : Ո՛վ աստուածք, պէտք  
էր որ կնամ զինքը բնաւ մարդկան ջջուցրնէիք՝ եւ կամ  
ջուցրնէլէն յետոյ երբէք ջվերցրնէիք : Ինչո՞ւ համար  
մեծին Սեփոսը մահուրնէ ետք մեք դէռ կապրիմք :  
Երիտասարդներն ալ կրսէին. Եգիպտոսի յոյսը կորեաւ.  
Երանի մեր հարցը որ այսպիսի քաղաւորի ժամանակ  
ապրեցան, իսկ մեք՝ իւր կորուստն ողբալու համար  
միայն զինքը նանջցանք : Իսկ իւր ծառաները՝ զիւր  
ցորէկ կուլային : Յուրարկաւորութեանը հանդիսին  
ժամանակ հառասուն օր նաեւ հեռաւոր տեղերէն գուն-  
դագունդ կվազէր կուգար ժողովուրդը, վասնզի ամեն  
մարդ կուզէր մէկ անգամ մ'ալ տեսնել զմեծն Սեփոսը.  
ամեն մարդ կուզէր անոր պատկերը միտքը պահել, եւ  
շատերը կուզէին անոր հետ իմիասին գերեզման մտնել :

Իւր կորստեան ցաւն անեցրնող մէկն ալ եղաւ որդին  
Բոֆորիս. ասիկա ոչ օտարականաց հետ մարդասի-  
րութիւն, ոչ զիտութեանց փոյր, ոչ առաքինի անձանց  
վրայ համարմունք էւ ոչ փառաց վրայ սեր ունէր :  
Հօրը մեծութիւնը պատճառ էր եղէր որդւոյն քաղաւո-

րելու անարժան ըլլալուն : Զեղխութեան եւ զազանաբարոյ ամբարսաւանութեան մեջ սնած՝ կարհամարհեք զմարդիկ՝ զանոնք իրեն համար միայն ստեղծուած համարելով, եւ կկարծեք թէ ինքն անոնցմէ տարբեր բնութիւն ունի. իւր ախտերը միայն զոն ընել եւ հօրն այնչափ խնամով դիզած զանձերն վասնելու, խեղներու արիւնը ձծելու, եւ վերջապէս բոլորսիքն առած անմիտ երիտասարդաց մարդելոյց խրատուցն անսալու կնայեք, եւ հօրը մտերիմ խորհրդակից խելացի ձերերն արհամարհանօք իրմէ կհեռացընէք : Զե թէ քազաւոր՝ այլ հրեւ մըն եր : Բոլոր Եգիպտոս կհեծեք. եւ թեպէտ Եգիպտացիք հօրն անուանը համար որդւոյն վասու անգութ զնացիցը կհամբէրէին, սակայն ինքը դեպի իւր կորուսը կդիմէր, եւ այնպիսի անարժան քազաւոր մը շէր կրնար երկար ժամանակ քազաւորել :

« Ա՛յ ինձ յոյս շկար Իթակէ դառնալու : Ծովէզերքը Պեղոսիոնի մօտ աշտարակի մը մեջ կբնակէի, ուսկից պիտի նաւ մտնէինք թէ որ Սետոսը շմեռնէր : Մեռնփիս նարսարութեամբ բանտէն էլլելով՝ նոր քազաւորին հով դարձեալ պաշտօնի եր հասեր. եւ Սետոսըին երեսէն իյնալուն վրէժն ինձմէ հանելու համար՝ զիս այն աշտարակին մեջ փակեց : Խոր տրտմութեան մեջ օրերս ու գիշերներս կանցընէի. Տերմոսիրիսին ինձ համար զուշակածներն եւ այրին մեջ լսածներս բոլոր երազ կերեւէին : Կտեսնէի որ ալիքները կուզային բանտարգել կեցած աշտարակիս ոտքը կզարնուէին. շատ անգամ կկենայի կդիտէի մտրկակոծ ծփեալ նաւերն որ այն ժայռերուն՝ որոց վրայ աշտարակս շինուած եր, զարնուելու եւ շարդուբուրդ ըլլալու վստակի մեջ էին. եւ այն նաւաբեկութեան մեջ զտնուող մարդոցը վրայ փոխանակ ցաւելու՝ անոնց բախտին կնախանձէի, եւ ինքն

իրենս կրսէի. Ասոնք էիք ժամանակէն կամ իրենց կենաց բուստութենէն պիտի ազատին, եւ կամ երկիրնին պիտի հասնին. իսկ ես, աւնդ, ոչ մէկը կրնամ յուսալ եւ ոչ միւսը :

« Երբ այսպէս անօգուտ ցաւերով ինզգինս կմաշէի, եւ անա կայմերու անստ մը աշխու երեւցաւ : Հողմուռոյց առազասներով ծովը կծածկուէր, եւ անբիւրիակներու հարուածոցը սակ կփռփրային այլիք : Ամեն կողմէն խառնածայն աղաղակներ կլսէի. կսեսնէի որ ծովեզերքն եզիպացոց մէկ մասը անուղողի մեջ՝ զենքի կվազէին. իսկ ուրիշները՝ այնպէս մը կերեւար՝ քէ այն նաւասորմդին ընդ առաջ կվազէին, որ հասնելու վրայ էր : Շուտով իմացայ որ այս եկող օտար նաւաց ոմանք Փիւնիկէն էին եւ այլ կիպրոս կզգիեն. վասնզի գլխուս եկած փորձանքներէն նաւարկութեան կիմսանայի : Եզիպացիք մեջերնին բաժնուած երեւցան ինձ, եւ դիւրաւ գուշակեցի քէ անմիտ Բոֆորիս իւր բռնութիւններովը հպատակներն իրեն դեմ ապրաստմբեցուցեր եւ քաղաքական պատերազմ էր զրգուէր : Հոն աշտարակին վրայէն արիւնահեղ կռուոյ մը ակասեսն եղայ : — Այն եզիպացիք որ օտարներն իրենց օգնութեան էին կանօր, նաւերնէն վար իջնալու անոնց օգնելէն էհէ՛լ անոնց հետ յարձակեցան մնացած եզիպացոց վրայ՝ որոց գլուխ կեցեր էր նա ինքն թագաւորը, եւ կսեսնէի որ իրեններն իւր օրինակաւ կխրախուսէր. Արեւ ասուածոյն կնմաներ. իւր շորս դին արեան հեղեղներ կվազէին. կառքին անխներս սէ՛ր քանձրամած էւ փրփրազեզ արեամբ ներկուած էին, եւ հազիւ կրնային նզմուած մեռելոց դիականց շեղջերուն վրայէն գլխը գլխորիլ : Այս դեռահասակ, քաջամարմին, կորովի, բարձրահասակ եւ խոռխոս թագաւորն

աշուրներուն մեջ կասաղութիւն եւ յուսանասութիւն կ'իյնայէցրնէր. գեղեցիկ խստերախ նժուգի մը կնմանէր, առանց առջեւն ետէր մտածելու կ'դիմագրաւէր. բայց իմաստութիւնն անոր արիութիւնը շէր շափաւորէր : Ոչ բրած սխալմունքներուն նար զտնել գիտէր, ոչ որո՞հ հրամաններ տալ, ոչ վրան զայի՛ք շարիք գուշակել, եւ ոչ իրեն ամենահարկաւոր եղած մարդկանց խնայել : Եւ սակայն իրեն հաննար շէր պակսէր. քաջութեանը հաւասար էր նաեւ իւր խելքը. բայց ձախող բախտին արկածիցք բնաւ շէր հանդիպած, եւ իւր գեղեցիկ բնաւորութիւնը դաստիարակներուն շարաքայն շողոքորոտքեամբը ապականէր էր : Իւր իշխանութեամբն ու բարեբախտութեամբը գինովցած էր. կկարծէր թէ ամէն բան պէտք է իւր բուռն կամացը տեղի տայ, եւ փոքր բնոյթի մութիւն մը՝ իւր բարկութիւնը կ'բորբոքէր : Այն ժամանակ ալ ոչ բրածը գիտէր եւ ոչ խօսածը, խելքը զլսէն կէրբար. իւր կասաղի գոռոզութիւնը՝ գինըր վայրենի զագան կ'դարձունէր, եւ մեկէն իւր բնական ազնուութիւնն եւ ողջամտութիւնը կ'կորսնցրնէր. իւր ամենէն հաւասարիմ սպասաւորքն անգամ կ'սխալուէին փախօ՞ւլ, եւ իւր ախտերը պաշտողները միայն սիրելի էին իրեն : Ուստի եւ միշտ բուն իւր օգտին դեմ բանէր կ'գործէր, եւ բարեսէր մարդոց իւր բռնած անմիտ նամբան ասելի կ'ընէր : — Երկար ժամանակ քաջութեամբ բազմամբոյս բժնամեացը դեմ դրաւ, բայց վերջապէս բնկնեցաւ : Տեսայ անոր մեռնիլը. փիւնիկեցիներէն մեկուն գեղարդը զարկաւ կուրծքը պատեց. մեկէն սանձերը ձեռքէն արձրկեցան. եւ կամքէն զլորեցաւ, ձիւրուն ոտքին տակ բնկաւ : Կիպրացի գինուոր մը զլուխը կտրեց, եւ մազերէն բռնելով՝ յաղորտեան նշանի պէս յաղբական բանակին կցուցրնէր :

« Բոլոր կենացս մեջ այն արիւնաբարսա զուխը պիտի յիշեմ, այն փակուած էւ մարած առէրն, այն դէղնած ու այլագունած դէմքը, այն կիսաբաց բերանն՝ որ կարծես թէ դէռ սկսած խօսքը լմբնցընել կուզէր, այն գոռոզ էւ սպառնական կերպարանքը՝ զոր մահն իսկ Ձեր կրցեր եղծանել : Բոլոր կենացս մեջ առջիս առջեւը նկարուած պիտի տեսնեմ զայն. էւ թէ որ երբէք զիս պիտի բազաւորեցընեն դիք, այսպիսի շարադէտ օրինակէ ետէւ բնաւ պիտի ջմոռնամ թէ բազաւոր մը արծանի Ձե հրամայելու, էւ իշխանութեամբն երջանիկ ջրլլար՝ մինչէ որ զայն ջնայասակեցընէ բանին : Ոհ, ինչ մեծ թուառութիւն է որ ժողովուրդ մը երջանիկ ընելու սահմանուած մարդը՝ զանոնք թուառ ընելու համար միայն իւր իշխանութիւնը գործածէ :



Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ .

Կպասմէ Տելեմաք թէ Բոհորիսի յաջորդը բոլոր սիրացի զերիներն  
էս դարձունելով՝ զինքն ալ սիրացոց նաւասորմիցն հրամանա-  
սարք Նարբալ՝ Տիրոս բերաւ, և համբան նկարագրեց իրենց  
Պիզմալիոն ազան ու անգութ բազաւորը, իրենց վանառակա-  
նութեան կարգերը, և Տիրոսի մեծնալուն պատհանները : Կրտ՝  
թէ ինչպէս Տիրոս հասնելէն էտեւ երբ կիպրացի նաւով մը  
Իրակէ կպատհասուէր նաւել, իմացաւ Պիզմալիոն թէ ինքն  
օտարական է, ուսի և ուզեց բռնել . բայց բռնաւորին սար-  
փաւորը Ասարթէ՝ նաւարութեամբ մը զինքն ազատեց՝ անոր  
տեղ ուրիշ երիտասարդէ մը վրէժն առնելով :

Կալիպսոյ զարմացած այս խելացի խօսքերը կլսէր :  
Աւելի անոր վրայ կզմայլէր՝ որ Տելեմաք իւր անզգու-  
շուքեամբն ու իմաստուն Մենսորի խրատուցը մտիկ  
շրնելովն քրած յանցանքն անզամ անկեղծաբար կը-  
պասմէր : Պատանոյն վրայ ազնուականութիւն ու  
զարմանալի վեհանձնութիւն մը կտեսնէր, որով ինք  
զինքը կամբասանէր նա, և անխոհեմութիւններէն  
լաւ օգուտ ֆաղած կերէւար՝ այնուհետեւ խոհական,  
նախասես և շափաւոր ըլլալու : « Յառաջ սար պատ-  
մութիւնդ, սիրեցեալդ իմ Տելեմաք, ըսաւ դիցունիին,  
վասնզի շատ կփափագիմ լսել թէ ինչպէս եզիպտոսէն  
էլար, և ճուր նորէն իմաստուն Մենսորը գտար, որուն  
կորստեանը վրայ իրաւամբ այնչափ կցաւէիր :

Նորէն պատմել սկսաւ Տելեմաք ու քսաւ . « Եգիպտացոց մեջէն անոնք որ աւելի առաքինիներն էին ու քաղաւորին աւելի հաւատարիմ , աւելի ալ սկարներն ըլլալով , երբ տեսան թէ քաղաւորն եւս մեռաւ , ստիպուեցան միւսներուն տեղի տալ խոնարհիլ . ուրիշ քաղաւոր մը դրին ' որոյ անունն էր Տերմոսիս : Փիւնիկեցիք ' նոր քաղաւորին հետ դաշինք դնելէն ետէ կիպրացի զօրաց հետ ետ քաջուեցան : Բոլոր փիւնիկեցի գերիներն արձակեց Տերմոսիս , անոնց հետ նաեւ զիս : Հանեցին զիս առտարակէն . ուրիշներուն հետ նաւ մտայ , եւ յոյսն սկսաւ արտիս մեջ նորէն ծագիլ : Յաջող հողմով մեր առագասները կլեցուէին , թիավարք փրփրադեզ ալիքը կը պատռէին , ընդարձակ ծովը նաւերով ծածկուած էր . նաւաստիք ուրախութեան ձայներ կհանէին , Եգիպտոսի ծովափունքը մեզմէ կփախաւէին . բլուրք եւ լեռինք երթալով կը առտանային : Ա՛յ կսկսէինք երկինք ու ջուր միայն տեսնել , եւ արեւն ելլելու վրայ էր . կարծես թէ իւր բոցանանանք հառազայքները ծովուն ծոցէն կհաններ , եւ հորիզոնին վրայ դեռ քիչ մը տեսնուած լեռներու գագաթներուն վրայ զարնելով ' զանոնք կոսկեգօծէր . եւ կապուտակ երկինք բարեյաջող նաւարկութիւն մը մեզ կխոստանային :

« Թեպէտէ զիս իբրեւ փիւնիկեցի արձակեցին , սակայն փիւնիկեցոց մեջ շկար մեկն որ զիս նախաձեր : Նարբալ ' որ եղած նաւուս նաւասպետն էր , անունս ու հայրենիս հարցուց : Փիւնիկիոյ ո՛ր քաղաքէն ես դու , քսաւ ինձ : Պատասխան տուի թէ ես փիւնիկեցի շեմ , այլ Եգիպտացիք ծովու վրայ փիւնիկեցի նաւու մը մեջ բռնեցին զիս . իբրեւ փիւնիկեցի երկար ժամանակ վիշտ քաշեցի , եւ իբրեւ փիւնիկեցի դարձեալ ազատութիւնս գտայ : Ուրեմն ո՛ր երկրէն ես , կրկնեց Նարբալ : Պա-



սասխան սուի. ես եմ Տէլեմաք, որդի Ռդիսեայ, արհային Իրակեայ ինունասան : Հայրս Տոյան պաշարող բազաւորաց ամենէն համբաւաւորն եղաւ, բայց դիք բող շտուին իրեն որ նորէն իւր հայրենիքը սեսնէ : Իր էտէնէն ընկայ որ զինքը փնտռեմ. բայց բախտը զիս ալ իրեն պէս կհալածէ : Կտեսնես դու բռնաւ մէկ պասանի մը, որ իրեններուն հով դառնալու եւ զհայրը զսնելու եղջանկուրքէնէն զաս բանի մը շփափագիր :

« Նարբալ զարմացմամբ ինձ կհայր, ու շեմ զիտեր վրաս ինչ երկնածնորն բան մը կտեսներ՝ սովորական մարդոցմէ վեր : Բնութեամբ անկեղծ եր եւ վեհանձն. բռնաւորքեանս վրայ ցաւեցաւ, եւ այնպիսի մտերմութեամբ մը հետս խօսեցաւ, զոր դիք զիս անագին վսանգէ ազատելու համար իրեն կազդէին : — Ով Տէլեմաք, ըսաւ ինձ. հու խօսիիդ վրայ բնաւ ես շեմ տարակուսիր, եւ շեմ իսկ կարող տարակուսիլ. դեմիիդ վրայ նկարուած ցաւն ու առափնութիւնը շէն բողոր որ վրայ կասկածիմ. կիմանամ նաեւ որ դիք՝ զորս միտս պատէր եմ, կսիրեն զեզ եւ կուզեն որ ես ալ զեզ որդւոյս պէս սիրեմ : Գեզի օգտակար խրատ մը տամ, եւ անոր փոխարէն ուրիշ բան շեմ ուզեր, բայց միայն խորհրդապահ լռութիւն : Բնաւ մի վախճար, ըսի իրեն, ինչ որ ալ ուզես ինձ վստահիլ, դժուարութիւն շեմ քաշեր լռելու. քեպէտէ դեռ երիտասարդ եմ, սակայն զաղտնիքս ուրիշի ջրսելու մեջ ծերացեր եմ. եւս առաւել նր եւ իցէ պատճառանօք եւս ըլլայ՝ ուրիշին զաղտնիքը շմասնելու : Նարբալ ըսաւ. Գուն որ դեռ այսշտի մանկահասակ ես, ինչպէս այնպիսի խորհրդապահութեան վարժեցար : Շտա կփափափէի իմանալ քե ինչպէս այս բարեմասնութիւնն ունեցար՝ որ զգօն կենաց հիմն է, եւ առանց անոր նր եւ իցէ ձիրք անօգուտ է : — Պատասխան սուի իրեն. Երբ Ռդիսեա

Տրոյոյ պաշարման կերբար, զիս ծնկուրներուն վրայ առաւ գրկեց, եւ գորովանօք համբուրելէն յետոյ՝ այս խօսքերս ինձ գրուցեց, ինչպէս որ կպասմէին ինձ, որովհետեւ ես դեռ հասկընալու կարողութիւն չունեի. Որդեակ իմ, քե որ օր մը պիտի գայ որ դուն աւրուիս եւ առաքինութիւնը ձեռքէ քողուս, աստուածներն զեզ մէյ մ'ալ ինձ ջջուցընեն. Պարկայից մկրասը քու դեռաբոյս հասակիդ քելը կտրէ, ինչպէս մշակն իւր գերանդիովը դեռափրիք ծաղիկը կգարնէ կկտրէ. եւ քեցամիքս զեզ մօրդ ու իմ աշփիս առջեւ զարնեն ջախջախեն : Եւ առբարեկամս իւր դառնալով, Ո՛վ բարեկամք, քսաւ անոնց, ձեզ կրողում այս սիրելի որդեակս. մանկութեանը վրայ հոգ տարէք. քե որ զիս կսիրէք, հեռացուցեք իրմէ վնասակար շողոմորբութիւնը. սովեցուցեք իւր անձին յաղթել. մասաղասունկ բուփի մը պէս ըլլայ, զոր շտկելու համար կծռեն. եւ մանաւանդ ամեն շանք քրեք, որպէսզի արդար, բարեգործ, անկեղծ եւ խորհրդապահ ըլլայ : Սուս խօսողը՝ մարդ քսուելու արժանի չէ, եւ ո՛վ որ լռել ջգիտէր՝ իշխելու արժանի չէ : — Այս խօսքերը քեզի կկրկնեմ, վասնզի շատ անգամ ինձ կրկնուելով՝ մինջեւ սրիս խորք քափանցած են, եւ յանախ միտքս կքերեմ :

« Հօրս բարեկամները հոգ տարին որ զիս կանուխ տղակուց խորհրդապահութեան վարժեցընեն, եւ մօրս հետք կարգուիլ ուզող բազմաքիւ յանդուզն մարդոց ձեռքէն ընկած վտանգիս վրայ զգացած վշտերնին ինձ կյայտնեին : Եւ այսպէս այն ժամանակէն իվեր զիս խոհական ու ապահով մարդու տեղ դնելով, մեծամեծ իրաց վրայ հետս ծածուկ կխօսեին, եւ այն տարփառներն հեռացընելու համար մտածած հնարքնին ինձ կպասմէին. իրենց վրաս ունեցած այս վտանգութեանը կգարմանայի, եւ անով ալ ինքզինքս այր կատարեալ

կկարծէի : Ոչ երբեք իրենց այս վստահութեամբը զեղծայ. երբեք բերնէս եւ ոչ բառ մը ելաւ որ կարող ըլլար նաեւ դոյզն գաղտնիք մը յայտնել : Շատ անգամ մօրս սիրահարները կ'զանային խօսեցրնել սալ գիս գիտնալով որ տղայ մը տեսած կամ լսած եական բանը շերտաւ պահել. բայց ես գիտէի անոնց հարկաւոր եղած պատասխանը սալ՝ առանց ստելու, եւ առանց իմացրնելու զայն զոր պէտք չէր որ ըսէի :

Այն ատեն ըսաւ ինձ Նարբալ. Կտեսնես, Տէլեմաք, փիւնիկեցւոց զօրութիւնը. իրենց անբիւ նաւերովը բոլոր դրացի ազգաց անաւոր եղեր են. եւ մինչեւ Հեռակէայ արձաններն ըրած վանառաւանսութեամբ դիզած զանձերովը՝ ամենէն ծաղկեալ ժողովրդոցմէ ալ աւելի վեր են : Սէտսուր մեծ քաղաւորն որ բնաւ չէր կարող ծովով անոնց յաղթել, հազիւ կրցաւ իւր բոլոր Արեւելիի տիրոջ բանակաւը ցամաքի վրայ անոնց յաղթել. եւ վրանիս հարկ դրաւ, զոր երկար ժամանակ շնասուցինք : Փիւնիկեցւոց պէս մեծափարքամ եւ մեծագօր ազգ մը չէր կրնար համբերութեամբ գերութեան լուծը վերցունել, եւ ազատութիւննիս նորէն ձեռք ձգեցինք : Սէտսուրին մահը վրայ հասնելով ժամանակ շունեցաւ մեզի դէմ սկսած պատերազմը զլուխ հանելու : Իրաւ է որ իւր զօրութենէն աւելի՝ իմաստութենէն կ'վախնայինք. բայց երբոր զօրութիւնը որդւոյն ձեռքն անցաւ որ ամենեւին խելք շուներ, հասկըցանք քեզի մեզ վախ չկայ : Եւ յիրաւի, վասնզի եզիպտացիք փոխանակ զեն իձեռին մեր երկիրը վազելու եւ զմեզ կրկին անգամ նուանելու, ստիպուեցան զմեզ իրենց օգնութեան կանջելու, որպէսզի զիրենք այս անօրէն եւ անզուրք քաղաւորին ձեռքէն ազատեմք : Ազատարար եղանք իրենց. ինչ մեծ փառք է ասիկա փիւնիկեցւոց ազատութեան ու մեծահարուստ նոխարութեանը :

« Բայց մեք ուրիշները գերութենէն ազատած ժամանակնիս՝ մեք ալ գերի եմք : Ո՛վ Տելեմաք, վախցիր որ ջրլլայ քե մեր Պիգմալիոն քաղաւորին ձեռքն իյնաս . այն անողորմ ձեռքը զորս Դիդէ քոջը Սիբեոս երկանը արեան մեջ քարաւեց : Դիդէ վրեժխնդութեամբ լեցւած՝ խել մը նաւեր առաւ Տիրոսէն փախաւ գնաց, իւր էտէնէն ձգելով շատ մը առաքինատեր ու ազատատէր մարդիկ . եւ Ափրիկէի ծովեզերքը հրաշակէրս հաղաք մը շինեց՝ որ Կարթէոսն կկոշուի : Իսկ Պիգմալիոն անյազ ազատութեամբ սանջուած՝ երթալով ինգլիսնէն աւելի քոռաւ ու հպատակացը ասելի կըրնէ : Մէծ յանցանք է Տիրոսի մեջ ստացուածոց տէր ըլլալը . վասնզի ազատութեամբն անվստահ, կասկածոտ եւ անգուր ըլլալով՝ հարուստները կհալածէ . եւ ապաստանէն կվախնայ :

« Աւելի մեծ յանցանք մըն ալ Տիրոսի մեջ՝ առաքինութիւնն է . վասնզի միտքը դրած է Պիգմալիոն քե առաքինի մարդիկ շէն կարող իւր անիրաւութեանցն ու ապիրատութեանցը համբերել . եւ որովհետէ այսպէս առաքինութիւնը զինքը կդատարարէ, ինքն էս անոր դէմ կդատնանայ ու կզայրանայ : Ամէն բանէ կխռովի ու կսպգնապի, ամէն բան սիրքը կկեղեփէ, իւր շուքնէն կվախնայ, ոչ զիշերը քուն ունի ոչ ցորէկ : Տանջանքը շատցրելու համար այնպիսի զանձերով կլէցունեն զինքը դիմ, զորս շիշխեր վայելել : Երջանկանալու համար ուզածը զինքն երջանկութենէ կզրկէ : Տուածին վրայ կցաւի . կվախնայ միտք որ ջրլլայ քե ունեցածը կորսնցըրնէ, եւ վաստակելու համար ինգլիսնքը կսանջէ :

« Գրեթէ ամենեւին մարդու շէտհուրի . պալատին խորը միտմիտակ, իտար ու արտաքէկ կկենայ . բարեկամներն ամզամ շէն համարձակիր քովն երթալու, վախնալով որ ջրլլայ քե վրանին կասկածի երթայ :

Սուսերամերկ ու սիգաւոր անեղ զունդ մը քանը շորս  
 դին պահպանութիւն կրնէ: Ինքը փակուած կմնայ երե-  
 սուն սենեկի մէջ՝ որ իրարու հետ կհաղորդուին, եւ ամեն  
 մէկը վեց վեց խոտը փականմենեով երկաթէ դռներ ու-  
 նին: Չգիտցուիր թէ այս սենեկաց որուն մէջ կպառկի.  
 իբրեւ սոյոգ կպատմեն թէ ոչ երբեք երկու գիշեր ետեւ  
 ետեւ մի եւ նոյն սենեկին մէջ կպառկի, վասնզի կվախ-  
 նայ որ զինքը կզարնեն կմեռցընեն: Չգիտէր ինչ բան  
 են քաղցր բերկուրքիւնք, եւ որ աւելի քաղցրն է՝ բարե-  
 կամութիւն: Երբոր ուրախութեան վրայ խօսք բլլայ,  
 լաւ կզգայ թէ ուրախութիւն ըստած բանը՝ իրմէ հեռու  
 կվախսի, ու շուգեր իւր սիրքը մտնել: Իւր խորունկ,  
 դաժան ու կասաղի կրակով մը լեցուն աշուրներն ան-  
 դապար ասդիս անդին կդարձընէ: Պզտի ձայն մը որ  
 լսէ, մէկէն ականջները կսրնկէ ու անուղղղի մէջ կիյ-  
 նայ: Երեսը դալկահար է ու նիհար, եւ խորեմած դեմ-  
 քին վրայ միշտ սեւ սեւ հոգեր են նկատուած: Լուս  
 անբարբառ կկենայ, կհեծէ, սրտէն խորունկ խորունկ  
 հառաշանմենե կհանէ եւ շիրնար աղիքը կսրտը խզնին  
 խայրերը ծածկել: Քաղցրահամ կերակուրներէն անզամ  
 կզգուի: Որդիքն՝ որ իւր յոյսը պիտի բլլային, իրեն սու-  
 կումն կբերեն. վասնզի զանոնք իրեն մէյմեկ յիտերիմ  
 քօնամի բրած է: Բոլոր կենացը մէջ վայրկեան մը ապա-  
 նովութիւն ունեցած չէ, եւ այն կեանքն ալ ուրիշ կերպով  
 շիրնար պահել, բայց երբ որոնցմէ որ վախ մը ունի՝  
 անոնց արիւնը բափելով: Անմիջ, շիմանար որ այն  
 անգրութիւնը որուն ինքն ապաւինէր է, որ մը զինքը  
 պիտի կորսնցունէ: Իւր ծանականերէն մէկն, իրեն պէս  
 կասկածոս, պիտի փութայ այսպիսի հրեթի մը ձեռքէն  
 զաւխտինս ազատել: — Ես ասուածներէն կվախ-  
 նամ. ինչ որ ալ քաշեմ, անոնց ինչ ինչ սուած բազաւորին

հաւասարիմ կկենամ: Աւելի կուզեմ որ անիկա զիս մեռ-  
ցրնէ քան թէ ես անոր կեանքը վերցընեմ եւ կամ զինքը  
շալաճսպանեմ: Բայց դուն, Տէլեմա՛ս, ջրլլայ որ Ողի-  
սեւսի որդին ըլլալդ անոր իմացունես. վասնզի այն  
յուսով որ Ողիսեւս Իրակէ որ դառնայ՝ զքեզ ազատելու  
համար իրեն շատ մը ստակ հասուցանէ, զքեզ բանտարգել  
կդանէ: — Տիրոս որ հասանք, Նարբային խրատը  
բռնեցի եւ իմացայ որ բոլոր ըսածները նճմարիտ են  
եղեր: Չէի կրնար հասկընալ թէ ինչպէս կրնայ մարդ  
ինկզիմքը Պիզմալիոնին պէս բռնառ ընել:

« Այսպիսի սոսկալի եւ ինձ համար նորանշանկ  
Տեսարանի մը վրայ ապշած՝ ինքնիրենս կրօտի. Սա  
մարդուն խելքն ու միտքը երջանկութիւն եղեր է, եւ  
միտքը դրեր է՝ որ անոր կարող է հասնիլ հարստութեամբ  
եւ բացարձակ իշխանութեամբ. հիմա բոլոր փափա-  
քածներուն հասած է. եւ սակայն այն հարստութիւնն  
ու իշխանութիւնը իւր բռնառութեանը պատճառ է:  
Թէ որ ինքն ալ հովիւ եղած ըլլար, ինչպէս որ ես քիչ մը  
յառաջ, ինքն ալ ինձ պէս երջանիկ կըլլար. վասնզի  
գիւղական անմեղ զուարճութիւնները կվայելէր, եւ այն՝  
առանց խղնամսանի, առանց քրէ ու բունէ ալ վախ մը  
ունենալու: Սիրէր զմարդիկ եւ անոնց ալ սիրելի կըլլար.  
Ձեր ունենար այն բազմազան զուարճութիւնն որ իրեն  
աւագի պէս անօգուտ են, որովհետեւ անոնց դպշիլ ամզամ  
ձեամարձակիր. այլ ազատաբար երկրիս բերքը կվայե-  
լէր. եւ ոչ երբէք բուն իրացընէ պիտոյ մը կունենար:  
Այնպէս մը կերեւայ թէ այս մարդը բոլոր ուզածը կընէ.  
բայց շատ բան կայ որ ձերնար ընել. ինչ որ իւր կատա-  
ղի կրէրը կուզէն՝ զայն միայն կընէ. եւ զինքը միտ  
բառող սանողներն են ազահութիւն, վախ եւ կասկած:  
Ամենուն զքեզ կերեւայ, բայց եւ ոչ իւր անձին զքեզ է.

վասնզի որչափ որ բուռն կիրք ունի, այնչափ ալ ճեր եւ դանին :

« Պիգմալիոնի վրայ այս խորհրդածութիւնները կրնէի՝ առանց զինքը ճեսնելու, վասնզի ճեր ճեսնուեր. միայն այն բարձրաբերձ աշարակները կարող էր մարդ ճեսնել անիւ եւ դողութեամբ՝ որոց շորս դին զիւեք ցորէկ պահապաններ կային, եւ ուր իւր զանձերովն իբր իբանսի ինքզինքը վապէր էր : Այս անճեսանելի քաղաւորին հետ կհամեմատէի զՍէսոսը՝ որ քաղցրաբարոյ էր, դիւրամասոյց, հեզ, օտարականներ ճեսնելու հետաքնին, որ ամենուր սիրով մտիկ կընէր, եւ քաղաւորներէն ծածկուած նշմարութիւնները կջանար մարդկանց սրտին մէջէն դուրս հանել : Եւ ինքնիբրէնս կըսէի. Սէսոսը բանէ մը ճեր վախճար, վախճալու ալ բան չունէր. հպատակացը իբրէւ իւր որդւոցն այնպէս կէրէւար. իսկ ասիկա ամէն բանէ կվախճայ, եւ ամէն բան վրան դող կբերէ : Այս շար քաղաւորը նոյն իսկ պահապաններով շրջապատեալ իւր անմասշէլի պալատին մէջ միշտ սպէտալի մահուան վճանգի մէջ է. իսկ ընդհակառակն ազնիւ Սէսոսը քաղաւորն ժողովրդոց բազմութեան մէջ անվախ կկենար ինչպէս ազնիւ հայր մը իւր ճանր մէջ՝ շուրջ բոլորեալ յընտանեաց :

« Հրաման տուա Պիգմալիոն որ կիպրացի զօրէն իւր էրկիրը դառնայ, որ Տիւրացւոց հետ ունեցած նիզակակցութեանը համար անոնց օգնելու էկեր էին : Զիս ազատելու առիթ առաւ Նարբայ, եւ կիպրացւոց զօրահանդէսին մէջ զիս խառնեց, վասնզի նաեւ ոչինչ բանէ կկասկածէր քաղաւորը : — Գիւրահաւան եւ անզգոյճ իշխանաց քերութիւնն այս է որ կոյր վստահութեամբ մը իրենքզիրենք իրենց խորամանկ եւ զեղծ սիրելեացը ձեռք կմատնեն : Իսկ ընդհակառակն ասոր

քերութիւնն էր առափնի անձանց վրայ շվստանիլ .  
ամենեւին շեր գիտեր ուղիղ եւ պարզամիտ մարդիկն  
ընտրել, որոնք առանց կեղծաւորութեան կգործեն .  
ուստի եւ ոչ երբեք բարի մարդիկ էր տեսեր, վասնզի բարի  
մարդն ոչ երբեք ասոր պէս անպիտան բազաւոր մը  
կերբայ կփնտռէ : Թող որ, արոուն ելլելէն իվեր՝ իւր  
« Այս տեսարանը զարմացմամբ դիտելնէս ետեւ՝ սկըսանք հեռուէն Կրետի լեռները տեսնել, զոր դէռ շէինք կրնար ամպերուն ու ծովուն ալիքներէն լաւ մը որոշել : Վրան շատ ջանցաւ՝ Իդու լեռան գագաթը տեսանք, որ կղզւոյն միւս լեռանց վրայ կամբառնայ հինաւուրց եղջերուի մը նման, որ անտառի մը մէջ՝ իւր բազմանիւղ եղջիւրը՝ ետէն եկող դէռահասակ եղնիկներուն գլխոյն վրայէն վեր կտնկէ : Նըքալով աւելի պայծառ կտեսնէինք կղզւոյն ծովափունքը՝ որ ամփիքեատրոնի պէս առէրնուս կերեւային : Որշափ որ Կիպրոսի երկիրը մեզ երեսի վրայ ձգուած ու ջնտակուած եր երեւցեր,

այնչափ ալ Կրէսէինը բարեբէր, եւ բնակչաց աշխատանքովը ամէն տեսակ պարգովք զարդարուած :

« Զորս դիմիս գեղեցիկ գեղեր կ'սեսնէինք, քաղաքի նման աւաններ, եւ փառաւոր քաղաքներ : Դաստ մը շէինք զտներ որուն վրայ աշխատաստեղ մեակիին ձեռքին նշանը շտեսնուէր. ամէն տեղ արօրը խոր ակօսներ բողած էր, հոն փուշն ու տասասկ կամ գէշինը խափանող մողախոտերն ինչ քսէլ է շէին գիտեր : Զուարեմութեամբ մը կ'դիտէինք այն խորունկ ձորերն՝ ուր խումբ խումբ կ'ովէր առուակներու եզերքը պարտաւոր տոտներու մեջ կ'բառաշէին. կ'սեսնէինք ոչխարներն՝ որ բլրի մը զառիվայրին վրայ կ'արածուէին, ընդարձակ արտեր՝ դեղին դեղին հասկերով ծածկուած՝ հարուստ պարգեւով կ'ըսեմ առատաբաւ Պեմերտայ. անդին ալ լեռներ՝ զարդարուած տերեւայից այգիներով եւ նորախայծ ողկոյզներով, որ այգեկուր մեակաց կ'խոստանային Սպանդարամէսին այն անուշ պարգեւներն՝ որ մարդկանց հոգերը կ'փարատէն :

« Մենքսը բաւ մեզ որ ինքն ուրիշ անգամ Կրէսէն տեսնէ եւ եղեր, ու գիտցածը մեզ պատմեց : Այս կողմին, կ'ըսէր, որոյ վրայ բոլոր օտարական կ'զարմանան, եւ որ իւր հարիւր քաղաքներովն է անուանի, առանց մէկ դժուարութեան իւր անհամար բնակիչքը կ'սնուցանէ : Վասնզի երկիրը ոչ երբէք կ'յոզնի իւր բարիքները զինքը մեակողներուն վրայ սփռելու : Անոր բազմածնունդ ծոցը՝ անսպառելի է. երկրի մը մեջ որչափ աւելի շատ մարդ ըլլայ՝ բաւական է թէ աշխատաստեղ, այնչափ աւելի առատութիւն կ'ունենան, եւ բնաւ իրարու վրայ նախանձելու պէտք չեն ունենար : Երկիր, այն բարեգուր մայրը, իրենց աշխատութեամբ իւր պարգուն արժանի եղող որդւոցը թուոյն համեմատ իւր պարգեւները

կառասացրնէ : Մարդկանց բռնառուքեանը միակ աղբիւր իրենց փառասիրութիւնն ու ազահութիւնն է. մարդիկ ամեն բան կուզեն ունենալ, եւ աւելորդին փափաքովն իրենց զիրենց բռնառ կընեն . քէ որ ուզելու ըլլային պարզ կեանք մը անցընել, եւ իրենց ստոյգ պիտոյները լեցընելով միայն գոհ ըլլային՝ ամեն ճեղ կտեսնէին առաստիւն, ուրախութիւն, խաղաղութիւն եւ միաբանութիւն :

« Եւ անա այս եր զոր Միկովս՝ բազաւորաց ամենն իմաստունն ու բարեգոյնը՝ լաւ եր հասկըցէր : Կղզւոյն մէջ ինչ զարմանալիք որ տեսնէ՝ իւր օրինացը պտուղն էն : Տղայոց տալու համար սահմանած դաստիարակութիւնը՝ մարմինը առողջ եւ ուժով կընէ . պզտիկուց զիրենց կվարժեցընեն պարզ, քիչով գոհ ըլլող եւ աշխատասէր կենաց, վասնզի մտերնին դրած էն քէ ճիւղ եւ իցէ հեշտութիւն մարդուս միտն ու մարմինը կտարացընէ . տղոց ուրիշ հեշտութիւն չեն առաջարկէր՝ բայց միայն առաքինութեամբ անյապեղի ըլլալու եւ շատ փառք ստանալու հեշտութիւնը : Հոս քաջութիւնը միայն պատերազմի վտանգաց մէջ մանն արհամարհելուն վրայ չեն դնէր, հասպա նաեւ ոտքի տակ առնել մեծափարքամ նոխարութիւնն եւ ամօրալի հեշտութիւնները : Ապերախտութիւն, կեղծաւորութիւն եւ ազահութիւն՝ երեք ախտ զոր ուրիշ ազգէր անպատիժ կրողուն՝ Կրեւտի մէջ իրենց պատիժն ունին : Իսկ պերնութիւնն ու մեղկութիւնը սանձահարելու հոս պէտք մը չկայ. վասնզի Կրեւտի մէջ շնանջցուած բաներ էն ստոնք : Հոս ամեն մարդ կաշխատի, եւ ոչ ոք հարստանալու էտէ կիյնայ . ամեն մարդ իւր աշխատանացը լիովի վարձք կհամարի այն քաղցր ու բարեկարգ կեանքը՝ յորում կվայելի գլխաղաղութիւն եւ առատաստիք զամենայն կարեւոր

պէսս կենաց : Արգելուած են հոս սուղ կան կարասիք ունենալ, փառաւոր հագուստներ հագնիլ, բազմախորհիկ խնջոյքներ բնել եւ ոսկեգօծ պալասներ շինել : Հագուստնին է նրբաբէլ եւ աղուոր գունով բուրդ, բայց պարզ եւ ջրանած : Կերակուրնին անպանոյն է. գինի քիչ կլամեն հետք. հաւերնուն զլխաւոր մասունքն են ազնիւ հաց, պտուղ՝ զոր գրեթէ ծառերն ինքնիրեն կուտան, եւ ոռխարներնուն կաքք : Շաս շաս՝ քիչ մը հասարակ միս կուտեն առանց համեմի, իսկ բազմահոյլ անդէոց ընտիրներն երկրագործութիւնը ծաղկեցրնելու կզանեն : Տներնին մահուր են, կոկիկ, զուարթ բայց անզարդ : Մեծագործ հարսարապէսութիւնն հոս անծանօթ չէ. այլ աստուածոց մեհեաններուն միայն պահուած է, եւ մարդիկ շեն համարձակիր անմանից նման բնակարան ունենալ : Կրէսացւոց հարսութիւնքն են առողջութիւն, ոյժ, արիւրքիւն, խաղաղութիւն եւ միաբանութիւն ընտանեաց, ազատութիւն բոլոր քաղաքացւոց, հարկաւոր բաներուն առատութիւն, աւելորդներուն արհամարհութիւն, առխասանքի վարժութիւն եւ սոսկումն յանգործութենէ, նախանձ առաքինութեան, հպատակութիւն օրինաց եւ երկիւղ յարդարադաս աստուածոց :

« Հարցուցի իրեն քէ յորձում կայացեալ է քաղաւորին իշխանութիւնը : Պատասխանեց . Թաղաւորը ժողովրդեան վրայ ամեն բան կրնայ բնել, բայց օրէնքն ալ ամենայն բան իւր վրայ կարող է : Բարիք բնելու բացարձակ իշխանութիւն ունի, բայց շարիք գործելու համար ձեռքները կապուած են : Օրէնքները՝ իւր ձեռքը կյանձնեն զժողովուրդն՝ իբրեւ պատուականագոյն քան զամենայն աւանդս, եւ այն պայմանաւ՝ որ հայր պիտի ըլլայ բոլոր իւր հպատակացը : Կուգեն օրէնք՝ որ մեկ մարդ մը իւր իմաստութեամբն ու շախաւորութեամբը բազմու-

քեան երջանկութեանը աշխատի . եւ ոչ քե այն բազմութիւնը իրենց բռնառութեամբն ու վաս ծառայութեամբք մեկ մարդուն ամբարտաւանութիւնն ու զեղխութիւնը շողոմորբելու աշխատին : Քազաւորն ուրիշներէն աւելի բան պիտի շունենայ՝ բաց այն բաներէն որ հարկաւոր են իւր բազմավիճ պաշտօնը կատարելու , եւ կամ օրինաց պաշտպանը ժողովրդեան աշխին մեծարելի ընելու : Ուրիշ կողմանէ եւս պէտք է որ թագաւորը ամենէն աւելի զգաս ըլլայ , թեւամի զեղխութեան , ու վրան ամենեւին պերճութիւնն ու գոռոզութիւնն պիտի շերեւայ :

« Չէ քե ուրիշներէն աւելի ինքը հարսութիւնն ու հեշտութիւններ պիտի ունենայ , հապա աւելի խելք , աւելի առաքինութիւնն ու աւելի փառք : Պէտք է որ դրսէն պաշտպանն ըլլայ հայրենեաց՝ զօրաց բանակին գլուխ կենալով , ու ներսէն ալ պէտք է դասաւոր ըլլայ ժողովրդեան՝ զինքն աւելի բարի , աւելի խելացի ու աւելի երջանիկ ընելու համար : Չէ քե զինքն իրեն համար է որ ասուածները թագաւոր են դրեր , հապա ժողովրդեան ծառայելու համար . իւր ամեն ժամանակը , հոգն ու սերը իւր ժողովրդեանն է պարտական . եւ թագաւորութեան այն ասէն է միայն արժանաւոր՝ երբ իզոն հասարակաց բարւոյն ինքզինքը կմոռնայ : Չէր ուզած Միևովս որ իրմէ ետէ սղաքը թագաւորէն բայց երեայս պայմանաւ՝ որ իւր օրինացն համեմատ յանձնառնուն թագաւորել : Ընտանիքէն աւելի իւր ժողովուրդը կսիրէր : Ահա այսպիսի իմաստութեամբ է որ այնչափ զօրացուց ու երջանիկ ըրաւ նա զԿրէտէ . այս շափաւորութեամբն է որ անցուց բոլոր աշխարհակալաց փառքը որ իրենց առանձնական մեծութեանը՝ այսինքն իրենց ունայնութեան կուզէն ծառայեցրնել ժողովուրդներ . մեկ խօսքով , իւր արդարութեամբն է որ արժանի եղել .

դժոխաց մեջ մեռելոց գերագոյն դասաւորն ըլլալ :

« Մենձորի այս խօսակցութեանն ասէն կամաց կամաց կղզին հասանք : Հոն բազմահանճար Տեսադոսին շինած անուանի բաւիղը տեսանք, որ մեր Եգիպտոս տեսած մեծ բաւիղին նմանութիւն մըն էր : Երբ մեք կեցեր այս հետաքրքրական շէնքը կղիտէինք, տեսանք որ ժողովուրդը ծովուն եզերքը կլէցուէր, ու գունդագունդ հոն մօտ տեղ մը կվազէր : Պատճառն հարցուցինք. եւ անա Նաւսիկրաս կրէտացոյն մեզ պատմածը .

« Իդոմենէս, Գեւկալիոնի որդին, ու Մինովայ բոռը, Յունաստանի մեկալ քաղաւորաց հետ Տոբոյ պաշարման էր գնացեր : Քաղաքին կործանմանէն ետեւ նա մտաւ Կրէտէ դառնալու. բայց մերիկն այնպէս սաստիկ էր՝ որ իւր նաւուն ղեկավարը եւ ամենայն նաւարկութեան հմուտները՝ անշուտ կհամարէին իրենց կորուստը : Ամենք մահը աշուրնուն առջեւ կտեսնէին. ամենք ծովուն անդունդները զիրենք կլլէլու համար բացուած կկարծէին. ամէն մէկը կեցեր հոն իւր դժբաղդութեանը վրայ կուլար կողբար, որ եւ ոչ իսկ այն ժամուր հանգստութիւնը պիտի ունենային՝ զոր Ասիւսէն անցնող ստուերք՝ իրենց քաղումն ընդունելէն ետեւ կգտնէն : Իդոմենէս՝ աշուրներն ու ձեռուրները երկինք վերցունելով, Պոսիդոնը կկանգէր յօգնութիւն. Աստուծո՛ւ հզօր, կաղաղակէր նա, դու՛ որ ալեաց իշխանութիւնն ունիս, լսէ՛ խեղն թուառի՛ մը ձայնը. էրէ դու այս հողմոց կատարութենէն զիս ազատես, ու Կրէտէն տաս որ տեսնեմ, առաջի զլուխը՝ որ դիմացս էլլէ, քեզի զոն կմատուցանեմ :

« Անդիէն իւր որդին՝ հայրը տեսնելու փափաքով վառուած, կփութար կանապարէր հօրը առջեւն էլլելու իրեն զիրկն իյնալ. խեղն տղայ, ջէր գիտեր որ իւր

կորսեան դիմացը կվազէր : Հայրք՝ մերձէն ազատսաճ՝  
 ցանկալի նաւահանգիստը կհասներ, ու շնորհակալ կըլ-  
 լար Պոսիդոնի որ իւր ուխտն ընդունեցաւ : Բայց շու-  
 տով հասկըցաւ թէ այն ուխտը նշտափ ծանր պիտի նըս-  
 տէր իրեն : Իւր ալեւից նախազգացուրիւն մը՝ ըրած  
 վստահաւոր ուխտին վրայ սաստիկ մեկ ցաւ մը կազդէր  
 արտին . իրեններուն հով հասներու կվախնար . եւ խի-  
 քայր տեսներու զայն՝ որ աշխարհիս վրայ ամենէն աւե-  
 լի սիրելի էր իրեն : Բայց անգուրն Նեմեսիս, այն  
 անողորմ աստուածն՝ որ զմարդիկ պատժելու կհսկէ, եւ  
 մանաւանդ՝ հպարտ քաղաւորները, մահահամբոյր ու  
 աներեւոյթ ձեռնով մը յառաջ կվարէր զԻդոմենէս :  
 Հասաւ նա, ու հազիւ սիրտ կընէր աջքը վէր վերցունե-  
 լու : Տեսաւ զորդին, ու ստակացած էտ էտ փառուեցաւ :  
 Աշուրները կփնտնէն, բայց փնն տեղ, որ ուրիշ մեկ  
 զլուխ մը տեսնեն՝ ոչ այնչափ սիրելի, զոր կարող ըլլայ  
 մասուցանել իզոն :

« Իսկ որդին հօրը վիզն ընկած կալլուի եւ կգար-  
 մանայ կապի որ ինչո՞ւ հայրն իւր սիրոյն փոխարէն  
 սէր զգուցրներ . եւ աշուրներէն քափած արցունքը տես-  
 նելով, Հայր իմ, կկանգէր, ինչո՞ւ համար այսպէս տրտու-  
 ես : Ի՞նչ, կցաւիս որ երկարատե պանդխտութենէ  
 էսէւ ինքզինդ քաղաւորութեանդ մեջ կտեսնես եւ որդե-  
 կիդ ցնծութիւնը կըլլաս : Ի՞նչ ըրի . աշուրներդ կգար-  
 ձընես որ զիս շտեսնես : Հայրք արտին ցաւէն բերան  
 շէր բանար : Բայց վերջապէս խորին հառաջանմանէն  
 էտքը, Ո՛վ Պոսիդոն, կանջեց, ինչ ուխտ էր որ ըրի  
 ինք . որպիսի գնով փրկեցիր զիս նաւակոծութենէ .  
 մասնէ՞ զիս ալեաց եւ ժայռից որ զիս ջախջախելով  
 իմ իտուր կեանքս պիտի վերջացրնէին, եւ քող որ իմ  
 որդիս ապրի : Ո՛վ անգուր աստուած, անա ինք արիւնս,



ւն եւ իրենին խնայե : Այս բաւա եւ բուրբ փառեց որ ինկզիւնք զարնէ, բայց ֆովիւնները ձեռքը բռնեցին :

« Սովորակիմոս ծերունին՝ ասուածոց կամացը քարգման, իրեն հասկըցուց որ կրնար Պոսիդոնը գոն բնել առանց որդին մեռցընելու : Ուխտը անխոհեմ է, կրսէր, շեն ուզէր ասուածք անգրուքեամբ պատուիլ : Զգուճացիր, ջրլլայ քէ երգմանդ մեղքին վրայ բնութեան օրինացը դէմ գործելու յանցանքն ալ աւելցունես : Նուիրէ Պոսիդոնին հարիւր ձիւնափայլ զուարակ, անոնց արիւնը ասուածոյն ծաղկով պսակած բազմին շորս դին վազցուր, եւ իպատիւ նորա անոյ՛ խնկէր ծխէ :

« Իդոմենէս զլուխը վար կախած առանց ձայն հանելու մտիկ կընէր . աշուրներուն մեջ կասաղութիւնը կըրբոբէր . իւր դէղնած ու մահաճիպ երեսին գոյնը շուշ շուշ կփոփոխուէր, եւ անդամները կըողողոլային : Բայց որդին իրեն կըսէր . Ահաւաճիկ կէցէր եմ, հայր . պատասխան է որդիդ մեռնելու որպէսզի հաճեցընէ զասուած . անոր բարկութիւնը վրայ մի՛ ձգէր : Սիրով կմեռնիմ, որովհետեւ մահուամբս զէեզ մահուրնէ պիտի ազատեմ : Զւնիկ, հայր իմ, զարկ . մի՛ վախնար որ յիս անարժան որդի մը զսնես՝ որ մեռնելէն վախնայ :

« Իդոմենէս ինկզիւնք կորսնցուցած, եւ կարծես դըժոխքի Կասաղիներէն դիւանհարած՝ ֆովի կեցողներուն շկարճած ասէն՝ յանկարծ սուրը որդւոյն արտին մեջ կխտրէ, եւ ծխաշունչ արիւնաքարաւ դուրս փաշելով զայն երբ իւր սիրտն ալ կուզէր զարնել, ֆովը եղողները նորէն վրայ հասան զինքը բռնեցին : Ընկաւ զլան ու իւր արեանը մեջ քաւալեցաւ . աշուրներուն վրայ մահուան սուլերները պատեցին . կէս մը կըանայ զանոնք առ իլոյս . հազիւ քէ լոյսը կզսնէ եւ շկարեմալով անոր դիմանալ, նորէն կզոցուին : Ինչպէս դաճեցին մեջ կէ-

ցած աղուոր շուշան մը, քե որ սայրասուր խոփով արմասէն զարնուի կսրուի՝ կսկարանայ կիյնայ. եւ քեպէ դեռ կորսնցուցած ալ ջրլլայ այն ձիւնափայլ ներմրկուրքիւնը, այն աշֆ առնող պայծառութիւնը, բայց սլ գէտնէն սնունդ շառնուր եւ կեանք մարած գացած է, այսպէս նաեւ Իդոմենեայ որդին մասաղասունկ ու փափուկ ծաղկի մը պէս իւր դեռածաղիկ հասակին մէջ հնձուէցաւ անողորմաբար :

« Հայրը՝ արտին սասիկ ցաւէն անզգայ կդառնայ. ոչ ոնք ըլլալը գիտէ, ոչ ինչ ընելն եւ ոչ ինչ ընելիքը. դողալով դանդաշելով դեպ իճաղաք կերթայ իւր որդին հարցընելով : Իսկ ժողովրդեան սիրքը զուրն վրայ կխսխսուայ, եւ հօրը անգուր որդեսպանութեանը վրայ սուկալով՝ կաղաղակէ քե արդարադաս դիժ գինքր դժոխքի Կասաղիներուն մասնեցին : Կասաղութիւնը գիրենք կգրնուորէ, գաւազան եւ քար առին ձեռքերնին, եւ գժութիւնը ամենուն արտին մէջ մահացու քոյն մը շնչեց : Կրէտացիք, այն իմաստուն կրէտացիք կմոռնան իմաստութիւնը՝ զոր այնչափ սիրէր էին. եւ իմաստնոյն Մինովայ քոռը կմերժեն : Իսկ Իդոմենեայ բարեկամները զանիկայ ազատելու ուրիշ հար մը ջգտելով՝ առին գինքր նաւ մը սարին, մտան եւ իրենքգիրենք ալեաց մասնելով կփախշին : Իդոմենեսին խելքը գլուխը գալով շնորհակալ եղաւ անոնց որ գինքր հանեցին այնպիսի երկրէ մը՝ զոր որդւոյն արեամբն ողորդեց, եւ ուր սլ ջեր կրնար բնակիլ : Քամիներն առին գիրենք Եսպերիա ձգեցին, եւ հոն Սաղէնեանց երկիրը նոր քաղաւորութիւն մը հիմնելու ետեւէ են :

« Իսկ կրէտացիք՝ գիրենք կառավարելու համար քաղաւոր մը շունենալով՝ խորհուրդ քրին որ ուրիշ մէկն ընտրեն որ իրենց օրենքներն անեղծ պահպանեն : Եւ այս

ընտրութեանս համար այսպիսի նամբայ մը բռնեցին : Բոլոր հարիւր քաղաքացի թիսանները հոս եկան ժողովեցան : Նախ զոներ մասնեցին, եւ քովի երկիրներէն բոլոր անուանի իմաստունները կանջուեցան որպէսզի արժանի երեւցողներուն կառավարութեանունեցած յարմարութիւնը բնենն : Հասարակաց խաղեր պատրաստեցան, ուր ընտրուելու ետեւ եղողները պիտի կռուին, եւ ինչ որ խելովն ու քաջութեամբը ամենուն յաղթե՛ անոր մրցանակ պիտի տրուի քաղաքորութիւնը : Վասնզի այնպիսի քաղաք մը կուզեն՝ որուն մարմինը զօրաւոր եւ հարստ ըլլայ, եւ հոգին իմաստութեամբ եւ առաքինութեամբ զարդարուած : Օտարաց ալ բաց է ասպարեզ :

« Այս զարմանալի պատմութիւնն ընելէն յետոյ՝ աւելցուց Նաւսիկրաս. Փութացե՛ք ուրեմն եկե՛ք մեր ժողովը, ինչ օտարականք. ուրիշներուն հետ դուք ալ կռուի ելե՛ք, եւ թէ որ աստուածք յաղթութիւնը ձեզմէ մեկուն Տան, քաղաքորութիւնը իւրն է : Ետեւն զնացիմք՝ ոչ երբ յաղթելու փափաք մը ունենալով, այլ ասանկ կարգէ դուրս բան մը տեսնելու հետաքրքրութեամբը :

« Տեսակ մը ընդարձակ կրկես հասանք, որուն շոքս կողմը անտարով պատած էր. մեջտեղը մրցողաց համար ասպարեզ պատրաստուած, եւ անոր բոլորսիքը դալարագեղ շրջափակարան մը շինուած, որուն վրայ անբիւ անհամար ժողովուրդ շարուած կնստէր : Մեր հոն հասնելուն՝ զմեզ պատուով ընդունեցան, վասնզի աշխարհիս երեսը կրեացուց պէս օտարաւոր եւ հիւրընկալութեան փոյթ տանող ազգ մը ջկայ : Նստեցուցին զմեզ, եւ կռուի հրախրեցին : Մենտոր իւր տարիքին համար հրաժարեցաւ, եւ Ազայէլ՝ սկար առողջութեանը :

« Երիտասարդութիւնս ու կորովս ինձմէ ամեն պատանակ կվերցրնէին. սակայն եւ այնպէս Մենտորին

վրայ աշխ դարձուցի որպէսզի իւր միտքն հասկընամ, եւ  
 տեսայ որ կուգէր որ պատերազմիմ, ուսի եւ հրատէրն  
 ընդունեցայ : Զգեսնէրս հանէցի. բոլոր մարմինս անոյժ  
 եւ փայլուն իւր մը վազըրնելով օծեցին, եւ մտայ մրցողաց  
 մէջ խառնուեցայ : Զորս կողմէն ձայն էլաւ թէ Ահա  
 Ողիսէսի որդին եկեր է, որ ջանայ մրցանակն առնուլ. եւ  
 տղայութեան ժամանակ Իրակէ եկող կրէսացուց շասը՝  
 զիս հանջցան :

Առաջին կոխը ըմբամարտութիւնն էլաւ : Երե-  
 սունընիինգ սարէկան հռոդացի մը բոլոր իրէն դէմ էլ-  
 լելու համարձակողներուն յաղթեց : Դեռ երիտասար-  
 դութեան ոյժը բոլորովին վրան էր. թեւերը ջլապինոց եւ  
 հաստ, եւ թեթեւ շարժում մը ընելուն պէս բոլոր ջղերը  
 դուրս կցասէին. հաստուկ էր միանգամայն եւ զօրաւոր :  
 Ինձ յաղթելն իրէն արժանի շտեպեց. եւ կարէկցութեամբ  
 մը մատաւառ հասակիս վրայ հայելով՝ ուզեց ետ հառուիլ.  
 բայց ես զնացի առջեւն էլայ : Շուտ մը իրարու պլլուե-  
 ցանք, եւ անանկ ուժով մը մէկզմէկ սխալեցինք՝ որ  
 շունջերնիս հասաւ : Ուս ուսի տուած, ոտ ոտի,  
 բոլոր ջղերնիս ուժգնապիրկ, եւ թեւերնիս օձի պէս  
 իրարու պլլուած կջանայինք թնամուռն ոտքը գետնէն  
 կտէլ : Երբեմն զիս աջ կողմէն հրելով՝ կնայէր որ  
 յանկարծակիի զիս բերէ. եւ երբեմն կջանար ձախ  
 կողմը զիս ծռել : Երբ ինքն այսպէս կաշխատէր, յան-  
 կարծակի զինքն այնպէս սաստիկ մը հրեցի՝ որ մեջքը  
 թուլնալով գետին գլորեցաւ, եւ ալ վրան : Անօգուտ տեղ  
 կջանար զիս վար ձգել. զինքն անշարժ իմ տակս կե-  
 ցուցի : Բոլոր ժողովուրդը կաղաղակէր. Յաղթեց Ողի-  
 սէսի որդին : Այն ատեն ամօրապարտ հռոդացույն  
 ձեռք տուի վերուցի :

« Անկէց դժուար էլաւ կռիվամարտութիւնը : Սամո-

սացի հարուս մարդու մը որդին այս տեսակ կոռւիւն մեջ անանկ մեծ հաճաւ մը եր սսացած՝ որ մեկը շնամարձակէցաւ դիմացն էլլել. ես միայն յաղբութեան յուսով առջեւն էլայ : Նախ գլխոյս, եւ յետոյ կուրծքիս այնպիսի կոռւփներ տուաւ՝ որ բերնէս արիւն վազցուցին եւ աշուրներուս վրայ քանձը մեզ մը պատեցին : Յնկուրներս սկսան դողդողալ. իսկ ինքը՝ զիս այնպէս մը նեղը խորեց՝ որ ալ շէի կրնար շունջ առնուլ. բայց Մենսորին ձայնը զիս գորացուց, որ կկանշէր. « Որդիդ Ողիսեայ, պիտի յաղբուիս : » Կասաղութիւնը նոր ոյժ մը տուաւ ինձ եւ փախայ այն հարուածներուն շատերէն՝ որոց սակ պէտք էր որ բնկնէի : Եւ երբ սամոսացին հարուածը պարտալ էլլելով՝ քեւն բնդունայն տեղ կնօնեցրներ, մեկէն այն ծուած դրփն մեջ վրան հասայ. եւ երբոր երկարագէն ձեռքս վեր վերուցի որ աւելի ուժով մը գլխուն իջեցրնեմ, ուզեց ետ քաշուիլ, բայց հաւասարակեռութիւնը կորսնցուց, ուստի վրան բնկայ ու զինքը գէտնը փրեցի : Շուտով մը ձեռք տուի որ զինքը վեր վերցրնեմ. բայց ինքն իրեն ոտք էլաւ վրան գլուխը փռուով եւ արեամբ ծածկած, եւ սաստիկ ամօքէն նորէն մեյմ'ալ կոռւելու սիտ ջրաւ :

« Շուտ մը կառարեալներն սկսան, եւ կառէրը վինակաւ կբաժնուէին : Իմինս անխնեռուն քերէւութեանն ու ձիերուն ուժին կողմանէ ամենէն գեշն էր : Մտացանք, եւ մեկէն ամպածեւ փռչի մը էլաւ երկինքը ծածկեց : Իսկզբան բողբուցի որ մեկալնոնք զիս անցնին : Կրանտոր լսկեղեմնոնացի երիտասարդը նախ զամենքն ալ ետ ձգեց. Պողիկղէտ անունով կրէսացին ալ անոր հովէն կերթար : Հիպպոնոս Իդումենեսին ազգականը՝ որ եւ անոր յաջորդել կբաղձար, իւր ձիերուն սանձը բողբուցած էր, որ սաստիկ ֆրփնք բախելով ծուխ կարճրկէին,

ու բոլոր մարմնովք անոնց ծփծփուն բաշերուն վրայ էր ինկեր, իսկ կառփին անխներուն շարժումը այնպէս արագ էր, որ արժուոյ քեւերուն պէս որ օդը կպասռսեն՝ անշարժ կերեւային : Իմ ձիերս խրախոյս առին եւ հետ զհետե վառուելով՝ ինձմէ շաս հեռու քողուցի բոլոր զանոնք որ արձակարանէն այնչափ եռանդեամբ էին էլեր : Իդումենեայ ազգականն Հիպպոմաք ձիերը սասիկ քրեւելուն՝ անոնց ամենէն ուժովք սապալեցաւ ընկաւ . եւ իւր իյնալովք սիրոջը քազաւորելու յոյսն օդը հանեց :

« Պողիկոլէս ձիերուն վրայ սասկ ծռելովք՝ կառփին ցնցուած ժամանակը շիրցաւ ինգիւնքը բռնել եւ ընկաւ . սանձը ձեռքէն պրծաւ, եւ աղէկ որ մահուրնէ ազատեցաւ : Իսկ Կրանսոք բարկացայտ աջօք տեսնելով որ ես այնչափ իրեն մօտ եմ հասեր, ընթացքը շուսցուց . երբեմն ասուածներն իրեն օգնութեան կկանգեր հարուստ ընծաներ անոնց ուխտելով, եւ երբեմն իրեն ձիերուն խրախոյս կուսար : Կվախուար որ շրլլայ քէ իրեն ու նպասակին մէջ տեղն ես անցնիմ, վասնզի դեռ ձիերուս ոյժը տեղն ըլլալով կրնայի զինքն անցնիլ : Ա՛լ իրեն ուրիշ նար ջեր մնացեր՝ բայց երէ դիմացի անցնա զոցել, եւ յաջողելու համար՝ յանձն առաւ նպասակին զարնրւելով խորհակուելու վճանքը . եւ իրաւքնէ իսկ անխներէն մէկը կտոր կտոր եղաւ : Փուրացի այն ասէն շրջան մը ըրի, որպէսզի ինձ արգելք շրլլայ, եւ քիչ մը վերջը զիս ասպարեզին ծայրը տեսաւ : Դարձեալ միւսանգալ կաղաղակեր ժողովուրդը . Յաղքէց Ողիսեսի որդին . զինքն ասուածք մէկ քազաւոր կսանմանէն :

« Յայնժամ կրեսացուց ամենէն անուանիներն եւ իմաստունները առին զմէզ հին ու դիցանուէր անտաւ մը տարին՝ պիղծ մարդոց տեսութենէն հեռի, ուր ձերունիք՝ զորս Միկովս դասաւոր ժողովրդեան եւ պահա-

պան օրինաց կարգեր եր, առին ժողովեցին զմեզ : Խաղերուն մեջ կռուողներն էինք մեք, եւ մեզմէ զաս մարդներս շատին : Բացին իմաստունք Մինովայ օրինաց գիրքը : Ամենալով ու ակնածութեամբ մը այս ծերունեաց կնօտեայի՝ զորս սարիքնին պատկառելի կրներ առանց մտերնուն կորովը պակսեցրնելու : Կարգաւ շարուած նստած էին, եւ տղերնէն շէին շարժեր. մագերնին նիփ ներմակ, ումանցն ալ բոլորովին քափած : Իրենց ծանր դեմքերուն վրայ քաղցր եւ զգօն իմաստութիւն մը կփայլէր. խօսելու շէին փութար եւ առանց մտածելու բան շէին ըսեր : Տարբեր կարծիք ունեցած ժամանակնին երկու կողմէն ալ այնպէս շափաւորութեամբ իրենց մտածմունքը կպատշապանէին՝ որ կարծես քէ իրարու մտէն էին : Անցած գացած բաներուն երկար աստեղծան փորձանութեամբն եւ վարժութեամբը՝ ամէն բանի խելք կհասցրնէին. բայց իրենց իմացութիւնը աւելի կասարելագործողը՝ խելոք կիրքերէ ու յերթասասարդական հանոյից ազատ եղած մտերնուն հանդարտութիւնն էր : Միայն իմաստութիւնը անոնց վրայ կներգործէր. եւ իրենց յարատեւ առաքինութեան պտուղն այն էր՝ որ իրենց ախորժակներն այնպէս լաւ էին նուաներ, որ բանին քելադրութիւնը անապու անոյժ եւ ազնուական հեշտութիւնը անաշխատ կնաւակէին : Վրանին զարմանալով կենացս կարնէնալը կփափագէի, որպէսզի մեկէն իմէկ այնպիսի պատուական ծերութեան մը հասնիմ : Թշուառ կհամարէի զմանկութիւնը՝ իւր բուն կրիցն ու այսպիսի լուսաւորեալ եւ զգօնամիտ առաքինութենէ հեռի ըլլալուն համար :

« Այս ծերունեաց երիցագոյնը Մինովայ օրինաց մեծ գիրքը բացաւ, որ սովորաբար անոյժ խնկերով լեցուն

ուկի սաղանակի մը մեջ կպահուէր: Բոլոր այս ծեռու-  
նիք մեծարանօք համբուրեցին զայն, վասնզի կրսէն քե-  
յէս ասուածոց՝ յորոց ամենայն բարի օրէնք կիջնան,  
մարդկանց համար այն օրինաց պէս սրբազան բան ձկր-  
նար ըլլալ, որ զիրէնք առաքինի՝ իմաստուն եւ երջանիկ  
ընելու համար դրուած են. եւ անոնք որ ժողովուրդները  
կառավարելու համար ձեռքերնին ունին օրէնք, պարտա-  
կան են նաեւ իրէնք զիրէնք նոյն օրինօք կառավարելու.  
վասնզի օրէնքն է որ պիտի քազաւորէ, եւ ոչ էքէ մարդ:  
Այս էր այն իմաստնոց խօսակցութիւնը: Յետոյ նախա-  
զանք երեք խնդիր առաջարկեց որ Մինովայ առածիցն  
համեմատ պիտի լուծէին:

« Առաջին խնդիրն էր գիտնալ քե մարդկանց մեջ  
նվ է ամենէն ազատ: Ոմանք ըսին քե այն քազաւորն  
է որ ժողովրդեանը վրայ բացարձակ իշխանութիւն ու-  
նի եւ բոլոր բժնամեացը յաղթած է: Ուրիշները պնդե-  
ցին քե այն մարդն է՝ որ այնչափ հարուստ է որ կրնայ  
ամէն փափաքը լեցընել: Այլք ըսին քե այն մարդն է՝  
որ ձկարգուիր, եւ իւր բոլոր կենացը մեջ երկրէ երկիր  
կպտքի՝ առանց ազգի մը օրինացն հպատակելու: Եւ  
ոմանք կարծեցին քե այն բարբարոս մարդն է որ ան-  
տառաց մեջ ըրած որսովը կապրի ամէն տեսակ ֆաղա-  
ֆական իշխանութենէ ու կարօտութենէ ազատ: Ուրիշ-  
ներն ալ դէռ նոր գերութենէ ազատած մարդն է ըսին,  
վասնզի ծառայութեան խստութիւններէն էլլելով՝ ամե-  
նէն աւելի ազատութեան անոյժ համբ կառնու: Եւ  
այլք դարձեալ մեռնելու վրայ եղող մարդն է կրսէին  
որ մահուամբ ամէն բանէ կազատի, եւ մարդիկ վրան  
բնառ իշխանութիւն մը ձէին կրնար ունենալ:

« Երբոր խօսելու կարգն ինձ էկաւ, առանց ամենեւին



սարակուսելու, վասնզի Մենսորին շատ անգամ ըսածն անմոռաց միտքս պահե՛ր էի, պատասխան տուի : Ամենէն ազատ մարդն այն է, որ նաեւ գերութեան մեջ կրնայ ազատ ըլլալ : Ո՛ր երկիր եւ ո՛ր վիճակ ալ որ մարդս գտնուի՝ ազատ է, բաւական է քէ երկիրդած ըլլայ իդից եւ անոնցմէ միայն վախնայ : Մէկ խօսքով, բուն ազատ մարդն այն է, որ ամէն տեսակ վախէ ու վախաւէ ազատ ըլլալով՝ աստուածոց եւ բանին միայն կհպատակի : Մերունիք ժպտելով իրարու կնայելին, եւ կգարմանային որ իմ պատասխանս ալ ամենեւին նման էր Մինովայ ըսածին :

« Յետոյ երկրորդ խնդիր մը առաջարկեցաւ քէ Ո՞վ է ամենէն բռնաւոր մարդը՝ Իւրաքանչիւր ոք մտքին եկածը կգրուցէր : Թռուտո այն մարդն է՝ — կրսէր մէկը — որ ոչ ստացուածք ունի, ոչ առողջութիւն եւ ոչ պատիւ : Ուրիշ մը կրսէր. Այն մարդն՝ որ բնաւ բարեկամ մը չունի : Ուրիշներն ալ կհաստատեն՝ քէ այն մարդն է՝ որուն որդիքը ապերախս են ու իրեն անարժան : Լեւբոս կղզիէն իմաստուն մըն ալ էլաւ ըսաւ. Ամենէն բրբաւտ այն մարդն է՝ որ ինզգինքը բռնաւոր կհամարի. վասնզի բռնաւորքիւնը ոչ այնչափ մեր հաւած բանէրէն կկախուի՝ որչափ մեր անոնց համբերել չուզենալին, որով մարդս իւր բռնաւորքիւնը կաւելցրնէ :

« Այս խօսքին վրայ ժողովուրդը ձայնը բարձրացուց ծափ զարկաւ, եւ ամենքը կկարծէին որ լեւբացին այս խնդրոյս մրցանակը պիտի առնու : Բայց իմ կարծիքս ալ հարցուցին, եւ ես Մենսորէն սովորածիս պէս պատասխանեցի քէ Ամենէն բռնաւոր մարդն այն քաղաւորն է՝ որ ուրիշները բռնաւորացրնելով կկարծէ երջանիկ ըլլալ. այնպիսին կուրութեամբը կրկին բռնաւոր է. իւր բռնաւորքիւնը շնանջնալուն՝ չկրնար անոր դարման

ընել, մանաւանդ որ կվախնայ ալ զայն նանջնալէն : Ճճմարտութիւնը շիրնար մարդէլուզաց բազմութիւնը պատուելով մինջեւ իրեն հասնիլ : Կիրքերը վրան կբռնանան . իւր պարսֆն ինչ է զգիտեր . ոչ երբէք բարիք ընելու զուարմութեան համն առած է , եւ ոչ երբէք անխստն առաքինութեան զմայլմունքն զգացած ունի : Թշուառ է եւ արժանի իսկ է ըլլալու . իւր թշուառութիւնն օրէ օր կաւելնայ . իկորուս իւր կդիմէ , եւ ասուածք կպատրաստին զինքն անվախնան պատուհասի մասնել : Բոլոր ասեանը խոստովանեցաւ թէ իմաստուն լեւբացւոյն յաղբեցի , եւ ձերունիք վկայեցին որ նիւզ Մինովայ քսածին համեմատ խօսեցայ :

« Իբրեւ երբորդ խնդիր առաջարկեցին թէ Ո՞ր քաղաւորն աւելի մեծարելի է , աշխարհակալ ու պատերազմներու մեջ մեծայնորք , թէ այն՝ որ պատերազմի մեջ վարժ չէ , բայց խաղաղութեամբ եւ իմաստութեամբ իւր ժողովուրդը կկառավարէ : Շատերն ըսին թէ պատերազմներու մեջ անյաղբելի քաղաւորը նախամեծար ընտրելի է . եւ վրայ կբերէին թէ ինչ բանի կուզայ քաղաւոր մը որ խաղաղութեան ժամանակ գիտէ լաւ կառավարել՝ երբ պատերազմի ժամանակ իւր երկիրը զգիտեր պատշապանել : Թշնամիք կյաղթեն իրեն եւ ժողովուրդը գերի կընեն : Ուրիշները ընդհակառակն , խաղաղասեր քաղաւորը լաւագոյն կհամարէին , վասնզի պատերազմէն վախնալով՝ անկեց կզգուշանայ : Իսկ այլ կըսէին թէ աշխարհակալ քաղաւոր մը իւր փառացը հետ կջանայ ժողովրդէանը փառքն ալ աւելցընել , եւ իւր հպատակներն ուրիշ ազգաց վրայ տեր կընէ , ուր խաղաղասեր քաղաւոր մը զանոնք ամօրայից վաստութեան մեջ կպահէ : Իմ կարծիքս ալ ուզեցին իմանալ , եւ ալ այս պատասխանը տուի .

« Թագաւոր մը որ խաղաղութեան կամ պատերազմի ժամանակ միայն գիտէ կառավարել, եւ այս երկու վիճակին մէջ եւս իւր ժողովուրդը կառավարելու կարող չէ՛ այնպիսին կէս մը քագաւոր է: Բայց քէ որ պատերազմ գիտցող քագաւորը՝ կըսողոյստէ իմաստուն քագաւորի մը հետ, որ առանց պատերազմ գիտնալու կարող է ի պահանջէլ հարկին իւր գորավարաց ձեռօքը զայն ի գլուխ հանել, առջինէն աւելի վեր կդնեմ եւ զայնպիսին: Թագաւոր մը որուն խելքը միտքը պատերազմը ընել է, կուզէ միտք որ պատերազմաւ իւր իշխանութիւնն ու փառքը տարածէ. բայց իւր ժողովուրդը կկործանէ: Ի՞նչ օգուտ ժողովրդեան մը՝ որ իւր քագաւորն ուրիշ ազգեր նուանէ՛ երբ ինքն անոր իշխանութեանը սակ թռուտ է: Թող որ երկար պատերազմները՝ ետեւէն միտք տեսակ տեսակ շարիքներ կձգեն. եւ այն շփոթութեան մէջ նոյն իսկ յաղթականներն ալ կաւրուին կերքան: Տեսէք քէ հրշափ ծանր նստաւ Յունաստանի Տրոյոյ վրայ յաղթանակելը. տար տարիէն աւելի իւր քագաւորներէն զրկուեցաւ: Պատերազմով ամեն բան բռնեցած ասէնը, օրեկ՝ մեակութիւն եւ արուեստ կմտնէ կիցնան. եւ լաւագոյն քագաւորներն անգամ պատերազմ ունեցած ժամանակնին կբռնադատին ամենէն մեծ շարիքն ընել, որ է ապերասան համարձակութեան աշք գոցել, եւ շարերն իրենց գործին ծառայեցընել: Ո՛րշափ շարագործներ կան որ խաղաղութեան ժամանակ կպատժուին, եւ զորս պատերազմի խառնակութեանց մէջ իրենց յանդրգնութեանը համար հարկ կըլլայ վարձատրել: Իւր փառքովը գիտովցած աշխարհակալ մը՝ յաղթուած ազգաց հետ իւր յաղթական ազգն ալ ոչ ինչ ընդհատ կը կործանէ: Թագաւոր մը՝ որ խաղաղութեան հարկաւոր

Եղած բարեմասնութիւնները շունի՛ շկրնար ժողովրդեանը վայելել չալ պատերազմին յաղթութեան պտուղը. և այն մարդուն կնմանի՛ որ իւր արօք դրացւոյն ձեռքէն պաշտպանեմ ըսելով՝ անորն ալ յափշտակե, բայց ոչ հերկել գիտնայ և ոչ սերմանել՝ որ կարենայ հունձ՛ ժողովել : Այնպիսին կարծես թէ աշխարհս կործանելու, աւարելու և ապականելու միայն եղած է, և ոչ թէ իմաստուն կառավարութեամբ ժողովուրդ մը երջանիկ ընելու :

Գտնվ հիմա խաղաղասէր քաղաւորին : Իրաւ մեծամեծ աշխարհակալութիւններ ընելու կարող չէ, այսինքն յանիրաւի ուրիշ ժողովուրդներ նուանել ուզելով իւր ժողովրդեան երջանկութիւնը խռովելու համար ծնած չէ, բայց թէ որ իրաւքնէ կարող է խաղաղութեան ժամանակ կառավարելու, թեւասեացը դէմ ժողովուրդը ապահովելու համար ալ պէտք եղած յասկութիւններն ունի : Եւ տեսե՛ք ինչպէս . իւր դրացեացը հետ արդար է նա, շափաւոր և բարեհամբոյր . անոնց դէմ ամենեւին անանկ բան մը չընէ որ կարենայ իւր խաղաղութիւնը վրդովել . դաշանցը հաւատարիմ է . նիզակակիցքը գինքը կսիրեն . իրմէ ամենեւին շէն վախնար, և վրան բոլորովին վրասան են : Թէ որ անխաղաղասէր, ամբարտաւան ու փառասէր դրացի մը ունի, բոլոր միւս դրացի քաղաւորներն այս անխաղաղասէր դրացիէն վախնալով, և խաղաղասէր բարի քաղաւորին վրայ ամենեւին նախանձ մը շունենալով՝ հետք կմիանան, որպէսզի ջրլլայ թէ ոտքի տակ երթայ : Արդարասիրութեամբք, հաւատարմութեամբք ու շափաւորութեամբք՝ բոլոր իւր շորս կողմին եղող տերութեանց իրաւարարը կրլլայ : Եւ մինչ կուռասէր քաղաւոր մը բոլոր միւս քաղաւորաց ասելի և անոնց իրեն դէմ նիզակակցութեանը նշանակ է

անդադար , ասիկայ իբրև հայր եւ խնամակալ միւս  
բազաւորաց կփառաւորուի : Աս ըսածներս' արտաքին  
օգուսներն են :

« Իսկ ներքիններն ալ աւելի հաստատուն օգուսներ են :  
Որովհետեւ խաղաղութեան ժամանակ լաւ կկառավարե-  
րսինք' յայտնի է ապա թէ խելացի օրենքներով կրնե-  
կառավարութիւնը : Դուրս կմերժե պերնութիւնը , գեղ-  
խութիւնն եւ այն ամենայն արուեստները որ զախսս կը-  
սնուցանեն. եւ անոնցտեղ կծաղկեցրնեայն արուեստներն  
որ մարդուս կենաց հարկաւոր պիտոյիցն համար օգտա-  
կար են . եւ իւր ժողովուրդն ամեն բանե աւելի երկրա-  
գործութեան կգբաղկեցրնե , որով եւ առասապես իրենց  
հարկաւոր պիտոյքը կունենան : Եւ այսպէս ժողովուրդը  
աշխատաստե , անպանոյն եւ սակաւապէս կենաց վար-  
ժելով եւ իւր պարենիկը արտերուն մշակութեամբը դիւ-  
րաւ զտնելով' կանի ու կբազմանայ : Ահա այս բազա-  
ւորութեան մեջ անհամար ժողովուրդ մը' որ միանգամայն  
հաջաւորջ է , զօրաւոր , կորովի , հեշտութեամբ ջրոյլցած ,  
առաքինութեամբ կրբուած , վաս ու փափկասուն կե-  
նաց հրապոյրներուն ետեւ ջե , որ գիտե արհամարհել  
զմահ , որ աւելի լաւ կսեպե մեռնիլ քան թէ կորսնցրնել  
այն ազատութիւնը զոր կվայելէ իմաստուն բազաւորի  
մը իշխանութեան տակ , որ իրմե աւելի կուզե որ Բանը  
բազաւորէ : Երբոր սահմանակից աշխարհակալ մը այս  
ժողովրդեան վրայ յարձակի' քերես զինքը բաւական  
վարժ ջգտներ բանակ կազմելու , հակաս յարդարելու եւ  
հաղափներ պաշարելու համար մեքենաներ կանգնեցրնե-  
լու . բայց իւր բազմութեամբը , հաջութեամբը , շարհա-  
տութեամբը , աղհասութեան ունեցած վարժութեամբը ,  
մրցմանց մեջ ունեցած կորովութեամբն ու դժբաղդու-

քեանց մեջ աննկուն մնացած առաքինութեամբք՝ անյաղքելի կզտնէ զայն: Թող որ, երբ քազաւորը անձամբ իւր զօրացը զլուխն անցնելու բաւական հմտութիւն շունենայ, կարող մարդիկ անոնց վրայ զօրավար կղնէ, եւ առանց իւր իշխանութիւնը կորսնցունելու գիտէ զանոնք իրեն ծառայեցընէ: Իւր նիզակակիցներն իրեն օգնութեան կհասնին. եւ հպասակներն աւելի կուզեն մեռնիլ քան քե ուրիշ խիստ ու անիրաւ քազաւորի մը իշխանութեան տակ մտնել. տասուածներն իսկ իրեն համար կպատերազմին: Տեսեք քե մեծամեծ վսանգաց մեջ անգամ նրշափ նպաստներ կունենայ իրեն: — Ապա ուրեմն կվերջացընեմ ըսելով քե խաղաղասէր քազաւոր՝ որ անհմուտ է պատերազմի, շատ անկասար քազաւոր է. որովհետեւ իւր մեծագոյն պատշօններէն մէկը շիրնար կասարել, որ է բռնամեացը յաղքել. բայց եւ կաւելցընեմ քե՝ անհամեմատ առաւելութեամբ վեր է աշխարհակալ քազաւորէն՝ որ խաղաղութեան ժամանակ հարկաւոր եղած կասարելութիւնները շունի, եւ պատերազմի միայն յարմարութիւն ունի:

« Տեսայ որ ժողովոյն մեջ շատերը շիւտանեցան ըսածիս, վասնզի մարդկանց մեծագոյն մասը պայծառափայլ բաներէ շխնալով՝ որպիսիք են յաղքութիւնք եւ աշխարհակալութիւնք, զանոնք նախամեծար կհամարին քան զայն ամենայն որ անպանոյնն է, անդորրաւէ եւ հաստատուն, ինչպէս են խաղաղութիւն եւ բարեկարգ տեսութիւն ժողովրդոց: Բայց բոլոր ձերերը վկայեցին քե եւ Միևուլայ պէս խօսեցայ:

« Մեջերնէն աւելի պատուաւորը գոշեց. Ահա բոլոր կղզւոյս քաջածանօթ եղած Ապողոնին պատգամը կկատարուի: Վասնզի երբոր Միևուլա հարցուցեր էր աս-

տուածոյն թէ մինչեւ ցերբ իւր ցեղը պիտի իւր օրինացը համեմատ թագաւորէ, պատասխան տուեր եր թէ Բուկիններէն թագաւորութիւնը այն ատեն պիտի վերնայ՝ երբոր օտար մը կղզիդ գայ եւ օրէնքներդ թագաւորեցընէ : Մեք կվախնայինք որ ջրլլայ թէ օտար մէկը գայ Կրէսէի տիրէ . սակայն Իդոմենէայ թեուառութիւնն եւ Ողիսէւսի որդւոյն իմաստութիւնը՝ որ ամեն մարդէն աւելի կհասկընայ օրէնքը, մեզ կցուցընեն թէ ինչ է եղեր պատգամին իմաստը : Հնապա ուրեմն, ինչո՞ւ կուտանամք պատկերու գայն՝ զոր նակատագիրը մեզ թագաւոր կսահմանէ :



Կպասմէ Տելեմաք քէ յանձն ջառտու Կրեէի քազաւորութիւնը՝ աւելի լաւ համարելով Իբակէ դառնալ, եւ իւր տեղը կառաջարկէ զՄենսոր. Մենսոր ալ յանձն ջառտուր քազաւորութիւնը, բայց ժողովոյն քախանձանացը լսելով՝ Արիստոքեմայ առաքինութեանցը վրայ լսածները կպասմէ ու կհաւանեցընէ զամէնք որ զանիկայ կրնսրեն իրենց քազաւոր : Քիչ մը վերջը՝ Մենսոր եւ Տելեմաք կրեացի հառով մը համբայ կելլեն Իբակէ դառնալու : Այն ասէն Պասիդոն Աստղկան բարկութիւնը գոհ ընելու համար անազին մտիկ մը կհանէ՝ որ նաւերին ջարդութուրդ կընէ : Հազիւ կրնան իրենք զիրենք Կալիպսոյի կղզին նետել :

« Շուտ մը ծերունիք դիցանուէր անհառէն դուրս ելլան. եւ գլխաւորնին ձեռքէս բռնած աւետեց ժողովրդեան՝ որ անհամբերութեամբ վնիւր լսելու կսպասէր, քէ մեցանակն ես առի : Հազիւ քէ խօսքը լմնցուց, անդին ամբոխին մեջէն խառնաձայն աղաղակ մը լսուեցաւ : Ամենք ուրախութեամբ կգոռէին եւ բոլոր ծովերէն ու լեռները այս աղաղակով կընդային, թող Մինովայ նման Ողիստայ որդին կրեացուց քազաւորէ :

« Իսկ ես քիչ մը ժամանակ կենալէն յետոյ սկսայ ձեռքով նշան ընել որ մտիկ ընեն ինձ. նոյն միջոցին Մենսոր ալ ականջօս կըսէր. Ի՞նչ, կհրաժարիս հայրենիք. քազաւորելու փառասիրութիւնը մոռցընէլ պիտի սայ քեզ զՊենելոպէ,՝ որ իբրեւ իւր վերջին յոյսը քեզ կըս-



պատե, եւ զմեծն Ողիսեսս՝ զորս սահմաներ էին դիմ  
 առ Բեզ շնորհելու: Այս խօսքերը սիրս ծակեցին՝ եւ քա-  
 զաւորելու բնդունայն փափափին դեմ զիս զօրացուցին:  
 « Երբոր այս աղմկալից ամբոխին բազմութեան մեջ  
 լուռքին մը տրեց, այսպէս իրենց ըսի. Ո՛վ փաշանուն  
 կրէացիք, եւ ձեր վրայ քազաւորելու արժանի շեմ:  
 Արդարեւ այդ յիշատակուած պատգամը կըսէ քե Մինո-  
 վայ ցեղը քազաւորելէն պիտի դադրի՝ երբոր օտարական  
 մը այս կողմն գայ եւ այն իմաստուն արքային օրհնե-  
 ներն հոս քազաւորեցրնէ, բայց ջրսեր քե նոյն օտա-  
 րականը նաեւ պիտի քազաւորէ: Կուզեմ հաւատալ քե  
 պատգամին գուշակած օտարականը եւ ըլլամ, եւ որով-  
 հնէսէ գուշակութիւնը կատարեցի, այս կողմն էկայ, եւ  
 օրհնաց բուն իմաստը զսայ, կփափափիմ որ տուած մեկ-  
 նութիւնս՝ անոնց հետ ձեր բնտրած մարդը քազաւորեցը-  
 նելու ծառայէ: Իսկ ես իմ հայրենիքս՝ աղփաս ու փոք-  
 րիկ Իրակէ կողմն Կրէսէի հարիւր փաղափացն ու այս  
 գեղեցիկ քազաւորութեան փառացն ու նոխտութեանը  
 հետ շեմ փոխեր: Թողէք որ նակասագրիս էտէէն երբամ:  
 Երէ ձեր աշխին առջէւը մատակոխու եղայ՝ շէ քե հոս  
 քազաւորելու աշխ ունենալուս համար եր, այլ որպէսզի  
 ձեր մեծարանաց ու կարեկցութեանն արժանի ըլլամ. որ-  
 պէսզի հայրենիքս շուտով դառնալու համար ինձ օգնէ:  
 Աւելի կուզեմ Ողիսեսս հօրս հնազանդիլ եւ Պենէլո-  
 պէ մայրս մխիթարել՝ քան քե բոլոր աշխարհիս բնակ-  
 ւաց վրայ քազաւորել: Ո՛վ կրէացիք, անա սիրս ձեզ  
 բացի. հարկ է որ զձեզ թողում. բայց մահը միայն  
 պիտի կարենայ իմ Երախսագիտութեանս վերջ դնել:  
 Այն, մինջէւ վերջին շունջը պիտի սիրէ Տելեմաք գերե-  
 սացիս, եւ անոնց փառացն իբրեւ իւր փառացը նա-  
 խանձաւոր պիտի ըլլայ:

« Հազիւ քէ խօսքս լննուցի՝ ժողովոյն մեջ խառնաձայն աղաղակ մը փրքաւ ծովուն ալեացը նման՝ որ մերկի ասէն իրարու կգարնուին : Ոմանք կրսէին . Միքէ ասուած մըն է ինչ է ասիկա՝ որ մարդկային կերպարանօք կերեւայ : Այլ կպնդէին քէ զիս ուրիշ տեղ տեսեր են ու կնանաշէն զիս : Եւ ոմանք կաղաղակէին . Պէտք է զինքն սխալենք որ հոս քազաւորէ : Վերջապէս նորէն սկսայ խօսիլ, եւ ամենք շուտով լռեցին յուսարով որ քերես իսկզբան յանձն շառածս հիմա առնում . եւ անա այս եր զոր խօսեցայ .

« Ներեցեք ինձ, կրեսացիք, որ մտէս անցածը ձեզ քսեմ : Դուք ամենայն ազգաց իմաստնագոյնն էք, բայց կարծեմ քէ իմաստութեան զգուշութիւն մըն ալ հարկաւոր է որ շունիք : Չէ քէ օրինաց վրայ լաւ կերպով խօսողն է որ պէտք է ընտրէք, այլ զայն որ անդրդուելի առաքինութեամբ իզորձ կդնէ զանոնք : Դեռ ես մանկահասակ էմ, վասնորոյ եւ անփորձ ու կրից բռնութեան տակ, եւ աւելի ինձ կիյնայ օր մը հրամայելու համար հնազանդութեամբ հրամանատարութիւն սովորիլ քան քէ հիմակուրնէ հրամայել : Ապա ուրեմն ասպարեզին մեջ մտնով եւ ուծով յաղթողը մի ընտրէք, այլ զայն՝ որ իւր անձին գիտէ յաղթել . այն մարդը փնտռեցեք՝ որուն սրտին մեջ ձեր օրէնքները դրոճուած ըլլան եւ բոլոր կեանքն այս օրինաց կատարումն ըլլայ . որ աւելի իւր գործոցը քան քէ իւր խօսքերուն համար զինքն ընտրէք :

« Այս խօսքերուս վրայ զարմացան ձերունիք, եւ տեսնելով որ ժողովրդեան ծախահարութիւնները երբայով կեանքն՝ քսին ինձ . Որովհետեւ դիմ քու մեր վրայ քազաւորելուդ յոյսը մեզմէ կվերցունեն, զէք օգնէ մեզ այնպիսի քազաւոր մը զտեսնելու որ մեր օրէնքները քազաւորեցրնէ : Կնանաշէս մեկն որ այնպիսի իմաս-

տուրեամբ կարող բլլայ հրամայել : Այն, ըսի մեկէն, կհանաշեմ մարդ մը, ուսկից առած եմ ինչ որ վրաս կմեծարեմ . մինչեւ հիմա խօսողն եւ շէի, այլ իւր իմաստութիւնը . բոլոր լսած պատասխաննիդ ինքն է որ ինձ բելադրեց :

« Յայնժամ բոլոր ժողովականք աշէրնին Մէնսորին վրայ դարձուցին, որուն ձեռքէն բռնած կցուցրնէի : Կպատմէի զայնութենէս իվեր վրաս ունեցած խնամքը, որպիսի վսանգներէ զիս ազատեց, եւ թէ իւր խրատուցը մտիկ ջրնելէս ինչ բռուտութիւններ եկան զլուխս :

« Իսկզբան՝ իւր պարզ եւ անպատշաճ հագուստին, համես կերպարանքին ու անբարբառ լռութեանը, եւ պաղ ու զգուշաւոր կերպին համար մեկն երեսը շեր նայած: Բայց երբոր վրան ակնկառոյց սկսան նայիլ, շեմ գիտէր դեմքին վրայ որպիսի վէն արիութիւն մը տեսան, աշուրներուն մեջ վառվրոուն կենդանութիւն մը կդիտէին, եւ քրած ամենապիտիւր շարժուածոցը մեջն անզամ կորով մը : Հարցմունքներ ըրին իրեն, տուած պատասխաններուն վրայ զարմացան, եւ որոշեցին որ զինքն իրենց վրայ քազաւոր դնեն : Իսկ Մէնսոր առանց այլայլելու հրաժարեցաւ ու քսաւ . Շատ անելի կրնտեմ սոսկական կենաց քաղցրութիւնները՝ քան քազաւորութեան փառքն ու պայծառութիւնը . լաւ քազաւոր միտք բռուտ էն, որովհետեւ զրեթէ երբեմ շէն կրնար ուզած բարիքնին ընել, եւ շատ անզամ մարդէլուզաց խաբէութեամբը՝ շուզած շարիքնին կգործեն : Եւ վրայ բերաւ որ էրէ որորմէլի է ծառայութիւնը՝ որորմէլի է նաեւ քազաւորութիւնը, որովհետեւ ծայտալ ծառայութիւն մի է . քազաւոր մը, կըսէր, բոլոր անոնցմէ կախումն ունի՝ որոց կկարօտի ժողովուրդն իրեն հնազանդեցրնելու համար: Երանիանոր որ ամենեւին հրամայելու

պարտաւորուած շէ: Հայրենեաց միայն պարտական եմք մեր ազատութիւնը նուիրել, երբ անիկա իշխանութիւնը մեր ձեռքը կուտայ՝ յօգուտ հասարակաց աշխատելու:

« Յայնժամ կրէսացիք զարմացած՝ կհարցընէին իրենքէ հապա զո՞վ բնւրեմք: Չայն մարդը, պատասխանեց, որ զձեզ լաւ կհանձնայ, որովհետեւ զձեզ պիտի կառավարէ, եւ զձեզ կառավարելու վախճայ: Թագաւորութեան փափաքողը զգիտէր անոր ինչ ըլլալը. եւ ինչպէս կրնայ անոր պարտերը կատարել երբ զանոնք շնանա՞նք: Այսպիսին իրեն համար կուզէ միայն քաղաւորել. իսկ դուք, այնպիսի մարդու մը պէտք է փափաքիք՝ որ ձեր սիրոյն համար միայն յանձն առնու քաղաւորել:

« Բոլոր կրէսացիք ապշեցան մնացին տեսնելով որ այս երկու հիւրերը կմերժեն քաղաւորութիւնը՝ որուն այնչափ ետեւեն են այլք. ուստի եւ կուզէին զիտնալ քէ որո՞նց հետ կրէտէ եկած են առնոք: Նաւսիկրատ որ զիրենք նաւահանգստէն մինչեւ խաղերուն կրկեսն երբէրէր, անոնց Ազայէլը ցուցուց որուն հետ կիպրոս կղզիէն Մէնսոր եւ ես եկեր էինք: Եւ զարմանցին աւելի շատցաւ երբոր իմացան որ Մէնսոր Ազայէլին գերին է եղեր, եւ քէ Ազայէլ իւր գերոյն իմաստութիւնն ու առաքինութիւնը տեսնելով՝ զինքն իրեն խորհրդական եւ մտերիմ բարեկամ եր առեր. քէ այս ազատած գերին եր որ քաղաւոր ըլլալէն կհրաժարէր, եւ քէ Ազայէլ ասորոց Դամասկոս քաղաքէն եր ելեր Միւնովայ օրէնքը սովբելու, այնչնպի սիրեն իմաստութեան սիրովը վառուած եր:

« Ծերերն ըսին Ազայէլին. Չեմք համարձակիր աղաջելու զքեզ որ զքեզ կառավարես. վասնզի կարծեմք որ դու ալ Մէնսորի մտքէն ես: Այնչափ կարհամարհես զմարդիկ՝ որ շէս ուզեր անոնց առաջնորդել. քաղաւորական մեծութեան ու փառքի ալ սեր շունիս՝ որ զա-

նոնք յանձն առնուս զնել այն վճերով որ քաղաւորութեան հետ կապուած են: Պասասխանեց Ազայել. Մի կարծեմ, ճ կրեացիք, որ ես կարհամարհեմ զմարդիկ: Քնն լիցի, վասնզի զիտեմ քե ճրջափ մեծ է անոնց լաւութեանն ու երջանկութեանը համար աշխատիլը. բայց այն աշխատանքը վճօք է վճանգօք լի է: Անոր հետ կապուած փառքը խաբեպատի է, եւ միայն սնափառ մարդկան աշքը կրնայ առնուլ. կեանքերնիս կարն է, եւ մեծութիւնք ոչ միայն մեր կիրքերը շէն կզսացրներ, այլ եւ կզգոնեն զանոնք. այնչափ հեռաւոր երկրէն էլայ էկայ ես ոչ էրէ այն սնոտեաց հասնելու, այլ զանոնք արհամարհել սովբելու: Մնճք բարով: Բոլոր իմ մտածմունքս այն է որ դառնամ իմ խաղապաւէս էւ մեռաւոր կեանքս՝ ուր իմաստութիւնը սրտիս նարակ է, եւ առաքինութեան վարձուց յոյսը՝ մահուրնէս էտքը լաւագոյն կեանք մեզ զոր պիտի ընդունիմ՝ ծերութեանս վճերը կմխիթարէ: Թէ որ փափաքելու բան մը ունիմ, ոչ էրէ քաղաւորել է, այլ սա երկու մարդկանցմէ՝ զոր կտեսնեմ՝ երբեք ջզատիլ:

« Այն ասէն աղաղակեցին կրեացիք ու ըսին Մենտորին. Ըսէ մեզ, ճ իմաստնագոյնդ էւ վեհ բան զամենայն մահականացուս, ըսէ մեզ քե զո՞վ կրնամք մեզ քաղաւոր ընտել: Չեմք քողուր որ էլլեմք երբամ մինչեւ որ մեր ընտրութեանը արժանին մեզ ջցուցրնեմք: Պասասխան տուաւ անոնց Մենտոր. Մինչ հանդիսականաց ամբոխին մեզ էի ես՝ մարդ մը դիտեցի որ եղածին վրայ անտարբէր կերպով կեցած կնայէր. եւ քաջառոյց ծերունի մըն էր այն: Հարցուցի քե ո՞վ է այդ մարդը, եւ ըսին ինձ քե Արիստոքեմ է անունը: Եւ յետոյ լսեցի որ իրէն կըսէին քե իւր երկու որդիքը մրցողներուն մեջն են. ինքն այս բանիս վրայ ամենեւին ջուրախացաւ, եւ մե-

կուն համար զրուցեց թէ բնաւ շեմ փափագիր որ քա-  
 գաւորութեան վճանգներուն մեջ իյնայ . եւ միւսին  
 համար՝ թէ հայրենեացս վրայ ունեցած սերս ջրողուր  
 որ անոր քաղաւորելուն երբեք հաւանիմ : Ասով հասկը-  
 ցայ թէ այս հայր որդուցը մեկը առաքինութեանը հա-  
 մար խելացի սիրով կսիրէր, եւ մեկային անկարգու-  
 րեանցը աշք շեր զոցեր : Հետաքրքրութիւնս շացաւ եւ  
 հարցուցի որ իմանամ այս ծերունոյն անցուցած կեան-  
 քը, եւ ձեր քաղաքացիներէն մեկը պատմեց ինձ թէ շաս  
 ժամանակ զինուորութիւն եր բրէր, եւ մարմինը վերէ-  
 րով ծածկուած է . բայց անկեղծ ու մարդահանութեան  
 քճնամի, առաքինութեամբն ասելի եղաւ Իդումենեայ .  
 անոր համար եւ Տրոյոյ պաշարման ժամանակ զին-  
 քն իրեն գործին ջբերաւ . վասնզի կվախնար անոր աս-  
 րու խելացի խրատներէն՝ զորս պիտի շկարենար պահել .  
 նախանձեցաւ նաեւ այս մարդուն փառացը վրայ, զոր  
 անճուճ շուսով պիտի ստանար . մոռցաւ անոր ծառայու-  
 րիւններն ու զինքն հոս աղքատ քողուց եւ արհամարհեալ  
 կոպիտ ու վատ մարդիկներէ՝ որոնք հարսութիւնը միայն  
 կյարգէն : Սակայն ինքն՝ աղքատութեանը վրայ գոն՝  
 ուրախ գուարք կզզույն մեկ անկիւնը քաշուած կապրի  
 եւ հոն իւր արտերն իւր ձեռօքը կմտակէ : Որդուց մեկն  
 հետը կաշխատի . մեկզմեկ սաստիկ կսիրեն, երջանիկ  
 են, եւ իրենց սակաւապիտութեամբն ու աշխատանքօք՝  
 անպանոյն կենաց բոլոր հարկաւոր եղածներն առա-  
 քապէս ունին : Իմաստուն ծերունին՝ իւր եւ որդույն  
 աւելորդները աղքատ ու հիւանդ դրացիներուն կուտայ :  
 Բոլոր երիտասարդները կաշխատեցընէ, զանոնք կյորդորէ  
 ու կրթէ, դրացիներուն վէնը կդատէ եւ ամեն գերդաս-  
 անաց հայր է : Իրեն մեծ քեռաւորութիւնն է իւր երկրորդ  
 որդին՝ որ ամենեւին շուգեր իւր խրատուցը ականջ կա-

խել, եւ իւր մտութիւններէն զինքն ուղղելու համար երկար ժամանակ համբերելէն ետեւ վերջապէս զինքն սքնէն վռնեց. անիկա ալ ինզգինքն բոլորովին անմիտ փառասիրութեան եւ հեշտութեանց տուաւ :

« Ահաւասիկ աստեղ են, ո՛ր կրէսացիք, այն մարդուն վրայ ինձ պատմուածք : Դուք պիտի զիտնաք քե արդեօք նշմարիտ է այս պատմութիւնք քե սուտ : Բայց քե որ այս մարդը իրաւցրնէ ինչ որ կնկարագրէն՝ այնպէս է, ինչ բանի կուգան այս խաղերք, ինչ պէտք է այսօրափ անծանօթ օտարականներ հոս ժողովել : Մեջերնիդ մարդ մը կայ որ զձեզ կնանջուայ եւ ձեզմէ նանջուած է. որ հմուտ է պատերազմի, եւ իւր քաջութիւնք ոչ միայն նետից ու սլաքաց դեմ է ցուցեր, այլ նաեւ սոսկալի աղքատութեան դեմ. որ մարդահանութեամբ դիզուած հարսութիւնք արհամարհեր է, որ աշխատանք կսիրէ, որ զիտք քե նշմարի օգտակար է ժողովրդեան երկրագործութիւնք, որ պերնութիւնք կատէ, որ կոյր որդեսիրութեամբ մը իւր պարտքը շնորհար, որ որդուցը մեկուն առաքինութիւնք կսիրէ եւ միւսոյն մտութիւնք կդատարարէ. միով բանիւ, մարդ մը որ արդէն հայր է ժողովրդեան : Ահա ձեր քազաւորք, քե որ իրաւցրնէ իմաստնոյն Միևովայ օրէնքներք մեջերնիդ քազաւորեցրնել կփափաքիք :

« Բոլոր ժողովուրդը ձայնք վերուց ու ըսաւ. Իրաւցրնէ Արիստոդեմ ըսածիդ պէս է. ինքն է արժանի քազաւորելու : Ծերերք զինքն կանջել տուին, եւ ամբոխին մեջ փնտռեցին զսան, ուր սինլոր խուժանին հետ կկենար : Հանդարտութեամբ մը եկաւ կայնեցաւ, եւ երբոր քազաւոր ընտրուիլն իրէն իմացուցին, նեմ պայմանով միայն կրնամ յաձն առնուլ զայն, ըսաւ. առաջին՝ որ երկու տարիէն քազաւորութիւնք կբողում քե որ կարող ջրլլամ զձեզ հիմակուրնէ աւելի լաւցրնել, եւ քե

որ օրինաց շնայաստիկի . երկրորդ՝ որ ազատ բլլամ անպանոյն ու սակաւապէս կեանքս առաջ տանելու . եւ երրորդ՝ որ ամենեւին որդւոցս բարձ եւ աւագութիւն մը պիտի շտուի , եւ մահուընես յետոյ՝ իբրեւ զմի իմադաւազեաց անխտիր իրենց արդեանցը համեմատ հետերնին պիտի վարուի :

« Այս որ բաւ , բիւրաւոր ցնծալից պաղպակներով օղբ բնոյաց : Ծերունեաց զլիաւորն որ օրինաց աւանդապահն էր , Արիստողեմին զլուխը դրաւ քազաւորական քազը , եւ Արամազդայ եւ ուրիշ մեծ աստուածոց զոներ մասուցին : Արիստողեմ մեզ ընծաներ տուաւ ոչ այնու պերճութեամբ որ սովորական է քազաւորաց , այլ ազնուական պարզութեամբ մը : Ազայելին տուաւ Մինովայ օրենքը բուն Մինովայ ձեռնովը գրուած , տուաւ նաեւ Կրէստի պատմութեան հաւաքում մը Սասուննոսէ ու ոսկեղէն դարէ սկսեալ : Նաւուն մեջ դնել տուաւ Կրէստի ամենայն տեսակ ազնիւ պատուները որ Ասորաց երկիրը շէն զտնուիր , եւ ինչ բանի որ պէտք մը ուներ՝ տուաւ իրեն :

« Եւ որովհետէ նամբայ ելլելու կփութայինք , բազմաքիւ քաջ թիավարներով ու սպառազէն մարդիկներով նաւ մը մեզ պատրաստել եւ մեզը մեզի համար ըզգեսներ ու պատար դնել տուաւ : Եւ անա յանկարծ սկսաւ Իրակէ երբալու համար յաջող հողմ մը փռել , բայց որովհետէ Ազայելին հակառակ էր այն , սխալուեցաւ սպասել : Մեր երբալը տեսաւ նա , եւ գրկախառն համբուրեց զմեզ իբրեւ այնպիսի բարեկամներ զորս մէյմըն ալ պիտի շտեսներ . եւ կրսէր . Արդար էն դիք , կտեսնեն մեր առաքինութեան վրայ հիմնուած բարեկամութիւնը , ուստի եւ օր մը նորէն զմեզ կփացրնեն , եւ այն էրանաւէս դաշտերն , ուր կրսեն քէ արդարք



իրենց մահուընեն ետեւ յաւիտենական խաղաղութիւն մը պիտի վայելեն, պիտի՝ տեսնեն մեր հոգիքը որ անբաժանելի կերպով նորեն իրարու հետ պիտի միանան : Ո՛վ, քե՛ որ իմ անիւնս ալ ձերինին հետ կարենար ամփոփուիլ... Այս կրտսէր ու արժանուաց հեղեղներ կրափէր, եւ հառաջանցներէն ձայնը կկաղարէր : Ո՞չ ինչ նուազ քան զնա եւ մեք եւս արցունք կրափէինք : Առաւ նա զմեզ ու նաւը տարաւ :

« Իսկ Արիստոյեմ ըսաւ մեզ . Որովհետեւ քաղաւորելուս դուք եղաք պատճառ, յիշեցիք քե՛ որպիսի վսանգաց մեջ զիս ձգեցիք : Խնդրեցիք իղից որ նեմարիտ իմաստութիւնը սան ինձ . եւ ճշտափ որ իշխանութեամբս ուրիշ մարդոցմէ վեր եմ, նոյնպէս վեր ըլլամ նաեւ համեստ առաքինութեամբ : Իսկ ես կմաղքեմ իրենցմէ որ զձեզ ողջամբ ձեր հայրենիքը սանին, հոն ձեր բնամեաց լրբութիւնը խայտառակեն, եւ շնորհէն որ Ողիսէւսի իւր սիրելի Պենեդուպէին հետ խաղաղութեամբ քաղաւորելն հոն տեսնէք : Ահա ամրակառոյց նաւ մը կուտամ քեզ ո՛ր Տելեմաք, քիավարօք եւ զինուորեալ մարդիկներով լեցուն, որ մօրդ անօրէն հալածուացը դեմ կարող են քեզ օգնել : Հապա քեզ ինչ մաղքեմ, ո՛ր Մենսոր, որ իմաստութեամբդ բանի մը կարօտ շես : Գնացիք երկուհինիդ ալ իմիասին երջանիկ կեանք անցուցիք . յիշեցիք զԱրիստոյեմ, եւ եթէ երբէք իրակացիք պէտք ունենան կրեացուց՝ վստահ եղիք վրաս մինչեւ կենացս յետին տունը :

« Գրկեց զմեզ, եւ շնորհակալ եղած ժամանակնիս շիրցանք արցունքնիս բռնել :

« Սակայն հողմը առազպատճնիս ուռեցրնելով բարեյաջող նաւարկութիւն մը մեզ կխոստանար : Արդէն Իդալեոն աշերտնուս բլրի մը պէս կերեւար . բոլոր ծովա-

փունքն աներեւոյք կըլլային, եւ կարծես քե Պէղոպոնեսի ծովէզերք մեր առջեւը կէլլէին : Եւ անա յանկարծ սեւ փոքորիկ մը երկիւնք պատեց, եւ ծովուն ալիքը կասդեցուց : Յորեկը գիշեր դարձաւ եւ մահն աշերտու առջեւ նկարեցաւ : Ո՛վ Պոսիդոն, դուն անաւոր երեք-ժանիովդ քու սերուքեանդ ամեն ալիքները մեզի դեմ հանեցիր : Աստիկ՝ մեզմէ վրեժն առնելու համար որ գիւնք նաեւ մինչեւ իւր Կիթերայի ունեցած մեհենին մեջ էինք արհամարհէր, զնաց Պոսիդոնը զսաւ, ցաւագին կերպով մը խօսեցաւ իրեն, եւ գեղեցիկ աշուրները լցուած էին արտասուօք, — գէթ այսպէս ինձ հաւասարմացոյց ասուածուսոյցն Մէնոր. — եւ կըսէր. Կրնաս համբերել, ճ Պոսիդոն, որ այս ամպարիճներն անպատիժ իմ զօրութեանս հետ խաղան : Ասուածք ինքնին կպատկառին անկէ, եւ այս յանդուզն մահկանացուք համարձակեցան կղզւոյն մեջ գործուած բաները դատապարտել : Իրենց խոսակրօն իմաստութեանը վրայ կպարծին, եւ սերը յիմարութիւն կսեպեն : Մոռցա՛ր արդեօք որ ես քու պէտքութեանդ մեջ եմ ծնած : Ի՞նչ կուտանաս, հնապա զնրկ ու խորասոյգ անդնդոց մեջ բալէ այս երկու մարդիկը, որոց նալ շեմ կրնար համբերել :

« Դեռ խօսքը բերանն էր, եւ անա Պոսիդոն ծովուն ալիքները մինչեւ երկիւնք բարձրացոյց, եւ Աստիկ մեր նաւաբեկութիւնը անուտ համարելով կծիծաղէր : Նաւապէտը խռոված կպոռար քե նալ շերմար հողմոց դեմ դնել որ բռնութեամբ զմեզ ժայռերու վրայ կհեռին. սասկաւունջ քամի մը զարնելուն պէս՝ կայմերնիս խոտակեցաւ. քիչ մը ետք լսեցինք որ նաւուն յասակը սեպացեալ ժայռերու զարնուելով կբացուէր : Ամեն կողմէն ջուրը ներս կվազէր, նաւը կընկղմէր, եւ

բոլոր քիավարաց աղիողորմ ձայնը մինչեւ երկինք կը-  
բարձրանար : Իսկ ես Մենսորին պլլուելով կըսէի. Ահա  
մահը վրանիս հասաւ. պէ՛տք է զայն քաջութեամբ ըն-  
դունիմք. աստուածք այնչափ վստահներէն անոր համար  
միայն զմեզ ազատեցին՝ որպէսզի այսօր կորսնցընեն :  
Մեռնի՛նք ուրեմն, Մենսոր, մեռնի՛նք երբանք : Քեզի  
հետ մեռնի՛լք մեծ մխիթարութիւն է ինձ. կէտնէրնիս  
ազատելու համար ինչո՞ւ անօգուտ տեղ մըրկին հետ  
կռումիք :

« Պատասխանեց Մենսոր. ձեմարիտ արիութիւնը  
միշտ հնարք մը կգտնէ : Մահը անխուով արհիւ ընդունե-  
լու պատրաստ ըլլալը բաւական չէ, այլ նաեւ պէ՛տք է  
աներկիւղ անոր դէմ կռուիլ : Հնապա, երկուքնիս ալ  
սա քիավարաց խո՛ւր մտաբաններէն մէյմէկ հաս  
առնումք : Եւ մինչդէռ այդ վախկոտ ու խռովեալ  
մարդկան բազմութիւնը իրենց կենաց կորուստը կող-  
բայ՝ առանց զանիկայ պահելու հնարքները փնտռելու,  
մերինը փրկելու համար վայրկեան մը շկորսնցընեմք :  
Ըսաւ ու շուտ մը տապաւ մը առաւ, զարկաւ բոլորովին  
կտրեց կոտորած կայմը որ դէպ իծով երկննալով՝ նաւը  
մէկ կողմն էր ձուեր. նաեւն դուրս քաւալեց կայմը, եւ  
վայրենի ալեաց մէջ ինքզինին անոր վրայ նետեց, զիս  
ալ անունովս կանչելով՝ իրեն հետեւելու կխրատուէր :  
Ինչպէս խո՛ւր ծառ մը իրեն դէմ միաբանած հողմերու  
դէմ իւր խոր արմատներուն վրայ անշարժ կկենայ,  
այնպէս որ մերիկը տերեւները միայն կրնայ շարժել,  
նոյնպէս նաեւ Մենսոր ոչ միայն անսասան էր քաջ,  
այլ հանգաւտ էր անխռով, կարծես քէ հողմոց էր ծովու  
կիրամայեր : Նետէն փութացայ. իրմէ սիրտ առնելէն  
էտքը ո՞վ շէր կրնար ետեւէն շերտալ :

« Այս ալեւանջ կայմին վրայ մեք զմեզ առաջ կը-

բեհին : Մեծ օգնութիւն էր մեզ , վասնզի կրնայինք նաեւ վրան նստիլ . ուր էքէ հարկադրուէինք առանց կենալու միակերպ լողալ , շուտով ուժաքափ պիտի իյնայինք : Բայց շատ անգամ այս գերանը մերկէն կղառնար , որով եւ ծովուն մեջ բնկղմելով լեղի ալիքը կլամբինք որ մեր բերեկն , քէն ու ականջներէն դուրս կվազեր . եւ նորէն կայմին վրայ ելլելու համար պէտք էր որ ալեաց հէտ կռուէինք : Երբեմն նաեւ կոհակ մը կուզար վրաներնէս կանցներ , եւ մեք մեկզմէկ ուժով կբռնէինք վախնալով որ ջրլլայ թէ սաստիկ ցնցմունքէն կայմը ձեռներնէս ելլէ՝ որ մեր միակ ապստէնն էր :

« Երբոր այս սոսկալի վիճակի մեջն էինք , Մենտոր որ հիմակուան սա դալարագեղ արոռին վրայ նստածին պէս հանդարտ էր՝ կըսէր ինձ . Կարծես , Տելեմաք , որ կեանքդ հողմոց եւ ալեաց մասնուած ըլլայ : Կարծես որ առանց աստուածոց հրամանին կարենան անոնք զեզ կորսնցընել : Ամենեւին ոչ . ամեն բան աստուածներն են որ կսահմանեն : Ուրեմն աստուածներէն պէտք է վախնալ եւ ոչ թէ ծովէն : Անդնդոց խորն ալ ըլլաս՝ կարող է Արամազդայ աջը քաշել հանել զեզ : Եթէ աստուածներն ալ վեր Ողիմպոսին մեջ ըլլաս , կրնայ զեզ Արամազդ զարնել անդնդոց մեջ սապալել , կամ խաւար Տարսարոսին բոցերուն մեջ զահալիծել : Հիացմամբ մտիկ կընէի իւր այս խօսքերուն որ քիչ մը կմխիբարէին զիս . բայց մտքիս սազնապէն շէի կրնար իրեն պատասխան սալ : Ոչ ինքը կարող էր զիս տեսնել եւ ոչ էս զինքը : Յրտէն դողալով՝ բոլոր գիշեր կես մեռածի պէս անցուցինք եւ շէինք զիտեր թէ փոքորիկն զմեզ ճուր պիտի նետէ : Վերջապէս հողմերն սկսան հանդարտիլ , եւ անհրազո՞ծ ծովն այն մարդուն կնմաներ որ երկար ժամանակ զայրանալէն յետոյ՝ կասաղութենէն յոգնած կիյնայ ու

արսին խռովութեան ու այլայլութեան մնացորդովը կտատանի, ինքն եւս խորէն կմրմռար, եւ իւր ալիքներն ալ գրեթէ արօրադիր դաշտին ակօսներուն կնմանէին :

« Սակայն երկնքին դռներն բացաւ Արեալոյս Արեւուն առջեւ, եւ գեղեցիկ օր մը մեզ անտաւորեց : Արեւելք հրափայլ պայծառացած էր, եւ աստեղք որ երկար ժամանակ ծածկուած էին, նորէն երեւցան, եւ Փէրոս գալուն պէս փախան զնացին : Հեռուէն ցամաքը կտեսնէինք եւ հողմերն կփոսեցընէին զմեզ անոր. յայնժամ սկսաւ յոյսը արսիս մեջ նորէն արժարծիլ : Բայց մեր ուղեկիցներէն ոչ ոք կրցանք տեսնել. կերեւայ թէ յուսահատեցան, եւ մերիկը բոլոր նաւով մեկտեղ զիրենք ընկղմեց : Երբոր ցամաքին մօտեցանք, ծովն զմեզ սեպացեալ ժայռերու վրայ կփեւր որ զմեզ կտոր կտոր կրնային ընել. բայց մեք կջանայինք մեր կայսմին ծայրն անոնց դէմ ուղղել, եւ Մենտոր հմուտ նաւապետի մը պէս զայն կղեկավարէր : Եւ այնպէս այս ահագին ժայռերէն ազատելով՝ սափարակ ծովեզերք մը գտանք ուր լողալով առանց աշխատանքի աւագին վրայ էլանք :

« Հոն ահա զմեզ տեսար, մէծ դիցունի, որ այս կղզին կրնակիս, հոն էր որ հանեցար զմեզ հիւրընկալել » :



Գ Ի Ր Ք Ե Օ Յ Ն Ե Ր Ո Ր Դ .

Կալիպսոյ Տելեմախայ արկածից վրայ կգարմանայ, ու ամեն ջանք կրնէ որ զինք իւր կղզին բռնէ : Մենք իւր խիստ խրատներով՝ Կալիպսոյի ու Եռոսի ամենայն հնարից դէմ կբռնէ զՏելեմախ : Բայց եւ այնպէս պատահին Եւֆարիս յաւերժհարսին վրայ սէր կձգէ . ասով Կալիպսոյի նախանձը, եսն ալ բարկութիւնը կվառի իրենց դէմ, կերդուրննայ որ զՏելեմախ իւր կղզիէն վռնէ : Եռոս զինք կմխիթարէ, ու կգրգռէ գյաւերժհարսունն որ Մենքի շինած նաւն այրեն : Կուրախանայ Տելեմախ որովհետեւ այն նաւով պիտի կղզիէն ելլէին . բայց Մենք զինք կգահաժիծէ ու իմն ալ ետէն ծով կնետի, որ լողալով Երբան կղզւոյն մօտեր կեցող ուրիշ նաւու մը մէջ մտնեն ազատին :

Երբոր Տելեմախ խօսքը լմնցուց, բոլոր յաւերժհարսունք որ անշարժ, աշուրնին վրան սեւեռած մտիկ կրնէին, սկսան իրարու նայիլ ու ըսել . « Ո՞վ են ուրեմն այս երկու մարդիկը, զոր ասուածներն այսչափ կսիրեն . այսպիսի հրաշալի դէպք ո՞վ երբէք լսեր է : Ողիսեսի որդին հիմակուրնէ պերճախօսութեան, իմաստութեան եւ փառութեան մէջ զհայրը կանցնի : Որպիսի կերպարանք, որպիսի գեղեցկութիւն, որպիսի փաղցրութիւն, որպիսի համեստութիւն . բայց եւ որպիսի ազնուականութիւն եւ որպիսի մեծութիւն : Թէ որ մահկանացուի մը որդի ըլլալը ջգիտնայինք, դիւրաւ մարդ զինքը Գիոնիս, կամ Հերմես եւ կամ Ապոլլոն պիտի կարծէր : Իսկ

նվ է այդ Մենսորը, որ պարզ, աննշան ու հասարակ մարդ մը կերեւայ, բայց մօտէն նայուած ժամանակը վրան մարդկային բնութենէ վեր շեմ գիտեր ինչպիսի՛ բան մը կսեսնուի » :

Կալիպսոյ այս խօսակցութիւնները լսած ասէնը շեր կրնար արտին խռովութիւնը ծածկել. աշուրներն անդադար Տելեմաֆէ իՄենսոր եւ իՄենսորէ իՏելեմաֆ քափառական կպսքսցըներ : Երբեմն կուզէր որ Տելեմաֆ իւր գլխէն անցածներուն այս երկարածիգ պատմութիւնը նորէն սկսի, յէտոյ շուտով ինքն իւր խօսքը կկտրէր : Մէյ մըն ալ ոտք ելաւ յանկարծ, Տելեմաֆն առաւ մինակ մտէնեաց անտառ մը տարաւ, ուր ամենայն հնարք բանեցուց անոր բերնէն առնելու համար քէ արդեօք Մենսոր աստուած մըն է՝ մարդկային կերպարանքին տակ ծածկուած : Բայց եւ ոչ Տելեմաֆ գիտէր որ զրուցէր. վասնզի Աքենաս որ Մենսորին կերպարանքն առած իրեն կուղիկցէր, տղայական հասակին պատճառաւ խորհրդապահութեանը վրայ բաւական վտան ջրլլալով՝ ինզգինն ու իւր խորհուրդները անոր շեր յայտնած : Դարձեալ՝ կուզէր նաեւ մեծամեծ վտանգներով զինքը փորձել. ուր քէ գիտնալու ըլլար քէ Աքենաս իւր հետն է, անոր օգնութիւնը կրնար զինքն ամեն բանի դէմ խիզախել տալ, եւ դժուար շեր ըլլար իրեն անագին վտանգներն անգամ արհամարհել. ուստի եւ զԱքենաս Մենսոր կկարծէր, : Կալիպսոյի բոլոր հնարքները փափաքածն իմանալու համար անօգուտ եղան :

Բայց յաւերժհարստնի Մենսորին շորս կողմը ժողոված՝ անոր հարցմունքներ ընելով կզուարեանային : Մէկն անոր երովպիա բրած նամբորդութեան պարագաները կհարցըներ, միւսը կուզէր իմանալ քէ Դամասկոսի մէջ ինչ էր տեսեր. ուրիշ մը կհարցունէր իրեն քէ

Տրոյոյ պաշարմանէն յառաջ զՈղիսէւս կհանաջէր քէ ոչ : Ամենուն ֆաղցրութեամբ պատասխան կուսար նա, եւ խօսէր քեպէտէ պարզ, բայց շատ ախորժելի էին :

Է Զբողոց Կալիպսոյոյ իրենց այս խօսակցութիւնը երկար ժամանակ առաջ տանին . եկաւ հոն, ու մինչդէռ յաւերժաբանութեամբ զՏէլեմաք զուարեացրնելու համար սկսան երգելով ծաղիկ ծողվել, ինքն առաւ զՄենսոր մէկդի տարաւ որպէսզի զինքը խօսեցրնէ : Քնոյ անուշ շոգին ոչ այնչափ ախորժ կերպով կիջնայ յոգնած մարդուն ծանրացած արեւանանցն եւ վատակաբէկ անդամոցը վրայ, ինչպէս որ դիցուհւոյն շողոմորք անուշ խօսէրը կատակին կիջնային Մենսորին սիրքը կախարդելու . բայց շեմ զիտեր ինչ բան կզգար որ բոլոր իւր ջանքը պարապը կհանէր, եւ հրատուրանքը ծաղու կառնոյր : Սեպանցեալ ժայռի մը նման որ գլուխը ամպերու մէջ կծածկէ, ու հողմոց կատաղութեանը վրայ կծիծաղի, Մենսոր իւր իմաստուն խորհրդոցը մէջ անաստան կեցած կրողուր որ Կալիպսոյ որչափ կուզէ զինքը քախանձէ : Երբեմն նաեւ յուսալ կուտար որ հարցմունքներովը զինքը ներք խօսելով՝ նշմարութիւնը արտին խորէն պիտի ֆաշէ հանէ . եւ մինչ Կալիպսոյ կկարծէր քէ ալ իւր հետաքրքրութիւնը պիտի յագեցրնէ՝ յոյսը պարապը կելլէր . բոլոր ձեռք՝ բերած կարծածը՝ յանկարծ ձեռքէն կըփախաշէր, եւ Մենսորին մէկ կարն պատասխանովը դարձեալ իւր տարակուսանացը մէջ կընկղմէր :

Եւ այսպէս անա օրերը կանցրնէր, երբեմն շողոմորքելով զՏէլեմաք, եւ երբեմն զինքը Մենսորէն բաժնելու հնարքներ փնտռելով, որովհետեւ ալ շէր յուսար որ անոր բերնէն բան առնու : Իւր գեղեցկագոյն յաւերժաբանաց ձեռքովը կջանար դէռահասակ Տէլեմաքայ



ursին մեջ սիրոյ կրակը վառել, եւ իրմէ զօրաւոր աստուածունի մը իրէն օգնութեան հասաւ :

Աստղիկ որ դէռ Մենսորին ու Տելեմաֆին Կիպրոս կղզւոյն մեջ իրէն ընծայուած պատշաճան քաճ արհամարհանաց յիս կպահեր, շեր կրնար մխիթարուիլ որ այս երկու յանդուզն մահկանացուք Պոսիդոնի հանած մրրկին ծամանակ հողմերու եւ ծովուն ձեռքէն ազատեցան : Այս բանիս վրայ դառնապէս զանգատ քաւառ Արամազդ. այլ հայրն աստուածոց ժպտեցաւ, եւ առանց ուզելու յայտնել անոր որ Աքենաս իկերպարանս Մենսորի Ողիսեայ որդին ազատեւ էր, քոյլ տուաւ Աստղիկան որ այն երկու մարդոցմէ վրէժն առնելու հնարքներ փնտռէ :

Թողուց դիցունիին զՈղիմպոս, մոռցաւ իւր բազիններուն վրայ ծխուած անուշահոտ խնկերն որ իՊափոս, իԿիթերա եւ յԻզալիա, քուս մտաւ իւր աղանձներէ լծուած կառքը, կանշեց իւր որդին, եւ ursին ցաւէն նոր գեղեցկութիւն մը դեմքին վրայ աւելնալով, այսպէս խօսեցաւ անոր. « Կտեսնես, որդեակ իմ, սա երկու մարդիկը որ հու եւ իմ զօրութիւնս կարհամարհեն: Այլ ո՞վ այսուհետեւ զմեզ պիտի պաշտէ : Գնա գնակ նետե՛րովդ այն երկու անզգայ արտերը. եկուր ինձի հետ այս կղզին իջիր. ես Կալիպսոյին հետք կխօսիմ » : Աս քաւա, եւ ոսկեհանանշ ամպով օդը պատնելով հասաւ Կալիպսոյին հով, որ իւր քարայրէն քիչ մը հեռուն աղբիւրի մը հով մինակուկ նստեւ էր :

« Թշուան դիցունի, քաւա անոր, ապերախսն Ողիսեսն արհամարհեց զքեզ. նոյնպիսի արհամարհանք մը անա եւ որդին քեզ կպատահասէ, որ հօրմէն ալ աւելի խստասիրտ է. բայց անա ինքն իսկ երոս կհասնի հու վրէժդ հանելու : Քեզ կբողու՛մ զնա. յաւերժհարսանցդ

մեջ թող բնակի, ինչպէս որ ասեցի մանուկն Գիոնիս Նախոս կղզւոյն յաւերժհարսանցմէ սնաւ : Տէլեմաք գինիւր սովորական սպու մը պէս Տեսնելով՝ բնաւ պիտի չկասկածի իրմէ, եւ շուտով անոր գորութեան շարք պիտի առնու » : Ըսաւ, եւ նորէն մտնելով այն ոսկեհանանջ ամպն ուսկից էր էլէր, էտէն ամբոստեան անուշահոտութիւն մը ձգեց, որ բոլոր Կալիպսեայ անտառներուն վրայ ծառալէցան :

Կալիպսոյին գիրկը հանգշեցաւ Երոս . եւ քեպէս աստուածունի էր, զգաց արտին մեջ խլրած բոցը . եւ քիչ մը սփոփելու համար՝ զանիկա քովը կեցող յաւերժհարսին տուաւ որուն անուտնն էր Եւհարիս : Բայց աւանդատուն վրայ ճիշտօք զղջաց յետոյ : Իսկզբան այս մանկիկին պէս անմեղ, անուշ, սիրելի, անկեղծ եւ շնորհալի բան մը շկար : Չուարք՝ մարդահանոյ եւ մեծածիծաղ դէմք Տեսնուր կարծէր որ զուարճութիւն միայն կրնար տալ . բայց հագիւ քէ մէկն անոր գգուանացը կը վստահէր, շուտ մը մէկէն թոյնը վրան կազդէր : Այն նենգաւոր ու խաբէբայ մանկիկը խաբելու համար միայն կզգուէր. եւ իւր բրած կամ բնէլ ուզած անգութ շարեաց վրայ էր որ կծիծաղէր :

Մէնտրին խաւարներէն սարսափելով շէր համարձակէր անոր մօտեմալ . կզգար նաեւ քէ անխոցելի էր այն անձանօքք, ուսի էւ իւր նետերէն էւ ոչ մէկը կարող էր գինիւր վիրաւորել : Իսկ յաւերժհարսունի շուտով զգացին այն խաբէբայ մանկան վառած կրակը . բայց արեւնին հարակող խորագգած խոցը խնամով կծածկէին :

Սակայն Տէլեմաք Տեսնելով այս մանկիկը որ յաւերժհարսանց հետ կխաղար, զարմացաւ անոր քաղցրութեանն ու գեղեցկութեանը վրայ : Գնաց գրկեց զայն, երբեմն ձնկութեանն վրայ կառնուր եւ երբեմն կգրկէր

կպագներ. մեյմ'ալ արժին մեջ անհանգստութիւն մը սկսաւ զգալ, որուն պատճառը շէր կրնար զտնել : Եւ որշափ անմեղութեամբ անոր հետ կ'իսաղար, այնշափ աւելի տակնուվրայ կըլլար եւ կողողար. « Կտեսնես սա յաւերժհարսունքը, կըսէր առ Մեննոր, նրշափ տարբեր են Կիպրոս կողմոյն կանանցմէ, որոց գեղեցկութիւնն իրենց անպարկեշտութեանը համար անհանոյ էր տեսնողին. իսկ այս գեղեցկադէմ անմահ յաւերժհարսունք իրենց անմեղութեամբը, պարկեշտութեամբն ու պարզութեամբը զմարդ կզմայլեցունեն » : Այսպէս խօսած ժամանակը կկարմրէր եւ շէր գիտէր ինչո՞ւ համար : Չէր կարող լուռ կենալ. բայց եւ հազիւ կսկսէր խօսիլ, շէր կրնար առաջ տանիլ. խօսութեը կցկտուր էին, մուր եւ երբեմն նաեւ անիմաստ :

Ըսաւ իրեն Մեննոր. « Ո՛վ Տէլէմաք. Կիպրոս կողմոյն վտանգները բան չէին ' երբ հիմակուաններուն հետ բաղդասէլու ըլլաս, եւ դուն աստեցմէ ջէս զգուշանար : Այլանդակ ախար մարդու ստակում կբերէ, եւ սնամիտ ցոփութիւնը բարկութիւն. բայց պարկեշտ գեղեցկութիւնը շատ աւելի վտանգաւոր է. զանիկա սիրելու ժամանակ մարդ կկարծէ քէ առաքինութիւնը կսիրէ, եւ անզգայի կերպով ինքզինքը կրից խաբէպատիր հրապուրանացը կքողու, եւ այն ժամանակ միայն կիմանայ զայն երբոր սլ անկարելի է մարել : Փախիր, ո՞վ սիրեցեալդ իմ Տէլէմաք, փախիր այս յաւերժհարսանցմէ որ զգուշաւոր կծէւանան, որպէսզի զգեզ աւելի լաւ խաբեն. փախիր երիտասարդութեանդ վտանգներէն. եւ մանաւանդ փախիր այս մանկանէն զոր ջէս հանաջեր : Նոյն ինքն երեսն է սա, զոր մայրը Աստղիկ այս կողմն առաւ բերաւ ' որպէսզի Կիբերայի մեջ իւր պատշամանը ցուցուցած արհամարհութեանդ վրէժն հանէ հեզմէ.

Կալիպսոյ աստուածուհւոյն սիրքս խոցեց ու քեզի սիրահարցուց զանիկա . իւր շորս կողմն եղած յաւերժահարսանց սիրքս բորբոնեց . բայց եւ դուն , նմ խեղն պատանի , դուն ալ առանց գիտնալու անով կայրիս կբորբոնիս » :

Տելեմաք շատ անգամ Մենսորին խօսքը կընդհատէր ու կըսէր . « Ի՞նչ կըլլար քե որ այս կողմն բնակէիմն : Ողիսեսս սլ կենդանի չե . շատնց պէ՛տ է որ ալեաց տակ բաղուած ըլլայ . եւ Պենեւոպե տեսնելով որ ոչ նա եւ ոչ էս կըպահանջէ , տեղի տուած է զինն ուզողներուն , եւ հայրը Իկարոս զինն ստիպած է ուրիշ նոր փեսայ մը առնելու : Անոր համար Իրակէ դառնամ որ զինքը նոր կապէրու մեջ մտած տեսնեմ եւ հօրս տուած խոստմանը անհաւատարիմ : Իրակացիք մոռցած են զՈղիսեսս : Անուուես մեր մահը փնտռելու համար պիտի դառնամք Իրակէ , որովհետեւ Պենեւոպեին սիրահարները նաւահանգստին մուտքը բռնած են՝ որպէսզի դարձած ժամանակնիս զմեզ մեռցրնեն » :

Պատասխան տուա Մենսոր . « Ահա քեզ արգասիք կոյր կրից , որոց ձեռքը մասնուողը բոլոր խելքը կըրափէ անոնց նպատակուր եղած փաստեր զտեսնելու եւ աշուրները մեկդի կըդարձընէ որպէսզի զանոնք դատարարող փաստերը շտեսնէ : Այնպիսին սլ բոլոր խելքն ու միտքն ինկզիմքը խաբելու եւ խղնմշանքը լռեցընելու կգործածէ : Միքե մոռցնա՛ր զայն ամենայն զոր աստուածք զքեզ հայրենիքդ դարձունելու համար ըրին : Ի՞նչպէս Սիկիլիայէն ելար : Եզիպտոսի մեջ զլլսուդ եկած խեղճուսիւնները միքե յանկարծ յաջողութիւն շղարձան : Ո՞ր աներեւոյթ ձեռքն զքեզ Տիրոսի մեջ մահազոյծ վտանգէն ազատեց : Այսչափ սխալեցիքն յետոյ միքե դեռ չէս գիտեր ինչ պատահած էն քեզ նակատագիրք :

Բայց ինչ կըսեմ. անարժան էս դու անոր : Ես կելլեմ կերբամ այս կղզիեն . իսկ դուն՝ իմաստուն էս քաջ հօր վնս որդի , հոս կանանց մեջ մեղկ ու անպատիւ կեանք մը վարէ . էս բնորդեմ կամաց ասուածոց բրէ դուն զայն զոր հայրդ իւր անձին անարժան համարեցաւ » :

Այս արհամարհանաց խօսքերը Տելեմախին սիրեն ի խոր խոցեցին : Մենևորին վրայ կգորովեր . կցաւեր ու կամաշեր . կվախնար որ ջրլլայ քէ այս իմաստուն մարդը՝ յորմէ այնչափ երախտիք էր տեսեր՝ էլլէ երբայ . բայց այն նորածին կիրքերն որ անծանօթ իսկ էին իրեն , զինքն փոխեր՝ սարբեր մարդ բրէր էին : Եւ արտասուալից աշօք կըսէր առ Մենևոր . « Ի՞նչ ուրեմն , ասուածունւնայն ինձ խոսացած անմահութիւնը բանի տեղ շէս դներ » : « Ոչինչ կհամարիմ , պատասխանեց Մենևոր , ինչ որ առաքինութեան էս հրամանաց դից հակառակ է : Առաքինութիւնը զքեզ բու հայրենիդ կկանշէ որպէսզի զՈղիսեսս էս զՊէնելոպէ տեսնես . առաքինութիւնը կարգելու տեղ որ ինքզինդ անմիտ կրից շմասնես : Եւ դիք՝ որ հօրդ փառացը հաւասար տեղ փառք պատաստելու համար զքեզ այնչափ վտանգներէ ազատեցին , կհրամայեն՝ որ այս կղզիին ձգես երբաս : Աղէ ինչ պիտի բնես անմահական կեանքն առանց ազատութեան , առանց առաքինութեան էս փառաց : Այդ կեանքն անվախնան ըլլալովն՝ ալ աւելի բշուտառ պիտի ըլլայ » :

Այս խօսքերուն հառաջանքով միայն պատասխան կուտար Տելեմախ : Երբեմն կփափաքէր որ Մենևոր զինքն բռնի այն կղզիեն քաշէր հաներ , էս երբեմն կբաղձար որ ժամ մը յառաջ Մենևոր էլլեր երբար , որպէսզի ալ աշխին առջեւը շունենայ այն խիտ բարեկամն որ իւր տղարութիւնը երեսը կզարներ : Բոլոր այս ներհակակիր

խորհուրդները հեճոցեցէ սիրսը կհասանէին, եւ ոչ մէկը հոն հաստատուն կմնար. սիրսը ծովուն կնմանէր որ ամէն հակառակ հողմոյ խաղալիկ է ու կծփայ : Շատ անգամ կերբար ծովուն եզերքը անշարժ կպառկէր, եւ յանախ նսեմասուեր անտառի մը մեջ դառն արտառով կբափէր, եւ առիւծի մը պէս կմոնջէր : Կհալէր կմաշէր, եւ խորցած աշուրները տոշորոյ կրակով մը լեցուած էին. զինքն այլագունեալ, կրուցեալ եւ այլանդակեալ տեսնողները կկարծէին թէ նոյն Տելեմաքն շէ : Գեղեցկութիւնը, զուարթիւնն ու ազնուական արիւրթիւնը իրմէ հեռու կփախսէին : Եւ ինչպէս ծաղիկ մը որ առաւօսը բացուած իւր անոյշ հոսք դաշտին մեջ կբուրէր, եւ երիկուան դէմ երբայով կրոռմի, կենդանի գոյները կնէտէն, կբարձամի ու կշորնայ, եւ գեղեցիկ գլուխն ալ շկարէնալով կանգուն կենալ՝ կխոնարհի կիյնայ, այսպէս նաեւ Ողիսեայ զաւակը նուաղեալ էր եւ մահուան դուռն հասած :

Տեսնելով Մենսոր որ Տելեմաք շիրմար կրիցը բռնութեանը դէմ դնել, այնպիսի մեծ վճանգէ զինքն ազատելու համար հարտար խորհուրդ մը մտածեց : Դիտէր էր որ Կալիպսոյ բոլոր արտոյր կսիրէր զՏելեմաք. Տելեմաքայ ալ մանկահասակ Եւֆարիս յաւերժհարսին վրայ ունէցած սէրն անկէց վար շէր մնար, վասնզի անգուրքն Երոս մահականացուաց սիրսը շանջելու համար այնպէս կրնէ որ մարդ զինքը սիրողը շատ շսիրէր : Միտքը դրաւ Մենսոր որ Կալիպսոյին նախանձը շարժէ : Եւ որովհետեւ Եւֆարիս Տելեմաքայ հետ որսի պիտի երբար, ըսաւ Մենսոր առ Կալիպսոյ . « Տելեմաքին վրայ որսի կարգէ դուրս սէր մը կզսնեմ զոր ոչ երբեք տեսնուի, որով սկսաւ ուրիշ զուարնութիւններէն ամենեւին համ ջառ-

նույլ. անհառներ եւ ամայի լեռներ միայն սիրելի եմ իրեն: Արդեօք դձուն, դիցունի, իրեն ազդեցիր այս մեծ եռանդը » :

Այս խօսքերն որ լսեց Կալիպսոյ՝ շիրցաւ իւր սուկալի բարկութիւնը զսպել, եւ « Այս Տելեմաք, ըսաւ, որ Կիպրոս Կղզւոյն բոլոր զուարեութիւններն արհամարհեց, շիրնար յաւերժհարսանցս մեկուն ջափաւոր գեղեցկութեանը դիմանալ: Ի՞նչպէս կհամարձակի պարծիլ քե այնչափ զարմանալի գործքեր է բրեր, ինքն որուն սիրքը վասաբար կբուլնայ հեշտութեամբ, եւ որ կարծես քե կանանց մեջ աննշան կեանք մը անցունելու համար է միայն ծնած » : Ուրախութեամբ տեսնելով Մենսոր որ նշափ նախանձէն Կալիպսոյին սիրքը տակնուվրայ կըլլար, աւելի բան մը ջրսաւ, վախնալով որ իւր վրայ կասկած մը ջսայ. միայն Տխուր եւ վշտացեալ դէպք մը անոր կցուցրներ: Այնուհետեւ դիցունիին՝բոլոր տեսած բաներուն վրայ իւր ցաւը անոր կյայտներ, եւ անդադար նորանոր զանգատներ կընէր: Եւ Մենսորին ծանուցած որսն ալ բոլորովին զինքը կատարեցուց. վասնզի իմացաւ որ Տելեմաք եւ Կարիսին հետ խօսելու համար կջանար անով միւս յաւերժհարսանցմէ հեռանալ: Արդէն երկրորդ որսի մըն ալ խօսք կըլլար, եւ կգուշակէր դիցունիին քե անշուշտ առաջնոյն պէս պիտի բնէր նաեւ անոր մեջ: Ուստի որպէսզի Տելեմաքայ խորհուրդներն եղծանէ՝ ձայն հանեց որ ինքն ալ կուզէր որսոյն մեջ մտնել: Բայց յետոյ յանկարծ շկարեցնալով իւր բարկութիւնը զսպել, այսպէս խօսեցաւ.

« Յանդձն զսասանի, ուրեմն Պոսիպոնին քեզ պատահած նաւաբեկութեան արժանահաս պատուհասէն եւ աստուածոց վրէժխնդրութենէն ազատելու համար էր որ իմ կղզիս էլար: Ուրեմն իմ զօրութիւնս եւ վրադ ցու-

ցրցած սէրս արհամարհելու համար միայն այս կողին  
 եկար մտար՝ որ ո՛ր է իցէ մահկանացուի անմասոյց է :  
 Ո՛վ աստուածք Ողիմպեայ է Ստիւսի, բուստ դիցուն-  
 ւոյս ձայնը լսեցեք. փութացեք խայտառակեցեք այս  
 անզգամբ, այս ապերախսն, այս ամբարիժօք: Եւ որով-  
 հետէ դու հորմեղ աւելի խստասիրտ ես էւ անիրաւ, իւր  
 կրած շարիքներէն աւելի երկարատէ էւ աւելի դժնդակ  
 շարիքներ փաշէս : Ո՞չ, յաւիտեան պիտի շտենես դու  
 հայրենիքդ, այն աղփաս ու ողորմելի Իրակէն զոր շա-  
 մբօցս անմահութենէն վեր դնելու. էւ կամ լաւ էս,   
 հեռուէն զայն աշուղդ տեսնես էւ ծովուն մէջ իյնաս  
 կորսուիս, էւ արեաց խաղալիք եղած դիակդ այս ծո-  
 վափանցս աւազին վրայ գայ նետի՞ էւ քաղման յոյս  
 շունենայ : Տեսնեն զայն աշէրս անցեղացմէ պատառ  
 պատառ բզկսած : Պիտի տեսնէ զայն էւ սիրուհիդ, այն  
 տեսնէ էւ սիրք կտոր կտոր ըլլայ, էւ անոր յուսահա-  
 տութիւնը իմ երջանկութիւնս պիտի ըլլայ » :

Կալիստոյ այսպէս խօսած ժամանակը արիւնդուտէս  
 ու հրացայտ աշուրներն անդադար առիս անդին կը-  
 դարձրներ. շեմ գիտէր ինչ մքին ու կասաղի բան մը կար  
 իւր նայուածքին մէջ: Դողդոջուն այտեր սէւ ու կապոյտ  
 բծերով ծածկուած էին, անդադար գոյներնին կնէտէին  
 էւ ստեպ մեռելատիպ դէղնութիւն մը բոլոր դեմքին վրայ  
 կպատէր : Այլ արցունք առաջինին պէս յորդաբուղիս  
 շեր վազէր. կարծես քէ կասաղութիւնն ու յուսահասու-  
 քիւնը անոր աղբերակը ցամփեցուցած էին, էւ հազիւ  
 ֆանի մը կարիլ ծնօտիցը վրայ կվազէր: Չայնը խոր-  
 պոս, դողդոջուն էւ բնդհաս :

Բոլոր այս շարժումները կդիտէր Մենսոր, էւ յուսա-  
 հաստալ հիւանդի տեղ զինքը դնելով իրեն բան շեր բտէր.  
 միայն երբեմն երբեմն կարեկցութեամբ վրան կնայէր :



Կզգար Տէլեմաք քէ ճրջափ յանցաւոր եր եւ Մենսորին բարեկամութեանը անաւժան : Չեր համարձակէր աշֆր վեր առնուլ վախնալով որ բարեկամին աշֆերուն շհանդիպին , որուն լուրքիւնն իսկ զինքը կղասապարսեր : Երբեմն կփափաքէր վազել անոր վիզն իյնալ ու վկայել քէ յանցանքին վրայ ճրջափ կցաւի . բայց մէկ կողմէն ընդունայն ամօրը , միւս կողմանէ վսանգէն ազատելու համար ուզածէն աւելի առաջ երթալու վախը զինքը կբռներ . վասնզի վսանգն իրեն քաղցր կերեւար , եւ դեռ շեր կրնար իւր անմիտ կրիցն յաղթելու որոշումուն մը ընել :

Ողիմպոսի աստուածներն ու աստուածուհիք մէկտեղ ժողոված՝ խոր լուրքեամբ Կալիպսոյին կողմունք վրայ ակնկառոյց կկենային , որպէսզի տեսնեն քէ ո՞վ յաղթող պիտի հանդիսանայ , Աքենաս քէ Երոս :

Երոս յաւերժհարսանց հետ խաղալով՝ ամենուն սրտին մէջ կրակ եր վառեր : Աքենաս Մենսորին կերպարանովը՝ Երոսին դեմ կհաներ զնախանձ որ անբաժանելի է իսիրոյ : Իսկ Արամազդ միտքը դրեր եր այս պատերազմին հանդիսատես միայն ըլլալ՝ ոչ մէկուն եւ ոչ մէկային ձեռնու լինելով :

Սակայն Եւֆարիս վախնալով որ Տէլեմաք ձեռքէն շէլլէ , հազարումէկ հնարք կբանեցրներ զինքը իւր կապերուն մէջ բռնելու : Երկրորդ անգամ անոր հետ որսի երթալու ժամանակը եկեր եր , եւ ինքը Անահիտ աստուածուհուն նման եր հագուեր : Աստղիկ ու Երոս անոր դեմքին վրայ այնպիսի նոր գեղեցկութիւն մը աւելցուցեր էին՝ որ նոյն օրը Կալիպսոյ դիցուհուն գեղեցկութիւնն իսկ անոր առջեւ բան շեր երեւար : Հեռուէն վրան նայեցաւ Կալիպսոյ . նայեցաւ ականակիտ աղբեր հայելուն մէջ նաեւ իւր պատկերին

վրայ՝ ու ինք իր վրան ամեցաւ : Գնաց քարայրին խորը ծածկուեցաւ, եւ այսպէս ինքնիրեն խօսեցաւ .

« ԶՆՐ ՏԵՂՐ ՈՒՐԵԱՆ ԶԱՆԱԳԱՅ ԱՅՍ ԵՐԿՈՒ ՏԱՐՓԱՆՈՐՆԵՐ խոռովել անոնց որսակից ըլլալ ուզելով : Ըլլան արդեօք . երբան անոր յարքանակն աւելցունելու եւ իմ գեղեցկութեամբս անոր գեղեցկութիւնը աւելի դուրս ցատեցընելու : Պէ՛տ է որ Տելեմաք զիս տեսնելով իւր եւհարիսին աւելի սիրահարուի : Աւանդ, այս ինչ ըրի : Ո՞չ, շեմ երբար ինտերնին . բայց իրենք ալ պիտի շերքան . գիտեմ ինչպէս պէ՛տ է զիրենք խափանել : Երբան Մենտորը զսնեմ եւ աղաջեմ որ զՏելեմաք ասկէց առնու իսանի, Իրակէ դարձընէ : Բայց ինչ կրտեմ . ինչ պիտի ըլլայ իմ վիճակս երբոր Տելեմաք ելլէ երբայ : Ո՛վ անգութ Աստղիկ : Խաբէջիր դու զիս, Աստղիկ . նի, որպիսի նենգաւոր պարգէւ ինձ տուիր : Վնասակուն մանկիկ : Ժանսաժնէ Սեր . սիրես բացի ինչ յուսով Տելեմաքին հետ երջանիկ կեանք անցընելու, եւ դուն այս արժիս մեջ խոռովութիւն եւ յուսահատութիւն միայն բերիր : Յաւերժահարսունք յիճնէ զլուս վերուցին : Ա՛լ բռնաւորութիւնս անվախնան ընելու միայն կօզնէ աստուածութիւնս : Ո՛հ, նր է թէ կարենայի ինկզինես մեռցընել եւ ցաւերուս վերջ տալ : Որովհետեւ ես շեմ կրնար մեռնիլ, պէ՛տ է որ դուն մեռնիս, Տելեմաք : Ապերախտութեանդ վրեժը ինչպէ՛ պիտի հանեմ, յաւերժահարսու պիտի տեսնէ զայն, վասնզի իւր աջին առջեւը զինչ պիտի զարնեմ : Բայց կցնորիմ ես : Ո՛վ բռնաւոր Կալիպսոյ, ինչ կուզես, մի՛թէ կորուսանէ՞ զանմեղը զոր դու ինքնին այս բռնաւորութեան անդունդը նետեցիր : Ես ինքնին Տելեմաքայ ողջախոն արժիւն մեջ ապիսաբեր բոցը բռնկցուցի : Որպիսի անմեղութիւն եր նորս . որպիսի սոսկումն յախսից եւ որպիսի արիւրութիւն ընդ-

դեմ ամօրսպարս հեռուքեանց : Պէ՛տ էր որ իւր սիրսն  
 ապականէի : Սակայն կրողուր զիս քե որ ... Եւ միքե  
 պիտի շքողո՞ւ զիս, եւ կամ պիտի շեռնեմ որ զիս բողո-  
 ւովին արհամարհելով՝ ոտխիս համար միայն պիտի  
 ապրի : Ո՞չ, ոչ. քրածիս արժանի վիճե կհաշեմ : Գնա՛,  
 Տելեմաք, անցիր ծովուն մեկալ կողմը, քո՞ղ զԿալիպսոյ  
 անմխիբար որ ոչ կրնայ համբերել եւ ոչ զման կրնայ  
 զսնել . քող զինքն անմխիբար, լի ամօրով աւ յուսա-  
 հաս՝ բու ամբարսաւան Եւֆարիսիդ հե՛տ » :

Քարայրին մեջ այսպէս միայնակ կիսօտէր, բայց  
 յանկարծ դուրս ցատեց կանշելով . « Ո՞ւր ես Մենսոր,  
 միքե այսպէս կպաշտպանես զՏելեմաք ընդդէմ մոլու-  
 քեան, յորմե՞ ահա կընկնի նա : Կհնանա՞ս դու մինչդէռ  
 Երոս քեզի դեմ արքուն կհսկէ : Ալ շեմ կրնար այս վաս  
 անհոգութեանդ դիմանալ : Միքե միճե անվոյր աշո՞վ  
 պիտի տեսնես Ողիսեայ որդւոյն զհայրն անարգելն ու  
 իւր վեհ նակասագիրն արհամարհելը : Միքե անոր առաջ-  
 նորդութիւնը ինձ յանձնած են ճնողքը քե քեզ : Ես էմ  
 որ անոր սիրքը բժշկելու հնարք կփնտռեմ . եւ դուն մի-  
 քե բան մը պիտի շքնէս : Անտառիս խորը մեծամեծ  
 կաղամախ ծառեր կան, հոն շինեց նաեւ Ողիսեւս այն  
 նաւն որով կղզիես Էլաւ գնաց : Նոյն տեղը խորունկ  
 այր մը կգտնես յորում են նաւ շինելու համար բոլոր  
 հարկաւոր եղած գործիները » :

Այս խօսքերն հազիւ քե բերնէն Էլեր Էին՝ զղջացաւ  
 հանելուն : Բայց Մենսոր առանց վայրկեան մը կորսըն-  
 ցունելու, փութացաւ զնաց քարայրը, գործիները գը-  
 սաւ, կաղամախներ կտեց ու մեկ օրուան մեջ՝ նաւար-  
 կելու պատրաստ նաւ մը շինեց . որովհետեւ Արեւնասայ  
 գորութիւնն ու հարսարութիւնը ամենէն մեծ գործերն

ալ իզրուխ հանելու համար շահ ժամանակի շեն կարօրի :

Կալիպսոյ սոսկալի մտաց սագնապի մեջ էր. մեկ կողմէն Մենսորին աշխատութեան առաջ երբալը կուզէր տեսնել, եւ միւս կողմէն շէր կրնար որսը բողոլ յորում եւեարիս Տէլեմաֆայ հետ բոլորովին ազատ պիտի մնար : Նախանձը շէր ներէր իրեն որ վայրկեան մը երկու տարփաւորներն աշէն հեռացրնէ. ուսի կջանար որսը այն կողմը ձգել ուր Մենսոր իւր նաւը կտիրէր : Ականջ կղներ, տապարին եւ ուռան հարուածները կլսէր. ամէն մեկ հարուածին ոսկորները կողողային : Բայց միանգամայն եւ կլխխնար որ իւր այսպիսի մտածմանց մեջ եղած ժամանակը ջրլլայ թէ Տէլեմաֆ ասէն գտնայ ծածուկ նշան կամ աշ մը բնելու առ յաւերժահարսն օրհորդ :

Սակայն եւեարիս հեզնելով մը կրսէր առ Տէլեմաֆ. « Չէս վախնար, Տէլեմաֆ, որ Մենսոր ղեզ շարդողի որ ինչո՞ւ առանց իրեն որսի գնացիր : Ո՞ն, նրշափ կարէկցութեան արժանի ես որ այնպիսի խիտ դաստիարակի մը ձեռքին տակ կապրիս : Բան մը շկայ որ իւր խտութիւնը քիչ մը մեղմացրնէ. ամէն տեսակ զուարնութեանց ինկզինքը թշնամի կցուցրնէ, անոնցմէ եւ ոչ մեկուն ջրողուր որ համն առնուս. նաեւ ամենէն անմեղ բաները ղեզի մեղք կհամարի : Քանի որ շէր կրնար անձամբ անձին առաջնորդել՝ կրնայիք անոր իշխանութեանը տակ մնալ. բայց այնչափ իմաստութիւն ցուցրնելէն յետոյ՝ սլ պէտք շէ բողոլս որ հետզ հողու մը պէս վարուի :

Այս խորամանկ խօսքերը Տէլեմաֆին սիրքը ծակելով Մենսորին դէմ բարկութեամբ կլեցրնէին, որոյ եւ լուծը

կուզէր թօքափել : Զինքը տեսնելու կվախէր . եւ այն-  
շափ խռոված էր որ մինչեւ Եւֆրատայ ըսածներուն  
ալ պատասխան չէր տար : Վերջապէս բոլոր որսի ժա-  
մանակն երկուքն ալ անդադար տալու համար մեջ անցընե-  
լէն յետոյ՝ երկուքեան դժմ անտառին մէկ խորուն հասան  
մօտ այն տեղւոյն՝ ուր զօրն իբրևն աշխատէր էր Մենտրոն :  
Հեռուէն տեսաւ Կալիպտոյ որ նաւը լմցեր էր , եւ մե-  
կէն մահուան մեզին պէս բանձրամած մեզ մը աշուր-  
ներէր պատեց : Ծնկուրները դողդրղալէն չէին բռներ .  
բոլոր մարմնոյն անդամոցը վրայէն պաղ ֆրօնք մը  
կվազէր , եւ հարկ եղաւ որ ֆոլի յաւերժաբայանցը վը-  
րայ կոտորէր . եւ երբոր Եւֆրատ ձեռքն երկնցուց որ  
զինքը բռնէ , խոժոռ մը նայելով մեկիսի հրեց զայն :

Տելեմաք այս նաւը տեսնելով , բայց էւ ոչ զՄենտրոն  
որովհետեւ անիկա աշխատանքը լմցընելէն յետոյ ֆա-  
շուէր էր , հարցուց դիցուհւոյն թէ որո՞ն է այս նաւը  
եւ թէ ինչ բանի պիտի գործածուի : Զկրցաւ նա մեկէն  
պատասխան տալ . բայց սպա ըսաւ . « Մենտրոն համբայ  
դնելու համար զայն շինել տուի . ալ այս դժպիտի բա-  
րեկամեղ շտապապիս՝ որ երջանկութեանդ հակա-  
ռակ կկենայ , ու թե՛ որ անմահ դառնաս՝ կարելի է վրայ  
նախանձի » :

« Մենտրոն զիս կրողո՞ւ , ուրեմն բանս լմցնձ է , գո-  
չեց Տելեմաք . Ո՛վ Եւֆրատ , եթէ Մենտրոն զիս կրողու ,  
բեզմեզաւ մէկը շունիմ » : Կրից սասկուրէնէն այս խօս-  
քերը բերնէն էլան : Հասկրցաւ սխալմունքը , բայց ը-  
սելու ժամանակ չէր կրցած խօսքերուն իմաստին ու՛շ  
դնել : Ամենքը զարմացած լուռ կեցան : Իսկ Եւֆրատ  
կարմեղով էւ աշուրները վար առնելով , այլապէս  
եսէւ կհաշուէր ու չէր համարձակէր երեւալ : Բայց երե-  
սքն ամօքով ծածկուած առէն սիրտը խնդուրեամբ կը-

լեցուէր : Տէլեմաք' ալ ըսածը ինքն ալ շէր հասկընար, շէր կրնար հաւատալ թէ այնպիսի յանդուզն խօսք մը գրուցած ըլլայ : Երազ մը կ'երէւէր այն իրեն, բայց այնպիսի երազ որուն վրայ ամաշէլով կ'սագնատէր :

Յայնժամ Կալիպսոյ որդեկորոյս առիւծէն աւելի կ'ատրտած' անտառին մէջ կ'վազէր կ'երթար եւ ճուր երթալը շէր գիտէր, մինչեւ որ նորէն եկաւ քարայրին դուռն ելաւ ուր Մեննոր իրեն կ'սպասէր : « Ելէ՛ք, պոռաց, զնացէ՛ք կղզիէս, ճիւղ օտարականք, դուք որ եկաք հանգստութիւնս խոռովեցիք : Առջեւէս կորսուի երթայ այն անմիտ պատանին, եւ դուն անխոհեմ ծեր, թէ որ հիմա շուտով զանիկա ասկէց առնուս շտանիս, պիտի սորվիս թէ դիցուհւոյ մը բարկութիւնը ինչէր կրնայ ընել : Մեյմ' ալ աշխարհ շէրէնայ. ալ շէմ ուզէր որ յաւերժհարսանցս մէկն հետք խօսի եւ կամ վրան նայի : Ահա Սիւսի ալեացք վրայ կ'երդնում, երդումնք' որ զասուածներն անգամ կ'ողոզարնէ : Բայց գիտցի՛ր, Տէլեմաք, որ դեռ աղէտից վերջը հասած շէ. ապերձիս, կղզիէս ելլելուդ պէս' նորանոր թռուտութիւնք գլուխդ պիտի քափին : Վրէժս քեզմէ պիտի հանեն : ԶԿալիպսոյ կորուսանելոյդ վրայ պիտի ցախս, բայց իզնուր : Պոսիդոն որ արդէն հօրդ վրայ սաստիկ բարկացած է' Սիկիլիոյ մէջ զինքն նախասէլուն համար, եւ Աստիկէն զգոռուած' զոր արհամարհեցիր դու իԿիպրոս, ուրիշ մարիկներ քեզ կը պատահասէ : Հայրդ պիտի տեսնես, վասնզի դեռ մեռած շէ, բայց պիտի տեսնես ու պիտի շնանաշես : Անագորոյն բախտին լաւ մը խաղալիկ ըլլալէն յետոյ միայն հետք պիտի բնակիս յԻրակէ : Գնա՛. երկնային գորութեանց կ'պաղատիմ որ վրէժս քեզմէ հանեն... Երանի՛ թէ ծովուն մէջ' ծայրի մը ծայրէն կ'ախուտած եւ կ'այծակով զարնուած' զնուր տեղ Կալիպսոն օգնութեան կ'անշես, որ

Ֆու սանջանիդ Տեսնելով ուրախութեամբ պիտի լէցուի » :

Այս խօսքերս ըսած ջրսած, մեկէն խռովեալ միտքն անոնց ներհակ խորհուրդներու կերբար : Սերը նորէն սիրքս վառեց զՏէլեմաք քովը պահելու բաղձանք . եւ կրսէր ինքնիրեն . « Թող ապրի, բող հոս կենայ . քերէւս օր մը իմանայ քէ ինչէր քրի իրեն : Եւ քարիս ջկրնար ինձ պէս անմահութիւն սալ իրեն : Ո՛վ կոյր եւ ամենեւին կոյր Կալիպսոյ . դո՛ւն զքեզ երդմամբդ մասնեցիր, ինքզինդ կաշկանդեցիր եւ Սիւսիսն ալիքն որոց վրայ երդուար, մլ քեզի յոյս շէն բողուր » : Թեպէս այս խօսքերը մեկն շէր լսեր, սակայն դեմքին վրայ Կասալիք դժխոց նկարուած կերեւային, եւ կարծես քէ սէւ Կոկիսոն անոր արտէն բոլոր իւր բունալից ժանրը կրտփէր :

Սարսափեցաւ Տէլեմաք : Իմացաւ զայն դիցունիին, վարնզի բան կանց որ նախանձոս սերը ջգուշակէ ջիմանայ . եւ Տէլեմաքին սարսափովը դիցունիւոյն մոլեգնութիւնը կկրկնապատկուէր : Աստուածապարարկաց նման որ իրենց կանշուրդսէլու ձայնովը օղը կրնդացրնէն եւ Թրակիոյ բարձրաբերձ լեռները կհնչեցրնէն, ձեռքը գեղարդ անսառե անսառ կվազէր նա՛ կանջելով բոլոր իւր յաւերժհարսունքը, եւ սպառնալով որ ետեւէն շէկողները զարնէ մեռցրնէ : Այս սպառնալիքէն զարհուրած կվազէն նոքա գունդագունդ : Եւ քարիս իսկարսասուալից աշօք առաջ կերբայ՝ հեռուէն Տէլեմաքին վրայ նայելով, որուն հետ մլ շէր համարձակէր խօսելու : Կմոնջեր դիցունիին զյաւերժհարսը քովը Տեսնելով, եւ անոր հրպատակութեամբը ոչ միայն շէր հանդարտէր, այլ եւ նոր կասաղութիւն մը վրան կուզար Տեսնելով որ Եւքարիս քաշած վշտերովը նոր գեղեցկութիւն մը կառնուր :

Սակայն Տէլեմաք Մենսորին հետ միմակ էր մնացեր .

Եւ ծնկուրներուն պլլուելով, որովհետեւ ալ ոչ զինքը գրկել էւ ոչ երեսը նայել կհամարձակեր, արտասուաց հեղեղներկիջեցրներ. կուգէր խօսիլ էւ ձայնը կխաղդուեր, էւ խօսք շեր գտներ որ ըսէր. ոչ ընելիքը գիտեր, ոչ քրածն էւ ոչ ուզածը: Վերջապէս գոռեց. « Ո՛վ համարիտ հայր իմ, նվ Մենսոր, ազատե՛ գիս յանհնարին ալեհիցս: Ոչ, շեմ կրնար զեզ բողուլ էւ ոչ ետեւեղ զալ: Ազատե՛ գիս յանագին ալեհիցս. ազատե՛ գիս ինձմէ, զա՛րկ մեռցուր գիս:

Գրկեց համբուրեց զնա Մենսոր, մխիթարեց, փաշալերեց, սիրտ տուաւ որ իւր անձին համբերէ, առանց իւր կրեերը գգուելու, էւ բաւա. Ողի՞ր իմաստնոյն Ողիսեայ զոր այնչափ սիրեցին դիք էւ դեռ կսիրեն, փաշած սոսկալի շարի՞դ անոր սիրոյն առհաւատեալն է: Անկէկա որ իւր տկարութիւնն ու կրիցք բռնութիւնն զգացած շե՛ այնպիսին իմաստուն շե՛ տակաւին. վասնզի ինքզինքը դեռ լաւ շնանշնալով՝ շիրնար յանձնապատասանութենէ զգուշանալ: Աստուածներն իբրէս քե՛ ձեռնեղ բռնած տարին զեզ անդունդին բերանը, որպէսզի առանց զեզ մէջը զահալիժելու՝ անոր խորութիւնը եզ ցուցրնեն: Հասկըցար դու հիմա զոր ինչ անկարելի եր եզ հասկընալ քեռ. գլուխդ շօար: Անօգուտ եր եզ խօսիլ Սիրոյ մասնութեանցը վրայ՝ քե՛ կորսնցնելու համար է որ կշողոմորքէ, էւ փաղցրութեան երեւութի մը տակ սոսկալի դառնութիւններ կծածկէ: Այդ գեղեցիկ մանկիկն Էկա կծիժաղէր, կնխար, կխաղար: Տեսար զինքը, սիրտը յափեսակեց, էւ դուն ախարժելով բողուցիր որ յափեսակէ: Մտի՞ր վերքը շօհնալ կձեւացրնէիր. կշանայիր զիս խաբել էւ զեզ շողոմորքել, էւ բանէ մը շէիր վախնար: Ահա յանդգնութեանդ պրտուրը. հիմա մահ կիկնտես էւ այն միայն յոյս մնա-



ցած է քեզ: Գիցունիին խոնված՝ Կասաղեաց դժոխաց կնմանի. Եւֆարիս այնպիսի բոցով մը կայրի կտռորի որանողորմագոյն է քան զԵրկունս մահու, եւ բոլոր այս նախանձոս յաւերժահարսունք պատրաստ են մեկզմեկ պատռտելու. անա քեզ նենգաւոր Սիրոյն քրածը, որ այնպէս անոյժ կերեւայ: Զօրացիր նորէն: Տես նրշափ կսիրէն զքեզ դիք որ Սիրոյն ձեռքէն վախճելու եւ սիրելի հայրենիք զտնելու համար առջեւդ այսպիսի գեղեցիկ նամբայ մը կբանան: Կալիպտոյ ինքնին ստիպւած է զքեզ դուրս ընելու: Նաւը բոլորովին կազմ եւ պատրաստ է. ինչո՞ւ կուտանամք բողլու այս կղզին ուր առաքինութիւնը շիրմար բնակիլ »:

Այս խօսքերս ըսելով Մենսոր, ձեռքէն բռնեց ու դէպ իծովուն եզերքը կտանէր զՏէլեմաք, որ դժուարաբայլ էտէէն կերթար եւ անդադար կդառնայր էտելը կնայր: Եւֆարիսը կդիտէր որ իմէ կհեռանար. եւ սլ անոր ետեւը շկարենալով տեսնել, անոր գեղեցկանիւս մագերուն կբնայր, գեղածուփ զգեստներուն եւ նագելի քալումովին: Կցանկար անոր զարեապարաց հետքն համբուրել: Զինքն աշէն կորսընցընելէն էտքն ալ դէռ ականջ կդրնէր, եւ կարծէր քե անոր ձայնը կլսէ: Թեպէտէ նոն շէր, ինքը կտեսնէր զայն, վասնզի աշխն մեջ կենդանի նկարուած էր նա, կարծէր նաեւ քե անոր հետ կխօսի. իւր ուր բլլալը շէր գիտէր, եւ ոչ Մենսորին ձայնը կլսէր:

Վերջապէս իբրեւ իխոր քնոյ զարբուցեալ, ըսաւ Մենսորին. « Միտես դրի որ հետդ գամ, բայց դէռ Եւֆարիսին վերջին ողջոյնս շտուի: Աւելի կուզեմ մեռնիլ քան քե այսպէս ապերախսաբար զինքը բողուլ: Կեցիր որ վերջին անգամ մըն ալ զինքը տեսնեմ եւ յախտենական ողջոյնս տամ իրէն: Թող տուր որ գեթ ըսեմ իրէն. Ո՞վ յաւերժահարսն, անողորմ դիք՝ իմ երջանկութեանս

նախանձելով, կստիպեն զիս որ երբամ, բայց աւելի կրնան կեանքս վերցրնել քան ինչ յիշատակոյ մտնես : Ո՛վ հայրիկ, կամ բող ինձ այս յեսին օրինաւոր մխիթարութիւնս, եւ կամ հիմակուրնէ առ վերջնոր յինէն իմ կեանքս : Զե. շե. ոչ այս կողմն կուզեմ բնակիլ, եւ ոչ անձնասուր լինել սիրոյ : Մտիս մեջ բնաւ սեր չկայ. եւ քարիսին համար քարեկամութիւն եւ երախտագիտութիւն միայն է որ կզգամ : Բաւական է ինձ որ մեկ անգամ մըն ալ կարող ըլլամ իրեն մնասքարով մը ըսել, եւ մեկէն անդանդաղ էտէւեղ կուզամ » :

« Ի՛նչպէս կ'իտեմք վրայ, ո՛վ Տէլեմաք, կրկնեց Մենսոր : Այնչափ կասաղի է ախտդ՝ որ եւ ոչ զայն կրզգաս : Ինչպիսիք հանգիստ կ'կարծես եւ մահ կուզես. կրհամարձակիս ըսելու քէ բնաւ յաղքուած շէս իՍիրոյ, եւ շէս կրնար բողուլ մեկնիլ հեռանալ յաւերժահարսէ մը զոր կսիրես. զինքն է միայն որ կսեսնես, անոր ձայնը միայն կ'լսես . իրմէ դուրս քան շէս չեսնես, շէս լսեր : Չերմէ ցնորած մարդը կրսէ . ես հիւանդ շեմ : Ո՛վ կոյր Տէլեմաք. պատրաստ էիր բողուլ զՊէնոլոպէ որ կսպասէ քեզ, զՈղիսէս զոր պիտի շեսնես, զԻբակէ՝ ուր պիտի բազաւորես, զԳառու եւ զվէն նակասագիրը զոր դիք քեզ խոստացան, քեզի համար այնչափ հրաւճներ ընելով : Բոլոր այս բարիքներէ հրաժարիլ կուզես եւ քարեայ քովը անպատիւ կեանք մը անցրնելն համար : Դեռ կրնաս ըսել որ հետք սիրով կ'ապուած շէս : Ի՛նչ է հապա որ զքեզ կ'իտուովէ. ինչն համար մեռնիլ կուզես. ինչն համար դիցուհւոյն առջեւ այնչափ զառանցանօք կ'սօսէիր : Անկեղծ ջրլլալդ շէն էս կ'մեղադրեմ. բայց կուրուքեանդ վրայ կողբամ : Փախի՛ր Տէլեմաք, փախի՛ր . փախստեամբ միայն կրնայ մարդ Սիրոյն յաղքել . եւ այնպիսի բեւամուռ դէմ նեմարիտ քաջութիւնն է վախ-

նալ էլ փախաջիլ առանց մտածելու էլ առանց էտելը նայելու համար ժամանակ անցունելու : Կյիշեսս անշուշտ քե մանկուքենեդ իվեր նրափ հոգ ու խնամք ունեցեր էմ վրադ , էլ քե քանի քանի վճանգներէ խրատներովս ազատեցար . կսմ հաւատս ինձ էլ կամ բող որ քեզմէ բաժնուիմ : Ո՞ր էր քե գիտնայիր քե նրափ ծանր է ինձ տեսել որ կորստանդ կղիմես : Ո՞հ , քե որ գիտնայիր քե նրափ վիշտ քեզմէ երբոր շէի համարձակիր հետդ խօսելու . նշ , մայրդ որ ծնաւ զքեզ այնպիսի երկունք շքաշէց : Լուեցի , վիշտս ծածկեցի , հառաջանքներս խղղեցի , որպէսզի տեսնեմ քե պիտի դառնամս զսն առ իս : Որդեանկ իմ , որդեանկ սիրելի , սփռփէ սիրսս , դարձուր ինձ զայն որ սիրելի է ինձ քան զիմ աղիս , տուր ինձ զՏէլեմաք զոր կորուսի , տուր նաեւ զքեզ առ քեզ : Թե՛նոր արտիդ մեջ իմաստութիւնը յաղքէ սիրոյ , կապրիմ էս , էլ կապրիմ երջանիկ . իսկ էրէ սեր իմաստութեան յաղքելով զքեզ առնու տանի , սլ Մենտոր շիրմար ապրիլ » :

Այս խօսքերս քսելով Մենտոր դէպ իծովեզերք նամբան յառաջ կտանէր , էլ քեպէտ Տէլեմաք ինքնիրեն քալելով անոր էտէէն երթալու շափ ոյժ տուներ , բայց բաւական զօրացեր էր անդիմադարձ բողլու որ զինքը տանի : Արեւասս որ միշտ Մենտորին կերպարանքին տակ ծածկուած էր , անտեսանելի կերպով զՏէլեմաք իւր վահանով ծածկելով էլ շորս կողմը աստուածային տող մը սփռելով այնպիսի քաջութիւն մը անոր սիրտն ազդեց , որուն նմանը քանի որ կղզին էկած էր շեր զգացած : Վերջապէս հասան կղզուոյն մէկ եզերքը որ սարաւանդ կերկնուար . ժայռ մըն էր ասիկա զոր փրփրադէզ ալիք միշտ կծեծէին : Այն բարձրութենէն նայե-

ցանքէ Մեննորին պատրաստած նաւը սեղն է արդեօք,  
 եւ անա սխաւը տեսարան մը տեսան :

Երոս սաստիկ բարկացած էր տեսնելով որ անձանօք  
 ծերունին ոչ միայն իւր նետերէն անխոց էր, այլ նաեւ  
 իւր ձեռքէն զՏելեմաք աւեր կտանէր. արտին կասալու-  
 քէնէն լալով Կալիպսոյին վրայ գնաց, որ նսեմասուեր  
 անտառաց մեջ քափառական կայտէր : Զինքը տես-  
 նելուն պէս հառաջեց դիցունին, եւ արտին բոլոր վեր-  
 քերը բացուեցան : Ըսաւ անոր Երոս. « Աստուածունի  
 էս, եւ կրողուս որ կղզւոյդ մեջ գերի եղած սկար ողոր-  
 մելի մահկանացու մը քեզ յաղքէ : Ինչո՞ւ կրողուս որ  
 երբայ : — Ո՛րվ բռնառական մանուկ, պատասխանեց  
 դիցունին, սլ շեմ ուզէր վնասակար խրատներդ մտիկ  
 ընել. դու էս որ իմ քաղցր ու անդորրաւեք խաղաղու-  
 քիւնս վերուցիր ու զիս յանդունդս աղէտից գահավեժ  
 նետեցիր : Ճար շկայ, Ստիւսին ալեացը վրայ երդուայ  
 որ զՏելեմաք բողբոմ երբայ : Արամազդ ինքնին՝ հայրն  
 աստուածոց, հանդերձ իւր ամենակարող զօրութեամբը  
 շիրնար այս սոսկալի երդման դեմ ընել : Անա Տելեմաք  
 կելլէ կղզիէս, էլիր նաեւ դու, վնասակար մանուկ .  
 դու իրմէ աւելի շարիս ինձ » :

Յայնժամ Երոս աջերուն արցունքը սրբելով, երգի-  
 ծական ու խորամանկ ժպիտով մը « Իրաւքընէ, ըսաւ,  
 մեծ արգելք մըն է այն, բայց բող որ էս անոր հարը  
 զտնեմ. կասարէ դուն քու երդումնդ եւ Տելեմաքին  
 երբայուն դեմ մի կենար : Ոչ յաւերժհարսուննդ էս ոչ  
 էս Ստիւսի ալեացը վրայ երդուընցանք որ զինքը բո-  
 դունք երբայ : Խորհուրդ պիտի տամ անոնց որ Մեն-  
 նորին այնչափ փութով շինած նաւուն կրակ տան այրեն,  
 որով էս զքեզ յանկարծակիի բերած ժուրիւնք անօգուտ

Ելլէ : Ինքն ալ յանկարծակիի պիտի գայ, եւ ձեռքէդ զՏէլեմաք բաւելու հանելու ալ հնարք մը պիտի ջննայ իրեն » :

Այս հրապուրական խօսքերով Կալիպսոյին սիրքս սպրդեցան մտան յոյս եւ խնդուրիւն : Եւ ինչպէս որ զովարար զեփիւր վսակի մը եզերքը ամառուան սափուրէնէն նուաղեալ հօսք կհանգզեցրնէ, այսպէս նաեւ այս խօսակցութիւնը դիցունհուոյն յուսահասութիւնը փարասեց : Երեսը զուարթացաւ, աշուրներն անուշցան, եւ սիրքս կրծող սեւ հոգերը ինչ մը հեռացան իրմէ. կանկ առաւ, ժպտեցաւ, շողոփորթեց փաղափոզ Սերը. եւ զանիկա շողոփորթելովը նոր ցաւեր իրեն պատասեց :

Իսկ Սերը գիւնը համոզելուն վրայ ուրախացած զբնաց որ համոզէ նաեւ յաւերժհարսունը որ լեռներու վրայ ցրուած կրափառէին նման խաւանց որ սովալլուկ գալլերու կատարութենէն հովիւնին բողուն փախաջին : Կանջեց զանոնք մեկտեղ եւ ըսաւ. « Տէլեմաք դէռ ձեռքերնիդ է, փուրացեք այրեցեք Մէնսորին փախջելու համար շինած նաւը » : Շուտ մը ջահեր վառեցին ու ծովեզերքը վազեցին ասուածապարարկաց պէս պոռալով կանջուրոսելով ու արծակ մագերնին աղին անդին բօրափելով : Բոցը կսկսի բռնօխլ. եւ կայրէ կլափէ զնաւն որ շոր փայտէ եր եւ ձիւրապատ. եւ մրրիկք ծխոյ եւ բոցոյ մինջեւ ամպերը կէլլէին կբարձրանային :

Ժայռին վրայէն տեսան Մէնսոր եւ Տէլեմաք այս կրակն ու յաւերժհարսանց կանջուրոսելուն ձայնը բսեցին : Ուրախացաւ Տէլեմաք, վասնզի սիրքս դէռ բժեկուած շէր, եւ Մէնսոր հասկըցաւ որ կիրքը լաւ շմարած կրակի մը կնմանէր, որ երբեմն երբեմն մոխրին

սակէն դուրս կելլէ ու հրացայտ կայծեր կարձակէ :  
« Ահա նորէն կապերուս մեջ ընկայ, ըստ Տելեմաֆ,  
ւն այս կղզին բողլու մեզ յոյս ջկայ » :

Տեսաւ Մենսոր որ Տելեմաֆ նորէն առաջին կրիցը  
մեջ պիտի իյնայ եւ կորսնցընելու վայրկեան մը ջկար :  
Հեռուէն տեսաւ որ նաւ մը ծովուն մեջ կայնած՝ կղզին  
մօտեցաւ շեր համարձակեր, որովհետեւ գիտէին նաւապետ  
որ Կալիպսոյին կղզին անմատոյց էր մահկանացուաց :  
Շուտ մը Մենսոր հրէց ծովը նետեց զՏելեմաֆ, որ ժայռին  
եզերքը նստեր էր, ինքն ալ ետեւէն նետուեցաւ : Այս յան-  
կարծական սոսկալի անկումէն սասանեցաւ Տելեմաֆ,  
աղի ալիքը խմեց, եւ կոհակաց խաղալիկ եղաւ .  
խելքը գլուխն որ եկաւ՝ տեսաւ որ Մենսոր ձեռքն իրեն  
կերկրնցընէր լողալու համար իրեն օգնելու . նալ այն  
մահառիթ կղզիէն հեռանալէն զատ ուրիշ բան ջեր  
մտածեր :

Յաւերժհարսունք որ գիրենք գերի բռնած կկարծէին,  
նալ ջկարելով անոնց փախուսն արգելով սկսան կա-  
տաղաբար պոռալ կանջել : Կալիպսոյ անմխիթար գնաց  
բարայրը փառուեցաւ եւ գոռում գոռումովը զայն լեցուց :  
Իսկ երոս տեսնելով որ իւր յաղթանակն ամօրալի պար-  
տութեան դարձաւ, քեւերը թօրափելով օղը վերացաւ ու  
դեպի Իդալիոյ անտառը բռաւ՝ ուր իւր անգուր մայրն  
իրեն կսպասէր : Ողիին իրմէն ալ աւելի անգուր՝ ըրած  
ջարեացը վրայ խնայով ինքզինքը կմխիթարէր :

Որչափ կհեռանար Տելեմաֆ կղզիէն, այնչափ աւելի  
ուրախութեամբ կզգար որ փառութիւնն ու առաքինու-  
թեան վրայ ունեցած սերը արտին մեջ կնորոգուէր :  
« Հիմա կհասկընամ ըսածդ, կզոշեր առ Մենսոր,  
որում ջեր կընար հաւատալ, քե փախջելով միայն է որ

կրնայ մարդ յաղքել ախտին : Ո՛վ հայրիկ , հրշափ կսիրեն եղեր զիս զի՛մ որ զէզ ինձ ձեռնու տուին : Այսպսուհետև ոչ ծովէ կվախնամ , ոչ հովերէ եւ ոչ մերիկներէ . կրէրես միայն է որ կվախնամ : Սերն ինճնիրենք քան զամենայն նաւաբեկութիւնս է երկիւղալի :



Գ Ի Ր Ք Ո Ի Յ Ե Ր Ո Ր Դ .

Աղովամ, Նարբային եղբայր, որ այն ժամացի նառն հրամանա-  
 արն էր՝ սիրով կրնդունի զՏելեմաք. և զՄենսոր : Կնանջնայ  
 նա զՏելեմաք. կպասմէ իրեն Պիգմալիոնի և Ասարբէայ սու-  
 կալի կերպով մեռնիլը, և թէ ինչպէս Բաղէազար որ այս կնոջ  
 խորամանկութեամբք բռնաւոր հօրք երեսն ընկեր էր, քաղառ-  
 րութեան արողը կելլէ : Տելեմաքայ և Մենսորի սեղան մը կու-  
 սայ, հոն Ափսովաս իւր երգոցն անուշութեամբք նառն շորս  
 կողմը կծողովէ զՏրիսոնս, զՆերէիսս և ծովուն բոլոր ուրիշ ա-  
 սուածները : Մենսոր բնար մը ձեռք կառնու, և Ափսովասէն  
 հազար անգամ աւելի անուշ կզարնէ : Աղովամ կպասմէ Բեհիկի  
 հրաշալիքը, անուշ օդն և ուրիշ գեղեցկութիւնները. և բնակչաց  
 մեծ պարզութեան մէջ անցուցած հանդարտ կեանքն կն կարագրէ :

Այն երկար ննջած նաւը յոր իրենք կդիմէին՝ փիւ-  
 նիկեցի էր և Կիպրոս կերբար : Այս փիւնիկեցիք Եգիպտոս  
 գացած ասեննին Տեսեր էին զՏելեմաք. բայց ալիքներու  
 մէջ շիրջան զայն հանջնայ : Երբոր Մենսոր նառն այն-  
 շափ մօտեցաւ՝ որ ալ ձայնը կրնար հասնիլ, զլուխը ջրէն  
 վեր առաւ ուժով մը պռուաց. « Ո՛ր փիւնիկեցիք, դուք որ  
 ամեն ազգաց պատրաստ էք օգնելու, մի՞ զլանայք երկու  
 մարդոց կեանքն որ ձեր մարդասիրութենէն կխնդրեմք :  
 Թե՛որ երկիւղած էք իդից, զմեզ նաւերնիդ ընդունեցէք .  
 նր որ երբաք, հոն կերբամք նաեւ մեք » : Պասասխան  
 տուաւ նաւապետը. « Սիրով կրնդունիք զձեզ . զիսեմք



որ ամեն մարդ պարսական է բռնառաց օգնելու քե-  
պէսէն անձանօք ըլլան » : Եւ մէկէն զիրէնք նաւն առին :

Հազիւ քէ նաւ մտան, սլ շկարելով շունջ առնուլ՝  
անշարժ մնացին . վասնզի մեծ աշխատութեամբ այլեաց  
դէմ կռուելով երկար ժամանակ լողացեր էին : Բիշ  
բիշ ուժերնին տեղն էկաւ . ուրիշ զգեսներ առին հա-  
զան, որովհետէ իրենց լաբերուն մէջ ջուր մտնելով  
սասիկ ծանրացեր էին, եւ շորս կողմերնէն կվազեր :  
Երբոր հոգի առին ու կրնային խօսիլ, փիւնիկեցիք  
վազեցին ֆովերնին էկան եւ կուզէին գլուխնին հանդի-  
պածն իմանալ : Նաւապէսն հարցուց ու ըսաւ . « Ի՞նչ-  
պէս կրցաւ մտնել այն կղզին ուսկից էլէր կուգաք . վասն-  
զի կրսէն քէ անոր տէրն անողորմ սասուածուհի մըն է՝  
որ ջրողուր որ մէկը հոն էլլէ : Ահագին ժայռերով եւս  
պատած է կղզին, որոց հետ կասաղութեամբ կկռուի ծո-  
վը, եւ շիրնար մէկը հոն մտնելու առանց նաւը խորտա-  
կելու » : — Մեք ալ նաւակոծութեամբ հոն նետուեցանք,  
պատասխանեց Մէնսոր . Յոյն էմ ազգաւ . հայրենիքնիս  
Իրակէ կղզին է, Եպիրոսի մօտ՝ ուր դուք կերթաք : Եթէ  
շուզեք Իրակէ ֆիշ մը կենալ՝ որ ձեր նամբուն վրայ է,  
բաւական է որ զմեզ Եպիրոս տանիք . կզտեմք հոն  
բարեկամներ՝ որ մնացած կտրն նամբուն հոգը վրա-  
նին կտանուն, աշխարհիս վրայ ամեն բանէ աւելի  
մեզ սիրելի եղածը նորէն տեսնելու զգացած ուրախու-  
թեանն համար ձեզ պիտի շնորհապարս ըլլամք յաւիտեան :

Այսպէս ահա Մէնսոր էր որ կխօսէր, եւ Տէլեմաք  
լուռ կենալով կրողուր որ անիկա խօսի, վասնզի Կա-  
լիպտոյին կղզւոյն մէջ բրած սխալանօքը շատ խելք սով-  
բեր էր : Ալ իւր վրայ շեր վստահեր . կիմանար որ Մէն-  
սորի իմաստուն խրատուցն նետնելու պէտք ունի . եւ եր-  
բոր շեր կրնար հետը խօսելով անոր կարծիքը հարցրնել,

աշուրները կզիսեր որպէսզի գեր անոնցմէ անոր խորհուրդը գուշակէ :

Փիւնիկեցի նաւապէսը Տելեմաֆին վրայ զարմացած նայելով՝ իրեն այնպէս մը կուզար թէ զինքը սեսած բլլայ բայց որոշ շիւղելով , « Կներես հարցմանս , բսաւ , միսֆրս այնպէս մը կուզայ թէ զքեզ սեսած եմ , բայց արդեօք դու ալ կլիւնես որ զիս սեսած բլլաս . դեմքդ ինձ անծանօթ շերեւար , զքեզ սեսածիս պէս ինձ այնպէս մը եկաւ թէ պիտի նանաշեմ , բայց ո՛ր սեսնելս շեմ զիսեր . գուցէ բու յիւղելովդ էս ալ կարենամ միսֆս բերել » :

Ջուարնախառն զարմացմամբ պատասխան տուաւ Տելեմաֆ ու բսաւ . « Ես ալ զձեզ սեսնելուս նոյն բանն զգացի : Ձձեզ սեսած եմ եւ կհանաշեմ . բայց շեմ յիւղեր թէ արդեօք յեզիպոսնս թէ իՏիւրոս » : Այն ժամանակ այս փիւնիկեցին նման այն մարդուն որ առաւօսը քնեն արքննալով՝ քիշ քիշ հեռուէն միսֆը կբերէ փախստական հեռաւոր երազները , յանկարծ գոշեց . « Դն էս Տելեմաֆ , որուն հետ բարեկամացաւ Նարբալ՝ եզիպոստէն դարձած ժամանակնիս : Ես անոր եղբայրն եմ , եւ անցուց Վրաս շատ անգամ քեզի հետ խօսած է : Եզիպոստի արշաւանքէն յետոյ զձեզ անոր ձեռքը թողուցի . վասնզի հարկ էր որ ծովեր կտրելով անցնելով Երբան հոշակաւոր Բէսիկէն հասնիմ՝ Հերակլեան արձաններուն մօտ : Այսպէս անա զքեզ հարեւանցի մը սեսնելուս պատճառաւ՝ պիտի շէ զարմանաս որ այնչափ դժուարութեամբ կըցայ զքեզ հանաշել : »

« Լաւ կսեսնամ հիմա , պատասխանեց Տելեմաֆ , որ Ադովամն էս դու : Թեպէտէ հազիւ մէյմը սետրեմզքեզ , բայց Նարբալին խօսածներէն կհանաշեմ ես զքեզ : Ո՛ն , ինչմեծ ուրախութիւն է ինձ լուր առնուլ քեզմէ այն մարդուն վրայ որ միշտ սիրելի պիտի բլլայ ինձ : Դեռ Տիւ-

րնս է: Կասկածոս ու բարբարոսն Պիզմալիոն արդեօք հետք անգրութեամբ վարուեցան»: Խօսքը կտրեց Ադովամ ու ըսաւ. « Գիտնաս Տելեմաք, որ բարեյաջող բախսքն զեղ պնայիսի մարդու մը ձեռք կյաննէ որ ամեն փոյք է խնամք պիտի ունենայ վրայ: Եպիրոս զգնացած՝ զեղ Իբակէ պիտի սանիւք. էւ պիտի տեսնես որ Նարբալին եղբայրն ալ հու վրայ անկէց պակաս բարեկամութիւն պիտի շնուցրնէ »:

Այսպէս խօսած ասէն՝ դիտեց որ սպասած քամին կսկսէր փշել: Հրամայեց որ խարիսխը վերցրնեն, առ գասները բանան, էւ ուժով ուժով քի քաշելով ծովը պատնէն երբան:

Մեկդի առաւ Տելեմաքն ու Մեննորը որ հետերնին խօսի: « Ահա, ըսաւ Տելեմաքին նայելով, հիմա հետաքրքրութիւնդ պիտի լցուցանեմ: Ալ Պիզմալիոն շկայ, արդարադաս դիք երկիրս անոր ձեռքէն ազատեցին: Ինչպէս որ ինքը մեկուն վրայ շէր վստահէր, նոյնպէս էւ շկար մեկը որ անոր վրայ վստահէր: Լաւերը կհեծէին էւ անոր անգրութենէն հեռու կփախուէին՝ անոր շարիք հասցրնել շուգելով. իսկ շարերը իրենց կեանքը ապահով շէին համարէր մինչեւ որ անորը ջկերցրնէին: Տիրացի մը շկար որ անոր հանապազօրեայ կասկածանացը վստանէր ազատ ըլլար: Իւր քիկնապահներն իսկ ուրիշներէն աւելի վստանցի մեջ էին. որովհետէ կեանքն անոնց ձեռքն էր, ամենէն աւելի իրենցմէ կվախէր Պիզմալիոն, էւ վրանին պզտի կասկածի մ'ալ որ երբար՝ զանոնք իւր ապահովութեանը կգոհէր: Եւ այսշապի ապահովութիւնը փնտրելուն համար ալ շէր կրնար գրտնել զայն: Իւր կենացը աւանդապահ եղողներն անդադար վախի մեջ էին անոր կասկածանքէն, էւ այն սուկալի վիճակէն ազատելու ուրիշ նար շկար՝ բայց երէ

բռնաւորին մահուամբը անոր այն դժնդակ կասկածանքներուն սուաջն առնուլ :

«Անորէնն Ասարբէ՛րուն վրայ շատերէն շատ բան լսած կրլլաս, առաջինն եղաւ որ քաղաւորին կորուստը մտաբերեց : Յովազար անուն հարուստ իւրացի երիտասարդի մը սիրահարուած էր, եւ կյուսար զանիկա զահր նրսեցընել : Այս դիտաւորութեանը հասնելու համար քաղաւորին հաւատացուց որ իւր երկու որդուցն անգրանիկը Փաղայել, անհամբերութեամբ շուտով ուզելով հօրը յաջորդել՝ անոր կենացը դարան գործեր էր. եւ դաւանանութիւնը հաստատելու համար սուս վկաներ եւս գտաւ : Ողորմելի քաղաւորին անմեղ որդին մեռցընել տուաւ : Իսկ երկորդն՝ որ Բաղէազար կկոչուէր, Սամոս կղզին յուղարկեց որպէսզի Յունաց գիտութիւնները սովորի եւ անոնց սովորութեանցը վարժի. բայց բուն պատճառն այն էր որ Ասարբէ բռնաւորին այնպէս հասկցուցեր էր քե պէտքեր զինն հեռացընել որ շրլլայ քե իննն եւս տգործներուն հետ հօրը դիմաբանի: Հազիւ քե նաւահանգստէն հեռացաւ, նաւաստիք այս անողորմ կնոջմէն կաշտառուած քլլալով այնպէս բրին որ գիշերը նաւերնին բնկղմեցաւ, եւ իրենն լողալով օտար նաւակներու մէջ զնացին մտան որ իրենց կապասէին, եւ մանուկ արեայորդին ծովուն խորը նետեցին :

«Սակայն Ասարբէին տախանքները Պիզմալիոն միայն էր որ շէր գիտեր, մանաւանդ քե միտքն ալ դրած էր որ Ասարբէ իրմէ զատ մէկը պիտի շտիրէր : Եւ իննն որ ասենուն վրայ կկասկածէր, այս անգգամ կնոջ վրայ կոյր վստահութիւն մը ունէր, եւ իւր այստափ կուրութեանը պատճառ վրան ունեցած սերն էր : Նոյն ժամանակները՝ ազանութենէն զբզոռուած սկսաւ նաեւ Յովազարը մեռցընելու պատճառանք փնտռել՝ որուն սիրահարուած էր

Ասարբէ. Պիզմալիոնի բոլոր խելքը միտքը այն երիտասարդին հարսուրիւնը ձեռք բերել էր :

« Բայց այն միջոցին որ կասկածանք, տոբանք եւ ազահուրիւն Պիզմալիոնի սիրքը կկեղեկէին, առապարեց Ասարբէ անոր կեանքը վերցընել. վասնզի կարծեց նաեւ թէ պատանույն վրայ ունեցած անվայել սերը հասկըցեր էր բռնաւորն. թող որ գիտէր իսկ որ էրէ ուրիշ բան ալ չըլլար՝ ազահուրիւնը միայն բաւական էր անոր սիրքը շարժելու որ անողորմաբար զՅովագար սպաննէ. ուստի մտածեց որ զանիկա ազատելու համար պէտք չէ եւ ոչ վայրկեան մը կորսնցընել : Կեսնէր որ դրան մեծամեծները պատրաստ են ձեռքերնին բռնաւորին արեանը մեջ քարխելու. ամէն օր նոր դաւանանութեան խորհուրդ մը կլսէր. բայց չէր համարձակեր մեկուսն իւր միտքն յայտնել, վախճալով որ չըլլայ թէ մասնուի. ուստի եւ աւելի ազահով համարեցաւ զանիկա քիւնաւորել :

« Շատ անգամ Ասարբէին հետ մինակ կուտէր Պիզմալիոն, եւ բուն իւր ձեռքերէն զատ մեկուս մը շփասանելով՝ ուտելիքն ինքն անձամբ կպատրաստէր : Կասկածանքն աւելի լաւ ծածկելու էր կերակուրը պատրաստած ժամանակ ամենեւին շիմացուելու համար՝ արժուներացը խորք կերբար կփակուէր : Ալ չէր փնտռէր համադամ ազնիւ կերակուրներ, եւ ինչ որ ինքը չէր եփած՝ չէր համարձակէր ուտելու : Եւ ոչ միայն խոհակերաց համեմած խորհիկները՝ այլ նաեւ գինի, հաց, աղ, ձէր, կար եւ բոլոր մեկալ սովորական ուտելիքն իրեն համար չէին. պարտիզէն իւր ձեռքովը փրցուցած պտուղները միայն կուտէր, եւ կամ իւր ցանած ու եփած ընդդէմները : Խմած ջուրն ալ արժուներացը մեջ ամրափակ աղբիւրէն կառնուր՝ որուն բանալին միշտ իւր հովը կպահէր : Եւ թէպէտ Ասարբէին վրայ մեծ վստահուրիւն

կցուցրներ, սակայն անկէց ալ կզգուշանար. բան չէր ուսեր ու խմեր մինչեւ որ նախ անոր շկերցրներ ու շխմցրներ, որպէսզի քէ որ բունաւորուի նե ալ՝ գէր մեկ-սեղ բունաւորուին, եւ անիկա իրմե աւելի ապրելու յոյս շունենայ : Բայց Ասարբէ՛ քան զինքն աւելի ջանուկ պտտաւ մը՝ որում եւ իւր տփամեր յայտներ էր, դեղրափ մը առնելով՝ սլ բագաւորը բունաւորելէն շվախցաւ :

« Եւ մտածածն այս կերպով զլուխ հանեց : Այն միջոցին որ կերակուրի պիտի նստէին, պտտան եկաւ յանկարծ դուռը դղրդեց : Թագաւորն որ միշտ սպաննուելէն կվախնար, խռովեցաւ ու մեկէն վազեց դուռը՝ գնաց որ նայի քէ լաւ գոցուած է քէ չէ : Պտտաւը բողուց փախաւ. իսկ բագաւորը սարսափած կեցեր շէր գիտեր քէ ինչ էր այն լսած դղրդումը. սակայն եւ սիրտ շէր բներ դուռը բանալ եւ նայիլ : Ասարբէ զինքը կհաջալերէ, կփայփայէ եւ կբախանձէ որ կերակուրն ուսէ. վասնզի անոր դուռը վազած ժամանակ՝ ինքը փութացեր՝ ոսկի գաւաթին մէջը քոյն էր խառներ : Պիզմալիոն բոս իւր սովորութեանը նախ անոր խմցրնել տուաւ. դեղրափին ուժոյն վրայ վստահանալով՝ առանց վախի խմեց Ասարբէ : Խմեց նաեւ Պիզմալիոն, եւ վրան շոտ շանցաւ՝ գեսին բնկաւ փռուեցաւ :

« Ասարբէ որ լաւ գիտեր քէ բագաւորը դոյզն կասկածի մը համար կրնար զինքը մեռցրնել տալ, սկսաւ զգեսները պատռել, մազերը փեժտել, եւ պոռալ կանչել. կրգրկեր կպագներ բագաւորը որ մեռնելու վրայ էր, եւ հեղեղի պէս քափած արցունքովը զինքը կքրջեր. վասնզի այս կեղծաւոր կնոջ դիւրահոս էին արտասուքը : Երբոր տեսաւ որ սլ ուժէ բնկած էւ վերջի շունչն է հասեր, վախնալով որ շրլլայ քէ յանկարծ նորէն զօրանայ ու

զինն ալ իրեն մահակից ուզենայ ընել, գգուանն ու գորովը մոլեգին կասաղուրեան փոխելով՝ վրան ընկաւ եւ խեղդամահ քաւ զինքը : Յետոյ մասէն քաւեց հանեց քազաւորական մասանին, քազը գլխէն առաւ, Յովազարը ներս մտոյց եւ երկուքն ալ անոր ձեռքը տուաւ : Կկարծէր որ բոլոր իւր կուսակիցքն իւր տափանացը պիտի անսային եւ իւր հումանին քազաւոր պիտի հրատարակէին : Բայց իրեն հանոյ ըլլալու փութացողները նուաւսախոհ ու վարձկան մարդիկներ էին, եւ անընդունակ անկեղծ սիրոյ . բոլոր քաջութիւն ալ շունէին ու Աստարբեայ քենամիներէն կվախէին . եւ անոնցմէ ալ աւելի՛ այս ամպարիւտ կնոջ գոռոզութենէն, կեղծաւորութենէն եւ անգրութենէն կասրսափէին . եւ ամենք իրենք իրենց փրկութեանը համար անոր կորստեանը կփափափէին :

« Յայնժամ բոլոր արեւունիքը սոսկալի շփոթութեամբ լեցուեցաւ . ամեն տեղ այս ձայնը կլսուէր թէ « Մեռաւ արեայ » : Ոմանք զարհուրած, ուրիշները զենքի կվազէին, ամենք այս բանիս հետեւաններուն վրայ սագնապած կերէւէին, եւ գոյժն առնելուն վրայ ուրախ : Համբար բերնէ բերան թռչելով բոլոր այն ընդարձակածաւալ քաղաքին ամեն կողմը տարածեց, եւ մարդ մը շօշուօշուտ որ քազաւորին մահուանը վրայ ցաւի, վասնզի անոր մահուամբ բոլոր ժողովուրդը կազատեալ ու շունջ կառնոյր :

« Բայց Նարբալ՝ որովհետեւ առաջինի մարդ էր, այսպիսի եղեռան մը վրայ սոսկալով՝ Պիգմալիոնին բռնառութիւնը կողքար, որ այն անօրէն կնոջ ձեռքն ինքզինքը մասնեց, եւ աւելի լաւ համարէր էր խուժադուժ բռնաւոր մը ըլլալ քան թէ հայր ժողովրդեան, ինչպէս որ քազաւորի մը պարսն է : Տերութեան օգուտը մտածեց Նարբալ, եւ բոլոր բարի մարդիկը հետք միա-

բանեցուց բնորդեմ Ասարբէայ, որոյ բազաւորութիւնը այն նոր վերջացածէն աւելի խիստ պիտի ըլլար :

« Նարբայ գիտէր որ Բաղեազար ծովը նետուած ժամանակը խողոված շէր : Եւ քեպէտ անոր մահուան աւետիսն Ասարբէի բերողները կապանովցրնէին քէ մեռած է, վասզի այնպէս կկարծէին, սակայն անիկայ զիշերն իրեն օգնական առած՝ լողալով ազատէր էր, եւ կրէտացի վանառականք վրան գրալով զինքն իրենց նաւակն առէր էին : Չէր համարձակած հօրը բազաւորութիւնը դառնալ, կասկածելով որ անոր հրամանաւն էր որ ուզէր էին զինքը մեռցրնել, եւ ոչ բնոյնս հօրը անգուրք նախանձէն՝ կվախէր նաեւ Ասարբէայ խորամանկ հնարքներէն : Երկար ժամանակ ծայտալ քափանական պսքեցաւ Ասորոց երկրին մեջ՝ ուր կրէտացի վանառականները զինքը քողեր էին, եւ նաեւ հարկ եղէր էր որ հոն ոչխար արածելով իւր ապրուստը հարէ : Վերջապէս հնարք մը գտաւ իւր վիճակը Նարբային հասկըցուց. եւ առանց կասկածի հաւատաց իւր գաղտնիքն ու կեանքը այն մարդուն՝ որուն առաքինութիւնը ծանօթ էր ամենուն : Նարբայ՝ քեպէտէն հօրմէն շարիք էր տեսէր, սակայն եւ այնպէս սիրեց զորդին ու անոր օգտին հոգ տարաւ. եւ զգուցացոյց որ որդիական պարտուցը դեմ չգործէ, եւ յորդորեց զինքը որ ձախողակ բաղդին երկայնամտութեամբ համբերէ :

« Բաղեազար Նարբային ծանուցէր էր որ երբ էովդ Բալլապատեան երէւի Բեզ՝ ինձ ոսկի մատանի մը դրկէ եւ ես կհասկընամ որ հետզ գալու միանալու ժամանակն է : Քանի որ Պիգմալիոն կենդանի էր, Նարբային պատեան շէր երէւեր զինքը կանշել, վասնզի անով ոչ միայն արեայորդոյն կեանքը վստահի մեջ կդնէր, այլ նաեւ իրենը. այնչափ դժուարին էր Պիգմալիոնին խիստ խա-



զարկութենէն ազատիլ : Բայց երբոր այս բռուտ քագաւորն իւր եղէճն ազորութեանցը արժանի վերջն ունեցաւ, անապարեց Նարբայ, ոսկի մասանին Բաղէազարին դրկեց, որ մեկէն համբայ էլաւ եւ Տիւրոսին դռները հասաւ, երբ հաղաք Պիզմալիոնի յաջորդին համար խռովութեան մեջ եր: Տիւրոսի մեծերն ու ժողովուրդը դիւրաւ ընդունեցան զԲաղէազար, վասնզի զինքը կսիրէին, ոչ երէ մեռած քագաւոր հօրը համար՝ որ ամենուն ասելի եղեր եր, այլ իւր անոյշ բարուցն ու շափաւորութեանը համար: Երկար ասեճուման քաւածներն ալ շեմ գիտեր ինչ փայլ մը կուտային՝ որ իւր ազնիւ յասկութիւնները դուրս կցասեցընէր, եւ բոլոր Տիւրացոց սիրեն իրեն կհաւեր :

« Ժողովեց Նարբայ ժողովրդեան զլուխները, ժողովը կազմող ճերէնն ու Փիւնիկեցոց մեծ դիցուհւոյն Բուրմերը, որք իբրեւ իրենց քագաւորը ողջունեցին զԲաղէազար եւ ամեն տեղ հռչակել տուին. ժողովուրդը հազարումեկ ուրախութեան ձայներով պատասխանեց : Այն աղաղակին ձայնը լսեց Ասսարէ արեւունեացը խորէն, ուր իւր վասասիրտ վասահամբաւ Յովազարայ հետ փակւած եր: Բոլոր այն անզգամ մարդիկն որ Պիզմալիոնի կենդանութեան ասեճ ծառայեր էին իրեն, զինքը բողեր էին եւ հեռացեր, վասնզի շարք շարէն կվախէ, իրարու վրայ կկասկածին եւ շէն կրնար մեկզմեկ պատուոյ մեջ տեսնել : Աւրուած մարդիկը լաւ գիտեն թէ իրենց նմանները մէյմը որ իշխանութիւնը ձեռուրնին անցնի՝ ինչպէս շարաշար կգործածեն զայն, եւ ինչպիսի բռնութիւններ կընեն : Ուստի լաւագոյն կհամարին բարի մարդոց իշխանութիւնը, վասնզի գեր կյուսան անոնցմէ մարդասիրութիւն եւ ներողամտութիւն գտնել : Այլ Ասսարէին Բովր ուրիշ մարդ չէր մնացած՝ բայց երէ անոնք որ իւր սուկալի եղէճանցը գործակիցներն էին, որոնք

Եւ պատժե՛ գաս ուրիշ բանի շէին կրնար յոյս ունենալ :  
 « Պալատին դռները զարկին շաղջախնեցիին . այն ան-  
 զգամ մարդիկը շիրցան երկար ասեն դիմանալ , նայեցան  
 որ ձգեն փախշին : Ասարբէ գերիի կերպարանք մտած՝ ու-  
 զեց ամբոխին մեջ մտնել ու ազատիլ , բայց զինուորին մե-  
 կը զինքը նանջաւ , բռնուեցաւ Եւ հազիւ կրցաւ  
 ժողովրդեան կատարութենէն ազատիլ , որ կուգէր զինքը  
 բզկի բզկի ընել , Եւ արդէն շղմին մեջ կ'աւելորոտէր :  
 Հազիւ հազ Նարբալ այն խածամուժ ամբոխին ձեռքէն  
 կրցաւ զնա հանել : Խնդրեց Ասարբէ որ Բաղեազարայ  
 հետ տեսնուի յուսալով իւր գեղեցկութեամբ զինքնորսայ  
 Եւ անանկ մը իրեն կարծեցրնէ թէ մեծ գաղտնիքներ ունի  
 իրեն յայտնելու : Չկրցաւ Բաղեազար անոր խնդիրը մեր-  
 ժել . Ասարբէ գեղեցկութեանը հետ այնպիսի հեզութիւն  
 Եւ համեստութիւն մը ցուցուց՝ որ կարող էին նաեւ ամե-  
 նէն կատարի արտերն իգուք շարժել : Սկսաւ փափուկ ու  
 փաղցրալուր գովեստներով զԲաղեազար շուրճորթել ,  
 կցուցրնէր թէ նշափ Պիգմալիոն զինքը սիրէր եր , Եւ  
 կտրաշէր կտրաշէր որ անոր անխնիին համար ըլլայ  
 իրեն խնայե . օգնութեան կկանջէր աստուածներ իբրեւ  
 թէ զանոնք երկիւղածութեամբ պաշտած ըլլար . արտա-  
 սուաց հեղեղներ կրափէր , նոր քազաւորին ծնկուրները  
 կիյնար կպլլուէր , Եւ կջանար անոր ամենէն սիրելի  
 սպասաւորները կասկածաւոր Եւ ասելի ցուցրնել : Նար-  
 բալը կամբաստանէր իբրեւ թէ Պիգմալիոնին դէմ եղած  
 դաւանանութեան մեջ ինքզինքը քազաւորեցրնելու հա-  
 մար մտած , ու Բաղեազարայ դէմ ժողովուրդը զրգոած  
 ըլլար . կաւելցրնէր իսկ թէ ուզէր եր նաեւ բռնաւորել  
 զարեայորդին : Նոյնպիսի զրպարտութիւններ հնարեց  
 նաեւ բոլոր միւս առաքինաստէր իւրացուց վրայ : Կյու-  
 սար Բաղեազարայ արտին մեջ ալ հօրք արտնն պէս նոյն

անվասանութիւնն ու կասկածոսութիւնը գտնել : Բայց անիկայ շկարեճնալով այլ եւս այս կնոջ խորամանկ շարասնութեանը համբերել, խօսքը կտէց ու քիկնապահները ներս կանշէց : Բանն սարին զինքը եւ իմաստուն ծերոց յանձնուէցաւ որ բոլոր անոր գործերը քննեն :

« Իմացան սոսկանօք որ ինքը զՊիգմալիոն քունաւորէր եր ու խղիւր . բոլոր իւր կեանքը անընդհատ յաջորդութիւն մը երէւցաւ նորանշան եղեռնագործութեանց : Դասապարտեցին զինքը որ Փիւնիկիոյ ամենէն մեծ եղեռանց համար սահմանուած պատիժն ընդունի, որ եր քէքէ կրակի վրայ բռնել այրել : Բայց երբոր տեսաւ Ասարէկ որ ալ յոյս չկայ, դժոխքէն ելած Կասաղիներուն պէս մոլեգնելով՝ կլլէց քոյնը զոր քովը կպանէր, որպէսզի եքէ երկար ճանջանկներով զինքն ուզեն շարձարել, ինքզինքը մեռցընէ ազատի : Պահապանները տեսնելով որ սաստիկ ցաւոց մէջ կտապնալի, ուզեցին իրենն օգնութեան հասնիլ . պատասխան մը չտուաւ, եւ նշան ըրաւ որ բան չուզէր : Կյիւտեցընէին իրեն արդարադատ ստուածներն զորս բարկացուցեր էր . իսկ նա փոխանակ ամաշելու եւ ըրած մեծամեծ յանցանացը վրայ զղջալու՝ արհամարհոս ու գոռոզ աշփով մը երկինք նայեցաւ իբրէս քէ ստուածներն ուզենար նախատել :

« Կասաղութիւնն ու ամպարտութիւնը մեռելատիպ դէմքին վրայ նկարուած էին : Այն գեղեցկութեան՝ որով այնչափ մարդիկ բռնառացուցեր էր, եւ ո՛չ հեճն անգամ կերէւէր : Ինչ աղուոր բան որ ունէր՝ բոլորն ալ աւրուէր զացեր էր . մարած աշուրները գլխուն մէջ կըքաւալէին եւ կասաղի նայուածներ կարձկէին . շքրունքը կորոզողային, բերանը սոսկալի կերպով կըբացուէր . երեսը փառուած ու կռնմամբ ահուկի կերպով մը կձամաճուէր . կատարեայ դալկութիւն ու մահահամբոյր պա-

դուքին մը բոլոր մարմինը պատած էր : Երբեմն երբեմն կարծես վրան կենդանութիւն մը կուգար, կպոռար կրկանէր : Վերջապէս հոգին փռեց, բոլոր զինքը տեսնողները սոսկմամբ էւ արհաւիրօք լէցընելով : Ամպարիտ ոգին զնաց իջաւ անուտես այն խոտը տեղուանի՝ ուր անագորոյն Պանայիղի ծակ ամաններու մէջ ջուր կլէցընեն անդադար. ուր Իսսիոն միտ իւր անիւք կդարձրնէ . ուր Տանտալոս կպապակի ու շքանցը վրայէն վազած ջուրը շիրնար կլլէլ . ուր Սիսիփոս զուր տեղ ժայռ մը կբաւալէ որ անդադար կիյնայ, էւ ուր Տիսիոս յափտեան պիտի զգայ իւր միտ նորոգուող քնդեացը անգեղէ մը կրծուելուն սանջանք :

« Բաղեագար այս հրեշիւն ձեռքէն որ ազատեցաւ անբիւզներով գոհութիւն մատոյց աստուածոց, էւ բազաւորութիւնը սկսաւ՝ բոլորովին հօրը Պիգմալիոնին հակառակ կերպով : Ետեւ էղաւ վանառականութիւնը նորէն ծաղկեցունելու, որ օրէ օր իյնալու վրայ էր : Գլխաւոր գործողութեանց համար Նարբալին խորհուրդ հարցուց՝ առանց բոլորովին անկեց կառավարուելու, վասնզի անձամբ կուզէր ամեն բան տեսնել, իրեն տուած այլէնայլ խորհուրդները լսել, էւ անոնց մեջէն իրեն աւելի լաւ երեւցածը վնտել : Սիրելի է ժողովրդեան. էւ անոնց սիրքը վաստակելով՝ հօրը անգուր զօտաբալութեամբ դիզել շիրցած զանձէն աւելի զանձ կուեննայ . վասնզի շկայ գերդաստան մը որ էրէ զինքը կարօտութեան մէջ տեսնելու լինէր՝ բոլոր ունեցածն ու շունեցածը պատշաճ ջրլլայ անոր տակ . ուսի էւ անոնց հով թողածն աւելի իրենն է քան թէ անոնցմէ քաշէր առնէր : Իւր կենաց պահպանութեանը համար զգուշութեան հարկաւորութիւն մը տունի, վասնզի հովը ամենէն ապահով քիկնապահներն ունի՝ որ է ժողովրդեան սերը :

« Հպասակացք մեջ մեկը շկայոր զինքը կորսնցրնելուն վրայ շողոպայ, և իրեն պէս բարի քաղաւորին կեանքն ազատելու համար իրենը վսանցի մեջ շղնէ : Երջանիկ կեանք կանցրնէ, և բոլոր ժողովուրդը հետք երջանիկ կրնէ : Կլխխնայ որ իւր ժողովրդեան վրայ հարկերը շատ շճանրանան, ժողովուրդն ալ կլխխէ որ առ քաղաւորն տուած մասը բաւական ջրլլայ : Առասուրբեան մեջ զիրենք կրողու. և այս առասուրբիւնը զիրենք ոչ անհնազանդ կրնէ և ոչ լիւրք, վսանցի աշխատատեք ևն, վանառականութեան կպարտապին և նախնեաց օրինաց պահպանութեանը մեջ անդրդուելի կմնան : Փիւնիկէն իւր մեծութեան և փառաց ծայրը հասաւ, և բոլոր այս յաջողութեանց համար երախտագէտ է իւր դեռահասակ արեային :

« Նարբայ անոր ձեռքին սակ կկառավարէ : Ո՛վ Տելեմաք, քեռ զքեզ հիմա տեսնէր, որպիսի խնդութեամբ զքեզ ընծաներով կլեցունէր, և ինչ մեծ բեկորութիւն կըլլար իրեն որ զքեզ կարենար փառօք հայրենիդ յուղարկել : Թերեւս ինձ պահուած է այն փափաքելի բախտը, որ երբամ Իրակէ՝ Ողիսեսի որդին արողը մտեցրնեմ, որպէսզի հոն իմաստութեամբ քաղաւորէ ինչպէս որ Բաղէազար կքաղաւորէ ի Տիրոս » :

Երբոր խօսքը ընրնցուց Ադուլամ, Տելեմաք այս փիւնիկէցւոյն պատմածին վրայ զմայլած, և անկէց ալ աւելի բռնաւորութեանը մեջ իրմէ տեսած բարեկամութեան նշաններուն վրայ զարմացած՝ սիրով զրկեց զինքը պազա : Յետոյ հարցուց իրեն Ադուլամ քէ ինչ դիպուածով Կալիպտոյին կողմն էր մտէր, և պատմեց իրեն Տելեմաք Տիրոսէն մեկնիլը, Կիպրոսէն անցնիլը, զմենտ որ ինչ կերպով զտնելը, Կրէտէ երթալին, Իդոմենէսին փախտելէն յետոյ նոր քաղաւորին ընտրութեան համար հասարակաց

խաղերը. Աստղիան բարկութիւնը, նաւաբեկութիւննին, Կալիպսոյին իրենց քրած մարդասէր հիւրընկալութիւնը, ու վերջէն իւր յաւերժաւասանը մէկուն վրայ նախասնձ ձգելը, և քե ինչպէս Մենսոր փիւնիկեցի նաւ մը տեսնելով զինքը ծովն եր նետեր :

Այս խօսակցութիւնը լմրննալէն յետոյ Ադովամ փառաւոր հաւ մը պատրաստել տուաւ . և իւր մեծ խնդութիւնը յայտնելու համար ամեն տեսակ վայելք և զուարնութիւն հոն հանել տուաւ : Կերակրոյ ժամանակ՝ ներմակ զգեստներ հագած ու զլուխնին ալ ծաղկէ պսակով զարդարած փիւնիկեցի պատանիք կծառայէին : Արեւելքի ամենեւնեւ ազնիւ խնկերը հոն կծխէին : Բոլոր քիալարաց բազմոցները սրեգահար նուագածուք բռնած էին . և երբեմն երբեմն կրնդհասէր զանոնք Ալիսովաս փայտանուագ ձայնովն ու ֆնարաւ՝ որ աստուածոց խրախնանին մեջ լսուելու և Ապոլոնին ականջները զմայլեցրնելու արժանի էին : Տրիսոնք և Ներեիդք և բովանդակ Պոսիդոնի իշխանութեանը սակ եղող դիք, նաեւ ծովային նհանգներն իրենց ջրասոյգ անդնդախոր այրէրէն գունդագունդ դուրս կվազէին ու նաւուն շորս դին առած փայտանուայն երգերուն զմայլած մտիկ կրնէին : Գունդ մը փիւնիկեցի գեղեցիկ պատանիներ ձիւնէն աւելի ներմակ բէհեզ հագած՝ ժամերով իրենց երկրին կախար պարեցին, յետոյ Նգիպսոսինը, և ապա Յունացը : Եւ երբեմն երբեմն փողեր մինչեւ հեռաւոր ափանց ալիք կհնչեցրնէին : Գիւտերուան լուրքիւնը, ծովուն հանդարտութիւնը և ալեաց երեսը սփռած լուսնի՞քրքրուն լոյսը, և աստղանանանչ երկնից կապուտակը՝ շատ աւելի գեղեցիկ կգործէին այս տեսարանը :

Բնութեամբ վառվրուն և զգայուն Տելեմաք այս զուարնութեանց համը կառնուր, բայց շէր համարձա-

կեր սիրսր անոնց սալ : Քանի որ Կալիպսոյին կղզւոյն մէջ ամօթով անձին փորձ եղեր եր քէ նշապի դիւրաբորբոք է մանկուրիւն, նաեւ ամենէն անմեղ զուարճութիւն վախ մը կբերէին իրեն, եւ ամէն բան կասկածելի կերէւեր աջին : Մենսորին կնայեր, եւ անոր դեմքին ու աջին վրայ կփնտրէր քէ այս զուարճութեանց մէջ ինչպէս պէտք էր որ շարժեր :

Այս սագնապին մէջ զինքը տեսնելուն վրայ կուրախանայր Մենսոր, ու շտենելու կգարներ : Բայց վերջապէս անոր զգուշանորութենէն սիրսր շարժած՝ ժայէլով մը ըսաւ . « Գիտեմ ինչէ կվախնաս, եւ վախդ կգովեմ, բայց պէտք չէ շափն անցընել : Ամենէն աւելի ես կըբաղձամ որ դու զուարճանաս, բայց այնպիսի զուարճութեամբք՝ որ ոչ արտիղ մէջ ախտեր ծնուցանեն եւ ոչ զբեզ մեղկացընեն : Այնպիսի զուարճութիւններ պէտք են քեզ՝ որ սփոփեն զքեզ, եւ զորս վայելած ժամանակդ ինզգիմնդ շկորսնցընես, եւ ոչ քէ այնպիսի զուարճութիւններ՝ որ զքեզ իրենց էտէն քաշեն սանին : Կփափախիմ որ անոյժ ու պարկեճ զուարճութիւններ ունենաս, որ ոչ խելիդ գլխեդ կսանին եւ ոչ երբէք զքեզ վայրենի գազանի կնմանցընեն : Ժամանակն է հիմա որ բոլոր քաշած վճերեդ հանգջիս : Աղովամին սիրոյն համար մտադիւր վայելէ անոր քեզ ընծայած զուարճութիւնները. ուրախացիր, Տէլեմաք, ուրախացիր : Իմաստութիւնը խստութիւն ու բռնագբօսել շունի. ինքն է որ կպարգեւէ նժմարիճ բերկրանքը. ինքը միայն գիտէ քէ ինչ կերպով պէտք է զանոնք համեմել որ մահուր ըլլան եւ երկարատեւ . ինքը գիտէ խաղն ու ծիծաղը ծանր ու լուրջ զբաղմանց հետ խառնել : Ինքը աշխատանքով զուարճութիւն կպատրաստէ, եւ զուարճութեամբ աշխատ-

սանք կսիրուիք. եւ պէտք եղած ժամանակ զուարթ երեւնայր բնաւ ամօք շհամարիք » :

Զայս բսելով քնար առաւ Մէնսոր, եւ այնպիսի նարսարութեամբ կնուագէր, որ Ափսո՛վաս վրան նախանձելով՝ բարկութենէն իւր քնարը ձեռքէն բողուց որ գէտին իյնայ : Առուրները կրակ կսրէցան, սրտին սագնապէն ու ամօքէն երեսին գոյնը փոխուեցաւ, զոր եւ հանդիսականք դիւրաւ կրնային իմանալ քնոր Մէնսոր զանոնք քնարին ձայնովը յափշտակած ջրվար : Հագիւ կհամարձակէին շունջ առնուլ, վախնալով՝ որ ջրվայ քէ լուրքիւնը աւելելով՝ այն աստուածային երգէն բան մը կորսնցրնեն. կվախնային որ ջրվայ քէ շունջով լմրննայ : Մէնսորին ձայնը ամենեւին կանացի մեղկութիւն մը շունքէր. դիւրապարձ եր այլ զօրաւոր, եւ լսողին վրայ մեծ ազդեցութիւն կրնէր :

Նախ վեհին Արամազդայ՝ անմահից ու մահկանացուաց հօրը զովէսներն երգէց, որ մեկ զլուխը շարժելով ճիւղերէ կասասնեցրնէ : Յէտոյ զԱրեւնաս երգէց որ անոր զլիսէն կելլէ, եւ նա ինքն է Բմասուրիւն, որ անոր մտքին մեջ գոյանալով դուրս կելլէ հլու մարդիկը կրթելու : Եւ այս հռմարսութիւններն այնպիսի սրաւարժ ձայնով ու երկիւղածութեամբ մը կերգէր Մէնսոր, որ բոլոր հանդիսականք իրենց գիրէնք Ողիմպոսի բարձունքը՝ Արամազդայ առջեւն ելած կկարծէին, որոյ նայուածքն իւր որոտնդոտ շանքերէն աւելի ազդողագոյն էն : Յէտոյ Նարկիս պասանուոյն բշուառութիւնն երգէց, որ յիմարաբար իւր գեղեցկութեանը զարնուելով՝ աղբեր մը եզերէր կէցած կղիտէր զայն անդապար, եւ ցաւէն հալելով մաշելով՝ իւր անուանակիր ծաղկին փոխուեցաւ : Եւ հուսկ յէտոյ գեղեցիկ Ադոնիսին ալե-



սալի մահը երգեց, զոր կինն մը պատառ պատառ քատ. եւ Աստղիկ որ զնա խանդակաբ կսիրէր, երկինք բրած սրտառու ռոբերովն ալ կարող շեղաւ զնա կենդանացրնել :

Բոլոր հոն Մենսորի ունկնդիրները շիրցան իրենց արտասուք բռնել, եւ լալու ժամանակնին տեսակ մը ախորժ կզգային զոր կարելի չէ բացատրել: Դադարեցաւ Մենսոր երգելէն, եւ փիւնիկեցիք զարմացած իրարու կնայելին: Մեկը կրսէր. « Ուփեռսն է. այսպէս անա իւր քնարաւք վայրենի գագանները կընէլացրներ նա, եւ անտաներն ու ժայռերը կառնոյր կտանէր. այսպէս անա զԿերբերոս կախարդեց, Իֆսիոնի եւ Դանայեանց սանջանները պահ մը դադրեցուց, եւ անողոքելի Պղուտնն իզուր շարժելով՝ շքնադագեղ ներիդիկէն դժոխքէն հանեց » : Ուրիշ մը անդիէն կաղաղակէր . « Ո՞, Լինոս է՝ որդին Ապոլոնի » : Ուրիշ մ'ալ անդիէն . « Կիսաբուրիք, կրսէր, ինքն իսկ Ապոլոնն է սա » : Տելեմախն զարմանքն ալ մեկալներէն վար շէր մնար. վասնզի շէր կարծէր որ Մենսոր այնպիսի նարսարութեամբ կարող ըլլայ երգել ու քնար զարնել :

Ափսովաս որ նախանձը ծածկելու համար ժամանակ գտեր էր, սկսաւ Մենսորին գովեսներ սալ. բայց գովելու ատեն կարմրեցաւ եւ շիրցաւ խօսք լմրնցրնել : Իսկ Մենսոր տեսնելով անոր աղաղութիւնը, խօսք կտրելու պէս ընելով սկսաւ զինքն մխիթարել՝ արժանի եղած գովեսներն իրեն սալով : Բայց Ափսովաս ամենեւին չմխիթարուեցաւ, վասնզի կիսմաւր որ Մենսոր՝ անոյժ ձայնէն անելի իւր պարկետութեամբը զինքն կզերազանցէր :

Իսկ Տելեմախ « Կիտեմ, քսաւ Ադովամին, որ կզրու-

ցեղի քե մեր Եգիպտոսէն մեկնելէն յետոյ Բէտիկէ համբո՛ր-  
դուքիւն ըրեր էս: Բէտիկէ այնպիսի երկիր մըն է, որուն  
վրայի պատմուած զարմանալեաց դժուարաւ կրնայ  
մտող հաւատալ: Շնորհ ըրէ ըսէ ինծի քե արդեօք այն  
պատմուածները նշմարի՞ս են քե ոչ: — Ուրախութեամբ  
կնկարագրեմ, պատասխանեց Ադովամ, այն աշխարհա-  
հարոզ երկիրն՝ որ արժանի է հետաքրքրութեանդ, էւ վրան  
եղած համբաւէն ալ գերազանց »: Եւ մեկէն սկսաւ  
այսպէս պատմել .

« Բէտիս գէտը արգաւանդահող երկրի մը մեջէն կանց-  
նի, որուն երկինքը բարեխառն է եւ՝ միշտ պայծառ: Այս  
երկիրը գետոյն անունն առած է, որ մեծ Ովկիանոսիւն  
մեջ կերբայ կրափի՝ Հերակլեան արձանաց էւ այն տեղ-  
ւոյն մօտ, ուր երբեմն կատաղի ծովը իւր բու՛մբերը փլցը-  
նելով՝ Թարսիբը մեծ Ափրիկէէն զատեց: Կարծես քե  
այս երկիրը ոսկի դարուն ամեն բարութիւնները պա-  
հած է: Չմեռն հոն բարեխառն է, էւ ոչ երբեք սաս-  
կառունջ հիւսիսային հողմեր կփշէն հոն, էւ ամառուան  
սափութիւնը կմեղմեն զովարար գեփիւոք, սր կեսօր-  
ուան ժամանակը փշելով օդը կհաղցրախառնեն: Բոլոր  
սարին հոն ուրիշ բան չէ՝ բայց էրէ զարման ու աւեան  
երջանիկ զուգաւորութիւն մը, որ կարծես քե ձեռք ձեռքի  
կուտան իրարու: Տափարակ հովիտքն էւ դաւեեր սարին  
երկու հունձ կուտան: Ճամբաներն երկու կողմէն կը-  
պատեն սարդենիք, նոնենիք, յասմիկ էւ ուրիշ մտադա-  
լար էւ մտափոփոք ծառեր: Լեռները կծածկէն ոջխարաց  
խումբեր, որոց տուած բարակ բուրդը ամենայն ծանօթ  
ազգաց ալ փափափելի է: Այս գեղազուարն երկրին մեջ  
կան նաեւ ոսկւոյ էւ արծաթի հաններ, բայց պարզամիտ  
բնակիչքը՝ իրենց պարզմտութեամբք երջանիկք, արժանի

շեն համարիւր իրենց հարստութեան կարգը դնել զոսկին եւ զարծար, նշմարիտ մեծութիւն զայն միայն համարելով՝ որ մարդուս կենացն հարկաւոր է :

« Երբոր այս ժողովրդեան հետ սկսանք առուսուր ընել, տեսանք որ ոսկին ու արծարը երկարի տեղ կգործածէին, օրինակի համար՝ արօրոյ խոփ կէիւնէին. եւ որովհետեւ դրսի հետ առուսուր շէին ընէր, ուստի եւ ստակի հարկաւորութիւն շունէին : Գրեթէ ամենքն ալ հովիւ են կամ երկրագործ : Այս երկրիս մեջ արուեստաւոր ճիշ կայ, վասնզի այն արուեստներէն իզատ որ իրօք մարդուս հարկաւոր են, ուրիշի աշխատեան շէն զոցէր. մանաւանդ ալ որ մեջերնին շատեր եւս կան որ երկիր կբանին ու ոջխար կարածեն, միանգամայն եւ իրենց պարզ ու սակաւապէտ կենացը հարկաւոր եղած արուեստներուն ալ ետէտ կըլլան :

« Իրենց կանայքն այն գեղեցիկ բուրդը կմանեն ու բարակ եւ հրաշալի ներմկութեամբ դիպակներ կէիւնեն. իրենք նաեւ հաց կբրեն, կերակուրնին կէիւնեն, եւ ասիկա դիրին գործողութիւն մըն է իրենց համար, որովհետեւ այն երկրին մարդիկը պտղով ու կարով կապրին, եւ հազիւ երբեք միս կուտեն : Ոջխարնուն կաշիէն իրենց արանցն ու որդւոց եւ իրենց համար թէթէ ոտքի աման մը կէիւնեն. իրենք կէիւնեն նաեւ վրանները, ոմանք մոմապատ մորթեւ եւ ոմանք ծառի կեղեւէ. իրենք կկարեն ու կլուան ընտանեաց զգեստդէներ եւ տունը կոկիկ բարեկարգ ու զարմանալի մաքրութեան մեջ կալահեն : Հագուստնին դիւրաւ կէիւնուին. վասնզի այս անոյշ կլիմային մեջ ամեն մարդ երկայն ծալքերով շկտած ու շձեւած բարակ ու թէթէ դիպակի կտոր մը վրան կառնու պարկեճտութեան համար, եւ իւրաքանչիւր ոք ուզած ձեւը կուտայ անոր :

« Երկրագործութենէ ու հովուութենէ զոս երկի մարդոց բանեցուցած արուեստն է հիւսնուրիւն եւ դարբնութիւն. երկարն ալ գրեթէ միայն երկրագործական գործիք շինելու համար է որ կգործածեն : Ճարտարապետութեան վերաբերեալ ամենայն արուեստք անօգուտ են իրենց, որովհետեւ ամենեւին տուն շէն շիներ . վասնզի կրտսն թէ մեզմէ աւելի դիմացող բնակարան շինելը՝ աշխարհիս հետ շատ յարուելէն յառաջ կուգայ . բաւական է մարդ իննգլինը օդոյն վնասակարութենէ միայն պաշտպանէ : Իսկ բոլոր միւս արուեստները զորս Յոյնք, Եգիպտացիք եւ ուրիշ բարգաւանեալ ազիւն կյարգեն, իրենք կատեն իբրեւ գիւտ մանրասիրութեան եւ մեղկութեան :

« Երբոր կլսեն թէ ուրիշ ազգեր փառաւոր շենքեր շինելու, ոսկեղէն ու արծաթեղէն կան խարասիներ, ապուկեգործ ու ականակուռ կերպասներ, ազնիւ անուշահոտութիւններ, քաղցրահամ կերակուրներ, եւ զմայլեցուցիչ նուագարաններ շինելու արուեստը գիտեն, այսպիսի խօսքերով կպատասխանեն . « Մէզք այն ազգերուն որ իրենքգիրենք աւելու համար այնչափ կաշխատին ու հնարք կբանեցրնեն : Այս աւելորդ բաներն իրենց ստացիշք կմեղկեն, կգինովցրնեն, կսանջեն . իսկ շունեցողները կհրապուրեն գիրենք ձեռք բերելու անիրատւութեամբ ու բռնութեամբ : Միքե արժան է ստացուած կոշէլ այս աւելորդ բաներն որ զմարդիկ շարացրնելու միայն կծառայեն : Միքե այն երկիրներուն մարդիկը մեզմէ աւելի առողջ ու կորովի են, մեզմէ աւելի կապրին, իրարու հետ մեզմէ աւելի միաբան են . եւ կամ մեզմէ աւելի ազատ, հանգիստ ու զուարթ կեանք կվարեն : Ընդհակառակն դէտէ որ իրարու վրայ նախանձին, վատ եւ անարգ մախանօք հալին մաշին, միշտ փա-

ուստիւրութեամբ, վախով, ազանութեամբ սագնապին, եւ մահուր ու պարզ բերկրանաց համն առնելու անկարող բլլան, որովհետեւ զերի եղած են այնչափ ընդունայն պիտոյից՝ որոց վրայ դրած են իրենց երջանկութիւնը:

« Այսպէս անա կիսօսին, կրսէր Աղովամ, այս իմաստուն մարդիկը, որ պարզ բնութիւնը դիտելով միայն սովրած են զիմաստութիւն : Մեր քաղաքականութենէն կտոսկան. եւ պէտք է խոստովանիլ որ իրենցը իւր սիրելի պարզութեամբը մերինէն աւելի մեծ է : Ամենքն իմիասին կապրին առանց երկիրը կտոր կտոր բաժնելու. իւրաքանչիւր ընտանիք իւր զլիաւորէն կկառավարուի որ կեանքեալ քաղաւորի մը պէս է : Տանուներն իրատունք ունի յանցաւոր որդիքն ու թոռունքը պատժելու. սակայն պատժելէն յառաջ ընտանեաց կարծիքը կառնու : Բայց այս պատժներն հազիւ երբեք իգործ կդրուին. վասնզի անմեղութիւն բարուց, հաւատարմութիւն, հնազանդութիւն եւ սոսկումն իմուլութենէ՝ այս երջանկաւէտ երկրին մեջ կբնակին : Կարծես թէ Աստեա որուն համար կրսուի թէ երկինք քառուած բլլայ՝ դէռ հոս այս մարդոց մեջ պահուրսած է : Ամենեւին դասաւորի կարօտութիւն շունին, որովհետեւ խղնմտանքնին է որ զիրենք կդատէ : Ամէն բաներնին հասարակաց է, վասնզի ծառոց պտուղը, երկրին արմիքն ու անդեոց կարն այնպիսի առաս հարստութիւններ են, որ ասանկ սակաւապէտ եւ զգաս ժողովուրդը զանոնք բաժնելու պէտք մը շունին : Իւրաքանչիւր ազգասոհմ այս գեղեցիկ երկրին մեջ պտտելով, կեցած տեղւոյն պտուղն ու արօտն որ կհասցրնէ, վրանները կառնու ուրիշ տեղ կփոխադրէ, որով եւ իբարու դէմ պաշտպանելու սեպհական բան մը շունէնալով՝ եղբայրական սիրով կսիրեն մեկզմեկ, եւ բան մը չկայ որ իրենց սէրը խռովէ : Սնոսի նոխարութիւնքն,

մեծութիւնն ու խաբուսիկ զուարնութիւնները իրենց-  
մէ հեռացրնելով՝ իրենց խաղաղութիւնը, միաբանու-  
թիւնն էւ ազատութիւնը կպահեն : Ամենն ալ ազատ  
են էւ հաւասար :

« Մեջերին ամենէին մեծութեան աստիճան ջկայ, բայց  
միայն այն զոր փորձառութիւնը իմաստուն ծերոց կրն-  
ծայէ, կամ երիտասարդաց կարգէ դուրս իմաստութիւնը՝  
որ առափնութեամբ կասարեալ ծերոց կհաւասարին :  
Այս աստուածոց սիրելի երկրին մեջ ոչ նենգութեան, ոչ  
բռնութեան, ոչ սուսերդմունքներու, ոչ դասաստանական  
կռիւներու էւ ոչ պատերազմաց անողորմ ու ժանկ ան-  
ցները կլսուին : Ոչ երբեք այս երկիրը մարդու արեամբն  
է կարմրացած. գառանց իսկ արիւնը՝ հազիւ երբեք հոն  
կբափուի : Երբոր այս ժողովուրդներն ուրիշ ազգաց  
մեջ պատահած արիւնահեղ պատերազմները, երազ երազ  
աշխարհակալութիւններն ու սերութեանց կործանմունք  
կլսեն, կապշին կգարմանան ու կրսեն . Ի՛նչ, միքէ  
մարդիկ արդէն բաւական մահկանացու շէն որ իրարու  
սարածամ մահեր ալ տալու կէլլեն : Կ՛ւրն է կեանքը. էւ  
սակայն երկարատեւ կերեւայ անոնց աշփին : Միքէ մեկ-  
զմեկ պատրուսելու էւ զիրար բռնառացրնելն համար  
աշխարհ եկեր են :

« Բեռնակրի ժողովուրդը ջկրնար իսկ հասկընալ քե՛նց-  
պէս կրնան զարմանալ մարդիկ մեծամեծ ինքնակալու-  
թիւններ նուանող աշխարհակալաց վրայ : Ի՛նչ յիմարու-  
թիւն է, կրսեն, իւր երջանկութիւնը ուրիշ մարդիկը  
կառավարելուն վրայ դնել, զորոնք երբ իրաւամբ էւ  
արդարութեամբ ուզելու ըլլան կառավարել՝ անցնափ  
նեղութիւն կայ որ պիտի փաշեն : Սակայն բռնի ուրի-  
շը կառավարելէն մարդ ինչ ախորժ կրնայ զգալ : Իմաս-  
տուն մարդը հազիւ յանձն կառնու կառավարել հլու

ժողովուրդ մը , զոր դի՛ք իւր խնամոցը յանձնեն , եւ կամ ժողովուրդ մը որ կաղաշէ իրեն հայրն ու հովիւն ըլլայ : Իսկ ժողովրդոց բռնի կառավարել ուզենալը , ինքզինք վերջի աստիճանի բռնաւ ընել բսել է , զանոնք գերութեան մէջ պահելու սուս պատիւն ունենալու համար : Աշխարհակալը՝ մարդ մըն է , զոր աստուածներն երբոր մահկանացուաց դէմ կբարկանան՝ կըրկեն որ երբայ բազաւորութիւններ աւարէ աւրէ , ամեն տեղ սարսափ , բրտաւորութիւն եւ յուսահասութիւն տարածէ , եւ ազատ մարդիկը գերի ընէ : Փառք փնտռող մարդը մի՛րք բաւակա՛ն շոյներ երբ աստուածոց իրեն ձեռքը աւանդածին իմաստութեամբ առաջնորդէ : Մի՛րք կկարծէ որ այն ժամանակ միայն գովութեանց արժանի կըլլայ՝ երբոր իւր սահմանակցացը հետ բռնութեամբ , անիրաւութեամբ , գողութեամբ , յափշտակութեամբ եւ հարստահարութեամբ վարուի : Ո՞չ երբեք պէտք է պատերազմ ընելու մտածել՝ բայց երբ ազատութիւնը պաշտպանելու համար : Նրանք անոր որ ո՞չ ուրիշի գերի է , եւ ո՞չ գուրիշն իրեն գերի ընելու անմիտ փառասիրութիւնն ունի : Այն մեծամեծ աշխարհակալներն զորս այնչափ փառօք կնկարագրեն մեզ , իրենց ակումբէն դուրս վազած այն գետերուն կնմանին որ իրաւ փառաւոր կերելին , բայց կգերեն կապականէն բոլոր այն պտղաբեր անդամասաններն՝ զորս պիտի ոռոգանէին միայն » :

Տելեմաք , Ադովամին Բէտիկէի նկարագրին վրայ սխալմաշտացած՝ անոր այլեւայլ հետաքրքրական հարցմունքներ քրաւ . « Բէտիկէցիք գինի կխմէն » քսաւ :

« Չեն խմեր , կրկնեց Ադովամ , վասնզի ո՞չ երբեք ալ գինի շինած ունին . եւ այս շէ բէանոր համար որ խաղող շունին , վասնզի շկայ երկիր մը որ իրենց երկրէն ազնիւ խաղող բերէ , այլ ուրիշ պտղոց պէս խաղողն ալ

ուսելով զոն կրկան , եւ գինին մաղկանց ապականիշն համարելով իրմ կվախնան : Տեսակ մը բոյն է այն , կրտեն , որ կասաղուրիւն կբերէ . եւ քեպտ զմարդ շմեոցրներ , սակայն անբան անասուն կրնէ : Կարող են մարդիկ առանց իսկ գինւոյ իրենց առողջութիւնն եւ ոյժը պահել , իսկ գինւով՝ առողջութիւննին արելու եւ անոյժ բնաւորութիւննին կորսնցընելու վսանգի մեջ կիյնան :

Վրայ բերաւ Տելեմաք . « Կուգէի գիտնալ քեայս ազգին ամուսնութեան կանոններն ինչ էն : — Այր իւրաքանչիւր պատասխանեց Աղովամ , մեկ կին միայն կրնայ առնուլ . եւ մինչեւ ցման պարսական է զայն պանել : Այս երկրին մեջ երիկ մարդոց պատիւը իրենց կանանց հաւատարիմ մընալոյն վրայ է կախուած , ինչպէս որ ուրիշ ժողովրդոց մեջ կանանց պատիւն ալ իրենց երկանցը հաւատարիմ մնալէն կկախուի : Չկայ ժողովուրդ մը իրենց շափ առաքիւնի եւ անարատ վարուց նախանձաւոր : Կանայք գեղեցիկք են եւ հանոյականք , բայց եւ անպանոյն , պարկետ եւ աւխասատր : Ամուսնութիւնք հոն խաղաղ են , բազմածնունդ եւ անարատ : Այր եւ կին ուրիշ բան չեն երեւար , բայց երէ երկու տարբեր մարմնոց մեջ մեկ անձ մը : Բոլոր բնականաց հոգը այր եւ կին մեջերնին կբաժնեն . արտաքին գործերը երկը կսեսնէ . կինն ալ տանք բաները կհոգայ , երկը կսփոփէ , եւ անոր հանոյ ըլլալու համար ամեն փոյր կրնէ , անոր վստահութեանը ինքզինն արժանի կրնէ . եւ աւելի իւր առաքիւնութեամբք անոր սիրելի կրկայ քան քե գեղեցկութեամբք : Իրենց ընկերակցութեան այս նշմարիտ բերկութիւնը բոլոր կեանքերնին կսեսէ : Այս ժողովրդեան զգաստութիւնը , ժուժկալութիւնն ու անարատ կեանքը զինքը երկայնակեաց կրնեն եւ ազատ ինիւանդութեանց : Ծերեր կան



հոն որ հարիւր, հարիւր քան սարեկան են եւ, նայիս դեռ կայտառ են եւ ոյժերնին տեղը » :

« Հիմա կմնայ ինձ գիտնալու, կրկնեց Տելեմաք, քե ինչպէս կրնեն որ դրացի ազգաց հետ պատերազմ շեն ունենար » :

« Բնութիւնը, բաւ Ադովամ, զիրենք ուրիշ ազգերէն կպասսպարե՛ մեկ կողմէն ծովով, եւ միւս կողմէն հիւսիսային բարձր լեռներով : Թող որ՝ սահմանակից ազգեր անոնց առափնութեան ալ կակնածեն : Շատ անգամ նաեւ ուրիշ ազգեր մեջերնին շկարենալով միաբանիլ՝ զանոնք իրենց իրաւաբար կրնտեսն եւ անոնց կյանձնէն այն երկիրներն ու քաղաքները՝ որոց վրայ է վիճերնին : Եւ որովհետեւ այս իմաստուն ազգը ոչ երբեք մեկուն անիրաւութիւն ըրեր է, ոչ ոք վրան կասկածի մը կրնայ երթալ : Կծիծաղին երբոր կլսեն որ քաղաւորներ շեն կրնար մեջերնին որոշել իրենց տերութեանց սահմանները : Ի՞նչպէս կրնայ մարդ վախնալ, կրտեն, որ երկիրս իրեն համար պակասի. մարդկան մեակել կրցածէն աւելին միշտ դեռ իրենց առջեւը պիտի մնայ : Քանի որ ազատ են անմեակ երկիրներ ըլլան, պիտի շուզենամք եւ ոչ մերիկները պաշտպանել ընդդէմ այն սահմանակցաց որ անոնց տիրել ուզեն : Բէտիկէի բնակիչներն ոչ գոռոզութիւն ունին, ոչ ամբարտաւանութիւն, ոչ նենգութիւն եւ ոչ իրենց իշխանութիւնը սարածելու փափաք : Ուստի իրենց դրացի ազգերն այսպիսի ժողովրդէնէ մը ոչ վախնալու բան ունին, եւ ոչ զիրենք վախճընելու յոյս, որով եւ զանոնք հանգիստ կրողուն : Այս ազգը աւելի կուզէ իւր երկիրը բողոլ երթալ եւ կամ մեռնիլ իսկ՝ քան քե ծառայութիւն յանձն առնուլ. ուստի եւ այնչափ դժուարին է զիրենք նուանել՝ որչափ որ զուրիշները նրանքելու փափաքն հեռու է իրենցմէ : Ասով է որ իրենց ու

ասմանակցաց մեջ անճարժ խաղաղութիւն մը կտրէ :

Աղովամ խօսակցութիւնը լմբնուց պատմելով թէ ինչ կերպով փիւնիկեցիք Բէսիկէի հետ առուստը կրնէին : « Զարմացան, կրսէր, բէսիկեցիք՝ երբոր տեսան որ այնչափ հեռուներէն օտար մարդիկ ծովուն ալեացը վրայէն կուգային, եւ բողուցին մեզ որ Գաղես կղզւոյն մեջ հաղաք մը շինեմք . մարդասիրութեամբ հիւրընկալեցին եւ իրենց բոլոր ունեցածին ձեռնապէս գմեզ մասնակից ըրին : Անկէ զաս՝ խոսացան նաեւ որ իրենց պիտոյիցը համար հարկաւոր եղած բուրդն առնելէն յետոյ, մնացածը մեզ տան . եւ իրաւցրնէ ալ բուրդի մեծամեծ բեռներ ընծայ զրկեցին մեզ . որովհետեւ իրենց աւելորդն օտարաց տալով մեծ ախորժ մը կգգան :

« Իսկ հանրէն իրենց համար օգուտ մը շունենալուն առանց դժուարութեան մեր ձեռքը բողուցին : Վասնզի իրենց խելք շերտեւարորմարդիկերբան այնչափ աշխատաստիօք երկրիս ընդերացը մեջէն փնտնէն հանեն այն բանն որ ո՛չ զիրենք կրնայ եղջանիկ ընել, եւ ոչ իրենց կարէնոր պիտոյից մէկը լեցրնել : Նաեւ այս ալ կրսէին մեզ . երկիրս այնչափ խորը մի փորէք, այլ գոհ եղէք հերկել միայն զայն . նժմարիտ հարսութիւններ կուտայ նա ձեզ, որով կկերակրուիք . պտուղներ կընդունիք իրմէ, որ ոսկիէն ու արծաթէն շատ աւելի կարժէն, որովհետեւ մարդիկ ալ ոսկի ու արծաթ անո՛ր համար կուզեն որ անոնցմով իրենց ապրուստը հարեն :

« Շատանգամ ուզեցինք իրենց նաւարկութիւն սովեցրնել եւ երկրին երիտասարդներն առնուլ Փիւնիկէտանիլ . բայց ոչ երբէք յանձն առին բողուլ որ իրենց որդիք մեր կենացը վարժին : Վասնզի, կրսէին, թէոր ձեր ամեն հարկաւոր եղածին իրենք ալ վարժելով սկսին անոնց կարօտիլ, իրենց ալ փափաք մը կուգայ զանոնք ունենալու ,

Եւ ձեռք բերելու համար առաքինութիւնը կրողուն՝ որպէսզի շարահմար նաւարութեամբ զանոնք ստանան . այն քաջալիազ մարդուն նմանելով որ քալելունու նակութիւնը կամաց կամաց բողու կորսնցընէ ու վերջապէս հիւսանդի մը պէս միշտ պատգարակով պարտէլու վարժի : Իսկ նաւարկութեան վրայ իբրէն նաւարարութեան մը կզարմանան , բայց եւ վնասակար կհամարին զարուեսդ : Թե՛որ այս մարդիկ , կրսէն , իրենց երկրին մէջ իրենց կենաց հարկաւորն ունին , ուրիշ երկիր ինչ փնտնելու կերբան . բնութեան պիտոյիցը բաւական եղողն իրենց ինչո՞ւ ջքաւեր : Արժանի են նաւարկութեան , որովհետեւ վանառականաց ազահութիւնը յագեցընելու եւ մարդկանց ախտերը սնուցանելու միայն վախճանաւ մըրբկաց մէջ կերբան մահ կփնտնեն » :

Տելեմաք զարմացմամբ մտիկ կընէր Ադովամին խօսակցութիւնը , եւ կուրախանայր որ դեռ աշխարհիս վրայ ժողովուրդ մը կայ որ բնութեան օրինացն հետեւելով այնչափ իմաստուն ու միանգամայն այնչափ երջանիկ է եղեր : « Ո՛հ , ճրջափ հեռու է , կրսէր , ասոնց բարբը այն իմաստնագոյն կարծուած նանրասէր ու փառամոլ ժողովրդոց բարբէն : Ա՛յնպէս ապականած եմք՝ որ հագլիւ կընամք հաւասալ թէ այս բնական պարզմտութիւնը նմարիտ ըլլայ : Այս ժողովրդեան բարբը գեղեցկահիւս առասպել մը կհամարիմք . անուշտ անոնք ալ զմերը աննոռնի երազ մը պէտք է համարին » :



Գ Ի Ր Ք Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ .

Աստիկ՝ միտ Տելեմախ դեմ կասողած, կիսնորէ յԱրամազդայ որ զինք մեռցուն : Բայց նակասագիրք շեն քներե որ Տելեմախ կորսուի . ուսի եւ Աստիկ կվազէ Պոսիդոնին կոյիմէ՝ որ զՏելեմախ կարենայ Իրակէն նեռացրնել, ուր Ադովամ կսանէր զնա : Խաբերայ դից նմանութեամբ մը կմտորցունեն նաւուն Աքամաս դեկավարք, որ կարծելով թէ Իրակէ կմնայ՝ լեցուն առազասներով Սաղենեայ, նաւահանգիստը կմնէ : Իդոմենէս քազաւորք իւր նորաւէն հաղին մէջ կրնդունի զՏելեմախ, ուր Մանտրեանց դեմ քրամ յաղբութեանը համար Արամազդայ զոն բնելու կպատաստուէր : Հոն բուժք զոնին փորոսիքը դիտելով՝ Իդոմենէայ ամեն բան յուսայ կուսայ, եւ կհասկըցրնէ իրեն՝ թէ իւր բախտին յաջողութիւնը այն երկու նոր հիւրերուն է պարսական :

Մինչդեռ Տելեմախ եւ Ադովամ այլապէս իրարու հետ կխօսակցէին՝ բուներնին մոռնալով եւ շիմանալով իսկ թէ կես զիշեր ելեր է, քեանմի ու մոլորեցուցիչ սասլած մը զիրենք Իրակէն կհեռացրնէր՝ ուր անօգուտ տեղ հասնելու կաշխատէր Աքամաս՝ նաւուն դեկավարք . վասնզի Պոսիդոն թեպէտէ փիւնիկեցոց հետ աղէկ էր, սակայն շեր կրնար համբերել զՏելեմախ ազասած տեսնելու այն մրրկէն որ զինքը Կալիպսոսայ կղզւոյն ժայռերուն վրայ էր նետէր : Իրմէ ալ աւելի բարկացած էր Աստիկ պատանւոյն յաղբանակին վրայ, որ Նոսի եւ իւր ամենայն հրապուրանքը նուանեց : Մտին սաստիկ

ցաւեն բողոց կրբեաւն , Պաբոսն ու Իդայիան եւ բոլոր կիսարոս կղզւոյն մեջ իրեն ընծայուած պատիւներ , վասնզի ալ շեր կրնար բնակիլ այն տեղերն ուր Տելեմախիւր իշխանութիւնը արհամարհէր : Ելալզնացդէպ իլուսաստայծառն Ռդիմպոս , ուր դիմ Արամազդայ արոնին իմն էին ժողոված : Այն բարձրութենէն կտեսնեն նոքա զաստէղս որ իրենց ոտին սակ կրաւալին , երկրիս զունք ' հողի կոտի մը պէս , եւ մեր աննուն ծովերն իրենց քանի մը կարիլ ջրի կնմանին , յորոց այս հողակոտք էիք մը քրջած է : Մեծամեծ բազաւորներ իրենց աշխն ' այս հողակոտքին երեսը ծածկող աւազի հասեր կերելին , եւ անհամար ժողովուրդներ ու մեծագոր բանակներ մրջիւններու պէս են որ այս հողակոտքին վրայ իբարմէ խոտի կտոր մը կյափոտակեն : Տկար մանկանացուաց ամենէն կարելոր զորոցը վրայ կծիծաղին անմահ , եւ իրենց տղու խալեր կերելին : Եւ զոր մարդիկ ' զօրութիւն , փառք , մեծութիւն եւ խորին քաղաքականութիւն կանուանեն , այս գերաբուն էից առջեւն ուրիշ բան չեն բայց երբ բռնառութիւն եւ տկարութիւն :

Այն տեղն անա , որ երկրիս երեսէն այնչափ բարձր է , Արամազդ իւր արոտը դրաւ անշարժելի . աշուրները մինչեւ խոր անդունդը կրտփանցեն եւ արտի ամենէն աւելի ծածուկ ծալերը կտեսնեն . անոյշ զուարթ նայուածքը խաղաղութիւն եւ խնդութիւն կծաւալէ ընդ ամենայն տիգերս : Իսկ երբոր մազերը կքօրափէ ' երկինք ու երկիր կասասնին . եւ փայլակնացայտ փառացը լուսէն դիմ անգամ շլացեալ ' անիւ եւ դողութեամբ իրեն կրկնօտենան :

Բոլոր երկնային աստուածութիւնք իւր զահոյից իմն էին ժողովեալ , եւ անա Աստղիկ ամենայն գեղեցկութեամբ եւ ամենայն հրապուրանօք պայծառացած որոց

ինն էր ալբիւր, Արամազդայ առջեւն էլաւ . վրան ձր-  
 զած գեղածուփ պատմունանը շատ աւելի պայծառ կը-  
 փայլէր՝ քան զամենայն երփն երփն երանգոց որով Հի-  
 բիկ զարդարուած՝ մքին ամպոց մեջ կեռոլեղայ, երբոր  
 անաբէկ մահկանացուաց կուգայ մրկաց դադարումն  
 ու գեղեցիկ օդոց դարձը կտեսէ : Պատմունանը զքս-  
 պուած էր այն կամարովն որուն վրայ քանդակուած էն  
 Շնորհիք, եւ դիցունուոյն մագերն անհոգ կերպով մը էտե-  
 ւէն ոսկի հիւսակաւ կապուած էին : Հիացան դիք հա-  
 մօրէն անոր գեղեցկութեանը վրայ, իբրեւ քէ այս առա-  
 ջին անգամն ըլլար ոք տեսնէին զայն . աշերենին շրա-  
 ցան մահկանացուաց աշին պէս՝ երբոր Արեւ երկայն  
 գիշերէն յետոյ կուգայ զանոնք իւր նառագայքներովը  
 կլուսաւորէ : Զարմացմամբ իրարու երես կնայէին եւ  
 աշերենին անդադար Աստղկան վրայ կդառնայր : Բայց  
 տեսան որ դիցունուոյն աշկունքը արցունքով կփայլէին,  
 եւ դառն վիճօ մը երեսին վրայ նկարուած կերեւէր :

Սակայն նա կուգար Արամազդայ արձողն կփօտե-  
 նար հանդարտիկ եւ քէքէւանեմ հայլերով, ինչպէս լայ-  
 նածաւալ օդոց ընդարձակութիւնը կտրուլ անցնող քրո-  
 շուն մը : Հայրն անմահից սիրալիր աշօք նայեցաւ անոր,  
 էլաւ հաղցր ծպիտով մը ջրկէց զնա, եւ « Ի՞նչ է վիճօդ,  
 սիրելի աղջիկս, ըսաւ : Զեմ կրնար քու արցունքներդ  
 տեսնել եւ շօքովիլ . մի վախնար, բնց ինձ քու սիրտ-  
 զիտես որ ինչպէս գուր եւ սեր ունիմ քու վրադ » :

Խոր հառաջանքներով իւր հաղցրիկ ձայնը կտրտելով  
 պատասխան տուաւ դիցունին . « Ո՛վ հայրդ անմահից եւ  
 մահկանացուաց, դուն որ ամեն բան կտեսնես՝ կարելի  
 է որ վճարցս պատճառը շօքնաս : Արեւնաս իմ պատե-  
 սանած հոյակապ Տրոյա հաղաքս հիմնադրուած կոր-  
 ծանելովն ու Պարիսէն վրեժն առնելովն ալ զոն շեղած՝

որ իմ գեղեցկուքիւնս իրենէն վեր կդնէր, նաեւ Տրոյոյ անգուք կործանիչը Ողիսեւսին որդին ընդ ծով եւ ընդ ցամաք յաղթական կպսսցընէ: Ինքն իսկ անձամբ կառաջնորդէ Տէլեմաֆայ, անոր համար եւ ակմբիս մէջ ուրիշ աստուածոց պէս իւր կարգին մէջ շէտնուիր: Ջիս նախասէլու համար առաւ այս յանդուզն պասանին Կիպրոս կղզին տարաւ. եւ նա արհաամարհեց իմ զօրութիւնս, եւ սեղաններուս վրայ խունկ անգամ ծխել արժանի շհամարեցաւ. իպատիւ իմ կասարուած տօներուն զգուանք ցուցուց, եւ իմ ամեն հեճուքեանց սիրքս փակեց: Իզուր Պոսիդոն իմ աղանջանէս շարժած զինքն պատժելու համար իրեն դեմ գրգռեց հողմերն ու ալիքը, եւ Տէլեմաֆ սոսկալի նաւակոծութեամբ մը Կալիպսոյին կղզին նետուելով՝ հոն ալ Նրոսի յաղքեց, զոր ես յուզարկէր էի՝ որպէսզի այս դեռահասակ հելլենացոյն սիրք շարժէ: Ո՛չ իւր մանկութիւնը եւ ոչ Կալիպսեայ եւ կամ յաւերժահարսանցը գեղեցկութեան հրապոյրքը, եւ ոչ Նրոսի հրամուխ նետերը կարող եղէն Արեւնասայ հնարիցը յաղքել: Քառեց հանեց զինքն կրղզիէն, եւ ես ամօքով մնացի. զնայ մը ինձ կ'յաղքէ »:

Արամազդ զինքն մխիթարելու համար ըսաւ. « Ի՞նչ է, աղջիկս, որ Արեւնաս այս հելլէն պասանոյն սիրք որդւոյդ նետերուն դեմ կ'պաճսպանէ եւ կ'պատաստէ այնպիսի փառք մը՝ որում ոչ ոք իմանկանացուաց արժանի եղած է: Կցաւ իմ որ քու բազիններդ արհամարհէր է, բայց շեմ ալ կրնար զինքն քու իշխանութեանդ տակը ձգել: Քու սիրոյդ համար կհաւանիմ, որ դեռ ընդ ծով եւ ընդ ցամաք բափառի նա, հայրենեացմէ հեռու ապրի, եւ ամեն տեսակ աղէտ եւ վտանգ զլուխը զան. բայց նակասագիրք շէն բողոք որ կորսուի, եւ ոչ կուզէն որ առաքինութիւնը ընկնուի իհեճուքեանց՝ յոր

դու կհրապուրես զմարդիկ : Մխիթարուէ ուրեմն, աղ-  
ջիկս, զոն եղիր որ իշխանութեանդ տակը նուաճած  
ես ուրիշ այնչափ դիւցազուններ ու ասուածներ » :

Այս բախում վեհ եւ շնորհալի ժպիտ մը արձակեց  
առ Սասդիկ : Աշուրներէն լուսոյ նշոյլ մը ցատեց շող-  
շողուն փայլական մը նման, եւ դիցունին համբու-  
րած ժախնական ամբոսական անուշահոտ բուրում մը  
բոլոր Ողիմպոս ծառայեցաւ : Վեհագունին դից այս  
զգուանացը վրայ խայտաց դիցունւոյն սիրք, եւ քե-  
պէտ տեսնում էր եւ արտասուագին, սակայն եւ այնպէս  
ուրախութիւնը դեմքին վրայ փայլեցաւ, ու ֆօղն երեսին  
վրայ իջեցուց, որպէսզի այտերուն կարմրութիւնն ու  
արտին տաքնապր ծածկէ : Բովանդակ դիցախումբ ժո-  
ղովը ծափ զարկաւ Արամազդայ պատգամին վրայ,  
եւ Սասդիկ առանց վայրկեան մը կորսնցրնելու ելաւ  
Պոսիդոնին ֆով զնաց, որպէսզի Տելեմաքէն վրէժն առ-  
նելու հետք հնարք մը մտածէ :

Պատմեց անոր ինչ որ Արամազդ բտր էր իրեն. « Ար-  
դէն գիտէի, պատասխան տուա Պոսիդոն, հակասագրին  
անդարձ հրամանը . բայց քեզ շեմ կրնար զՏելեմաք  
ծովուն ալեացը մէջ խորասոյգ կորսնցրնել, զէր զինքը  
բեռառացրնելու եւ Իրակէ դառնալն ուշացրնելու  
համար բան շտուգամբ : Չեմ ուզէր փիւնիկեցի նաւուն  
կորսուելուն հաւանիլ յորում է նա . վասնզի փիւնիկե-  
ցիքը կսիրեմ, իմ ժողովուրդս են անոնք, եւ իրենց պէս  
ազգ մը շկայ որ իմ պէտքիւնս մտակէ : Իրենցմով է  
որ ծովը ամենայն ազգաց միաբանութեան կապն եղաւ :  
Բագիններուս վրայ հանապազօրեայ զոներ մասուցա-  
նելով զիս կպատուեն . արդար են, իմասուն եւ ժիր  
իվանառաշահութեան . ամէն դիւրութիւն եւ առատու-  
թիւն կափուեն : Ո՛հ . շեմ կրնար անոնց նաւերէն եւ ոչ



մէկը բոլոր ' որ այլեաց մեջ նաւակնո՞ծի բայց զայն միայն կարող եմ բնել որ նաւապէտը նախնայն կորսնցրնելով ' հեռանայ Իրակէէն ուր կուզէ երթալ » :

Այս խոստմանս վրայ զոն եղաւ Աստղիկ, եւ շարասիրութեամբ մը ծիծաղելով մտաւ իւր կառնն ու Իգայիոյ ծաղկաւեռ մարգագէտիններուն վրայ սլացաւ, ուր Շրնորնի, Խաղի եւ Խնձիղի գիւնը նորէն տեսնելուն վրայ ուրախացան եւ շորս կողմն առած պարեցին ծաղկանց վրայ ' որ այն գեղազուարն բնակարանը իրենց անոյշ հոտերովը կլէցընեն :

Մէկէն Պոսիդոն Նրազոց նման խաբէբայ աստուած մը դրկեց, այն տարբերութեամբ միայն որ Նրազները բունի մեջ կխաբեն, իսկ այս աստուածը արքուն մարդոց զգայարանը կմոզէ : Այս շարագործ աստուածը ' բոլորսիքն առած անբիւ անհամար քեւաւոր Ստուրիւններ ' որ շորս դին կրօշտէին, եկաւ Արամասս դէկավարին աշուրներուն վրայ բովազան բարակ հեղուկ մը սրսկեց, մինչդէռ նա ուժի ուժով լուսնի պայծառութեամբն աստղաց բնբացն ու Իրակէի ծովափը կդիտէր, եւ անոր սեպացեալ ժայռերը բաւական մօտեցած կը տեսնէր :

Ալ այնուհետեւ նաւուղիին աշուրները բոլորովին տարբեր բաներ կցուցընէին . շինծու երկինք եւ կեղծ ծով մը իրեն կերէտէին . աստղի բնբացնին փոխած ու ետ դարձած մը կտեսնուէին : Կարծես քէ բոլոր Ռիլիպոս նոր օրէնքով կղաւնայր . երկիրս ալ փոխուած այլակերպած էր : Չինքը խաբէլու համար սուտ Իրակէ մը միտք նաւուղիին առջեւը կեղեք, որ իրական բուն Իրակէէն կհեռանայր . եւ որշափ դէպի կղզւոյն ծովափանցը պատիր պատկերին կդիտէր, նոյնշափ պատիր պատկերն էտէ էտէ կերթար եւ միտք առջեւէն կփախ-

շեր. իսկ Աքամաս շեր կրնար անոր փախստեանը պատնառն հասկընալ: Երբեմն իրենայնպէս մը կուգար քէ նաւահանգստի խառնածայն աղաղակն էր որ կլսէր. Էւ առած հրամանին համեմատ՝ ծածուկ մեծ կղզւոյն բովը եղած կղզեակը Էլլելու կպատրասուէր, որպէսզի Տէլեմաֆին դեմ դաւակցած Պէնէլոպէին տարփաւորներն անոր դարձը շիմանան: Երբեմն այս ծովեզերքին բոլորսիքն էղած ժայռերէն կվախէր, Էւ կարծէր քէ այն ժայռերուն զարնուելով փերած ալիքներուն անեղագոռ մոնշիւնը կլսէ. մէյմըն ալ յանկարծ կսեսնէր որ ցամաքը դեռ շատ հեռու կերէւայ. Էւ այս հեռաւորութեան մեջ լեռներն երբեմն արեւուն մտած ժամանակ հորիզոնը մընցընող փոքրիկ ամպերու պէս աշփին կերէւէին: Այսպէս կցնորէր Աքամաս, Էւ աշքը դիւրող խաբէքայ սասուածն այնպիսի սոսկում մը վրան կբերէր, որուն նմանը միւնջէւ այն ասէն ոռ երբէք ունեցած էր: Իրէն ալ այնպէս մը կուգար քէ արքուն շէ Էւ երազ կսեսնէ:

Բայց Պոսիդոն արեւելեան հողմոյն հրամայեց որ շնջէ ու նաւը նսպերիոյ ծովեզերքը նէտէ. Էւ հողմը այնպիսի սասկուութեամբ հրամանը կատարեց, որ շուտ մը նաւը Պոսիդոնին պատուիրած ծովափունքն հասաւ:

Այն ինչ Արեալոյս առաւօտը կաւէտէր, Էւ Արեւուն հառազայքիցը նախանձաւոր Աստեղ՝ անոնց ձեռքէն փախսելով կերբային Ովկիանու մեջ իրենց աղօտ լոյսը ծածկելու, նաւուղիդը՝ « Ալ շեմ տարակուսիր, գոռեց. վերջապէս Իրակէ կղզւոյն մտեցանք: Ուրախացիր, Տէլեմաֆ, մէկ ժամէն կրնաս զՊէնէլոպէ տեսնել, Էւ զուցէ զՈդիսէս նորէն իւր արոար նստած:

Այս աղաղակին ձայնէն արքնցաւ Տէլեմաֆ, որ անշարժ կհնանար. ոտք էլաւ, դէկին կողմը վազեց, գրկեց համբուրեց նաւուղիդը, Էւ ծանրաբուն դեռարաց աշօքը

մերձակայ ծովեզերքին վրայ նայելով հառառեց, վասն-  
զի հայրենեացը ծովեզերք շեր տեսածը . « Աււող, կան-  
շեց. ուր եմք. սիրելի Իրակէս շե ասիկա : Կխաբուխ  
Աքամաս . այս ծովեզերքը բու երկրեղ շաս հեռու բլլա-  
լուն համար զայն լաւ շես նանշնար » : « Ո՛շ այդպէս,  
պասասխանեց Աքամաս. կղզւոյն եզերքը տեսնելէս յե-  
տոյ շեմ կրնար խաբուիլ . վասնզի շաս անգամ անոր  
նաւահանգիսը մտեր էլեր եմ, եւ Տիրուսի ծովեզերքին  
պէս միտս է այն : Չէս նանշնար սա յառաջ երկնցած  
հրուանդանը. տես սա աշտարակաձեւ սեպացած փարա-  
ժալոք. շէս լսեր այն ժայռերուն զարնուող պէտց ձայնը,  
որ կարծես քե ծովուն մէջ իյնալ կործանիլ կսպառնան :  
Միքե Աքեմասայ մեհեանն ալ շէս տեսներ որ մինջեւ  
ամպերը կքարձանայ : Ահա հօրդ Ողիսեայ բերդն ու  
արբունիքը » :

« Կխաբուխ, Աքամաս, պասասխանեց Տելեմաք .  
այն կտեսնեմ ծովափունքը բարձրկէկ, այլ սափարակ .  
եւ հոն փաղաք մը կնշմարեմ, բայց ոչ զԻրակէ : Ո՛վ  
դիմ, այդպէս ուրեմն մարդկանց հետ դուք կխաղայք » :  
Եւ այսպէս խօսած ժամանակը մէյմըն ալ յանկարծ  
Աքամասին աշուրները բացուեցան, հմայքը փակուե-  
ցան, տեսաւ ծովեզրն ինշպէս որ եր, սխալմունքը հաս-  
կըցաւ, եւ « Կխոստովանիմ, կանշեց, ո՛ն Տելեմաք, որ  
քեմամի աւտուած մը աշփս կախարդեր եր. կկարծէի քե  
Իրակէն կտեսնեմ, եւ անոր պատկերն ամբողջ առ ջեւս կե-  
րեւար. բայց հիմա երազի պէս աներեւոյթ էլաւ : Ուրիշ  
փաղաք կտեսնեմ. անտուտ Սաղէնն է ասիկա զոր Եղոմե-  
նէս Կրետէն փախած ժամանակը Նսպերիոյ մէջ հիմնեց.  
կնշմարեմ անոր բերակասար պարիսպները, եւ նաւա-  
հանգիսն որ դեռ բոլորովին ամրացած շե » :

Եւ մինջդեռ Աքամաս այս նորակերտ փաղաքին ալ եւ

այլ նոր շէնքեր կղիսէր, և Տելեմաք իւր քուտառու-  
քիւնը կողքայր, Պոսիդոնին փռել տուած հողմը սուա-  
զասնին լեցուց ու զիւրեմ ծոցի մը մէջ մտուց՝ ուր նաւա-  
հանգստի մօտ պասսապարեցան :

Բայց Մենսոր որ քէ Պոսիդոնին վրէժխնդրութիւնն էր  
քէ Աստղիկան անողորմ նենգութիւնը զիսէր, Արամասին  
սխալմանը վրայ ժպտէր եր միայն. և երբոր ծովուն այն  
ծոցին մէջ մտան, ըսաւ Տելեմաքին. « Արամազդ զքեզ  
կփորձէ, բայց ոչ երէ քու կորուստդ կուզէ. ընդ հակա-  
ռակն, զքեզ անոր համար կփորձէ որպէսզի փառաց  
ասպարեզն առջեւդ բանայ : Յիշէ Հերակլէայ նահա-  
սակութիւնները, և հօրդ քաւածները միշտ աշխիւ առ-  
ջեւն ըլլան : Ով որ համբերել չգիտէ՝ մեծասիրտ չէ :  
Պէտք է որ համբերութեամբդ ու արիւթեամբ անգութ  
Բաղդը յոգնեցընես՝ որ զքեզ հալածելով կըլարնանայ :  
Ոչ այնչափ Պոսիդոնի անագին սպառնալիքներէն քու  
վրայ կվախնամ՝ որչափ կվախնայի իզգուանաց դիցու-  
հւոյն, որ զքեզ իւր կողմայն մէջ կըռնէր : Ինչո՞ւ կու-  
շանամք. մտնենք այս նաւահանգիստն. անա ժողովուրդ  
բարեկամ. Յունաց մէջ կհասնիմք. Իդոմենէս որ բախ-  
տին խաղալիքն էզաւ՝ անշուտ մեզի պէս քուտառաց  
վրայ կգրայ » : Շուտ մը Սաղէնէայ նաւահանգիստը  
մտան, և նաւը փիւնիկեցի ըլլալովը՝ ամենեւին ներս  
մտնելու դժուարութիւն մը շքաւեցին, որովհետեւ փիւ-  
նիկեցիք աշխարհիս ամենայն ազգաց հետ հաւտ են և  
առուտուր կընեն :

Զարմացմամբ կնայէր Տելեմաք այս նորաշէն քաղաքին  
վրայ, որ դեռափրփր տունկի մը կնմանէր որ զիւրեւան  
քաղցրածաւալ ցօղովը պարարտացած՝ մէկէն առտուրնէ  
կզգայ արեւուն նաւագայքներն որ զինքը գեղեցկացընե-  
լու կուզան. կանխ կուռնանայ, փափուկ պսկունքը կար-

ձակէ, կանաջագեղ սերէւները կտարածէ, անուշահոտ ծաղկերները գոյնզգոյն կբանայ, եւ ամէն անգամ որ մէկը վրան նայի՝ նոր գեղեցկութիւն մը կտեսնէ : Այսպէս ծովեզերքին վրայ կծաղկէր նաեւ Բդումենեսի նորաշէն քաղաքը . օրէ օր, ժամէ ժամ հոյակապ շէնքերով կաներ կմեծնար, եւ ծովուն վրայ նաւարկող օտարականաց հեռուէն կցուցրներ նաւարապետութեան նորանոր զարդեր՝ որ մինչեւ յերկինս կբարձրանային : Գործաւորաց ձայնէն եւ ուռնաղղորդ հարուածներէն բոլոր ծովեզերքը կհնչէր . նախարակաձիգ շուաններով օդուն մեջ քարէր կկախուէին . արեալոյսը ծագելուն պէս գործավարք ժողովուրդը աշխատելու սիրով վառէին, եւ Բդումենես քաղաւորն անձամբ ամէն շեղ հրամաններ տալով անկարծելի արագութեամբ շէնքն յառաջ կտանէր :

Փիւնիկեցի նաւը հասնելուն պէս կրէտացիք Տելեմաքն ու Մենսորը ամենայն մարդասիրութեամբ հիւրընկալեցին, եւ շուտով վագեցին քաղաւորին իմացուցին որ Ողիսէայ որդին Սաղէնս էր հասեր : « Ողիսէայ որդին, գոռէց Բդումենես , Ողիսէայ , իմ սիրելի բարեկամիս , այն իմաստուն դիւցազին՝ որուն ձեռնովը վերջապէս զՏրոյան կործանեցինք : Հոս բերեք զինքը , որպէսզի իրեն ցուցրնեմ քէ ճշտապէս զհայրը կսիրեի » : Շուտ մը առջեւը բերին զՏելեմաք , որ ճվ բլլալը հասկըցրնելով՝ ասպնջականութիւն խնդրեց իրմէ :

Պատասխան տուա իրեն Բդումենես անուշ ու խնձով երեսով մը եւ բսաւ . « Թե՛ր ճվ լինելդ ալ ինձ բտուած ջրլլար , կարծեմ որ զքեզ կնանաշէի : Ահա նոյն ինքն Ողիսէաս , ահա անոր կրակոս աշուրները , անյողղողղ նայուածքը , ահա իւր կերպն որ առջի բերան պաղ ու քաւուղ մը կերէւայ , եւ որ այնչափ աշխուժութիւն ու շնորհս կփողարկէ . կնանաշեմ նաեւ այն բարակ ժայիքը ,

այն անպանոյն շարժուածքը, և այն անոյ՛ջ պարզ ու ողոք գրուցուածքը որ դէռ կասկածելու ժամանակ ջրողած կհամոզէր : Այն, որդի էս դու Ողիսեայ, այլ նաեւ իմ որդիս պիտի ըլլաս : Որդեանկ իմ, սիրելի՛ն որդեակ . ո՛ր դիպուածով այս ծովեզերքը կուգաս : Արդեօք զհայրդ փնտռելու համար : Աւնդ, վրան ամենեւին լուր չունիմ : Երկուքնիս ալ բաղդը հալածեց . ինքը բռուառւայաւ՝ մէյմքն ալ հայրենիքը շերտալով զսնել, իսկ էս՝ զսնելով հայրենիքս՝ բայց ասուածոց ինծի դեմ բարկութեանմբը լցուած » :

Այսպէս խօսած ժամանակը Մենցորին վրայ աջուրները սնկած կնայեր, վասնզի այն դեմքն իրեն անծանօթ շէր երեւեր, քեպէտէւ անունը շէր յիշեր :

Իսկ Տելեմաք աջուրները լեցուած պատասխան տալու իրեն ու բասա . « Տեր արքայ, ներեցաւոցս զոր շեմ կրնար ծածկել այն միջոցին յորում ուրախութիւն միայն ցուցնելով՝ բրած բարեացդ համար պարտական էի շնորհակալ ըլլալ : Ողիսեայ կորսեանը վրայ ցուցուցած կարեկցութեամբդ դու ինքնին զգալ տաս ինձ զհայրս ջգրսնելու բռուառութիւնս : Այս նշափ ժամանակ է որ ծովէ ծով կպսքսիմ զինքը կփնտռեմ : Դիմ բարկացած՝ ո՛չ կրողուն որ զինքը տեսնեմ, ո՛չ կձգէն որ իմանամ քե նաւաբեկանձ է քե ոչ, և ո՛չ բող կուտան որ Իրակէ դառնամ, ուր Պենելոպէ իւր սարփառուացը ձեռքէն ազատելու փափաքովը կհալի կմաշի : Կկարծի որ զեզ Կրէտէ կըզսնեմ . հոն՝ դժնդակ նակասագիրդ իմացայ, և ո՛չ երբեք մտէս կանցնէր որ օր մը Նապերիոյ մօտենալով՝ հոն հիմնած նոր քաղաւորութիւնդ պիտի տեսնեմ եղեր : Բայց բաղդն որ ծաղը կրնէ զմարդիկ, և զիս Իրակէն հեռու ամեն երկիր քափառական կպսքսցրնէ, վերջապէս զիս քու ծովեզերդ նետեց : Գլուխս բերած ամենայն

շարեաց մեջ ասիկա միայն սիրով կ'աւելմ, վասնզի քեպէտեւ զիս հայրենիքես կ'հեռացընէ, սակայն զէք քազաւորաց մեջ ամենէն ազնուամիտն ինձ կ'հանջցունէ » :

Այս խօսքիս վրայ, գորովանօք զրկեց համբուրեց զնա Բոդոնէնէս ու արժունիքը տանելով ըսաւ . « Ո՞վ է այն խոնկեմ ձերուցին որ ինձ կ'առաջնորդէ . ինձ անանկ մը կուզայ քե տեսնով զինքը տեսած ըլլամ : — Մենձոր է նա, կրկնեց Տէլեմաք, Մենձոր. բարեկամն Ողիսեայ, որում յանձնէր էր նա զիս իմանկութենէ : Ո՞վ կրնայ բացատրել ինձ քե ճշտափ շնորհասպարտ իմ էս իրեն » :

Յայնժամ Բոդոնէնէս յառաջ գալով ձեռքն երկնցուց առ Մենձոր ու « Մեք տեսնով տեսած եմք զիրար, ըսաւ : Կրէտէք բրած համբորդութիւնդ ու ինձ տուած բարի խրատներդ կ'յիշէս : Բայց այն ժամանակ մանկութեան եռանդն ու սնոտի զուարեութեանց ախորժը զիս կ'առնուին կ'տանէին : Հարկ եղաւ որ քեռուառութեամբս զգաստանամ ու սովորիմ այն ամեն բան որոց շէի ուզէր հաւատալ : Երանիք քե յայնժամ խօսքդ մտիկ բրած ըլլայի, ճիւղ իմաստուն ձերուցին : Բայց զարմացմամբ կ'տեսնեմ որ այնչափ տարուան մեջ բնաւ շէս փոխուած . նոյն կայտառ դեմք, նոյն ուղղորդ հասակ, նոյն կորով մարմնոյ, մագերդ միայն քիչ մը ներմրկեր են » :

« Արժնոյդ հօգօր, պատասխանեց Մենձոր, քեռո էս շողոքորք մեկն ըլլայի, էս ալ ինձ կրտէի քե պահած էս այն մանկութեան ծաղիկն որ Տոյոյ պաշարմանէն յառաջ դեմքիդ վրայ կ'փայլէր . բայց աւելի կուզեմ անհանոյ ըլլալ ինձ քե հեռաւորութեան դեմ գործել : Բայց իմաստուն խօսքերէդ կ'տեսնեմ որ դու շէս սիրէր զշողոքորքութիւն, էս հետդ անկեղծաբար խօսելէն վճանգ շկայ : Շատ փոխուեր էս, էս դժուարաւ կրնայի նանջնալ զինք . էս պատճառը զիտեմ, վասնզի քու արկածիցդ մեջ շատ

վիճեալ էր ներդուրիւն ֆառեցիր : Բայց եւ վճակութեամբդ  
 շատ շահեցար, որովհետեւ իմաստութիւնն ձեռք բերիր :  
 Երեսն էլած խորհումներուն վրայ դիւրաւ պէտք է մարդ  
 մխիթարուի՝ երբոր տեսնէ որ սիրքը կկրքուի ու առաքի-  
 նութեան մեջ կգորանայ : Թող որ, պիտի գիտնաս քե քա-  
 զաւորք քան զամենայն մարդիկ աւելի կնային կմաշին :  
 Չախորդութեան մեջ՝ շագնապ մտաց եւ աշխատանք  
 մարմնոյ ժամանակէ յառաջ գիրենք կծերացրնեն : Իսկ  
 յաջողութեան մեջ քույրանորք կենաց հեշտութիւնները  
 գիրենք պատերազմի աշխատանքին աւելի կմաշեցրնեն .  
 վասնզի անսանձ հեշտախտութեան պէս առողջութեան  
 վնասակար բան չկայ : Ասով է որ անա քազաւորք քե  
 իխաղաղութեան եւ քե իպատերազմի միջտ անանկ վճեք  
 ու հեշտութիւններ ունին՝ որ ծերութիւնը ժամանակէն  
 յառաջ կբերեն : Զգաստ, շափաւոր, պարզ, հոգեք ու  
 իկրից ազատ, բարեկարգ եւ աշխատասեր կեանք իմաս-  
 տուն մարդոյն մարմնոցը մեջ անծերանայի կպահե առողջ  
 մանկութիւնը, որ առանց այս զգուշութեանց միջտ պատ-  
 րաստ է ժամանակին քեւերուն վրայ քո շէյլու » :

Իդոմէնէս Մենտորին խօսակցութեանը զմայլած՝ դէտ  
 երկար ատեն մտիկ կընէր իրեն՝ քեոր Արամազդայ բնե-  
 յու զոնին համար գիտնէր կանշէյլու շղային : Նտէնէն զնա-  
 ցին Տէլեմաք եւ Մենտոր, եւ շորս կողմերնին պատած էր  
 բազմութիւն ժողովրդեան՝ որ մեծ փութով ու հետաքր-  
 քութեամբ այս երկու օտարականք կդիտէին, եւ իրարու  
 կըսէին. « Այս երկու մարդիկ նրշափ սարքեր են իրարմէ.  
 պատանին շեմ գիտէր ինշ աշխուժութիւն ու սիրելի բան  
 մը ունի. ամենայն շնորհմ գեղեցկութեան եւ մանկու-  
 քեան երեսին ու բոլոր մարմնոյն վրայ սփռուած են .  
 բայց այս գեղեցկութիւնը ամենեւին բոյլ ու կանացի  
 բան չունի. եւ այն մանկութեան փափուկ ծաղիկովն



հանդերձ կերեւնայ ուժեղ, կորովի եւ աշխատանքի մեջ պնդացած : Իսկ միւսը քեպէտեւ շատ աւելի տարեց, բայց դեռ ոյժը բոլորովին վրան է. իսկզբան կերպարանին այնչափ վեճն ու դեմքը շնորհալի շերեւար, բայց երբոր մօտէն մարդ զինքը դիտէ, պարզութեանը մեջ իմաստութեան ու առաքինութեան նշաններ կզտնէ՝ հանդերձ զարմանալի ազնուականութեամբ : Երբոր աստուածք երկիրս իջան մարդկանց հետ հաղորդակցելու համար, անուշտ այսպիսի հիւրոց եւ նանապարհորդաց կերպարանին առած են » :

Հասան Արամազդայ մեհեանը, որուն ցեղէն ըլլալուն համար՝ Իդոմենեա մեծաւ փառաւորութեամբ էր զարդարէր : Բոլորեփքը յասպիս մարմարիոնէ երկու կարգ սիւնէր կային, որոց խոյակներն արծաթէ էին. բոլոր տանարք մարմարիոնով պատած էր, որուն բարձր փակակները կներկայացրնէին զԱրամազդ իցուլ փոխւած՝ որ զՆւրոպէ կյափճակէր, եւ ծովուն վրայէն Կրէտէ կանցնէր, եւ այն ալիքները քեպէտ զինքը օտար կերպարանօք մը կտեսնէին, բայց եւ այնպէս կերեւար քէ իրմէ կպահպառէին : Հոն փակակուած էր նաեւ ճնունդն եւ մանկուրիւն Միւնովայ. դարձեալ նոյն իմաստուն քազաւորը կտեսնուէր կատարեալ հասակին մեջ որ բոլոր իւր կողմոյն օրէնքներ կդնէր՝ միշտ ծաղկեալ պանելու համար զայն : Հոն տեսաւ Տելեմաք նաեւ Տրոյոյ պաշարման գլխաւոր դիպուածները, յորս Իդոմենեա մեծ զօրավարի փառքն ստացէր էր : Այն պատերազմաց պատկերներուն մեջ զհայրը փնտռեց զտաւ որ գերի կտանէր Հռետոսի ձիերն զոր Իդոմէդէս զարկէր սպաննէր էր, համախտութեամբ յունական բանակին զօրապետացն առջեւ Ափիլլեսին զեններուն համար էասայ հետ կլիներ,

Էւ ապա այնչափ Տրոյացւոց արիւնք քափելու համար այն մահաբէր ձիէն դուրս կելլէր :

Տելեմաք մէկէն նանշցաւ զհայրը այս քաջագործութիւններէն զորս շատ անգամ լսէր էր, Էւ Մենսոր խակիւն պատմէր էր : Արցունքներն սկսան աշուրներէն վարքափիլ . Երեսին գոյնը նետեց, դիպքն այլայլեցաւ : Նւրբապէտ արտին խոռովութիւնը ծածկելու համար երեսը մէկդի կդարձրներ, սակայն տեսաւ զինքն Իդոմենես, Էւ « Մի ամօք համարիր, քսաւ, ցուցրնել մեզ քե հօրդ փառացն ու աղետիցը վրայ նրշափ սիրտդ կգորովի » :

Բայց ժողովուրդը կխոնքեր կդիպուէր մեհենին շորս կողմը կրկին կարգ սիւնով ձեւացած բնդարձակ գաւիթներուն մեջ : Հոն երկու գունդ մանկտայ Էւ օրիորդաց տղեր կերգէին իգովես այն հզօր աստուածոյն որուն ձեռքին մեջ էն շանք : Այս տղայք ամենէն աւելի գեղեցկադէմներուն մեջէն բնտուած էին, Էւ երկայն մագերնին ուտերնուն վրայ կծփծփէին : Գլուխնին վարդապրսակ Էւ անուշահոտ, ամենքն ալ ներմակ զգեսներ էին հագած : Իդոմենես հարիւր ցուլ զոն կմասուցանէր Արամազդայ՝ որպէսզի օգնական ըլլայ իրեն այն պատերազմին մեջ՝ զոր իւր սահմանակցացը դէմ էր բացեր : Չորս դիէն զոհերուն արիւնք կծխէր, Էւ ոսկի ու արծաթի խոր նուիրանցներուն մեջ աղբիւրքի պէս կվազէր :

Մերունին Թեոփանես, սիրելի դից Էւ քուրմ մեհենին, նուիրման ժամանակ զլուխը ծիրանի պատմունանին քանցովը կծածկէր . յետոյ զոհերուն դէռ ջերաջերմ բնդերովը հմայեց, Էւ արբազան եռոտանայն վրայ կլլելով « Ո՛վ աստուածք, կանշեց, ո՞յք էն ուրեմն այս երկու երկնառաք հիւրերը : Առանց իրենց՝ ձեռք զարկած պատերազմնիս ձախող պիտի ըլլար Էւ Սաղէնս դէռ հիմանցը

վրայ բոլորովին ջբարձրացած՝ պիտի կործաներ երբար : Դիւցազն պատանի մը կտեսնեմ՝ որուն ձեռքէն բռնած կառաջնորդէ Իմաստօրին . . . . Մահկանացու շքանց ասկէց աւելի խօսիլը բոլլ տրուած չէ » :

Այս խօսքերը գրուցած ժամանակ՝ դժնեհայեաց ու հրացայտ էին աշուրներն, ու կարծես քե առջեւն եղաններէն տարբեր առարկաներ կտեսնէր . երեսը բացալաւ, բոլոր անձը խռոված ու ինքիւրմէ ելած . մազերը քսուրնեալ վեր տնկուած, բերանը փրփրալից, եւ քեւերն անհարժ բազկատարած : Չայնը այլափոխեալ՝ մարդկային ձայնէն շատ աւելի զօրաւոր կհնչէր . շունչը կտրուած էր, եւ ալ չէր կրնար աստուածային ոգին իւր մէջը բովանդակել :

« Ո՛վ երջանիկդ Իդոմէնէս, գոռեց վերտին . ինչ կտեսնեմ . ճշտափ աղէտ մեզմէ հեռացած . որպիսի՞նք քաղցր խաղաղութիւն ներսը . բայց դուքսը այդ որպիսի՞նք պատերազմունք, որպիսի՞նք յաղթութիւնք : Ո՛վ Տէլեմաք, նահասակութիւններդ հօրդ նահասակութիւնները պիտի անցնին . գոռոզ քենամին սուսերիդ սակ դիտապատս փոշուոյն մեջ կհեծէ . պղնձի դռներ, անմատչելի մարտկոցներ կկործանին ոտքդ կիյնան : Ո՛վ մեծդ դիցուհի, բոլլ որ հայր . . . . Ո՛վ պատանի, վերջապէս պիտի տեսնես . . . »

Այս որ քսաւ՝ խօսքը բերանը մնաց . պատանձեցաւ կարկեցաւ հիացմամբ :

Բոլոր ծոզովուրդը վախէն սարսափեցաւ, Իդոմէնէս անուրդու մեջ չէր համարձակէր հրամայելու որ պատգամն լսնցնէ : Իսկ Տէլեմաք ապշած՝ հազիւ կրնար լսածներն հասկրնալ, եւ անհաւատալի կերեւէին իրեն այս վէն գուշակութիւնները : Մենտոր միայն աստուածային ազդեցութեանը վրայ զարմանք մը չզգացած, « Կլաէս, քսաւ

Իդոմենեսին ,ասուածոց խորհուրդը : Ո՛ր ազգի հետ ալ որ պատերազմիս , բուկդ պիտի ըլլայ յաղբուքիւնը , եւ զինուոց յաջողութեանը համար բարեկամիդ դեռահասակ որդւոյն շնորհասպարս պիտի ըլլաս : Մի՛ նախանձիր վրան . հապա միայն նայէ որ դից անոր ձեռքովը իեզ տուածէն օգուտ հաղես » :

Իդոմենեսին սաստիկ ապշուքիւնը դեռ վրայէն գնացած ջրլլալով՝ կուգեր խօսիլ , բայց լեզուն բռնուած՝ անշարժ կկենար : Կանխեց Տելեմաք եւ ըսաւ Մենեսրին . « Այնչափ փառաց խոսմունքը արտի վրայ ամենեւին ազդեցութիւն մը չըրին . բայց ինչ նշանակէ այս վերջին խօսքը Դունպիտի տեսնես ... միքէ հայրս , քեարդեօք միայն Իրակէն : Աւնդ , ինչո՞ւ խօսքը ջլմընցուց . զիս առջինէն աւելի տարակուսի մեջ ձգեց : Ո՛վ Ողիտես , նվ հայր իմ . արդեօք զձեզ , բուն զձեզ պիտի տեսնեմ . նրեմարիտ է արդեօք : Բայց ինչզիմես կիսաբեմ : Անգնըր պատգամ . բռնաւորի մը հետ խաղալով կգուարեանաս . քեոր բառ մըն ալ աւելցրնէիր , եւ անա երջանկութիւնս կատարեալ կըլլար » : Յայնժամ Մենեսր ըսաւ իրեն . « Ասուածոց յայտնածը մեծարէ , եւ այն բանն որ կուգէն ծածկել՝ իմանալու ետէն մ'իյնար , վասնզի յանդուգն հետաքրքրութիւնը արժանի է որ ամօթով մնայ : Իրենց բարեխնամ իմաստութեամբն է որ դիք անբախանցելի գիշերի մեջ ծածկէն սկար մանկանացուաց նակասագիրը : Մեզմէ կախուած բաները լաւ ընելու համար զանոնք առաջուց գիտնալը օգտակար է . բայց ոչ ինչ նուազ նոյնպէս օգտակար է նաեւ ջգիտնալ զայն ամենայն որ մեր ձեռքը չեն , եւ դիք մեզ կատանան » :

Տելեմաք այս խօսքերէն յորդորուած՝ հագիւ կրցաւ ինչզիմքը բռնել :

Իսկ Իդոմենես որ ապշուքիւնն անցնելով խելքը

զլուխն էկեր էր, սկսաւ օրհնել զվէհն Արամազդ որ բռնամեացք վրայ զինքը յաղբող հանդիսացրնելու համար իրեն կյուղարկեր զպատանին Տէլեմաք եւ զիմաստունն Մենսոր : Զոհեն էտք մեծահաց կերակուր մը տուաւ ու երկու հիւրոց այսպէս խօսեցաւ առանձին .

« Կխոսուովանիմ որ Տրոյոյ պաշարմանէն յետոյ Կրէտէի դարձած ժամանակս բազաւորելու արուեսք շէի նանշնար . գիտէք, սիրելի բարեկամք, թէ որպիսի բռնառուքիւնք զիս այն մեծ կղզոյն բազաւորութենէ զրկեցին, որովհետէ կրսէք թէ իմ անկեց էլլելէս էտէս հոն գնացեր էք : Բայց զիս նորէն երջանիկ կհամարիմ՝ որ բախտին անողորմ հարուածները զիս խրատելու եւ զգուշաւոր բնելու ծառայեցին : Աստուածոց եւ մարդկան վրէժխնդրութենէն փախշող մարդու մը պէս՝ ծովեր անցայ գնացի, եւ բոլոր իմ առաջին մեծութիւնս ուրիշ բանի ջեր գար՝ բայց երբ իմ կործանումս ակելի ամօրալի եւ ակելի անհանելի բնելու : Թերափներուս հետէկայ այս ամայի ծովեզերքն ապաստանեցայ, ուր անմշակ՝ փուշով ու տառակով լեցուն երկիր մը գտայ, անտուներ՝ որ հասակակից են ընդ աշխարհի, անմասոյց ժայռեր՝ ուր կասալի զազաններ կորջանային : Այս երկիրը ձեռք բերելուս վրայ ալ հարկ եղաւ որ ուրախանամ ու զօրացս ու բնկերաց փոքրիկ զնդով մը որ յանձն առեր էին վշտակից լինել ինձ՝ այս վայրենի երկրին մէջ բնակիմ եւ իմ հայրենիքս բնեմ գայն, ալ յոյս շունենալով դառնալ այն երանաւէտ կղզին՝ ուր բազաւորելու համար զիս դիմ ծնանել տուեր էին : Աւնդ կրսէի ինքնիրենս, որպիսի փոփոխութիւն : Որպիսի անաւոր օրինակ էմ բազաւորաց . աշխարհիս մէջ բոլոր իշխողաց պէտք է զիս ցուցրնել, որպէսզի օրինակասս խրատուին : Ուրիշ մարդկանցմէ վեր ըլլալով կկարծեն թէ վախնալու բան

շունին. և սակայն նոյն իսկ այն բարձրութենէն պէտք  
է աւելի վախճան : Ահարկու էի թեւամեաց և սիրելի  
հպասակաց. գորաւոր և պատերազմող ազգի մը կիւ-  
խէի, և համբար անուս մինչեւ հեռաւոր երկիրներ  
էր տարէ. պողաբեր և զուարճալի կողոյ մը մեջ կրա-  
զաւորէի. հարիւր քաղաք տարուէ տարի իրենց հարս-  
տութեան հարկը կուսային ինձ. այս ժողովուրդները  
կպատուէին կմեծարէին զիս իբրեւ ազգակից Արամազ-  
դայ՝ որ այս երկրիս մեջն է ծնած, և կսիրէին զիս, և  
իբրեւ թողն իմաստնոյն Միևովայ՝ որոյ օրէնքները զիրենց  
այնչափ գորաւոր ու բարեբախտ էին ըրեր : Նշանկու-  
թեանս ինչ կպակսէր, բայց եթէ զգուշութեամբ երջան-  
կութիւնս վայելել զիտնայր : Բայց ամբարտաւանու-  
թիւնս ու շողոքոթութիւնը որոց սկանջ կախեցի՝  
արո՞ւս կործանեցին : Այսպէս պիտի իյնան նաեւ այն  
ամենայն բազաւորք՝ որ արտիցն ու մարդահանոյից  
խրատուցը անձնատուր կրլլան :

« Յորէկը կշանայի ուրախ զուարթ և յուսալից երես  
մը ցուցրնել, որպէսզի հետս եկողները շլխանին : Նոր  
քաղաք մը շինեմք, կրսէի իրենց, և բոլոր կորսնցուցած  
բաներնուս վրայ անով մխիթարուինք : Այս ձեռնար-  
կութեան հասար գեղեցիկ օրինակ տուած են մեզ մեր  
շորս դին բնակած ժողովուրդները : Մեզի մօտ կամբառ-  
նայ Տարէնտոն. և Փաղանս իւր լակեղեմոնացիներովն  
այս նոր բազաւորութիւնը հիմնեց : Հոս նոյն ծովեզե-  
րին վրայ մեծ քաղաք մը շինեց նաեւ Փիլոկտէս և  
անունը դրաւ Պետիդիա. նոյնպիսի գաղթական է նաեւ  
Մեսապոնս : Միթէ այս օտարազգի ու մեզի պէս քա-  
փառականներէն վնաս պիտի մնամք : Մեր բախտն անոնց  
բախտէն աւելի խիտ չէ :

« Երբոր այսպիսի խօսքերով կշանայի բնկերացս

վիճար քեթեւցրնել, արհա խորը մահառիք յառ մը կծածկէի : Երբոր ցորեկուան լոյսը զիս կրողուր ու գիշեր կուգար խաւարի մէջ կպասե՛ր՝ կմխիբարուէի, վասնզի համարձակ կրնայի իմ խելն նակասագիրս ողբալ : Կրկնալսակ աղի արտասուաց հեղեղներ աջերես կվազէին, եւ հաղցրանինջ բունը բոլորովին կսրուած էր անոնցմէ : Երկրորդ օրը դարձեալ նոր եռանգով մը գործի ձեռք կգարնէի : Ահա ստոր համար է, ով Մենսոր, որ զիս շուտով ձերացած կգտնես » :

Երբոր Իդոմենես իւր վճերը պատմեց լմրնցուց, առաջիկայ պատերազմին համար Տելեմախին ու Մենսորին օգնութիւնը խնդրեց : « Պատերազմը լմրննալուն պէս զձեզ Իթակէ կյուղարկեմ, կըսէր : Առ այժմ ամեն ծովեզերք նաեւ մինջեւ հեռաւորները նաեւ կարձակեմ որպէսզի Ողիսեսի վրայ լուր բերեն . եւ մեզ ծանօթ աշխարհիս սր կողմն ալ որ մրկէ կամ դից մէկուն բարկութենէն տարուէր նետուէր է նա, զիտեմ էս զինքն անկեց հանել ազատել . աստուած այ որ դեռ կենդանի ըլլայ : Իսկ զձեզ Կրեսէ կղզւոյն մէջ շինուած ամենէն ընտիր նաւերով կյուղարկեմ, որոց փայտերը բուն իսկ Իդա լեռնէն կսրուած են, ուր ծնած է Արամազդ : Այս դիցանուէր նաւափայտն շիրնար ալեաց մէջ կորսուիլ, վասնզի հողմք եւ ժայռք կվախնան իրմէ եւ կպասկանին : Պոսիդոն անգամ բարկութեանը սաստիկ բորբոքած ժամանակը շհամարձակիր անոր դէմ ալիք յարուցանելու : Վաստի լեր ուրեմն, որ ողջ առողջ էւ հանգստամբ պիտի հասնիս Իթակէ, եւ ոչ ոք իբրեւամի դից կարող պիտի ըլլայ զձեզ ծովէ ծով վտարանդի պսցըրնել . ասկեց հոն երբալու համար ալ նամբան կարն ու դիւրին է : Զձեզ մինջեւ հոս բերող փիւնիկեցի նաւը արձակեցեմ, եւ ուրիշ բան մի մտածեմ, բայց եթէ Իդոմենեսի

նորակէրս քաղաւորութիւնը հաստատել էւ անոր քունա-  
նութեանցը դարձան ճանելու փառքն ստանալ : Այս  
հաջութեամբ է ահա , որդիդ Ռդիսեայ , որ հօրդ արձանի  
պիտի համարուիս : Եւ քեռ խիտս նակասագիրք զինքն  
արդէն Պղոստնի նսեմասուէր քաղաւորութիւնը իջե-  
ցուցած է , բովանդակ Յունաստան պիտի կարծէ իեզ-  
մով զինքը տեսնել , էւ պիտի զարմացեալ հիանայ » :

Այս որ քսաւ Իդոմէնէս , կտէց Տելէմաք անոր խօսքն  
ու « Հնապա , քսաւ , արձակեմք փիւնիկէցի նաւը . ին-  
չո՞ւ կուտանամք . զենք առնումք ու էլլեմք քունամեացդ  
վրայ յարձակիմք որ այսուհետեւ մեր ալ քունամիքն էն :  
Քեռ յաղքէցինք իՍիկիլիա՝ պատերազմելով Ակեսեայ  
Տրոյացուոյն համար՝ որ քունամին էր Յունաց , միքե-  
աւելի պիտի շարիանամք ու աստուածոց օգնութիւնն  
աւելի պիտի ջգտնեմք էրք Պրիամու հաղաբ կործանող  
յոյն դիւցազանց մեկուն համար պատերազմիմք : Հիմա-  
կուան լսած պատգամնիս ալ մեզմէ ամէն սարակոյս  
կվերցրնէ » :





Գ Ի Ր Ք Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ .

Իդոմենէս կպասմէ Մենսորի քէ ինչ պատահաւոր պատերազմ է բացեր մանդուրացոց դէմ : Այս ժողովուրդը կրտէ, բող տուեր էին իրեն որ Եսպերիոյ ծովեզերէն առնու եւ հոն իւր քաղաքը շինէ . եւ իրեն մօտակա լեռներուն վրայ էին քառուեր ' ուր Իդոմենէսայ ասպատակաւոր գունդ մը իրենցմէ մէկհանին ներդրով ' ազգը երկու ձերուցի էր դրէր խղատաւորութիւն, որ եկան իրեն հետ դաշինք դրին . բայց իր մարդիկներէն ոմանք այս դաշինքը չզիտարով երբ անոր դէմ բրին ' մանդուրացիք ալ պատերազմի գրգուռեցան : Իդոմենէսի այս պատմութեանն ասեմ քեզմիջ գլխի առեւ ու Սաղէնէսայ դռներն էին իջեր : Նեսոր, Փիլոկէտ ու Փաղանս ' զորս Իդոմենէս շէզով կկարծէր, մանդուրացոց հետ իրեն դէմ կմիարանին : Մենսոր կէլլէ Սաղէնէն ու միամիտակ կերբայ քեզմանոյն հաշտութեան պայմաններ կառաջարկէ :

Մենսոր քաղցր ու հանդարտ աջով մը Տելեմախայ վրայ նայելով որ արդէն պատերազմի ազնուական եռանդով մը լեցուած էր, այսպէս խօսեցաւ . « Աւրախ եմ զաւակդ Ողիստայ, որ վրադ այսպիսի գեղեցիկ փառասիրութիւն մը կստանեմ . բայց միտդ դիր որ Տրոյոյ պատարման ժամանակ հայրդ Յուկաց մեջ ինքզինքը ամենէն իմաստունն ու զգուշաւորը ցուցրնելովն է միայն որ այնպիսի մեծ փառք ստացաւ անոնցմէ : Աքիլլէս, քէ եւ անյաղք էր եւ անխոցելի, քէ եւ ո՛ր որ պատերազմ ընէր ' հոն հետք կսանէր զարհաւիրս եւ զմահ, Աքիլլէս շիրջաւ Տրոյան

առնուլ . ինքն իսկ այն ֆաղափին պարսպացր սակ ընկաւ , եւ Հէկտորի յաղքականին վրայ յաղքանակեց Տրոյա : Բայց Ողիսեսս յորում խոհեմութիւնը կառաջնորդէր , ֆաջութեան հուրն ու սուրը Տրոյացւոց մէջ տարաւ , եւ իւր ձեռքերն են որ կործանեցին այն բարձրաբերձ ու գոռոզ աշտարակները որ տասը տարի բոլոր նիզակակցեալ Յունաստանի կորուստ կսպառնային : Որշափ Արեմաս Արեսէն վեր է , այնշափ ալ խոհեմ ու նախասէս ֆաջութիւնը յախուռն ու կասաղի ֆաջութենէ վեր է : Իմանամբ ուրեմն նախ այս սկսելիք պատերազմին հանգամանքը : Ամենեւին վճանգէ ջեմ փախջիր , ճ Իդոմենես , բայց ինձ երեւի թէ պարսական ես մեզ նախ հասկըցնել թէ արդար է արդեօք պատերազմը . միով բանիւ , յաջողութիւն յուսալու համար բաւական զօրք ունիս թէ ջե » :

Պասասխան տուաւ Իդոմենես . « Երբոր այս ծովեզերքն հաստանք , վայրենի ժողովուրդ մը գտանք որ անտաներու մէջ կրտսիտէր , եւ որսորդութեամբ եւ ծառոց ինփիրմէքերածպսղովը կապէր : Այս ժողովուրդն որ մանդուրացիք կրտսիսն , մեր նաւերն ու զենքերը տեսնելով սարսափեցան ու գնացին լեռները ֆաշուեցան : Մեր զինուորաց հետաքրքրութիւնը շարժեցաւ երթալ երկիրը տեսնելու , եւ երբ եղջերուաց ետեւէն էին ընկեր' այս վայրենի փախսականաց հանդիպեցան : Ատնց առաջնորդները կրտսէն մերոնց . « Ձեզի համար մեր ցանկալի ծովափունքը թողուցինք . մեզի նիմա ուրիշ բան ջմնար' բայց էրէ զրէրէ անմատջելի լեռներ . գոնեա հոս թողուցիք զմեզ ազատ եւ հանգիստ : Ահա զձեզ քափառական առդիս անդին ցրուած եւ ֆան զմեզ սկար կզտենք . մեր ձեռքն է զձեզ զարնել մեռցրնել եւ այնպես ընել որ գլուխնիդ եկած թշուառութիւնը ձեր

ընկերներն անգամ շիմանան . այլ քնն լիցի, մեզ նման մարդոց արեանը մեջ ձեռներնիս քարխել : Գնացե՛ք, բայց յիշեցե՛ք որ մեր մարդասիրութեամբը կեանքերնիդ ձեզ շնորհեցինք : Մի՛ մոռնա՛մ որ այն ժողովուրդն զոր դուք բիրտ ու վայրենի կոչե՛ք, ձեզ այս հեղութեան ու վեհանձնութեան խրատը կու՛սայ » :

« Այսպէս մերոնք այս բարբարոսներէն համբայ դուռելով բանակն եկան եւ գլուխնին հանդիպածը պատեցին : Այս բանս ծանր եկաւ մեր զինուորաց . ամօք կհամարէին որ կրէացիք իրենց կենացը համար շնորհապատճ ըլլան գունդ մը այսպիսի փախստական մարդոց որ իրենց աշխին աւելի արջ կերէէին քան քէ մարդիկ . եւ էլան նորէն որսի գնացին առաջինէն բազմաքիւ եւ ամէն տեսակ զենքով զինեալ : Շուտ մը վայրենեաց պատահեցան ու վրանին յարձակեցան : Սասկացաւ պատերազմը, եւ մերկի ժամանակ դատի մը մեջ տեղացած կարկտի սարափին պէս երկու կողմէ նետեր կտեղային : Հարկ եղաւ որ վայրենիք իրենց սեպացեալ լեռները փաշտուին ուր մերիկները շհամարձակեցան ետեւին իյնալ :

« Բիշ ժամանակէն այս մանդուրացիք իրենց իմաստնագոյն ձերերէն երկու հոգի դրկեցին որ յինէն խաղաղութիւն խնդրէն, ընծայ բերելով իրենց որսացած վայրենի գազաններու մորթերն եւ իրենց երկրին պտուղներէն : Այս ընծաները տալէն յետոյ այսպէս խօսեցան .

« Արքայ քաջ, անա ինչպէս որ կտեսնես, մեկ ձեռներնիս սուտեր եւ միւսը ձիբէնուոյ նիւղ մը » : — Եւ իրացրնէ երկուքն ալ ձեռներնին բռնած էին : — « Ահա խաղաղութիւն եւ պատերազմ, զոր եւ ուզես ընտրէ : Բայց մեք աւելի խաղաղութիւնն է որ կսիրեմք, անոր համար ալ ամօք շհամարեցանք բողոյ ձեզ ցանկալի ծովեզերքն, զոր արեւը արգաւանդ կգործէ տեսակ տեսակ

Բաղցրահամ պտուղներ հասցրելով : Բայց բոլոր այս  
 պտուղներէն աւելի Բաղցր է մեզ խաղաղութիւն . Եւ  
 անոր համար է որ մեք այս բարձրաբերձ լեռներն էլանք  
 Բաշուեցանք՝ որ միշտ ձեամբ ու սառնամանեօք ծած-  
 կուած են, ուր ոչ գարնան ծաղկունքը էւ ոչ աւան  
 առաս առաս բերբերն երբեք կտեսնուին : Կգարեիմք  
 այն գազանութենէն՝ որ փառասիրութեան էւ փառաց  
 գեղեցիկ անուանըր սակ կերբայ յիմարաբար գաւառ-  
 ները կգերէ կգերփէ, էւ մարդկանց արիւնը կքափէ, որ  
 ամենն ալ իրարու եղբարք են : Թե՛նք այս սնոսի փա-  
 ռաց ետէէ էս դու, վրադ շեմք նախանձիր, այլ կցաւիմք  
 էւ կաղօթեմք առ դիս որ զմեզ այսպիսի մոլեգնութենէ  
 մը պանէ : Երէ գիտութիւնք՝ զորս Յոյն այնչափ ջան-  
 քով կսովրին, էւ Բաղաբականութիւնն այն՝ որով կպար-  
 ծին, իրենց այս գարեղի անիրաւութիւնն է միայն որ  
 կրելադրեն, երանք մեզ որ անոնցմէ զուրկ էմք : Այս  
 պարծանք կհամարիմք մեզ միշտ որ զգէս էմք էւ բարբա-  
 րոս, այլ արդար, մարդասէր, հաւասարիմք, անշահա-  
 սէր, սովրած քիշով զոն լինել էւ արհամարհել այն  
 բնդունայն փափկութիւններն, որ զմարդիկ շատ բանե-  
 րու կարօտ կրնեն : Մեր աշխին դիմաց յարգ ունին միայն  
 առողջութիւն, սակաւապիտութիւն, ազատութիւն, կորով  
 մարմնոյ էւ մտաց, սէր առաքինութեան, երկիրաձու-  
 րիւն բնդ բարեկամս, ամենուն հետ հաւասարութիւն,  
 շափաւորութիւն իյաջողութեան, արիւրքիւն իբժուա-  
 ռութեան, միշտ համարձակ նեմարտութիւնն ըսելու  
 Բաջութիւն, էւ սոսկումն իբողոքորթութենէ : Ահա այս-  
 պիսիք են քեզ սահմանակից էւ դաւանակից ըլլալ ու-  
 զող ազգերը : Թե՛նք աստուածոց բարկութենէն կուրա-  
 ցած՝ խաղաղութիւնը մերժես, պիտի սովրիս՝ բայց շնտ  
 ուշ, քէ այն մարդիկ որ հեղութեամբ խաղաղութիւն

կսիրեն , պատերազմի մեջ անաւորագոյն են քան զամենեսին :

« Ծերունեաց այսպէս հետս խօսած ժամանակ՝ վրանին նայելէն շէի կօսանար : Մօռուհին երկայն էր ու անխրնամ , իսկ մազերնին քեւաւաւէի կարն բայց նիփ ներմակ , յօններնին քաւ , աշէրնին ու կերպարանքնին անյողդողդ , խօսակցութիւննին ծանր էւ լի պերճութեամբ , կերպերնին պարզ էւ անպանոյն : Հագուստի ճեղ վրանին առած մորթերնին ուտերնուն վրայ կապած բլլալով՝ քեւերնին կերէւէր , որ մեր բմբուց քեւերէն աւելի ջղոտ էին էւ անառոտ : Այս երկու պատգամաւորաց պատասխան տուի քեւէս ալ խաղաղութիւն կուզեմ : Անկեղծաբար իրարու հետ դաշինք դրինք , բոլոր ասուածները վկայ բռնեցինք , էւ պարզեւներով այս մարդիկը իրենց ճեղը դարձուցի :

« Բայց դի՛ք՝ որ զիս նախնեացս բազաւորութենէն արտախեր էին , զիս հալածելէն դեռ շէին դադրեր : Մեր որսորդներն որ մեկէն շէին կրնար դրած դաշինքնիս գիտնալ , նոյն օրը բարբարոսաց բազմութեան հանդիպեցան՝ որ մեր բանակէն դարձած պատգամաւորներուն հետ կուգային . վրանին յարձակեցան , մեկ մասն սպանեցին , էւ մնացածն անտուները փախուցին : Ահա ասկեց պատերազմն սկսաւ . էւ այս բարբարոսները մտերնին դրին քեւն շէն կրնար ոչ մեր խոստմանը վրասանիլ էւ ոչ երդմանը :

« Եւ մեզի դեմ ուժերնին սասկացրնելու համար իրենց օգնութեան կանշեցին զլոկեցիս , զապուլեցիս , զուկանացիս , զբրուսացիս , էւ զժողովուրդս Կրտսոնի , Ներիսայ , Մեսապիոյ էւ Բրունդուսիոնի : Լուկանացիք գերանդազեն կառներով կուզան կհասնին :

Ապուլեցիի իրենց մեռուցած գազաններու մէյակ մորք կռնակնին առած են, եւ ձեռքերնին ոսախիտ եւ երկաքասայր լախտք բռնած. հասակնին գրեթէ հսկայից պէս բարձր եւ մարմիննին սաժանաւոր կրքուրթիւններով այնպէս զօրացուցած են՝ որ զիրենք տեսնելով միայն մարդ կասարափի : Լոկրեցիի որ գաղքական եկած են Յունաստանէ, դեռ իրենց ծագման նշանները վրանին կցուցընեն եւ ուրիշներէն, աւելի մարդասէր են. բայց յունական զօրաց խիտ հրահանգին հետ միացուցած են բարբարոսաց կորովն ու շարժաւ կենաց սովորութիւնը, որ զիրենք անյաղթելի կընեն : Ձեռուրնին ուռիէ հիւսած ու մորթով պատած թէթէ վահաններ ունին, եւ երկայն սուսերներ : Բռուսացիի եղջերուաց ու այծեմանց նման թէթէւընթացք են : Կարծես թէ ոտներնուն տակը մասդաւ խոտերն անգամ շեն նզմուիր, եւ հագիւ աւազին մէջ իրենց զարեապարաց հետք կրողուն. կիտոյանան թեմամեաց վրայ եւ նոյնպիսի արագութեամբ յանկարծ աներեւոյթ կըլլան : Քաջաղեղն են կրոտնացիի, եւ անոնց աղեղները ամեն Յոյն շիրնար լարել. եւ թե՛ որ երբեք մեր մրցանաց հանդեսներուն մէջ մտնեն, անուշտ մրցանակն իրենք կառնուն : Նետերնին տեսակ մը բունաւոր խոտերու հիւրին մէջ քարխտուած են որ Աւեռնոնի լեռնափունք կրուսնին կըսեն, եւ բուներնին մահաբէր է : Իսկ ներիսացիի, մտասպացիի եւ բրունդուսեցիի զօրաւոր են մարմնով բայց քաջութիւննին անարուեստ : Թշնամին տեսած ժամանակնին սարսափելի է իրենց գոռում գոռումը որ մինչեւ երկինք կհասնի : Վարպէտ պարսաւոր են եւ իրենց քաղերուն կարկնովը օդը կմքնընեն. բայց խառն եւ անկարգ կպատեալովն :

« Ահաւասիկ քեզ, Մենճոր, ինչ որ կփափագէիր գիտնալ . նանչցար հիմա քե ուսկից այս պատերազմը գրգռեցաւ եւ քե որոնք են մեր բժնամիները » :

Այս բացայայտութեան վրայ Տելեմաք շկարեճալով այլ եւս պատերազմի ունեցած եռանդը բռնել՝ մեկէն կուզեր վազել գեղն առնուլ : Բայց Մենճոր զինքը հանդարտեցոյց եւ այսպէս խօսեցաւ առ Իդոմենէս .

« Ի՞նչպէս կրլլայ որ նաեւ լսկրեցիք որ Յունաստանէ կ'ած են, բարբարոսաց դէմ կ'միաբանին : Եւ ինչէն կրլլայ որ այս ծովէզերքը դէռ այնչափ այլ ծաղկած յոյն գաղթականներ կան եւ քեզի պէս պատերազմներ շունին : Ո՛ր Իդոմենէս, դիք դէռ շղաղրեցան կրսես զքեզ հալածելէն . եւ ես կրսեմ քե դէռ շէն կրցած զքեզ խրատել : Այնչափ քաւած բժուառութիւններովդ դէռ շես սովորած քե ինչպէս պէտք է պատերազմաց առջէն առնուլ : Այս բարբարոսաց պատմութեանը վրայ պատմածեղ ալ յայտնի կերեւայ քե կրնայիր հետեւնին խաղաղութեամբ ապրիլ, սակայն գոռոզութիւնն ու բարձրամտութիւնը ամենէն վնասակար պատերազմները մարդուս վրայ կրբերեն : Կրնայիր անոնց պատանդ տալ, նոյնպէս նաեւ իրենցմէ առնուլ : Դիւրին եր քեզ ապահովութեան համար անոնց դէտպանացը հետ տու իշխաններեղ մեկնանին դնել, որ անոնց անվտանգ առաջնորդին : Պատերազմ գրգռուելէն ետքն ալ դէռ կրնայիր զիրենք հանդարտեցրնել հասկրցրնելով անոնց որ վրանին յարձակողները մեջերնին նոր դրուած ու երդմամբ հաստատուած դաշինքը շէին գիտեր : Պէտք էր անոնց ուզած ամեն ապահովութիւնը տալ, եւ հոգատակացդ մեջէն այն դաշանց դէմ բնողին խիստ պատիժներ հրամայել : Բայց այս պատերազմին սկսելէն յետոյ ինչ պատահեցաւ » :

« Երբալ այս բարբարոսաց խոնարհիլը ցածութիւն

համարեցայ, պատասխանեց Բղոմէնէս. անոնք շուտ մը բոլոր իրենց պատերազմիլ կրցող մարդիկը ժողովեցին, եւ զմեզ բովանդակ Երջակայ ազգաց կասկածելի եւ ասելի բնելով՝ անոնցմէ օգնութիւն խնդրեցին: Այն ժամանակ ամենէն ատելի ապահովն երեւցաւ ինձ երբաւ փութով իրել լեռներու մեջի մեկեանի կիրներուն որ լաւ պահպանուած շէին: Անաշխատ առինք զանոնք եւ կրնայինք անկեց այս բարբարոսները նեղը խտրել: Հոն աշտարակներ կանգնել տուի, ուսկից կրնային մեր գործը նետի բռնել լեռներէն մեր երկիրն իջնող բեռամիքը: Մեք երբ եւ ուզեմք՝ կարող եմք իրենց երկիրը մտնել եւ անոնց գլխաւոր բնակութեան տեղերն ապականել: Այս կերպով կրնամք մեր սակաւաւոր զօրօք՝ շորս դին պատած պաշարած բեռամեաց անքիւ անհամար բազմութեանը դէմ դնել: Այլ այսուհետեւ դրժւարին է անոնց հետ հաշտութեան վրայ խօսիլը. քեռ անոնց բողոքմք այս աշտարակները, անկեց մեր վրայ պիտի յարձակին. վասնզի զանոնք մշտեկ միջնաբերդ կհամարին, զորս կանգնած ըլլամք զիրենք իգերութիւն նուանելու համար »:

Պատասխան տուաւ Մենտոք. « Իմաստուն քազաւոր ես դու, եւ կուզես որ նամարտիւնը քեզ անպատեանակ յայտնուի: Գուցէ այն վաս մարդոցմէ շէս որ նրամարտիւնը կվախնան տեսնելու, եւ իրենք զիրենք ուղղելու քաջութիւնը շունենալով՝ իրենց իշխանութիւնը քրած սխալմունքնին առաջ տանելու միայն կգործածեն: Գիտցիր որ այս բարբարոս ժողովուրդը զալով քեզմէ հաշտութիւն խնդրելովը՝ սխալեցի խրատ մը տուած է քեզ: Արդեօք իւր տկարութեանն համար էր որ կխնդրէր զայն. քաջութիւն կամ քեզի դէմ դնելու կարողութիւն չունէր: Կտեսնես որ ոչ մեկն էր եւ ոչ մեկալը.



վասնզի քէ պատերազմի մեջ քաջ է եւ քէ բոլոր սահմանակից հզօր ազգերն իրեն քեւ քիկունն ունի : Ինչո՞ւ անոր խաղաղասիրութեանը ջեռ ուզէր նմանիլ : Ընդունայն ամօքն եւ սուս վառք գէզ այս փորձանաց մեջ ձգեցին : Վախցար որ քենամին ջեպարտացրնես, եւ շվախցար ամբարտաւան ու անիրաւ վարմունքովդ այնչափ ազգեր քեզի դեմ միացրնելով զինքը ջափէ դուրս զօրացրնելու : Ի՞նչ բանի կուգան այս աշարակներն որոց վրայ այնչափ կպարծիս, բայց երբ սահմանակից ազգերդ բռնադատելու որ իրենգիրենն մօտալուս գերութենէն ազատելու համար կամ գէզ կորսնցրնեն եւ կամ իրենն կորսուին : Այս աշարակներն քու սպահովութեանդ համար կանգնեցիր. եւ սակայն այն աշարակներն են որ գէզ մեծ վսանցի մեջ կձգեն :

Տերութեան մը ամենէն սպահով ամրոցն է արդարութիւն, խաղաղասիրութիւն, հաւատարմութիւն, եւ սահմանակից ազգաց վստահութիւնը՝ քէ իրենց երկիրը ջյափօտակեր : Նոյն իսկ ամենէն ամուր պարիսպներն անակնկալ պատահարներով կկործանին կիյնան. պատերազմի մեջ անհաստատ ու փոփոխական է բայտը. այլ խաղաղասիրութեամբ քու վրայ ձգել տուած սերն ու վստահութիւնը այնպէս կրնեն՝ որ քու տերութեանդ ջրկրնար մեկը յաղթել, մանաւանդ քէ եւ ոչ իսկ մեկը վրան յարձակիլ : Եւ քէ որ անիրաւ սահմանակիցներէն մեկը յարձակելու ալ ըլլայ՝ բոլոր մեկալնոնն անոր պահպանութեանը նախանձաւորք շուտ մը զենն կառնուն զինքը պաշտպանելու : Այնքան ազգաց ձեռնտութիւնը՝ որ բուն իրենց շահուն համար հարկ է գէզ պաշտպանեն, շատ աւելի զօրաւոր կրնեն գէզ լինան քէ այս աշարակներն որ ջարխոյ անդամանելի կրնեն : Թէոր առաջուց սահմանակցացդ նախանձաւորութենէն ըզ-

գուշանայիր, նորակերտ քաղաքի երջանիկ խաղաղութեամբ կծաղկեր, եւ դուն Եսպերիոյ հանուրց ազգաց իրաւարար կրլլայիր :

« Բայց ինչ եւ իցէ, արդ մտածեմք քե ինչպէս ապագային ձեռնով կրնայ անցելոյն դարման բլլուիլ :

« Ըսիր ինծի քե այս ծովեզերք այլեւայլ յոյն գաղթականներ կրնակին. կարելի է որ անոնք քեզ օգնելու յօծարին, վասնզի անուրես ոչ գտնեն Միկուլս մոռցած են՝ գորդին Արամազդայ, եւ ոչ Տրոյոյ պաշարման ժամանակ քու նահաւսակութիւններդ, ուր այնչափ անգամ յոյն իշխանաց մեջ Յունաստանի հասարակաց խնդրոյն մեջ նշանաւոր ճանդիսացար : Ինչո՞ւ համար այս գաղթականները քու կողմդ ձգելու ջէս մտածեր :

« Անոնք ամենքն ալ մտերնին դրած են, պատասխանեց Իգոմենես, որ ոչ մէկ կողմին եւ ոչ մէկալին օգնեն. եւ այս ոչ երբ անոր համար՝ որ ինչ ձեռք տալու յօծարութիւն շունին, այլ քաղաքիս իսկզբան ունեցած ջափէ դուրս պայծառութիւնը զիրենք վախցուց : Ոչ միայն այս Յոյնք, այլ նաեւ ուրիշ ազգեր վախցան որ մեր դիտարութիւնը իրենց ազատութիւնը վերցրնել ջրլլայ : Կարծեցին որ լեռնաբնակ բարբարոսները նուանելէն յետոյ՝ մեր փառասիրութիւնը սլ ջափ եւ սահման պիտի շունենայ : Միով բանիւ, ամեն բան մեզ հակառակ է : Անոնք իսկ որ հետերնիս յայտնապէս ջեն պատերազմիր՝ մեր իյնալը կփափաքին. եւ նախանձը մեզ նիզակակից մը ջրողուր » :

Երկու կողմէն ալ ծայրը կանցնիս, կրկնեց Մենոր : Զօրաւոր երեսնալու համար զօրութիւնը կկործանես. եւ այն միջոցին որ դրսէն քու սահմանակցացդ ահաւոր եւ ասելի էս, ներսէն ոյժդ կհասցրնես՝ այսպիսի պատերազմի մը դիմանալու համար բոլոր նիզդ քափելով :

Ո՛ր՛ ի՞նչ էլ ամենեւին հեղ Իդոմենես , որ զքեզ աղեհն անգամ շիրցան լիով խրատել : Պէտք է որ երկրորդ անգամ էւս կործանիս , որպէսզի սովբիս զգուշանալ իշարեաց որ էլ ամենէն մեծ բազաւորաց կապաւունան : Իմ վրաս քող ասոր նարք , բռն միայն կարգաւ քե որոնք են այն Յունաց ֆաղախներն որ շեն ուզեր նիզակակցիլ քեզ » :

Պատասխանեց Իդոմենես . « Դիլաւորն է Տարէնսոն ֆաղախք , զոր երեք տարիէ իվեր հիմնեց Փաղանս : Ժողովեց նա Լակոնիոյ մեջ շատ մը երիտասարդներ որ ծնած էին այն կանանցմէ որ իրենց Տրոյոյ պատերազմին զնացող երիկնին մոռցեր էին : Երբոր երիկնին դարձան , անոնց բարկութիւնը իջեցրնելու համար նայեցան որ յանցանքով ծնած զաւակնին ուրանան : Այս բազմաքիւ շղայքը՝ ծնունդ գողունի հարսանեաց , անհայր է անմայր մնալով՝ անսանձ կեանք մը կանցրնէին . օրինաց խստութեամբք անկարգութիւննին սանձուեցաւ : Եկան Փաղանսին հետ միացան որ յանդուգն , աներկիւղ ու փառամոլ մարդ մի էր , էլ գիտէր ուրիշի սիրքը նարտութեամբ իրեն ձգել : Սոյն լակեդեմոնացի երիտասարդաց հետ այս ծովեզերքն եկաւ , էլ Տարէնսոնը երկրորդ Լակեդեմոն մը ըրաւ : Ուրիշ կողմանէ ալ Փիլոկսէս՝ որ Տրոյոյ պատերազմին մեջ մեծ փառք ստացաւ Հերակլէայ նետերն հոն բերելով , մեր փութերը Պէտիլիոյ պարիսպները կանգնեց , որ քեպէտէ Տարէնսոնի շափ զօրաւոր շէ , բայց անկեց շատ աւելի իմաստութեամբ կկառավարուի : Հոս մեզի մօտ է նաեւ Մեսապոնոյ ֆաղախք , զոր իմաստունն Նեսոր իւր Պիլոսացւոցը հետ հիմնեց » :

« Ի՞նչ կրտես , գոշեց Մենսոր , Նեսոր յնապերիսն է , էլ դուն շիրցան զինքը քեզի հետ միաբանել . այն Նեսորը՝ որ շատ անգամ Տրոյացւոց դէմ պատերազմելը

ՏԵՍԱՒ , ԵՒ ԲՈՒ ԲԱՐԵԿԱՄԳ ԱՂ ԷՐ » : ՊԱՏՏԱԽԱՆԵՑ ԻՊՈՒՄԵՆԵԱ . « ԿՈՐԱՆԳՈՒԳԻ ԱՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒՐԻՆՆԵՐ , ԽՈՐԱՄԱՆԿՈՒՔԵԱՄԲ ԺՈՊՈՒՐԴՈՅ՝ ՈՐ ԱՆՈՒՆԱՄԲ ՄԻԱՅԻՆ ԵՆ ԲԱՐԲԱՐՈՍ . ԿԱՐՏԱՐՈՒՔԵԱՄԲ ՄԻՐ ԱՅԻՆԱՅԵԱ ԿԱՍԿՐԵՑՈՒԳԻՆ ԻՐԵՆԻ ՔԷ ԵՍ ԿՈՒՂԵՄ ԵՍԱԿԵՐԻՈՅ ՎՐԱՅ ԲՈՒՄԱՆԱՂ » : — ՄԵՖ ԱՆՈՐ ԿԱՍԿԱՌԱԿԻՆ ԻՐԵՆԻ ԿԿԱՍԿՐԵՐՆԵՄԲԲ , ԸՍԱՒ ՄԵՆՏՈՐ : ԻՆԻՐ ԱՅՍ ԳԱՊՐԱԿԱՆԻՐ ԶԿԱՍՏԱՏԱԾ՝ ԵՒ ՄԵՖ ՈՊԻՍԵԼՍԻՐ ՎԻՏՆԱԵՂՈՒ ԿԱՄԱՐ ՊԵՌ ԱՅՍ ԵՐԿԱՅԻՆ ԿԱՆՏԱՊԱՐԻՈՐԴՈՒՔԵԱՆ ԾՆԵՖ ԶԳԱՐԿԱԾ՝ ՏԵԼԵՄԱՐ ԳԻՆԻՐ ՊԻՊՈՍ ԲԱՂԱՖԻՆ ԻՆՉ ՏԵՍԱՒ . ԱՆՈՒՄԵՏ ՊԵՌ ԳՈՊԻՍԵԼՍ ԻՆՈՒԳԱԾ ԶԷ , ԵՒ ՈՉ ԱՆՈՐ ՈՐՊՈՅԻՆ ՏԵԼԵՄԱՐԱՅ ՎՐԱՅ ԳՈՒԳՈՒԳԱԾ ՄԵԾ ԱԵՐՐ : ԲԱՅԳ ԳԽՍԱՌՈՐ ԲԱՆՆԻ ԻՐԵՆԻ ԿԱՍԿԱԾԱՆԻՐ ԲԺՇԵԿԵԼԻՆ Է . ԱՄԱՆԱՆԱԿԻԳ ԱԳԳԵՐՐ ԽՐՏԵՐՆԵԼՈՎԻՆ Է ՈՐ ԱՅՍ ԱԿԱՏԵՐԱԳՎԻՐ ՎԱՌՈՒԵՐ Է , ԵՒ ԱՅԻՆ ԱՆՈՏԻ ԿԱՍԿԱԾՆԵՐՐ ՎԱՐԱՏԵԼՈՎ ՄԻԱՅԻՆ ԿՐՆԱՅ ՄԱՐԻՂ : ԳԱՐՁԵԱՂ ԿՐՍԵՄ , ԱՅՊ ԿՈՊՐ ԻՄ ՎՐԱՍ ԲՈՂ » :

ԱՅՍ ԽՈՒՖԵՐՈՒՆ՝ ԳՐԿԵՑ ԻՊՈՒՄԵՆԵԱ ԳՄԵՆՏՈՐ , ԱԻՐՏՆԻ ԵԼԱՒ ՈՒ ԶԵՐ ԿՐՆԱՐ ԽՈՍԻՂ : ՀԱԳԻՒ ԱՅՍԶԱՄԻ ՄԻՐ ԸՍԱՒ . « Ո՛Վ ԻՄԱՍՏՈՒՆ ԾԵՐՈՒՆԻ , ԳՈՐ ՊԻՖ ԱԽԱՎՈՒՆԻՍ ՈՒՂԵԼՈՒ ԿԱՄԱՐ ՊՐԿԵՑԻՆ , ԿԽՈՍՏՈՎԱՆԻՄ ՈՐ ԵՔԷ ՈՒՐԻՇ ՄԻՐ ԿԵՏՍ ԱՅՍԱՅԻՍԻ ԿԱՄԱՐՁԱԿՈՒՔԵԱՄԲ ԽՈՍԵՐ՝ ԱՍԱՏԻԿ ԱԻՏԻ ԲԱՐԿԱՆԱՅԻ , ԵՒ ԲԵԳՄԷ ԳԱՏ ՄԵԿՐ ԶԵՐ ԿԱՐՈՂ ԳԻՍ ԿԱՇՏՈՒՐԻՆ ԽՆՈՐԵԼՈՒ ԱՏԻԱԵԼ : ՄԻՏԻՍ ՊՐԵՐ ԷՐ ՈՐ ԿՆՈՒՄ ԿՈՐԱՌԻՄ ԵՐԲԱՄ , ԿԱՄ ԲՈՂՈՐ ԲԵՆԱՄԻՏԱ ԿՈՏՐԵՄ ՆՈՒԱՆԵՄ . ԲԱՅԳ ԱՒԵԼԻ ԸՍՒ Է ԲՈՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏՈՒԳՊ ԱՆՍԱՂ ԲԱՆ ՔԷ ԻՄ ԿՐԻԳՍ : ՆՐԱՆԻՔ ԲԵԳ ՏԵԼԵՄԱՐ , ՈՐ ԱՅՍԱՅԻՍԻ ԱՌԱՉՆՈՐԳ ԲԵԳ ՈՒՆԵՆԱՂՈՎ ՈՉ ԵՐԵՖ ԿՐՆԱՍ ԻՆՁ ԱԵԱ ՄՈՂՈՐԻՂ : ՏԵՐ ԵՍ ՊՈՒ , ՆՂ ՄԵՆՏՈՐ . ԱՍՏՈՒԱԾՈՅ ԲՈՂՈՐ ԻՄԱՍՏՈՒՐԻՆՆԵՐ ԲՈՂԳ Է . ԱՐԵՆԱՍ ԻՍԿ ԶԵՐ ԿԱՐՈՂ ԱՍԿԵՑ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐԿՈՒՐԳ ՄԻՐ ՏԱՂ : ԳՆՈՒ , ԽՈՒՖ ՏՈՐ , ՊԱՇԻՆՖ ՊԻՐ , ԻՆՉ ՈՐ ՈՒՆԻՄ ՏՈՒՐ . ԲԵԳ ԱՍՏՈՒՆ ԵՐԵԼԳԱԾՆ ԿԱՆՈՅ Է ԵՒ ԻՊՈՒՄԵՆԵՍԻ » :

Այսպէս խօսած ժամանակն յանկարծ անդիէն խառնալուր ձայներ լսեցին, կառաց շառաշիւն, խրխնջիւն ձիոց ու բազմութեան ահաւոր աղաղակ մը, մարդկան եւ փողերու պատերազմական դռնշիւնը՝ որ օդը կրնդացրնէին : Եւ ամբոխը կաղաղակէր . « Ահա քեզամիք որ գօրհով պահպանուած կիրներէն շանցնելու համար մեծ շրջան մը բնելով փազաֆնիս պաշարելու եկեր են » : Ծերք եւ տղայք ահուղողի մեջ ինկած կգոռէին . « Ինչո՞ւ համար մեր ցանկալի հայրենիքը բողոքցինք զբարեբերն Կրէսէ, եւ բշուառ բազաւորի մը էտէն գնացինք եւ ծովէ ծով անցնելով եկանք փաղափ մը հիմնելու՝ որ Տրոյոյ պէս մոխիր պիտի դառնայ : Նորաշէն պարսպաց վրայէն կսեսնուէին լայնածաւալ դաշտին մեջ քեզամեաց սաղաւարտները, գրահներն ու վահանները, որոց վրայ արեւուն հառազայքները զարնելով՝ նայողին աշքը կառնուին : Յցուած նիզակներու բազմութենէն երկիրը կծածկուէր, ինչպէս որ Սիկիլիոյ մեջ Նննայ արտերն առասաբուղիս հնձով կծածկուին, զոր ամառուան սաֆերուն կպատրասէ Ռեմէսէ մշակին աշխատանքը վարձատրելու համար : Արդէն գերանդազէն կառֆեր կսկսին երէւիլ . եւ այս պատերազմի համար եկող ժողովուրդները դիւրաւ կորոշուին :

Ձիրենք լաւ մը դիտելու համար բարձր աշտարակի մը վրայ էլաւ Մենսոր, էտէն գնացին նաեւ Իդամենէս եւ Տելեմաք : Վեր էլաւ շէլաւ, մէկ կողմը Փիլոկտէսը տեսաւ եւ միւս կողմը զՆէսոր՝ իւր Պիսիստրաս որդովը. որովնէտէ դիւրաւ կնանջցուէր Նէսոր իւր պատկառելի ծերութեամբը : « Դուն այնպէս կկարծէիր, նմ Իդամենէս, զոռէց Մենսոր, որ Փիլոկտէս եւ Նէսոր քեզ շօգնելով զոն պիտի ըլլային . ահա քեզ դեմ գեմք առեր են . եւ քեզ շէմ սխալիր, այն միւս գնդերն՝ որ գեղեցիկ

կարգաւ եւ ծանր ծանր յառաջ կուգան՝ լակեղեմոնացիք էն, որոց զօրավար է Փաղանս : Ամենք իեզ դեմ էն զինուեր . շկայ սահմանակից մը զոր հետդ բեւամացուցած շրլլաս, քէ եւ ակամայ » :

Այս րսաւ Մենսոր ու փութով աւսարակէն վար իջաւ, դիմեց ֆաղափին այն դուռն ուր բեւամիփ կմօտեմային . բանալ կուտայ զայն . եւ Իդոմենէս անոր իշխանական կերպին վրայ սպաւած՝ շհամարձակիր հարցընելու քէ միտֆոյ ինչ է : Ձեռնով նեան կընէ Մենսոր որ մէկը ետէն շգայ . ընդ առաջ կերթայ բեւամեաց որ անոր այնպէս միամիտակ դիմացնին էլլելուն վրայ կզարմանան : Հեռուէն անոնց ձիքեմոյ նիւղ մը կցուցընէ ինեան խաղաղութեան . եւ երբոր այնչափ մօտեցաւ որ կրնային ձայնը լսել, խնդրեց որ բոլոր զօրագլուխները գան ժողովին : Երբ էկան անոնք հաւաքեցան, այսպէս խօսեցաւ անոնց Մենսոր .

« Ո՛վ վեհանձն մարդիկ, որ Նսպերիոյ հարուս երկրին մեջ ծաղկող այնչափ ազգերէն մէկտեղ եմ ժողովեր, գիտեմ որ հոս ուրիշ բանի համար էկած շեք բայց էրէ հասարակաց ազատութեան պաշտպանութեանն համար : Կգովեմ ձեր նախանձը . այլ էրէ ներեք՝ ես դիւրին հնարք մը ձեզ ցուցընեմ որ ձեր ժողովրդոց ազատութիւնն ու փառքը պահեք, առանց մարդկային արիւն քսիլելու : Ո՛վ Նեսոր, իմաստունդ Նեսոր, զոր ժողովիս մեջ կսեսնեմ, գիտես քէ պատերազմը նրշափ վնասակար է նաեւ անոնց՝ որ արդարութեամբ զենք կառնուն՝ ասուածոց պաշտպանութեանը տակ : Քան զամենայն շարիս որով կպատմեն ասուածք զմարդիկ, մեծագոյնն է պատերազմ : Ոչ երբեք պիտի մոռնաս այն տար տարուան մեջ շարաքասիկ Տրոյոյ առջեւ Յունաց ֆաւածները : Ո՛րշափ հերձուածք զօրավարաց մեջ, ինչ

յեղափոխութիւններ բաղդի, ինչ Յունաց արիւններ Հէկտորի ձեռամբ քափուած. եւ պատերազմին պատճառաւ նոյն իսկ զօրաւորագոյն քաղաքաց մեջ իրենց բազաւորաց բազմամեայ բացակայութեան ժամանակ որպիսի աղէտք շգործեցան : Իդարձին ոմանց նաւը ջարդուբուրդ կորսուեցան, Կափարիոյ հրուանդանին մօտ. իսկ այլք՝ նոյն իսկ իրենց կանանց գիրկը իրենց շարաշար մանր զսան : Ո՛վ դիմ, ձեր բարկութեան ժամանակ ուրեմն Յոյներն այս պանծալի արշաւանքին զինեցիք : Ո՛վ եսպերական ժողովուրդք, կմաղքեմ ես իդից որ երբէք ձեզ այսպիսի բազմապէս յաղթութիւն մը շսան : Այն, մոխիր սարձաւ Տրոյա. բայց Յունասանի համար աւելի լաւ էր որ անիկա սակաւին իւր բոլոր փառացը մեջ փայլէր, եւ կնամարդին Պարիս Հեղինէի վրայ ունեցած պիղծ սարփանքը դեռ վայելէր : Եւ դո՛ւ Փիլոկսէս որ այնչափ ժամանակ Լեմնոս կղզւոյն մեջ իբրուառութեան կայիր, շէս վախճար նորէն նոյնպիսի բռուառութեան մը հանդիպիլ նոյնօրինակ պատերազմի մը մեջ : Գիտեմ որ Լակոնիոյ ժողովուրդներն ալ հասկըցած են քե Տրոյոյ դէմ երբալու համար իրենց իշխանաց, զօրապետացն ու զօրաց բազմամեայ բացակայութիւնը ճշտափ խռովութեանց պատճառ եղաւ : Ո՛վ Յոյնք որ եսպերիս անցամ, միքե Տրոյոյ պատերազմին բերած աղէտքնցն համար շէ որ ամենքնիդ ալ բողոքիք հայրենիքնիդ ու հոս անցամ » :

Մէնսոր այսպէս խօսելէն յետոյ Պիղոսացոց մօտեցաւ. նանջցաւ զինքը Նեսսոր, առջեւն էլաւ որ բարեւ սայ : « Ո՛վ Մէնսոր, քաւ անոր, ուրախ եմ որ զեզ նորէն կտեսնեմ : Առաջին անգամ զեզ Փովկիս տեսայ, եւ անկէց իվեր շատ սարի է. տասնըհինգ տարուան էիր դու, եւ այն ժամանակէն իվեր գուշակեցի քե օր մը

ինչպիսի իմաստութիւն պիտի ունենայիր : Բայց ինչ դիպում ածով այս կողմերս եկար . եւ որոնք են այն հնարհներն՝ որով այս պատերազմը կուզես վերջացրնել : Իդոմենես ստիպեց զմեզ որ վրան ելլեմք : Մեք խաղաղութիւն կուզեինք , եւ իւրաքանչիւրնիս անոր մեծ կարօտութիւն ունեինք . բայց այլ կարելի չէր վստահիլ յԻդոմենես . վասնզի իւր ամենեւն մօտ էղող սանմանակցին տուած խոստումներ ոսքի սակ առաւ : Իրեն հետ հաւատութիւնը հաւատութիւն չէ . այլ միայն պիտի օգտէ իրեն որ փակէ մեր այս նիզակակցութիւնը՝ որուն վրայ է բոլոր մեզ զօրութիւնը : Յայտնի բրաւ նա ամենայն ազգաց զիրենք զերի բնելու փառամով խորհուրդը , եւ մեր ազատութիւնը պատշապանելու համար մեզ ուրիշ նար ջրողոց՝ բայց երբ իւր նոր հիմնած քաղաքութիւնը արեւել կործանել : Անհաւատարմութեամբն այնպէս բրաւ որ այլ հարկ է կոնք զինքը կործանել եւ կամ գերութեան լուծն իրմե բնդունիլ : Թե՛որ հնարք մը կրնաս գտնել որ վրան կարող ըլլամք վստահիլ ու անորդուելի խաղաղութեան մը վրայ սպասով լինել , բոլոր այս ազգերն որ հոս կսեսնես՝ սիրով գեներնին կրողուն , եւ ուրախութեամբ կխոստովանիմք՝ որ կզերազանցես քան զմեզ իմաստութեամբ » :

« Իմասունը Նեսոր , պատասխանեց Մենսոր , զիտն որ Ոգիսեսս իւր Տելեմաք որդին ինձ յանձնեք եր : Այս պատանին հօրը հակասագիրն հասկընալու անհամբեր , քովը Պիղոսս եկաւ , եւ զինքն հիւրընկալեցիր մեծախնամօք՝ զորս կրնար հօրը հաւատարիմ բարեկամեն յուսալ . նաեւ հետք որդիդ յուղարկաւ որ զրկեցիր : Անկեց վերջը ծովային երկար նանասպահորդութիւններ բրաւ նա . տեսաւ Սիկիլիան , Նեպոսոսն ու Կիպրոս եւ Կրեսէ կղզիները , եւ Իբակէ դառնալ ուզած ժամանակը՝



հողմք, մանաւանդ քե դիք՝ զինքն այս ծովեզերքը նե-  
սեցին : Յարմար ժամանակին հասանք հոս, որպէսզի  
անգուր պատերազմի մը արհաւիրքներէն զձեզ ազատեմք :  
Ոչ էւս Իդոմենէս, այլ իմաստնոյն Ողիսէայ որդին էւ էս  
երաշխաւոր եմք այն ամէն բանի որ նա ձեզ խոստանայ » :

Եւ միևնոյն Մենսոր դաշնակից զօրաց մեջ կեցած Նես-  
սորի հետ այսպէս կիսուէր, Իդոմենէս էւ Տելեմաք բոլոր  
սպառազէն կրէսացոց հետ Սաղենի պարսպացը վրայէն  
անոնց կնայէին էւ ուշադրութեամբ կդիտէին որ տես-  
նէն քե Մենսորին խօսակցութիւնն ինչ բնորոշելու-  
թիւն պիտի զտնէ, էւ կփափաքէին այն երկու իմաստուն  
ձերունեաց զուցասութիւնը լսել : Որովհետէ Նեսսոր  
բան զամենայն քազաւորս Յունաստանի փորձ ու պեր-  
նախօս կհամարուէր . ինքն էր որ Տրոյոյ պաշարման ժա-  
մանակ Աքիլլէսի հրաբորբոք բարկութիւնը, Ագամեմնոնի  
հպարտութիւնը, Էասայ գողոզութիւնն ու Դիոմէդէսի  
կրակոտ քաջութիւնը կսանձէր . օրբունքներէն մեզրի պէս  
կվազէր քաղցր համոզողութիւնը . բոլոր այս դիւցազունք  
իւր ձայնին միայն կլսէին . բերանը բանալուն պէս  
ամենքը կլռէին . էւ ինքը միայն կարող էր բանակին  
մեջ էլած անհամբոյր երկպառակութիւնը հանդարտե-  
ցունել : Սկսէր էր նա ցրտագին ձերուքեան արգասիքն  
իմանալ, բայց դէռ խօսքերը զօրութեամբ էւ քաղցու-  
քեամբ լեցուն էին . անցած զնացած բաները կպատմէր՝  
որպէսզի իւր փորձառութեամբը դէռ անասակներն հր-  
րահանագէ . էւ քեպէտ քիչ մը ծանր, բայց շնորհալի կեր-  
պով մը կրնէր պատմութիւնը :

Սակայն այս ձերունին որուն վրայ բոլոր Յունաստան  
կզարմանայր, Մենսորին առջեւ բոլոր պերնախօսու-  
թիւնն ու մեծութիւնը կորսնցուցէր էր : Իւր ձերութիւնը  
քառամ ու քնկնած կերեւէր Մենսորին ձերութեանը

Բով, յորում կարծես քե՛ս արիքն պնդակազմ բնութենէն  
 պատկառեր էին: Մենտորին խօսքերը քեպէտէ հան-  
 դարս էին ու պարզ, բայց զօրաւոր ու մեծասաստ. իսկ  
 Նեստորիները զօրութենէն ընկած էին: Խօսակցու-  
 քիւնը կարն էր, նիւղ էւ կորովի: Ոչ երբեք զրուցածը  
 կիրկներ, էւ ոչ երբեք առաջարկեալ խնդրոյն հարկաւոր  
 եղածէն դուրս բան մը մեջ կբերէր: Ունկնզբաց միտքը սը-  
 պաւորելու էւ զանոնք համոզելու համար երբ հարկ ալ  
 լինէր շատ անգամ միեւնոյն բանի վրայ խօսիլ, միտ-  
 սորանոր դարձուածներ էւ նմանութիւններ մեջ կբերէր.  
 Էւ երբոր ուրիշներուն պիտոյից յարմարել կուզէր կամ  
 անոնց նշմարտութիւն մը հասկըցընել, խօսքերուն  
 ախորժելի գուարբութիւն մը կուտար: Այս երկու պատ-  
 կառելի մարդիկ՝ խանդաղասելի տեսարան մը կընծայ-  
 էին այնչափ բազմութեան ազգաց ժողովելոց:

Եւ մինջդէռ բոլոր Սադէնտեայ քննամի նիզակակիցք  
 այս երկու մարդիկը տեսնելու էւ անոնց իմաստուն խօ-  
 սակցութիւնը լսելու համար զիրար կկոխկռտէին, Իդո-  
 մենես էւ բոլոր իրենները իրենց անյազ ու անքիք նայ-  
 ւածովք անոնց ձեւերուն ու երեսին վրայի շարժմունք-  
 ներուն նշանակութիւնը կջանային իմանալ:



Տելեմաք գՄենսոր դաճնակցաց մէջ տեսնելով՝ կուզէ իմանալ թէ մէջերնին ինչ կանցնի : Սաղենեայ դռները բանալ կուտայ ու կվազէ Մենսորի տուր կերթայ : Դաճնակիցք զինքը տեսնելով՝ աւելի դիւրաւ կզիջանին հաճութեան պայմաններն ընդունելու, զոր Մենսոր Իդոմենեայ կողմանէ կառաջարկէ : Թագաւորները բարեկամաբար կմտնեն ի Սաղենոն : Իդոմենէս կընդունի բոլոր հաստատած պայմանները : Իրաւու պատանդ կուտան, եւ այս նիզակահցութեան հաստատութեանն համար՝ աստուածոց հասարակաց զոն մը կմտնուցանեն քաղաքին ու դաճին մէջտեղը :

Սակայն Տելեմաք անհամբեր՝ բազմութեան մեջէն կամացուկ մը կսպրդի, Մենսորին ելած դուռը կվազէ կերթայ ու իշխանաբար բանալ կուտայ զայն: Իսկ Իդոմենէս որ զինքը տուր կկարծէր, կապել էրբոր կտեսնէ որ անիկա դաճին մէջ կվազէր եւ արդէն Նեսսորին տուր հասած էր: Կնանաջէ Նեսսոր եւ մեկէն զինքն ընդունելու կփութայ, բայց յուշիկ եւ ծանր քայլերով: Տելեմաք կվազէ վիզը կցատկէ ու կզրկէ զայն անբարբառ. վերջապէս կգոռէ. « Ո՛վ հայրիկ, ջեմ վախճար զքեզ հայր կանջելու. հարազատ հօրս կորստեան քրուաւորիւնն ու տու հայրագուր բարեբարութիւնն զոր վրաս ես ցուցուցէր՝ այսպիսի գորովալիւր անուն մը քեզ տալու իրաւունք կուտան ինձ. հայր իմ, սիրեցեալ հայր, նորէն զքեզ կտեսնեմ. նի նւր էր թէ եւ զՈղիսէս այսպէս

ՏԵՍՆԻԻ: Քեռր իրմէ զրկուելէս յէսոյ բան մը կրնայ զիս մխիթարել՝ այն պիտի ըլլայ որ իմեզ ինձ ուրիշ հայր մը զտնեմ » :

Չկրցաւ Նեստր այս խօսքերուս արցունքը բռնել . եւ սիրք կխայտար տեսնելով որ Տելեմաքին արտասուլին ալ շնորհալի կերպով այտերուն վրայէն վար կվազէր: Այս անձանօք պատանուոյն գեղեցկութեանը, քաղցրութեանն ու ազնուական արիութեանը վրայ հիացան առ հասարակ նիզակակիցք , որ առանց մէկ բզգուշութեան այնչափ քեցամի գնդերէն անցաւ եկաւ : Անուուս Նեստրին հետ խօսելու եկող ձերուուուոյն որդին է կրտսին : Կենաց երկու ներհակական տրոց մէջ նոյն իմաստութիւնն է որ կտեսնուի . մէկուն մէջ դէռ այն ինչ նորափրփր կծաղկի, եւ միւսոյն մէջ առատութեամբ հասուն պտուղներ կրնծայէ:


Իսկ Մենսոր որ Նեստրին Տելեմաքայ վրայ ցուցուցած գորովալիր սերը տեսնելով կուրախանայր, զայն պատեն առնելով ըսաւ . « Ահա որդին Ողիտայ, սիրելւոյն բովանդակ Յունաստանի եւ մերմին քո , ո՞ր մեծիմաստ Նեստր . ահա զինքը բողբում քեզ պատանգ , եւ Իդուներեսի խոստմունքներուն հաւատարմութեանը իբրեւ պատուականագոյն գրաւ : Լաւ զիտես որ անտանելի է ինձ որ հօրք կորստեանը վրայ բողբում որ նաեւ որդին կորսուի երբայ , եւ տառապեալ Պենելոպէն կարենայ զՄենսոր կտամբել որ Սաղէստայ նոր քաղաւորին վառասիրութեանը զոհեց իւր որդին : Այս պատանգովս՝ որ ահա ինքնիրեն եկեր ինքզինքը կրնծայէ, եւ զոր խաղաղասեր դիմ ձեզ կզրկեն , նվ այդչափ ազգերէ համախմբեալ ժողովուրդք , սկսիմ ձեզ մեկխանի առաջարկութիւն ընել, որով խաղաղութիւնը մինչեւ վերջը անւարժելի հաստատուի » :

Թաղադուրեան ձայնը լսուեցաւ շլսուեցաւ խառնա-  
 ձայն շշուկն մը բանակին ուազմերը սկսաւ ընթանալ :  
 Բոլոր այս այլեւայլ ազգերը բարկութեամբ կմռնէին,  
 եւ պատերազմնին ուշանալով կորսնցուցած ժամանակ-  
 ներնուն վրայ կնեղանային եւ կկարծէին թէ բոլոր այս  
 խօսակցութեանց վախնանն այն էր որ իրենց կասա-  
 դուրիւնը մեղկէն եւ որսերնին ձեռներնէն փախցը-  
 նէն : Եւ մանաւանդ մանդուրացիք շէին կրնար համ-  
 բերել կարծելով որ Իդումէնէս երկրորդ անգամ մըն ալ  
 կուզէ զիրենք խաբել : Սեպ Մենսորին խօսքը կկտրէին  
 վախնալով որ շրլլայ թէ իմասնալից խօսակցութիւն-  
 ներովը իրենց նիզակակիցները իրենցմէ բաժնէ : Ժո-  
 դովոյն մեջ եղած բոլոր Յունաց վրայ ալ կսկսէին կաս-  
 կածիլ : Զայն որ Տեսաւ Մենսոր, փութացաւ անոնց  
 կասկածն աւելցրնել, որպէսզի կարող ըլլայ բոլոր այն  
 ազգերուն սրտին մեջ երկայառակութիւն ձգել :

Եւ կըսէր. « Ապաքէն իրաւունք ունին մանդու-  
 րացիք որ բողոքեն եւ կրած վնասներնուն հատուցումն  
 պահանջեն. բայց իրաւունք չէ նաեւ որ յոյնք որ այս  
 ծովեզերքը գաղթականութեամբ են եկեր կբնակին, եր-  
 կրին հին բնակչացը կասկածելի եւ ասելի ըլլան : Պէտք  
 է մանաւանդ որ յոյնք մեջերնին միաբան ըլլան, եւ  
 իրենք զիրենք ակնածել սան, եւ այս բանիս համար պէտք  
 է որ զգուշաւոր ըլլան եւ ոչ երբեք իրենց սահմանակ-  
 ցաց երկիրն յափճակելու ձեռք զարնեն : Գիտեմ որ  
 դժբաղդաբար Իդումէնէս զձեզ կասկածի մեջ ձգեց, բայց  
 դիւրին է բոլոր ձեր կասկածներն փարատել : Սհա Տե-  
 լեմաք եւ էս մեր անձը Իդումէնէսի հաւատարմութեանը  
 պատանդ եւ երաշխաւոր կուսամք, եւ ձեր ձեռքը կմը-  
 նամք մինչեւ որ ձեզ խոստացուած բաները հաւատար-  
 մութեամբ կատարուին : Ո՛վ մանդուրացիք, կանշեց,

անոր համար աւելի զայրացած է՝ որ կրէսացի զօրք զձեզ յանկարծակիի բերելով՝ ձեր լեռանց անցները բռնեցին, եւ անկեց երբ եւ ուզեն ձեր կամացը դեմ կարող են ձեր երկիրը վազել՝ ուր գնացիք ֆաշուէցաք իրենց բողովով ծովէզերեայ դաշտավայր : Ուրեմն պատերազմին բուն պատճառն այս անցներն են զորս կրէսացիք բարձրաբերձ աշարակով ամրացուցին ու սպառազեն բազմութեամբ լեցուցին : Զրուցեցե՛ք ինձ, ասկէ զասկայն նաեւ ուրիշ պատճառ մը » :

Այն ժամանակ մանդուրացոց զօրավարը յառաջ եկաւ ու քսաւ : « Այս պատերազմը խափանելու համար ինչ կրնայինք ընել եւ ջրիկն . վկայ են մեզ դիք որ ոչ երբեք խաղաղութենէ հրաժարեցանք, բայց երբ երբ անդարձ հեռացաւ նա մեզմէ կրէսացոց անխաղաղատեք փառասիրութեամբն եւ անանկ կերպ մը բռնելովը՝ որ սլ ջկարենամք իրենց երդմանը վրայ վստահիլ : Ազգանմիտ, որ մեր շուզելովն իսկ զմեզ յուսահասաբար իրենց դեմ զենք առնելու դժնդակ բռնադատութեան մեջը ձգեց, այնպէս որ ջկարենամք մեր փրկութիւնը գտնել՝ բայց երբ իւր կորսեամբք : Որչափ որ այս լեռանց անցներն իրենց ձեռքն է, մեզ միտք այնպէս պիտի զայ որ կուզեն մեր երկիրը յափճակել եւ զմեզ գերի ընել : Թէ՛նք իրաւքնէ իրենց սահմանակցացն հետ խաղաղութեամբ կուզեին ապրիլ, բաւական պիտի սեպեին յօծար կամօք իրենց բողածնիս, եւ ետեւ ջեխն ըլլար երկրի մը դռներուն վրայ բռնանալ, երբ անոր ազատութեանը վրայ փառամով խորհուրդ մը ունենալու ջրլային : Բայց դու ջես նամաջեր զանոնք ձերունիդ իմաստուն. ձմնր տուգանօք մեք ալ զիրենք նանջցանք : Իսպրե, նվ դու սիրելիդ աստուածոց, մի՛ ուշացրներ արդար ու հարկաւոր պատերազմ մը, առանց որոյ նս-







2586

241

2013

